Վահե
Ենգիբարյան

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Funded
by the European Union
and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Implemented
by the Council of Europe

Funded by the European Union and the Council of Europe
EUROPEAN UNION
COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE
Implemented by the Council of Europe

ՎԱՀԵ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Դասընթացի ձեռնարկ

ԵՐԵՎԱՆ 2020

Ձեռնարկի հեղինակ՝

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր

Վահե Ենգիբարյան

Ձեռնարկի պատրաստմանն աջակցել է՝

Նորվեգիայի դատարանների աշխատակազմի միջազգային քարտուղարության ղեկավար

Այվար Արնսթադը

15-25, 30-32, 140-143, 148-151, 176-177, 184-188, 229-238 էջերի հեղինակ

Հոգեբան-փորձագետ, ԵՊՀ կիրառական հոգեբանության կենտրոնի ղեկավար

Դավիթ Գևորգյան

Սույն ձեռնարկը պատրաստվել է *«Աջակցություն քրեական արդարադատության բարեփոխումներին և եվրոպական չափանիշների կիրառման ներդաշնակեցումը Հայաստանում»* ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի «Գործընկերություն հանուն լավ կառավարման» կառուցակարգի կողմից: Սույն ձեռնարկում ներկայացված տեսակետները որևէ կերպ չեն արտահայտում Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի պաշտոնական տեսակետները:

© Եվրոպայի խորհուրդ, 2020
© Արդարադատության ակադեմիա, 2020

Աշխատանքում օգտագործվող հապավումները

Բանգալորյան սկզբունքներ – «Դատավորի վարքագծի բանգալորյան սկզբունքներ», Հաագա, 2002:

Դատական դեպարտամենտ – ՀՀ բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտ,

ԲԴԽ – Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհուրդ,

Եվրոպական կոնվենցիա – Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիա,

Եվրոպական դատարան – Մարդու իրավունքների եվրոպական դատարան,

ԵԴԽԽ - Եվրոպական դատավորների խորհրդակցական խորհուրդ,

ԶԼՄ - զանգվածային լրատվության միջոց,

Սահմանադրական դատարան – Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան,

Վճռաբեկ դատարան - Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան,

ՔԴՕ - Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք,

CEPEJ - Եվրոպայի խորհրդի արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողով

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերապատրաստման սույն դասընթացը նախատեսված է ՀՀ բոլոր ատյանի դատավորների, դատավորների թեկնածուների և դատական ծառայողների համար: Դատախազները և փաստաբանները նույնպես կարող են օգտվել առաջարկվող դասընթացից՝ հաշվի առնելով քրեական գործի դատաքննության փուլում դատավարության մասնակիցների հետ նրանց ակտիվ հաղորդակցումը:

Վերապատրաստման սույն դասընթացը դատավորներին, դատավորների թեկնածուներին և դատական ծառայողներին, ինչպես նաև դատախազներին ու փաստաբաններին կզինի գիտելիքներով և հմտություններով, որոնք անհրաժեշտ են դատավարության մասնակիցների ամենատարբեր խմբերի հետ հաղորդակցվելիս դատական քննությունն առավել արդյունավետ և պատշաճ ձևով իրականացնելու համար: Դասընթացը կանդրադառնա դատավարական կողմերի և դրանց ներկայացուցիչների մասնակցությամբ իրականացվող դատավարական գործողությունների անհրաժեշտ երաշխիքներին, որոնք կապահովեն վերջիններիս իրավունքների համարժեք պաշտպանությունը՝ նպաստելով գործի արդարացի լուծմանը:

Թե՛ մինչդատական վարույթի, և թե՛ դատական քննության ընթացքում վարույթն իրականացնող մարմինն անխուսափելիորեն առնչվում է տուժողների, վկաների կամ կասկածյալների, մեղադրյալների կամ ամբաստանյալների հետ, ովքեր ունեն ամենատարբեր արժեհամակարգեր, անձնական, հոգեբանական, սոցիալ-մշակութային զարգացվածության տարբեր մակարդակներ, տարբեր աշխարհայացքներ, ինչպես նաև ազգային, սեռային, տարիքային և այլ առանձնահատկություններ:

Բացի դրանից, քրեական գործի քննության ընթացքում վարույթն իրականացնող մարմինը որոշակիորեն հաղորդակցվում է նաև ԶԼՄ-ների և հասարակության ներկայացուցիչների հետ, որոնց հետ արդյունավետ փոխգործողության կազմակերպումն անմիջականորեն կապված է գործի արդյունավետ քննության երաշխիքների ապահովման հետ:

Վերը թվարկված խմբերի անձանց, ինչպես նաև ԶԼՄ-ների հետ հաղորդակցման հրատապությունն ընդգծվում է հատկապես, եթե նկատի ունենանք, որ վերջիններս ակտիվ դերակատարություն ունեն հանրային կարծիքի ձևավորման, դատարանների հանդեպ հասարակական վստահության բարձրացման գործում: Բանն այն է, որ դատավարության շրջանակներում դատավորը զրկված է քննվող գործի վերաբերյալ կարծիք հայտնելու հնարավորությունից, մինչդեռ դատավարության կողմերն ու մասնակիցներն այդ հարցում կաշկանդված չեն, հետևաբար, վերջիններիս հետ բարենպաստ հաղորդակցումը կարող է դրականորեն ազդել նաև մասնակիցների՝ դատավարության ընթացքի ու արդյունքների ամբողջական ընկալման, դատավարության ու դատավորի մասին պատշաճ կարծիքի ձևավորման ու դրա հրապարակման վրա:

ԵԴԽԽ թիվ 4 (2003) Կարծիքում հստակ արձանագրված է, որ դատական իշխանության անկախությամբ բոլոր մակարդակներում և իրավասություններում իրավունքներ են վերապահվում դատավորներին, բայց նաև նրանց նկատմամբ սահմանվում են էթիկայի (վարքագծի) պահանջներ:

Վերջինիս վերաբերում է դատավորի գործունեությունը մասնագիտական պատշաճ մակարդակով իրականացնելու պարտականությունը, ինչը նշանակում է, որ դատավորը պետք է ունենա մասնագիտական բարձր ունակություն, որը ձեռք է բերվում, պահպանվում և կատարելագործվում է վերապատրաստման միջոցով, որն անցնելու պարտականություն և իրավունք ունի յուրաքանչյուր դատավոր:

Առանցքային է, որ իրավաբանական համալիր կրթություն ստանալուց հետո ընտրված դատավորներն անցնեն մանրա-

մասն, խոր, բազմաբնույթ վերապատրաստում, որպեսզի բավարար մակարդակով կարողանան իրականացնել իրենց պարտականությունները:

Նման վերապատրաստումը նաև Եվրոպական կոնվենցիայի պահանջներին համապատասխան իրենց անկախության և անաչառության երաշխիքն է:

Ի վերջո՝ վերապատրաստումը նախապայման է, որպեսզի դատական իշխանության նկատմամբ դրսևորվի հարգանք, և այն արժանի լինի նման հարգանքի: Դատական համակարգի նկատմամբ քաղաքացիների վստահությունը կամրապնդվի, եթե դատավորներն ունենան խորը և բազմաբնույթ գիտելիքներ, որոնք կընդլայնվեն իրավունքի տեխնիկական ոլորտից՝ ընդգրկելով կարևոր սոցիալական ոլորտներ, ինչպես նաև հմտություններ և գիտելիքներ՝ նիստերի դահլիճում իրենց դրսևորելու, գործերը կառավարելու և գործում ներգրավված բոլոր անձանց հետ պատշաճ և նրբանկատ հարաբերվելու համար: Այսպիսով՝ վերապատրաստումը կարևոր է դատական գործառույթներն օբյեկտիվ, անաչառ և արհեստավարժ կատարելու, ինչպես նաև դատավորներին անհարկի ազդեցություններից պաշտպանելու համար:

Միևնույն ժամանակ Եվրոպայում դատավորներին վերապատրաստելու համակարգերի բազմազանությունը հաշվի առնելով՝ ԵԴԽԽ-ն առաջարկում է.

i. որ դատական պաշտոններում նշանակված բոլոր անձինք, նախքան պարտականությունների իրականացմանն անցնելը, պետք է ունենան կամ ձեռք բերեն ընդգրկուն գիտելիքներ ազգային և միջազգային նյութական իրավունքի և դատավարության մասին,

ii. որ դատավորի մասնագիտությանը համապատասխան վերապատրաստման ծրագրերի մասին որոշում պետք է ընդունեն վերապատրաստման համար պատասխանատու կառուցվածքային միավորը և վերապատրաստողներն ու իրենք՝ դատավորները,

iii. որ այս տեսական և գործնական ծրագրերը չպետք է սահմանափակվեն միայն իրավական տեխնիկայով, այլ պետք է ընդգրկեն թեմաներ էթիկայից և դատական գործունեությանն առնչվող այլ ոլորտներից, ինչպես, օրինակ՝ գործերի կառավարում և դատարանների վարչական կառավարում, տեղեկատվական տեխնոլոգիաներ, օտար լեզուներ, սոցիալական գիտություններ և վեճերի այլընտրանքային լուծման (ՎԱԼ) մեխանիզմներ,

iv. որ վերապատրաստումը պետք է լինի բազմաբնույթ՝ երաշխավորելու և ամրապնդելու համար դատավորի լայնախոհությունը,

v. որ, կախված մասնագիտական փորձառության առկայությունից և տևողությունից, վերապատրաստումը բավականին երկար պետք է լինի, ձևական բնույթ չկրի:

Վերապատրաստման մոդուլը, հաշվի առնելով քրեական բոլոր գործերի առանձնահատկությունները, արտացոլելու է անձանց որոշակի խմբերի կարիքները, որոնց հետ հաղորդակցման կազմակերպումը հատուկ ուշադրության կարիք ունի: Այդ առանձնահատկությունները կարող են բխել օբյեկտիվ և սուբյեկտիվ տարաբնույթ հատկանիշներից, որոնք կարող են դատավարության ընթացքում ազդել անձանց իրավունքների վրա՝ ներառյալ տարիքը, անձնական կամ սոցիալական բնութագրիչները կամ ֆիզիկական կամ մտավոր զարգացվածությունը: Վերապատրաստման մոդուլն անդրադառնալու է այն մոտեցումներին, որոնցով դատավորները, դատական ծառայողները պետք է դատավարության ընթացքում դրսևորեն առանձնահատուկ վարքագիծ ու հմտություններ՝ հանրային ու մասնավոր շահերի արդյունավետ զուգակցման և գործի արդարացի լուծման համար:

Պետք է փաստել, որ ներկայումս Հայաստանի Հանրապետության դատավորների և դատական ծառայողների համար

այս ոլորտում գոյություն չունի համակարգված և հատուկ մասնագիտացված վերապատրաստման դասընթաց:

Ինչ վերաբերում է սույն դասընթացի կառուցվածքին ու բովանդակությանը, ապա պետք է նշել, որ այն մշակվել է որոշակի ներքին տրամաբանական միասնականությամբ՝ ընդհանուրից մասնավոր սկզբունքով: Ըստ այդմ՝ դասընթացի բովանդակության մեջ նախ ընդգրկվել են ընդհանուր բնույթի թեմաներ, որոնց ուսումնասիրությունը թույլ է տալիս առավել լիարժեք բացահայտել հետագա՝ առավել մասնավոր կամ հատուկ բնույթ ունեցող թեմաները:

Այսպես, ուսումնասիրության առաջին թեմայի շրջանակներում բացահայտելով ուսումնասիրության թեմայի հրատապությունը՝ ներկայացվում է հաղորդակցման կառուցվածքը, արդյունավետ և անարդյունավետ հաղորդակցման տեսակները, արդյունավետ հաղորդակցմանը խոչընդոտող ներքին և արտաքին գործոնները, դրա կազմակերպման անհրաժեշտ կողմերը, ինչպես նաև միջազգային և ներպետական իրավական այն ակտերի հիմնական շրջանակը, որոնք այս կամ այն կերպ առնչվում են քրեական արդարադատության բնագավառում հաղորդակցման եղանակներին, սկզբունքներին, տեսակներին և այլն:

Այնուհետև հաջորդաբար ներկայացվել են հարցաքննության տեխնիկայի և հաղորդակցման հմտությունների դրսևորման առանձնահատկությունները՝ ըստ առանձին սուբյեկտների կամ դրանց առանձին խմբերի: Ընդ որում, հատուկ ուշադրություն է դարձվել հարցաքննության տեխնիկայի և հաղորդակցման գործընթացի հոգեբանական հիմունքներին ու դրանց առանձնահատուկ ասպեկտներին:

Վերապատրաստման սույն դասընթացի շրջանակում դատավորները և դատական ծառայողները ձեռք կբերեն դատավարության տարբեր մասնակիցների կարիքները ճիշտ գնահատելու և դրան համապատասխան իրենց աշխատանքները կազմակերպելու վերաբերյալ գիտելիքներ ու հմտություններ:

ԴԱՍ 1.

ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

(ՎԵՐԲԱԼ ԵՎ ՈՉ ՎԵՐԲԱԼ, ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ, ԼՍՈՂԻ ԸՄԲՌՆՄԱՆ, ՀԱՍԿԱՆԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ, ԼՍԵԼՈՒ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ)

Թեմա 1.

Դատավարության կողմերի ու մասնակիցների հետ հաղորդակցման էությունը, դրա կազմակերպման իրավական ու հոգեբանական կողմերը

Գործի արդարացի քննության, արդարադատության մատչելիության, ինչպես նաև քրեական արդարադատության մյուս կարևորագույն սկզբունքներից բխող պահանջների լիարժեք ապահովման համար առանցքային նշանակություն ունի յուրաքանչյուր գործով դատավարության ճիշտ ընկալմանն ու հանրային կարծիքի ձևավորմանն ուղղված միջոցների ձեռնարկումը: Ընդ որում, հարկ է նկատի ունենալ, որ հանրային կարծիքի, հետևաբար նաև՝ դատարանների հանդեպ հասարակական վստահության բարձրացման համար առաջնային դերակատարություն ունեն դատավարության մասնակիցները և նրանց դրսևորած վարքագիծը: Այլ կերպ՝ արդարադատության մատչելիության սկզբունքի իրագործումն ուղիղ համեմատական է դատարանների դերի ու հասարակական վստահության բարձրացման հետ:

Ըստ այդմ՝ դատավարության ընթացքում հարցաքննության ճիշտ տեխնիկայի ընտրությունը, դատավարության մասնա-

կիցների հետ հաղորդակցման հմտությունների կատարելագործումը կարևոր գրավականներ են ինչպես որոշակի գործով իրականացվող քրեական արդարադատության մատչելի, պարզ և ամբողջական ընկալման, այնպես էլ, ըստ էության հանրային կարծիքի ձևավորման, դատարանների հանդեպ հասարակական վստահության ամրապնդման համար:

Խնդրո առարկայի հրատապությունն առավել ընդգծում է գործի քննության հրապարակայնության սկզբունքը, որը միջազգային իրավական և ներպետական օրենսդրության մեջ դրսևորվում է որպես գործի արդարացի քննության կարևորագույն բաղադրիչ:

Այսպես, Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝

> *«1. Յուրաքանչյուր ոք... ունի... արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք...»:*

Հրապարակայնությունը դիտարկվում է որպես երաշխիք՝ ընդդեմ կամայական որոշումների, և այն դատարանների նկատմամբ հանրության վստահությունն ապահովելու միջոց է:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածը սահմանում է արդար դատաքննության իրավունքը, որի 1-ին մասի համաձայն՝

«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

ՔԴՕ-ի 17-րդ հոդվածը սահմանում է գործի արդարացի քննությունը, որի 1-ին մասի համաձայն՝

> *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

Հրապարակային դատաքննության պահանջը նախատեսված է «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով, որի համաձայն՝ դատական նիստերը դռնբաց են, ինչպես նաև ՀՀ ՔԴՕ-ի 16-րդ հոդվածի 1-ին մասով, համաձայն որի՝ դատարանում գործը քննվում է դռնբաց դատական նիստում:

Թեև Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային իրավական ակտերով, ինչպես նաև ներպետական օրենսդրությամբ սահմանված են դռնբաց դատական նիստերի անցկացման որոշ սահմանափակումներ, այդուհանդերձ, ակնհայտ է, որ դռնբաց դատական քննությունը գործի արդարացի քննության բաղադրիչ և միևնույն ժամանակ կարևոր երաշխիք է:

«Հրապարակայնությունն արդար դատաքննության կարևորագույն տարրն է», այսպիսին է Եվրոպական դատարանի տված բնորոշումը:

Այսպես.

> Վերներն ընդդեմ Ավստրիայի՝ 1997 թվականի գործով Եվրոպական դատարանը նշել է. *«Հրապարակայնությունը պաշտպանում է դիմողներին հանրային հսկողության բացակայության պայմաններում արդարադատություն իրականացնելուց; այն նաև դատարաններում վստահության ապահովման միջոցներից մեկն է: Արդարադատության իրականացման թափանցիկության միջոցով հրապարակայնությունը նպաստում է 6-րդ հոդվածի 1-ին կետի իրագործմանը, այն է՝ արդարացի դատաքննությանը, որի երաշխավորումը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկն է Կոնվենցիայի լույսի ներքո»:*
>
> Եվրոպական դատարանն ընդգծում է նաև բացատրելու եղանակով որոշումները հանրության համար մատչելի դարձնելու կարևորությունը: Թաքսեթն ընդդեմ Բելգիայի 2010 թվականի գործով Եվրոպական դատարանը նշել է. *«Արդարացի դատաքննության պահանջների ապահովման համար ամբաստանյալը, ինչպես նաև հանրությունը պետք է հասկանան և ընկալեն կայացված դատավճիռը, որը կարևորագույն երաշխիք է կողմնակալության բացառման համար: Ինչպես Դատարանը բազմիցս նկատել է, որ օրինականությունը և կողմնակա-*

լությունից խուսափելը Կոնվենցիայի կարևորագույն սկզբունքներից են: Դատական ոլորտում այդ սկզբունքները ծառայում են ժողովրդավարական հասարակության հիմքերից մեկը հանդիսացող օբյեկտիվ և թափանցիկ դատական համակարգի նկատմամբ հանրության վստահության ամրապնդմանը»:

ԵԴԽԽ-ի թիվ 3 (2002) Կարծիքի 9-րդ կետում ներկայացված է, որ արդարադատության համակարգի նկատմամբ վստահությունն առավել կարևոր է՝ հաշվի առնելով վեճերի գլոբալացման միտումը և դատական ակտերի լայն շրջանառությունը: Ավելին՝ պետություններում, որոնք ղեկավարվում են իրավունքի գերակայությամբ, հասարակությունն իրավունք ունի ակնկալելու, որ կսահմանվեն ընդհանուր սկզբունքներ, որոնք համահունչ են արդար դատաքննության սկզբունքին և երաշխավորում են հիմնարար իրավունքներ: Դատավորների համար սահմանվել են պարտավորություններ՝ երաշխավորելու նրանց անաչառությունը և գործունեության արդյունավետությունը:

Ուշագրավ է նաև, որ ԵԴԽԽ-ն լիովին պաշտպանում է «Դատավորների կարգավիճակի մասին» Եվրոպական խարտիայի այն դրույթը, որը սահմանում է, որ դատավորների կարգավիճակով պետք է ապահովվի անաչառություն, ինչը հասարակության բոլոր անդամներն իրավունք ունեն ակնկալելու դատարաններից (պարբերություն 1.1):

Այնուհետև վերը նշված կարծիքում ԵԴԽԽ-ն ամրագրում է, որ անաչառությունը նախատեսված է Եվրոպական դատարանի կողմից թե՛ որպես սուբյեկտիվ մոտեցում, որի դեպքում հաշվի են առնվում կոնկրետ դատավորի անձնական համոզմունքները և կոնկրետ գործում ունեցած շահը, և թե՛ որպես օբյեկտիվ գնահատում այն առումով, թե արդյոք դատավորն ապահովել է բավարար երաշխիքներ՝ բացառելու որևէ օրինաչափ կասկած այս հարցի առնչությամբ:

Դատավորները բոլոր հանգամանքներում պետք է գործեն անաչառ՝ ապահովելու, որ քաղաքացիները որևէ իրավաչափ պատճառ չունենան կասկածելու կողմնակալության հարցում:

Այս առումով անաչառությունը պետք է ակնհայտ լինի թե՛ դատավորի դատական գործառույթներն իրականացնելիս և թե՛ դատավորի այլ գործառույթների իրականացման ընթացքում:

Դատական իշխանության նկատմամբ հանրային վստահությունը և հարգանքը դատական համակարգի արդյունավետության երաշխիքներն են. իրենց մասնագիտական գործունեության ընթացքում դատավորների վարվելակերպը, բնականաբար, ընկալվում է հանրության կողմից որպես դատարանների վստահելիության առանցքային գործոն:

Ակնհայտ է, որ հաղորդակցման հմտությունները դատական կազմի որակի կարևոր տարրերից են: Օրինակ, ԵԴԽԽ-ի թիվ 10 (2007) Կարծիքում ընդգծված է հետևյալը. *«Դատական համակարգի Խորհուրդ, որի նպատակն է ծառայել հասարակությանը»:* Իսկ *«Դատավորների մասնագիտական գնահատում»* մասի 56-րդ կետում նշված է հետևյալը.

> *«Կարևոր է նշել, որ գնահատումը չպետք է բաղկացած լինի միայն իրավական փորձաքննության և դատավորների ընդհանուր մասնագիտական ունակությունների քննությունից, այլ նաև պետք է ներառի առավելապես անձնական այնպիսի տեղեկություններ, ինչպիսիք են՝ վերջիններիս անձնական հատկանիշները և նրանց հաղորդակցման հմտությունները»:*

Ավելին, նույն Կարծիքի 71-րդ կետում հատուկ ընդգծված են հաղորդակցման հմտությունները՝ որպես դատավորների շարունակական ուսումնառության առարկա:

2018 թվականի դեկտեմբերին CEPEJ-ն ընդունել է «ԶԼՄ-ների և հանրության հետ հաղորդակցման վերաբերյալ ուղեցույց դատարանների և դատախազության մարմինների համար», որտեղ, մասնավորապես, նշված է.

«Դատական հաղորդակցման նպատակը ներառում է հետևյալը.

- տեղյակ պահել դատական համակարգի կոնկրետ գործառույթների վերաբերյալ կոնկրետ գործերով (վարույթներով),

- հաստատել դատական համակարգի դերը հասարակության մեջ,
- վերահաստատել դատական մարմինների անկախությունը՝ հատկապես, երբ կա դրա անհրաժեշտությունը,
- ապահովել հարգանք դատական մարմինների և դրանց ներկայացուցիչների նկատմամբ,
- ապահովել կամ վերականգնել քաղաքացիների վստահությունը դատական մարմինների հանդեպ,
- պաշտպանել հանրության դիրքերը արդարադատության և հասարակության շահերի բախման դեպքում, երբ թույլ են տալիս հանգամանքները,
- բարելավել հանրության կողմից օրենքների ընկալումը,
- ավելի հաճախ ամրապնդել արդարադատության պատկերը»:

Ուղեցույցում միևնույն ժամանակ ընդգծվում է, որ.

> *«Որպես կանոն, դատավորները չպետք է անեն հրապարակային մեկնաբանություններ իրենց վարույթների, ինչպես նաև իրենց կողմից ընդունվող դատական ակտերի վերաբերյալ, որպեսզի ապահովվի նրանց անկողմնակալությունը (տես՝ ստորև): Այդուհանդերձ, նրանք կարող են մասնակցել հրապարակային քննարկումների՝ կապված այլ գործերի հետ»:*

Այսպես՝

> *«Դատավորների և դատախազների կողմից հաղորդակցման առավելությունն այն է, որ այս պաշտոնյաները ծանոթ են քննարկման առարկային: Բացասական կողմերից են՝ դատական մարմինների կողմից անհամապատասխան հաղորդակցումը և միմյանցից տարբերվող պրակտիկաները: Օրինակ, որոշ*

դատախազներ պատրաստ են ընդունել ԶԼՄ-ների ներկայացուցիչներին և տրամադրել նրանց տեղեկություններ, մինչդեռ մյուսները շատ փակ են, իրենց անհասանելի են դարձնում և հակված չեն տրամադրելու բավարար տեղեկություններ: Այս տարբերվող անհատական պրակտիկաները խարխլում են դատական քննության ընթացքում հաղորդակցության միատարրությունը և ԶԼՄ-ների համար ստեղծում են անհարկի դժվարություններ: Նման իրավիճակը տեղիք է տալիս դատական համակարգի հանդեպ անտեղի քննադատությունների»:

Հաղորդակցման գործընթացը.

Հաղորդակցման տակ ընդհանուր առմամբ պետք է հասկանալ ինֆորմացիայի փոխանցման և ընկալման սոցիալապես պայմանավորված գործընթաց, որն ընթանում է միջանձնային կամ զանգվածային կոնտեքստում տարբեր հաղորդակցական միջոցներով և ուղիներով: Մեկ այլ սահմանմամբ՝ հաղորդակցումն անհատների միջև ինֆորմացիայի փոխանակումն է՝ նշանների ընդհանուր համակարգի միջոցով[1]:

Հաղորդակցման միջոցով տեղի է ունենում տեղեկության, փորձի, գիտելիքների, կարողությունների և գործունեության արդյունքների փոխանակում: Ուստի դրա արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ է ճանաչել մարդկանց, գնահատել նրանց մտավոր և գործնական հնարավորությունները և, դրա հիման վրա օգտագործելով հաղորդակցման հոգեբանական ունակությունները, նրանց հետ կազմակերպել արդյունարար փոխհարաբերություններ:

Ըստ սուբյեկտների ընդգրկման ծավալի՝ հաղորդակցումը դասակարգվում է.

1

1. *միջանձնայինի, երկու անձանց միջև դեմ առ դեմ իրականացվող հաղորդակցում,*
2. *խմբայինի. 3 անձից մինչև 20-30 անձանց միջև հաղորդակցում,*
3. *զանգվածայինի. այս դեպքում ընդգրկված են մարդկանց մեծաթիվ խմբեր: Այն իրականացվում է հիմնականում տեղեկատվության տարածման հատուկ միջոցներով՝ տպագրություն, հեռուստատեսություն, ռադիո:*

Հանդիսանալով սոցիալական փոխազդեցության գործընթաց՝ հաղորդակցումն ունի որոշակի կառուցվածք, որի գլխավոր տարրերն են (սխեմա 1).

- *ուղարկողը*՝ հաղորդակցման սուբյեկտն է, ով ուղարկում է որոշակի հաղորդագրություն կամ տեղեկության որոշակի ծավալ,
- *ստացողը*՝ հաղորդակցման սուբյեկտն է, ով ուղարկողից ստանում է ուղարկված հաղորդագրությունը կամ տեղեկության որոշակի ծավալը,
- *հաղորդագրությունը*՝ ուղարկողից ստացողին փոխանցվող տեղեկության ամբողջությունը կամ ծավալն է,
- *ուղին*՝ տեղեկության փոխանցման միջոցն է,
- *հետադարձ կապը*՝ ստացողի պատասխան ռեակցիան է ուղարկված հաղորդագրությանը,
- *հաղորդակցման խոչընդոտները*՝ հաղորդագրության իմաստն աղճատող արտաքին կամ ներքին գործոններն են,
- *կոնտեքստը*՝ հաղորդակցման միջավայրի յուրահատկություններն են:

ՍԽԵՄԱ 1. Հաղորդակցման գործընթացը



Ինչպես ներկայացված է սխեմայում, հաղորդակցման գործընթացը հաղորդակցման սուբյեկտների միջև ընթացող տեղեկատվական փոխանակման բարդ շղթա է, որում առաջնային նշանակություն են ստանում տվյալ միտքը կամ տեղեկությունը հաղորդակցական նշանների վերածող և այդ նշանները վերծանող մեխանիզմները (կոդավորում և ապակոդավորում), ինչպես նաև այն հնարավոր խոչընդոտող «աղմուկների» ազդեցությունը, որոնք առկա են տվյալ հաղորդակցման կառուցվածքում:

Տեղեկության *կոդավորումը* դրա «թարգմանությունն է» փոխանցման համար հարմար լեզվի: Այսինքն՝ հաղորդակցման սուբյեկտը, ունենալով որոշակի հաղորդագրություն փոխանցելու նպատակ, այն ձևակերպում է որոշակի իմաստային նշաններով և ընտրում է փոխանցման եղանակը: Տեղեկությունը կոդավորվում է հետևյալ 2 ճանապարհով.

1. ***Խոսքային կամ վերբալ՝ բառեր, նախադասություններ, ելույթներ, մենախոսություն, հարց ու պատասխան, նամակ և այլն:***
2. ***Ոչ խոսքային կամ ոչ վերբալ՝ մարմնի լեզու, դիմախաղ, ժեստեր, ձայնի երանգ, հեռավորություն, շարժումներ և այլն:***

Ավելի պարզ՝ ցանկացած հաղորդակցություն իրենից ներկայացնում է մի կողմից տեղեկատվության փոխանցման, իսկ մյուս կողմից՝ ընդունման գործընթաց: Տեղեկություն հաղորդողն ընտրում է փոխանցվելիք միտքը, ձևակերպում է այն, ապա խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման միջոցների օգնությամբ հաղորդում է ստացողին: Ստացողն ընդունում է ստացված տեղեկությունը և ճիշտ կամ սխալ հասկանում այն: Իր հերթին նա ընտրում է պատասխան տեղեկությունը, ապա խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման միջոցների օգնությամբ հաղորդում է պատասխանը:

Սակայն պետք է նկատի ունենալ, որ հաղորդակցումը միշտ չէ, որ հարթ է ընթանում, այն ունի խոչընդոտներ կամ «աղմուկ-

ներ», որոնք աղճատում են հաղորդվող մտքերի իմաստը, խանգարում են կառուցողական և գրագետ երկխոսությանը:

Հաղորդակցման խոչընդոտները լինում են ***օբյեկտիվ կամ արտաքին և սուբյեկտիվ կամ ներքին:***

- **Օբյեկտիվ (արտաքին) խոչընդոտները** հիմնականում առաջանում կամ ձևավորվում են հաղորդակցվող սուբյեկտի կամ սուբյեկտների կամքից անկախ պատճառներով և կապված են արտաքին պայմանների հետ, օրինակ՝ տեղ, ժամանակ, լուսավորություն, աղմուկ, կապի խնդիրներ, հոգեբանական հարմարավետությունն ապահովող անհրաժեշտ հարմարություններ և այլն:
- **Սուբյեկտիվ (ներքին) խոչընդոտները** բազմազան են և հաճախ հաղորդակցման բարդությունների հիմնական պատճառներն են: Սրանք պայմանավորված են հաղորդակցվող սուբյեկտի կամ սուբյեկտների սոցիալ-հոգեբանական զարգացվածության, հոգեֆիզիոլոգիական վիճակի ու այլ անձնական առանձնահատկությունների գործոններով, օրինակ՝ հաղորդակցման պահին հուզական վիճակը, ապրումները, սթրեսային վիճակը, մտավոր զարգացվածության մակարդակը և այլն: Կարելի է առանձնացնել հետևյալ տեսակները՝
- ***Իմաստային կամ արտահայտման խնդիրներ***՝ հաղորդակցման սուբյեկտի կամ սուբյեկտների կողմից խոսքի սխալ կամ ոչ միանշանակ կառուցում, խառը և տրամաբանական շղթայի թերացումներով կառուցվող խոսք, կիսատ թողնված նախադասություններ, մտքերի և խոսքի «ցատկեր», երկիմաստ խոսք և այլն: Հաճախ տեղի է ունենում հուզական լարվածության և սթրեսային հոգեվիճակի պարագայում, մտավոր զարգացման միջինից ցածր մակարդակի, ինչպես նաև փսիխոտիկ հոգեվիճակների առկայության դեպքում:
- ***Չիմացություն՝*** հաճախ լսելով անհասկանալի կամ անծանոթ բառ կամ հասկացություն՝ մարդիկ կաշկանդվում

են հարցնել, թե դա ինչ է նշանակում և լռում են: Սա բավական հաճախ է հանդիպում դատավարական գործընթացներում, քանի որ շատերի համար այս ոլորտում ակտիվորեն շրջանառվող եզրութաբանությունը խորթ է և անհասկանալի, իսկ հոգեվիճակը՝ հաճախ լարված և հուզական, ինչի հետևանքով մարդը կարող է խուսափել հարցեր տալուց կամ ճշտումներ անելուց:

- ***Հուզական վիճակը՝*** եթե հաղորդակցման սուբյեկտի կամ սուբյեկտների մոտ հուզական վիճակն ինտենսիվ է, ապա հաղորդակցումն արդյունավետ չի լինի: Այստեղ չափազանց կարևորվում է կողմերի հուզական ապրումակցման ունակության մակարդակը, քանի որ կողմերից առնվազն մեկի մոտ դրա բավարար առկայությունը կարող է հստակորեն նպաստել հաղորդակցման կառուցողականությանը:
- ***Ընկալման (իմացական) խոչընդոտներ՝*** տեղեկատվության ոչ միանշանակ հասկացում կամ մեկնաբանություն աշխարհահայացքի, անձնական և մասնագիտական դիրքորոշումների, համոզմունքների, կարծրատիպերի և մտածողության ոճի շնորհիվ: Այս տիպին է պատկանում նաև հետաքրքրությունների խոչընդոտը՝ եթե հաղորդակցման թեման դուրս է անձի հետաքրքրությունների ոլորտից, տեղեկության ընկալման աստիճանն էապես իջնում է:

Ընկալման խոչընդոտ են հանդիսանում նաև սուբյեկտների ինտելեկտուալ մակարդակների, ինչպես նաև գեղագիտական (ճաշակ, վարվեցողություն և այլն) էական տարբերությունները:

Ընկալման աղճատումները հաղորդակցման սուբյեկտիվ խոչընդոտներից առավել բարդ և բազմապատճառայինն են, գերազանցապես չեն գիտակցվում, ենթարկվում են անգիտակցական պաշտպանության, հետևապես՝ կայուն են, նվազ ճկուն և դժվար հաղթահարելի:

- ***Լսելու անկարողություն՝*** ընկալման խոչընդոտների հետ

միասին ամենատարածված խոչընդոտն է: Սա, այսպես կոչված, ակտիվ լսելու հմտությունների պակասն է, կողմերից մեկի կամ երկուսի մասնակի ընդգրկվածությունը կամ ընդհանրապես չընդգրկվածությունն է հաղորդակցման մեջ: Ակտիվ լսելու հմտություններն արդյունավետ հաղորդակցման գլխավոր «գործիքն» են: Դրանք ուղղված են ապահով և վստահելի հաղորդակցման խթանմանը, բացասական հուզական ֆոնի թուլացմանը, ինչպես նաև ապահովում են արդյունավետ հետադարձ կապը:

- ***Սխալ կոնտեքստ՝*** երբ հաղորդակցման համար սուբյեկտներն ընտրում են սխալ վայր և/կամ սխալ ժամանակ («ոտքի վրա» զրույց կամ անձի համար բարդ կամ հուզական իրավիճակից անմիջապես հետո կազմակերպվող հաղորդակցում), հաղորդակցվում են անհամապատասխան հոգեֆիզիկական վիճակում (ուժեղ հոգնածություն, հիվանդություն, հարբածություն), չեն ապահովում անհրաժեշտ առանձնացվածություն կամ գաղտնիություն (օրինակ, երրորդ անձի հնարավոր ներկայություն):

Ուստի արդյունավետ հաղորդակցում կազմակերպելու համար անհրաժեշտ է նախևառաջ չեզոքացնել բոլոր հնարավոր այն արտաքին ու ներքին գործոնները, որոնք խոչընդոտում են դրա կազմակերպմանը: Ընդ որում, որոշ դեպքերում դրա անհնարինության դեպքում հարկավոր է փոխել հաղորդակցման կամ հարցաքննության մարտավարությունը, օրինակ՝ մտավոր ցածր զարգացվածություն ունեցող կամ կրթական ցենզ չունեցող անձանց հետ հարոդակցվելիս կամ նրանց հարցաքննելիս անհրաժեշտ է խուսափել գրական, գիտական արտահայտություններ օգտագործելուց, ցանկալի է միտքը շարադրել առավել պարզ ու մատչելի, պարզ նախադասությունների միջոցով և այլն: Կամ հուզականորեն ընկճված և անկայուն անձի հետ հաղորդակցումը կարևոր է կառուցել ապրումակցման հենքի վրա, ինչը կնպաստի նրա հուզական կարգավորմանը, և ըստ այդմ՝ կհանգեցնի նրա իմացական գործընթացների (հիշողություն, մտածողություն) անհրաժեշտ վիճակի վերականգնմանը:

Հարկ է նկատել, որ հաղորդակցման արդյունավետ կազմակերպման համար որոշակի նշանակություն ունի հաղորդակցման սուբյեկտների մարմնի դիրքը, շարժումները, պահվածքը: Մասնավորապես, այսպես կոչված «փակ» դիրքի դեպքում մարդու մարմինը ձգտում է տարածության մեջ ավելի քիչ տարածք զբաղեցնել («կուչ գալու» հակում, վերջույթների սեղմվածություն, «խաչված» ձեռքեր և ոտքեր և այլն): Այն արտահայտում է անհամաձայնություն, պաշտպանություն, հակառակում, քննադատություն, պասիվ ագրեսիա: «Բաց» դիրքում մարդու մարմինը ձգտում է գրավել տարածության մեջ որքան հնարավոր է մեծ տարածք (բացված ձեռքեր, դեպի զրուցակիցը թեքված մարմնի դիրք, ընդարձակ ժեստիկուլյացիա): Այն արտահայտում է համարձակություն, վստահություն, բարյացակամություն, հոգեբանական հարմարավետություն: Չափից շատ բաց դիրքը կարող է արտահայտել անհարգալից վերաբերմունք, մեծամտություն, ագրեսիվություն, գերակայություն կամ վերահսկողություն սահմանելու միտում: Հաստատված է, որ տեղեկատվության զգալի մասը (մինչև 70%-ը) փոխանցվում է ոչ խոսքային ուղիով՝ մարմնի լեզվով: Խոսքային ուղիով փոխանցվում է «մաքուր» տեղեկատվությունը, իսկ ոչ խոսքայինով՝ զրուցակցի նկատմամբ վերաբերմունքը: Մարդու ոչ խոսքային կամ ոչ վերբալ վարքն անքակտելիորեն կապված է նրա հոգեկան վիճակի հետ: Ոչ խոսքային վարքը բացում է անհատի ներաշխարհը՝ հաճախ իրենից էլ քողարկված, ենթագիտակցական բովանդակությունը: Սա պայմանավորված է նրանով, որ մարդու ակտիվ խոսքը կառավարվում է գլխուղեղի կեղևային հատվածներով և ենթակա է գիտակցված վերահսկողությանը, այն դեպքում, երբ մարմնական և հարալեզվական (ինտոնացիա, ժեստեր, դիմախաղ, ոչ կամածին շարժումներ և այլն) դրսևորումները գերազանցապես կառավարվում են գլխուղեղի ենթակեղևային, հուզական արձագանքման համար պատասխանատու կենտրոնների կողմից, ինչն էականորեն փոքրացնում է դրանց գիտակցական կառավարման կամ զսպման հնարավորությունը: Հետևաբար, մարմնի

լեզուն առավել դժվար վերահսկելի լինելով՝ առավել շատ տեղեկություն կարող է հաղորդել անձի հոգեվիճակի, տրամադրվածության, քողարկված պահանջմունքների և միտումների վերաբերյալ:

Ոչ խոսքային հաղորդակցման հիմնական միջոցներն են մարմնի դիրքի և հեռավորության ընտրությունը, շարժումները (ժեստերը), դիմախաղը, հարալեզվական դրսևորումները (խոսքի ինտոնացիա, շեշտադրումներ), հպումները:

Ունենալով նեղ անհատական և մշակութային պայմանավորվածություն՝ անձի ոչ խոսքային հաղորդակցման ձևերը, այնուամենայնիվ, ունեն ընդհանրական, համամարդկային առանձնահատկություններ և հաճախ կրում են ընդհանրական իմաստային ծանրաբեռնվածություն: Որքան էլ տարբերվեն մշակույթները, ամենուր հուզականության աճի հետ զուգահեռ բարձրանում է նաև ժեստիկուլյացիայի և դիմախաղի ինտենսիվությունը, փոխվում է դրանց բնույթը:

Ստորև նկարագրվում են ոչ խոսքային հաղորդակցման գլխավոր բաղադրիչները:

Կինեսիկան (հունարեն՝ շարժում) այլ մարդու տեսողությամբ ընկալվող շարժումներ են, որոնք հաղորդակցության մեջ կատարում են արտահայտչական գործառույթ: Կինեսիկային են պատկանում արտահայտիչ շարժումները, որոնք դրսևորվում են մարմնի և մարմնի մասերի դիրքերի փոփոխության մեջ, ժեստերում, դիմախաղում, քայլվածքում, հայացքում և այլն:

Պրոսոդիկա՝ շեշտադրում և արտալեզվաբանություն: Այն ներառում է խոսքի հնչերանգը, արագությունը, խոսակցական տոնի բարձրությունը, ձայնի տեմբրը, շեշտադրման ուժը: Արտալեզվաբանական համակարգը դադարների տեղակայումն է խոսքում, ինչպես նաև մարդու տարբեր հոգեֆիզիոլոգիական արտահայտությունները՝ լաց, հազ, ծիծաղ, հոգոց և այլն:

Տակեստիկան (հպումներ) ներառում է ձեռքսեղմումնե-

ը, ծափահարումները, համբույրները և այլն: Մարդու կողմից հաղորդակցման մեջ նման դինամիկ հպումների օգտագործումը պայմանավորված է բազմաթիվ գործոններով: Դրանց թվում հատուկ նշանակություն ունեն հաղորդակցվողի կարգավիճակը, տարիքը, սեռը, ծանոթության և մերձեցման աստիճանը, հուզական պահանջմունքները և այլն:

Պրոքսեմիկան (անգլ. proximity՝ մոտիկություն) վերաբերում է հաղորդակցության տարածական բնութագրիչներին: Այն նաև սոցիալական հոգեբանության բնագավառ է, որն ուսումնասիրում է հաղորդակցման տարածական և ժամանակային նշանային համակարգը: Համաձայն պրոքսեմիկայի՝ հաղորդակցման սուբյեկտների միջև հեռավորությունը տեղեկություն է պարունակում նրանց շփման բնույթի, հուզական վիճակի և հաղորդակցման սոցիալ-մշակութային առանձնահատկությունների վերաբերյալ (օրինակ, որքան մոտ է կանգնած զրուցակիցը, այնքան մեծ է հավանականությունը, որ նա վստահում է դիմացինին):

Է. Հոլլն առանձնացնում է չորս միջսուբյեկտային գոտիներ, որոնցից յուրաքանչյուրն անգիտակցաբար կիրառվում է այս կամ այն տիպի հաղորդակցման իրավիճակներում: Դրանք են՝ ինտիմ գոտի (0-0,5 մ), անձնային գոտի (0,5-1,2 մ), սոցիալական գոտի (1,2-3,7 մ) և հասարակական գոտի (3,7 մ ավելի): Ինտիմ գոտին հարմար է ընտանիքի անդամների և մտերիմ ընկերների միջև հաղորդակցման համար: Անձնային գոտին այն հեռավորությունն է, որում մարդը նախընտրում է հաղորդակցվել աշխատանքային պայմաններում, սոցիալական հաճելի միջավայրերում (օրինակ, խնջույքի ժամանակ):

Սոցիալական գոտի ն ձևական բնույթի հանրային շփումների համար հարմար հեռավորությունն է, օրինակ, անծանոթների հետ, գործնական հանդիպումների ժամանակ, փոքր խմբերի հետ հաղորդակցվելիս: Հասարակական գոտին անցնում է միջանձնային շփման համար հարմար հեռավորությունը և մեծամասամբ ծառայում է մեծ խմբերի հետ հրապա-

րակային հաղորդակցման համար:

Է. Հոլլի դոկտրինայի համաձայն՝ մարդն իր անձնական տարածությանը (անմիջականորեն նրան շրջապատող տարածությանը) անգիտակցաբար վերաբերվում է ինչպես սեփական «ես»-ին: Հետևաբար, հաղորդակցման ընթացքում ներխուժումն անձնային և հատկապես ինտիմ տարածք ընկալվում է որպես անձնական ազատության նկատմամբ ոտնձգություն և նպաստում է անձի պաշտպանական կամ հարձակվողական դիրքի ակտիվացմանը:

Անձնային տարածքի չափսերը, ուր այլոց ներխուժումն անձի կողմից չի թույլատրվում, մշակութորեն պայմանավորված են և տարբերվում են առանձին ազգությունների և մշակույթի կրողների մոտ:

Հաղորդակցման հեռավորության գործոնը կարևոր դեր է խաղում հաղորդակցման արդյունավետության հարցում, քանի որ էականորեն ազդում է սուբյեկտի հուզական հարմարավետության կամ ճնշվածության զգացման վրա: Օրինակ, մարդու դիմադրելու կամքը կոտրելու նպատակով կարող է կիրառվել նրա անձնային կամ ինտիմ տարածք նպատակային ներխուժումը (ֆիզիկական վնասում, ցավի պատճառում, չափազանց մոտ հաղորդակցում), որի ժամանակ հասցվում է նաև հոգեբանական վնաս:

> ▶ **Դատավարության կողմերի առավել ապահով և հարմարավետ հաղորդակցման հեռավորությունը սոցիալական գոտին է, ինչը թույլ է տալիս լինելու հաղորդակցման մեջ ակտիվորեն ներգրավված՝ առանց անձնական տարածքի ներխուժման վտանգի:**

Խոսքային կամ վերբալ հաղորդակցման հիմնական միջոցներն են ***բանավոր և գրավոր խոսքը***:

Բանավոր խոսք: Բանավոր խոսքը պատմականորեն

նախորդում է գրավորին, որի խոսակցական–արտասանական իրացումն է: Այն հիմնականում բարձրաձայն խոսակցություն է. կարելի է ձայնագրել ու վերարտադրել, հաղորդել տեխնիկական միջոցներով (հեռախոս, ռադիո, համակարգիչ): Այն նույնպես ունի իրադրային պայմանավորվածություն, մասնավորապես՝ հաղորդակցվողների փոխհարաբերությունները, հաղորդողի հոգեվիճակը, տրամադրությունը և այլն: Այս դեպքում առանձնակի նշանակություն են ստանում ուղեկցող միջոցները (շարժուձևերի գործադրումը): Արտահայտության ձևերն են՝ զրույցը, երկխոսությունը, բանավեճը, վեճը, զեկուցումը, դասախոսությունը, ճառը, մենախոսությունը, հայտարարությունը, կոչը, երգը, չափածո և արձակ խոսքը: Բանավոր խոսքը սահմանափակված է տարածականորեն (բանավոր կարելի է հաղորդակցվել միայն լսելի տարածության վրա՝ չհաշված տեխնիկական միջոցների գործադրումը) և ժամանակով (բանավոր կարող են հաղորդակցվել միայն տվյալ սերնդի մարդիկ, ժամանակակիցները): Խոսելու ունակությունը կամ հռետորական արվեստը սովորեցնում էին դեռ հեռավոր անտիկ ժամանակներում: Այն ենթադրում է մտքերը ճիշտ ձևակերպելու ունակությունը, հաղորդակցության մեջ զրուցակցի արձագանքով կողմնորոշումը: Ներկայումս քաղաքակիրթ աշխարհը պահանջում է տիրապետել խոսակցական մշակույթի հիմքերին:

Խոսքը հաղորդակցության ժամանակ ուղղված է զրուցակցին՝ սեփական տեսակետի ճշտության մեջ համոզելու նպատակով: **Խոսքի համոզիչ լինելը** որոշվում է հետևյալ գործոններով.

1. ***Հոգեբանական մթնոլորտի բնույթը***, որը կարող է լինել բարենպաստ կամ անբարենպաստ, բարյացակամ կամ անբարյացակամ:

2. ***Խոսքի մշակույթը***: Խոսակցական հաղորդակցության մշակույթը նախևառաջ լեզվին ազատ տիրապե-

տելն է: Եթե հաղորդակցության ժամանակ մենք կողմնորոշված ենք մեր, այլ ոչ թե զրուցակցի վրա, ապա մենք թույլ ենք տալիս բնորոշ սխալներ, օրինակ, շարունակում ենք խոսել առանց հաշվի առնելու՝ արձագանքո՞ւմ է լսողը, թե՝ ոչ: Առանց զրուցակցի հանդեպ կողմնորոշման, արտահայտությունները կրում են մենախոսության (մոնոլոգ) բնույթ: Տեղեկության կորուստները նման մենախոսական հաղորդակցության ժամանակ կարող են հասնել մինչև 50%-80%-ի: Հաղորդակցության առավել արդյունավետ ձևը երկխոսությունն է (դիալոգ), որի հիմքում ընկած է հարցեր տալու ունակությունը:

Զրույցի ընթացքը կախված է նաև հարցադրումների հաջողությունից: Հիմնականում գոյություն ունեն հինգ տիպի հարցեր՝ ***բաց, փակ, կենտրոնացնող, հայելային և ուղղորդող***:

- **Բաց հարցերն** առավելապես խթանում են անձի ազատ պատմությունը և զուգորդությունները: Դրանք չեն սահմանափակում անձին պատասխանի ընտրության մեջ, ինչպես նաև չեն ուղղորդում նրա պատասխանը: Տեղեկության ակնկալվող հարցումն հիմնականում իրականացվում է բաց հարցերի միջոցով: Բաց հարցեր տալուց կարելի է մի փոքր թեքվել առաջ դեպի զրուցակիցը և բացել ձեռքի ափերը, ընդունել նախնական դիրքը և հետո լռեք: Այս երկու ժեստերը՝ առաջ թեքվելը և ձեռքի ափերը բացելը ցուցադրում են, որ դուք «բաց» եք և բարյացակամ, իսկ դադարը հուշում է զրուցակցին, որ խոսելու հերթն իրենն է, և դուք սպասում եք: Բաց հարցերի օրինակներ են՝

  - ինչպիսի՞ն է ձեր կարծիքը...,

  - ինչպե՞ս կբացատրեք...,

  - դուք ի՞նչ եք մտածում...,

  - պատմեք, խնդրեմ...:

Նման հարցադրումները ներառում են նաև հարցեր՝ ուղղված պատասխանի պարզաբանմանը. *«Դուք նշեցիք…, պատմեք ինձ ավելի շատ այդ մասին»* և այլն: Բաց հարցերն առավել մեծ չափով են նպաստում անձնային բնույթի մանրամասների դուրսբերմանը, ինչպես նաև վստահելի հարաբերությունների կառուցմանը:

- **Փակ հարցերը** ենթադրում են միանշանակ պատասխան կամ նախապես ենթադրելի պատասխանների այլընտրանք՝ «այո-ոչ», օրինակ՝ *«Նա սպառնո՞ւմ էր ձեզ»*, կամ տարբերակի ընտրությամբ հարցեր, օրինակ, *«Նա կանգնա՞ծ էր, թե՝ նստած»*: Փակ հարցերը պակաս ինֆորմատիվ են և կարող են հանգեցնել անձի ներփակմանը, կաշկանդվածությանը և տագնապին: Փակ հարցերը հաճախ ինչում են կտրուկ, երբեմն՝ ոչ շատ կոռեկտ, և ակնկալում են կոնկրետ պատասխաններ: Հաղորդակցումը սկսում է նմանվել հարցաքննության, և զրույցն ավարտվում է: Փակ հարցերը նախատեսված են ոչ թե մանրամասն տեղեկությունների ստացման համար, այլ կողմերի համաձայնության կամ անհամաձայնության հաստատումը ստանալու համար:

- **Կենտրոնացնող հարցերը** նպաստում են կոնկրետ տեղեկության ստացմանը, շատ օգտակար են փաստահավաք գործընթացում: Դրանք կենտրոնացնում են զրուցակցի ուշադրությունը դետալների վրա և օգնում են զրույցին տալ կառուցվածք: Կենտրոնացնող հարցերի օրինակներ են՝ *«Ի՞նչ գույնի էր նրա վերնաշապիկը», «Ո՞վ կար նրա հետ», «Որտե՞ղ նա ձեզ դիպչեց», «Ե՞րբ դա տեղի ունեցավ», «Ինչպե՞ս դուք դուրս պրծաք» «Ինչո՞ւ նա ձեզ հարվածեց»* (կարևոր է նշել, որ բռնության ենթարկված անձանց հետ ավելի լավ է խուսափել «ինչո՞ւ» հարցից, քանի որ այն պարունակում է մեղադրման տարր): Լավագույն տարբերակը բաց, փակ և կոնկրետացնող

հարցերի ճկուն համադրությունն է, ինչը թույլ է տալիս զրույցը վարել դինամիկ կերպով և առավելագույն չափով բարձրացնել դրա արդյունավետությունը[2]:

- Բաց երկխոսության անընդհատությունն ապահովելու համար կարելի է օգտագործել նաև **հայելային հարցեր**: Հայելային հարցը զրուցակցի արտահայտած մտքի մի մասի կրկնումն է՝ հարցական ինչերանգով, որի նպատակն է դրդել զրուցակցին կողքից տեսնել իր սեփական կարծիքը կամ միտքը:

  Օրինակ,

  - *Ես այլևս երբեք չեմ գնա այնտեղ:*

  - *Երբե՞ք:*

Հայելային հարցերը շատ ավելի լավ արդյունք են տալիս, քան մշտական «ինչո՞ւ» հարցերի տարափը, որը մեծամասամբ առաջացնում է պաշտպանական արձագանք, պատրվակների, պատճառների որոնում և կարող է հանգեցնել կոնֆլիկտների:

- ***Թելադրող* կամ *ուղղորդող* հարցեր**: Չնայած որոշ դեպքերում ուղղորդող հարցերը *(«Նա համբուրեց ձեզ, այդպես չէ՞», «Դուք չեք ուզում, չէ՞, որ նա մնա անպատիժ»)* կարող են լինել օգտակար, այնուամենայնիվ, դրանք հարցերի տեսակներից առավել վտանգավորը և անթույլատրելին են: Նման ձևով կառուցվող հարցադրումներն իրենց մեջ կրում են անձին մանիպուլյացիայի ենթարկելու միտում, ինչը հստակ հակասում է զրույցի և հաղորդակցման էթիկական նորմերին և կարող է վնասել անձի հոգեվիճակին:

[2] Եթե առկա է կոնկրետ տեղեկություն ստանալու նպատակ, ապա առավելապես օգտակար են փակ և կենտրոնացնող հարցերը, մինչդեռ բաց հարցը պահանջում է բացատրություն, զրուցակցի տեսակետի ընդլայնված շարադրանք, զրույցի շարունակություն: Այս կարգի հարցեր տվողը համարվում է հետաքրքիր, անկեղծ, ուշադիր զրուցակից:

3. **Լսելու ունակությունը:** Առհասարակ հաղորդակցության հաջողությունը կախված է ոչ միայն խոսելու, այլև լսելու ունակությունից: Լսել կարելի է տարբեր ձևերով: Լսել չկարողանալը ոչ արդյունավետ հաղորդակցման հիմնական պատճառն է, հենց դա է հաճախ հանգեցնում անհամաձայնության, թյուրըմբռնության և շփման խնդիրների: Լսելը լսողից պահանջում է էներգիայի զգալի ծախս, հաղորդակցության մշակույթի որոշակի ունակություններ: Գոյություն ունի լսելու 2 տեսակ.

- Ոչ ռեֆլեքսիվ կամ պասիվ լսում. ուշադիր լսելու ունակություն, երբ լսողը չի միջամտում զրուցակցի խոսքին, գրեթե չի օգտագործում մարմնի լեզուն, այլ պարզապես լսում է նրան: Պատասխանները ոչ ռեֆլեքսիվ լսման դեպքում հասցված են նվազագույնի՝ *«այո», «ինչ եք ասում», «շարունակեք, խնդրեմ», «հետաքրքիր է»* և այլն: Լսելու նման եղանակը քիչ արդյունավետ է ինչպես տեղեկատվության բացահայտման, այնպես էլ վստահելի հարաբերություններ կառուցելու առումներով:
- Ռեֆլեքսիվ կամ ակտիվ լսումն իրենից ներկայացնում է հաղորդման իմաստի վերծանման գործընթաց: Հաղորդման իրական արժեքը պարզելուն օգնում են ռեֆլեքսիվ պատասխանները, որոնց մեջ կարելի է նշել՝ պարզաբանումը *(«ես չհասկացա,,,),* պարաֆրազը վերաֆրազավորումը *(«դուք մտածում եք, որ...», «եթե ես ձեզ ճիշտ հասկացա...», «կարծես, դուք ուզում եք ասել...»),* զգացողությունների և հույզերի արտացոլումը *(«դուք մի քիչ հուզված եք....», «կարծես, դուք հիմա շատ բարկացած եք»)* և ամփոփումը *(«ձեր հիմնական միտքը, որքան ես հասկացա...», «եթե փորձեմ ամփոփել ձեր ասածը...»*):

Ակտիվ լսելու հմտություններն էականորեն մեղմում են հաղորդակցման ապակոդավորման սխալները և աղճատումները, քանի որ ուղղված են ուղարկողից ճշգրտելու տեղեկությունը և ապահովելու արդյունավետ հուզական արձագանքը:

Ռեֆլեքսիվ լսելու համար չափազանց կարևոր է ապրումակցման ունակությունը: Ապրումակցումը կամ էմպաթիան մարդու հուզական վիճակի գիտակցումը և նրա փորձառությունը կիսելու ընդունակությունն է՝ յուրօրինակ միաձուլում դիմացինի անձի և խնդիրների հետ: Այն դիմացինի հոգեվիճակն ինչպես սեփականը զգալու ընդունակությունն է, սակայն գիտակցելով, որ դրանք դիմացինինն են: Էմպաթիկ լսողի համար կարևոր չէ խոսողի ճիշտ կամ սխալ լինելը, քանի որ չեն լինում ճիշտ կամ սխալ զգացմունքներ և ապրումներ: Էմպաթիկ վերաբերմունքը նպաստում է դիմացինի հոգեվիճակի հասկացմանը և, իր հերթին, հեշտացնում է նրա հետ հաղորդակցումը:

Այսպիսով, ռեֆլեքսիվ կամ ակտիվ լսելն անձնական և գործնական հարաբերություններում զրույցի վարման եղանակ է, երբ լսողն ակտիվորեն ցույց է տալիս, որ նա լսում և հասկանում է խոսողի ինչպես մտքերը, այնպես էլ՝ հույզերն ու հոգեվիճակը: Զրուցակցին ակտիվ լսել նշանակում է՝

- նրան տալ հասկանալ, թե դուք ինչ լսեցիք իր ասածներից,
- վերադարձնել զրուցակցին ասվածի հետ կապված իր իսկ ապրումները:
- Ակտիվ լսելու կիրառման արդյունքում՝
- զրուցակիցը սկսում է ձեզ վերաբերվել առավել մեծ վստահությամբ,
- զրուցակիցը պատմում է ձեզ շատ ավելի շատ, քան կպատմեր սովորական իրավիճակում,
- դուք հնարավորություն եք ստանում առավել լավ հասկանալու զրուցակցին և նրա ապրումները, դրդապատճառները, կարիքները,
- եթե զրուցակիցն անհանգստացած է կամ բարկացած, ակտիվ լսելն օգնում է անվնաս թոթափել այդ հույզերը:

Ակտիվ լսելիս պետք է արտահայտել հետաքրքրվածություն զրուցակցի ասածների նկատմամբ, կիրառել չեզոք, գնահատական չարտահայտող բառեր, խուսափել քննադատությունից, զրուցակցին ընդհատելուց, հապճեպ եզրակացություններ անելուց, առարկելուց, մեղադրելուց, համոզելուց կամ խորհուրդ տալուց: Ընդհատման դեպքում պետք է ներողություն խնդրել, իսկ արտահայտվելուց հետո աշխատել միանգամից վերականգնել զրուցակցի մտքի «թելը»: Կիրառելի է հետևյալ արտահայտությունը՝ *«Շարունակեք, խնդրեմ, Դուք խոսում էիք…»:*

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ արդյունավետ հաղորդակցում ապահովելու համար կարևոր նշանակություն ունեն ոչ միայն հոգեբանական գործոնները, այլ նաև վարքագծի ու էթիկայի համընդհանուր և մասնագիտական կանոնների պահանջների պահպանումը:

Հարկ է նկատի ունենալ, որ ինչպես միջազգային իրավական տարբեր ակտերով, այնպես էլ ներպետական օրենսդրությամբ կարգավորված են վարքագծի ու էթիկայի կանոնների այն թույլատրելի սահմանները, որոնք անհրաժեշտ նախապայմաններ են հարցաքննության և ընդհանրապես հաղորդակցման արդյունավետությունը բարձրացնելու համար: Ընդ որում, ներպետական իրավակարգավորումները հիմնված են միջազգային իրավական համապատասխան ակտերի իրավադրույթների ու հանրաճանաչ սկզբունքների վրա:

Դրանց շարքում հիմնարար նշանակություն ունեն ներքոհիշյալ իրավական ակտերը.

Միջազգային իրավական ակտեր

- 1985 թվականին ընդունված ՄԱԿ-ի «Դատական իշխանության անկախության մասին հիմնարար սկզբունքներ»,
- 1950 թվականին ընդունված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիա,

- 1994 թվականին ընդունված Եվրոպայի խորհրդի «Դատավորների անկախության, արդյունավետության և դերի մասին» թիվ R (94) 12 առաջարկություն,
- 1998 թվականի «Դատավորի կարգավիճակի մասին» եվրոպական խարտիա,
- Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽԽ/ CCEJ) ԿԱՐԾԻՔ թիվ 3 (2002),
- Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽԽ/ CCEJ) ԿԱՐԾԻՔ թիվ 6 (2004),
- Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽԽ/ CCEJ) ԿԱՐԾԻՔ թիվ 7 (2005),
- Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽԽ/ CCEJ) ԿԱՐԾԻՔՆԵՐ թիվ 12 և թիվ 4 (2009),
- Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽԽ/ CCEJ) ԿԱՐԾԻՔ թիվ 14 (2011),
- Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽԽ/ CCEJ) ԿԱՐԾԻՔ թիվ 16 (2013),
- Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽԽ/ CCEJ) ԿԱՐԾԻՔ թիվ 18 (2015):

Ներպետական օրենսդրություն

- ՀՀ Սահմանադրություն,
- «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենք,
- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք,
- «Դատախազության մասին» ՀՀ օրենք,
- «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք,
- «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք,
- «Զանգվածային լրատվության միջոցների մասին» ՀՀ օրենք,

- ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի 19.10.2019թ. № 1-Լ որոշումը «Փաստաբանի վարքագծի կանոնագիրք հաստատելու մասին»,
- Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի 2019թ. հունվարի 11-ի ԲԴԽ-2-Ն-1 որոշումը «Զանգվածային լրատվության միջոցների հետ Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների փոխհարաբերության կանոնները հաստատելու մասին»:

Թեմա 2.

Դատավարության կողմերի և մասնակիցների հետ հաղորդակցման կազմակերպման առանձնահատկությունները՝ ընկալունողականության բարձրացման համատեքստում

Նախորդ թեմայի շրջանակներում ներկայացված միջազգային իրավական ակտերի ցանկից՝ ԵԴԽԽ կարծիքներն ընդգրկում են դատական իշխանության և դատական մարմինների կազմակերպման ու գործունեության սկզբունքների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպման արդյունավետության բարձրացման ամենալայն շրջանակները:

Հետաքրքրական է, որ դրանց համակարգային ամբողջական վերլուծությունը ցույց է տալիս, որ դատական համակարգի համար լրջագույն, ինչու չէ՝ նաև կենսարար նշանակության փաստաթղթերն «կենդանի օրգանիզմի» դերակատարություն ունեն, քանի որ շոշափում են արդարադատության գլոբալ հիմնախնդիրները՝ հաշվի առնելով նաև եվրոապական մայրցամաքային իրավական համակարգի և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիական զարգացման արդի վիճակն ու զարգացման միտումները:

Այլ կերպ՝ ցայսօր ընդունված ԵԴԽԽ Կարծիքները, հիմք ընդունելով վերջիններիս կարգավորման առարկաների բազմաշերտ բնույթը, պայմանականորեն կարելի է դասակարգել երկու **հիմնական խմբի:**

Առաջին խմբի մեջ կարելի է դիտարկել այնպիսիք, որոնք նվիրված են ավանդական կամ արդարատադության հիմնարար սկզբունքներին ու հիմնահարցերին, օրինակ՝ դատարանների ու դատավորների անկախությանը, անաչառությանը, դատարանների գործունեության արդյունավետության բարձրացմանը և այլն:

Երկրորդ խմբին կարելի է վերագրել այն կարծիքները, որոնք առավելապես կենտրոնացված են այնպիսի հիմնահարցերի վրա, ինչպիսիք են՝ արդարադատության մատչելիության ապահովումը, դատարանների դերի ու հեղինակության բարձրացումը, դատավարության մասնակիցների ու հասարակական կարծիքի ձևավորումն ու վստահության բարձրացումը, բարենպաստ մթնոլորտի ապահովումը՝ հատուկ ընդգծելով տեղեկատվական ժամանակակից տեխնոլոգիաների արդյունավետ կիրառումն ինչպես դատարանների ամենօրյա աշխատանքում, այնպես էլ դատավարության մատչելիության ու հանրային դրական կարծիքի ձևավորման գործում: Այս տեսանկյունից միանգամայն տեղին է հիշատակել ԵԴԽԽ-ի թիվ 14 (2011) Կարծիքը, որը վերաբերում է տեղեկատվական տեխնոլոգիաներին ու արդարադատության մատչելիությանը, որում, մասնավորապես (19-21-րդ կետեր), սահմանված է հետևյալը.

Դատավարության մասին լիարժեք, հավաստի և թարմացված տեղեկություններն արդարադատության մատչելիության հիմնարար երաշխիքն են, ինչպես սահմանված է Կոնվենցիայի (ՄԻԵԿ) 6-րդ հոդվածում: Ուստի դատավորները պետք է ապահովեն, որ դատական վարույթում ներգրավված ցանկացած անձ կարողանա օգտվել հավաստի տեղեկություններից: Այդպիսի տեղեկություններ են դատական հայց հարուցելու համար անհրաժեշտ մանրամասները կամ պահանջները: Նման միջոցներն անհրաժեշտ են ապահովելու համար կողմերի իրավահավասարություն:

Ամեն դեպքում արդարադատությունը չի կարելի առանձնացնել դրանից օգտվողներից և տեղեկատվական տեխնոլոգիական զարգացումը չի կարելի օգտագործել՝ արդարացնելու համար օրենքի պահանջները կատարելուց դատարանների ազատումը:

Տեղեկատվական տեխնոլոգիան ստեղծում է նոր հնարավորություններ դատարանից օգտվողների դատական համակարգի, դրա գործունեության, նախադեպի, դատական

ծախսերի, վեճերի լուծման այլընտրանքային միջոցների և այլ-նի մասին ընդհանուր բնույթի տեղեկություններ տրամադրելու համար: ԵԴԽԽ-ն առաջարկում է, որ դատական համակարգը լիարժեքորեն օգտագործի համացանցը և այլ նոր տեխնոլոգիաները՝ լայն հանրությանը տրամադրելու համար այն տարրերը, որոնք ԵԴԽԽ 6-րդ Կարծիքում (12-րդ պարբերություն և հաջորդիվ) արդեն իսկ տրված եզրակացության համաձայն պետք է լայնորեն հրապարակվեն:

ԵԴԽԽ-ի փաստաթղթերի համատեքստում արդյունավետ հաղորդակցման կազմակերպման բաղադրիչների շարքում, inter alia, կարելի է առանձնացնել նաև դատավարության կողմերի ու մասնակիցների մասնագիտական ու վարվելակերպի էթիկայի կանոնները, որոնք ոչ պակաս կարևոր նշանակություն ունեն նաև թե՛ դատավարության որակի և թե՛ հանրային կարծիքի ձևավորման գործընթացի համար:

Ընդ որում, հարկ է նշել, որ այդ համակարգում առանցքային դերակատարությունը վերապահված է դատավորներին ու դատական ծառայողներին: Այլ կերպ՝ չի կարելի խոսել դատավարության մասնակիցների պատշաճ վարքագծի կամ վերջիններիս հետ արդյունավետ հաղորդակցություն հաստատելու մասին, առանց ակնկալելու այդպիսի վարքագիծ կամ էթիկայի կանոնների պահանջների պահպանում դատավորի և դատական ծառայողի կողմից:

Այս կապակցությամբ ԵԴԽԽ-ի թիվ 3 (2002) Կարծիքի 44-րդ կետում առանձնահատուկ շեշտադրվում է. *«Վարվելակերպի կանոնագրքերը կարևոր օգտակարություն ունեն. նախ՝ դրանք օգնում են դատավորներին՝ լուծելու մասնագիտական էթիկայի հետ կապված հարցեր, նրանց ինքնավարություն են տալիս որոշումների կայացման ընթացքում և երաշխավորում են նրանց անկախությունն այլ մարմիններից: Երկրորդ՝ դրանք հանրությանն իրազեկում են, թե ինչ չափանիշներ պետք է ակնկալել դատավորներից: Երրորդ՝ նրանք նպաստում են հանրության այն համոզմանը, որ արդարադատությունն իրականացվում է անկախ և անաչառ»:*

Արդյունավետ հաղորդակցության կազմակերպման նպատակով հարկ է նկատի ունենալ նաև դատավորի մասնագիտական վարքագծի այն պահանջները, որոնք սահմանված են Բանգալորյան սկզբունքներով: Ընդ որում, այդ պահանջները հիմնականում իրենց արտահայտությունն են գտել նաև ներպետական օրենսդրության առանձին իրավակարգավորումներում:

Այսպես, Բանգալորյան սկզբունքները հռչակում են, որ ***«Վարքագծի կանոնների պահպանումը և դրա դրսևորումը դատավորի ողջ գործունեության կարևորագույն մասն է»***, որի կիրառումը ենթադրում է, որ՝

4.1 *Դատավորը պետք է պահպանի վարքագծի կանոնները և դատավորի պաշտոնի հետ կապված ցանկացած գործողություն կատարելիս զերծ մնա ոչ պատշաճ տպավորություն թողնելուց:*

4.2 Որպես հասարակության սևեռուն ուշադրության օբյեկտ՝ դատավորը պարտավոր է գիտակցաբար և ինքնակամ իր համար ընդունել անձնական սահմանափակումներ, չնայած նրան, որ դրանք շարքային քաղաքացու համար կարող են դժվար իրականանալի թվալ: Մասնավորապես՝ դատավորի վարքագիծը պետք է համապատասխանի դատավորի պաշտոնի արժանապատվությանը:

4.3 Այն դատարանում, որտեղ դատավորն աշխատում է, մշտապես գործունեություն ծավալող փաստաբանների հետ ունեցած իր անձնական հարաբերություններում դատավորը պետք է խուսափի այնպիսի իրավիճակներից, որոնք կարող են հիմնավոր կասկածի կամ որևէ կողմին հատուկ վերաբերմունքի արժանացնելու կամ կողմնապահության տպավորություն ստեղծել:

4.4 Դատավորը չի մասնակցում այն գործի քննությանը, որում դատավորի ընտանիքի որևէ անդամ հանդես է գալիս որպես դատավարության կողմ կամ որևէ կերպ առնչություն ունի գործի հետ:

4.5 Դատավորը չի փոխանցում իր բնակարանը փաստաբաններին՝ իրենց վստահորդներին կամ գործընկերներին ընդունելու համար:

4.6 Դատավորը, ինչպես ցանկացած այլ քաղաքացի, ունի ազատ արտահայտվելու, դավանանքի, միավորման և հավաքների իրավունք, սակայն այդ իրավունքների իրականացման ճանապարհին դատավորը միշտ պետք է դրսևորի իրեն այնպես, որ բարձր պահի դատավորի պաշտոնի համբավը և զերծ մնա այնպիսի գործողություններից, որոնք անհամատեղելի են դատական իշխանության անաչառության և անկախության հետ:

4.7 Դատավորը պետք է տեղեկացված լինի գաղտնի բնույթի իր անձնական և նյութական շահերի մասին, ինչպես նաև ողջամիտ միջոցներ ձեռնարկի տեղեկանալու իր ընտանիքի անդամների նյութական շահերի մասին:

4.8 Դատավորը չպետք է թույլ տա, որպեսզի իր ընտանիքի անդամները, սոցիալական կամ այլ տիպի հարաբերությունները ոչ պատշաճ ձևով ազդեն դատավորի գործառույթների իրականացման հետ կապված իր գործողությունների, ինչպես նաև իր կողմից կայացվող դատական ակտերի վրա:

4.9 Դատավորն իրավունք չունի դատական համակարգի հեղինակությունն օգտագործել կամ թույլ տալ, որ այն օգտագործվի դատավորի, դատավորի ընտանիքի անդամի կամ մեկ այլ անձի անձնական շահերն առաջ տանելու նպատակով: Դատավորը չպետք է այնպիսի տպավորություն ստեղծի կամ թույլ տա, որ ուրիշները տպավորություն ստեղծեն, որ դատավորի լիազորությունների իրականացման վրա որևէ մեկն անհարկի ազդեցություն է գործում:

4.10 Դատավորին ի պաշտոնե հայտնի դարձած գաղտնի տեղեկությունները չպետք է օգտագործվեն կամ

բացահայտվեն դատավորի կողմից իր պարտականությունների կատարման հետ կապ չունեցող որևէ նպատակով:

4.11 Իր պարտականությունները պատշաճ կատարելու դեպքում դատավորն իրավունք ունի՝

4.11.1 զբաղվել գրական գործունեությամբ, դասախոսություններ կարդալ, դասավանդել և մասնակցել իրավունքի, իրավական համակարգի, արդարադատության իրականացման կամ նմանատիպ այլ հարցերի հետ առնչվող միջոցառումներում:

4.11.2 Հրապարակային լսումների ժամանակ հանդես գալ պաշտոնական մարմնի առջև իրավունքի, իրավական համակարգի, արդարադատության իրականացման և այլ նմանատիպ հարցերով:

4.11.3 Պաշտոնական մարմնի կամ այլ պետական կոմիտեի, հանձնաժողովի, խորհրդակցական մարմնի անդամ լինելը, եթե նման անդամակցությունը չի խանգարում դատավորին լինել անաչառ և պահպանել քաղաքական չեզոքություն:

4.11.4 Զբաղվել այլ գործունեությամբ, եթե այդ գործունեությունը համապատասխանում է դատավորի պաշտոնի բարձր համբավին կամ այլ կերպ չի խոչընդոտում դատավորի պարտականությունների կատարմանը:

4.12 Դատավորի պաշտոնը զբաղեցնելու պահին դատավորը չպետք է զբաղվի իրավաբանական գործունեությամբ:

4.13 Դատավորն իրավունք ունի հիմնել դատավորների միություն կամ դառնալ դրա անդամ, կամ էլ մասնակցել դատավորների շահերը ներկայացնող այլ կազմակերպությունների գործունեությանը:

4.14 Դատավորը և դատավորի ընտանիքի անդամները

չպետք է պահանջեն կամ ընդունեն որևէ նվեր, ժառանգություն, վարկ կամ ծառայություն ի հատուցումն այն բանի, որ արվել է, կարվի կամ չի արվել իր կողմից ծառայական պարտականությունները կատարելիս:

4.15 Դատավորը գիտակցաբար չպետք է թույլ տա դատարանի աշխատակիցներին կամ իր ազդեցության, իշխանության կամ ղեկավարության ներքո գտնվող այլ անձանց պահանջել կամ ընդունել որևէ նվեր, ժառանգություն, վարկ կամ ծառայություն ի հատուցումն այն բանի, որ արվել է, կարվի կամ չի արվել իր կողմից ծառայական պարտականությունները կամ գործառույթները կատարելիս:

4.16 Օրենքով նախատեսված դեպքերում և տեղեկատվության բացահայտման մասին օրենքով նախատեսված պահանջների համաձայն՝ դատավորը կարող է համապատասխան առիթներով հիշարժան նվեր, պարգև և արտոնություն ստանալ, եթե դրանք մտադիր չեն որևէ կերպ ազդել դատավորի պարտականությունների կատարման վրա կամ տպավորություն ստեղծել դատավորի կողմնակալ լինելու մասին:

Արդյունավետ հաղորդակցման ապահովման տեսանկյունից՝ կարևոր է նշել, որ նույն Բանգալորյան սկզբունքները (6.6-րդ կետ) սահմանում են, որ բոլոր դատական նիստերի ընթացքում **դատավորը պետք է պահպանի հասարակական կարգ ու կանոն և պարտավոր է համբերատար, արժանապատիվ և բարեկիրթ վերաբերմունք դրսևորել գործով կողմերի, երդվյալ ատենակալների, վկաների, իրավաբանների և բոլոր այն անձանց հանդեպ, ում հետ առնչվում է ի պաշտոնե: Դատավորը նման վարքագիծ պետք է պահանջի նաև կողմերի օրինական ներկայացուցիչներից, դատարանի աշխատակազմից և դատավարության մասնակից բոլոր անձանցից, ովքեր գտնվում են դատավորի ազդեցության,**

ղեկավարության կամ վերահսկողության ներքո:

Ինչ վերաբերում է խնդրո առարկայի վերաբերյալ ներպետական օրենսդրության իրավակարգավորումներին, ապա պետք է նշել, որ ՀՀ դատական օրենսգրքի 66-րդ հոդվածը սահմանում է՝ դատավորի վարքագծի կանոնները սահմանվում են սույն օրենսգրքով և պարտադիր են բոլոր դատավորների համար:

Միևնույն ժամանակ վերը նշված նորմով սահմանված է, որ դատավորի վարքագծի կանոնների նպատակն է դատավորի կողմից վարքագծի կանոնները պահպանելու միջոցով նպաստել դատարանի անկախության ու անաչառության ապահովմանը, ինչպես նաև դատարանի նկատմամբ վստահության և հարգանքի ձևավորմանը:

Վարքագծի կանոնների մեկնաբանությունն ու կիրառումը պետք է նպաստեն վարքագծի կանոնների նպատակի իրականացմանը:

Բացի դրանից, արդյունավետ հաղորդակցման ապահովման տեսանկյունից հատկանշական են նաև ՀՀ դատական օրենսգրքի որոշ իրավակարգավորումներ, որոնք ներկայացվում են ստորև.

Հոդված 67. Վարքագծի կանոնները պահպանելու պարտականությունը

1. Դատավորը պարտավոր է պահպանել սույն օրենսգրքով սահմանված վարքագծի կանոնները: Վարքագծի կանոնները չպահպանելը սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով կարող է հանգեցնել դատավորի կարգապահական պատասխանատվության:

2. Դատավորը պարտավոր է մասնակցել վարքագծի բարձր չափորոշիչների արմատավորմանը՝ ինչպես անձամբ պահպանելով վարքագծի կանոնները, այնպես էլ հետամուտ լինելով այլ դատավորների և դատարանի աշխատակազմի կողմից դրանց պահպանմանը:

3. Դատական ծառայողների կողմից վարքագծի կանոնների խախտման մասին տեղյակ լինելու դեպքում դատավորն այդ մասին պարտավոր է հայտնել կարգապահական պատասխանատվության միջոց կիրառող իրավասու մարմնին:

Հոդված 68. Դատավորի էթիկայի կանոնները

1. Ընդհանուր ժողովը սահմանում է դատավորի էթիկայի կանոններ, որոնք ներառվում են դատավորների վերապատրաստման ծրագրերում:

2. Դատավորի էթիկայի կանոնները դատավորի անձնական և վարքագծային սահմանափակումներ են, որոնք դատավորն ընդունում է գիտակցաբար և ինքնակամ՝ նպատակ ունենալով բարձր պահել դատավորի և դատական իշխանության հեղինակությունը, ապահովել իր արդարամտության, բարեկրթության և հավասարակշռվածության հասարակական ընկալումը:

3. Էթիկայի կանոնների խախտումը չի կարող հանդիսանալ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:

Հոդված 69. Դատավորի վարքագծի ընդհանուր կանոնները

1. Ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում դատավորը պարտավոր է՝

...

5) զերծ մնալ դատավորի մասնագիտական և անձնական որակները հրապարակայնորեն կասկածի տակ առնելուց.

...

8) զերծ մնալ այնպիսի հայտարարություն անելուց կամ

վարքագիծ դրսևորելուց, որը վտանգում կամ կասկածի տակ է առնում դատավորի կամ դատարանի անկախությունը և անաչառությունը.

…

12) չնախաձեռնել, թույլ չտալ և հաշվի չառնել առանց դատավարության հակառակ կողմի կամ նրա փաստաբանի մասնակցության (“ex parte” (էքս պարտե), այսուհետ՝ ընդդիմազերծ) դատավարության մյուս կողմի կամ նրա փաստաբանի հետ շփումները, իսկ դատավորի կամքից անկախ ընդդիմազերծ շփումներ տեղի ունենալու դեպքում առաջին իսկ հնարավորության պարագայում հայտնել դրանց բովանդակությունն այն կողմին, որը մասնակից չի եղել այդ շփումներին՝ հնարավորություն տալով արձագանքելու: Սույն կանոնից բացառությունները թույլատրելի են միայն հետևյալ դեպքերում.

ա. երբ հանգամանքների բերումով ընդդիմազերծ շփումներն անհրաժեշտ են կազմակերպական նպատակներով, ինչպես, օրինակ՝ դատական նիստի ամսաթիվը և ժամը համաձայնեցնելու կամ դատավարության կազմակերպման այլ դեպքերում, և այն պայմանով, որ շփումները չեն վերաբերում գործի էությանը, դրանց արդյունքում դատավարության կողմերից մեկը չի ստանում դատավարական կամ այլ առավելություն մյուս կողմի նկատմամբ, և դատավորն առաջին իսկ հնարավորության պարագայում հայտնում է այդ շփումների բովանդակությունը մյուս կողմին՝ նրան հնարավորություն տալով արձագանքելու,

բ. երբ դատավորի կողմից միակողմանի շփումներ իրականացնելն ուղղակիորեն նախատեսված է օրենքով.

…

14) երբ դատավորը կիրառման ենթակա իրավունքի վերաբերյալ հարցերով խորհրդակցելու համար դիմում է

գործի ելքում չշահագրգռված մասնագետի (բացառությամբ այլ դատավորի, ինչպես նաև դատարանի աշխատակազմի այն աշխատակիցների, որոնց գործառույթը դատավորին արդարադատություն իրականացնելիս օժանդակելն է), ապա դատավորն առաջին իսկ հնարավորության պարագայում պարտավոր է կողմերին տեղեկացնել այդ մասնագետի ինքնության, ներկայացված հարցի վերաբերյալ ստացված կարծիքի մասին և հնարավորություն տալ նրանց այդ կապակցությամբ ներկայացնելու իրենց դիրքորոշումը:

Հոդված 70. Դատավորի վարքագծի կանոններն ի պաշտոնե գործելիս

1. Արդարադատության և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացման հետ կապված դատավորի պարտականությունները գերակա են նրա կողմից իրականացվող այլ գործունեության նկատմամբ:

2. Ի պաշտոնե գործելիս դատավորը պարտավոր է՝

…

3) լինել անաչառ և զերծ մնալ իր խոսքով կամ վարքագծով կողմնակալություն կամ խտրականություն դրսևորելուց կամ ողջամիտ, անկողմնակալ դիտորդի մոտ նման տպավորություն ստեղծելուց.

4) բարեխղճորեն և լիարժեք կատարել իր պաշտոնեական պարտականությունները, համագործակցել դատարանի աշխատակազմի և այլ դատավորների հետ.

5) հարգալից և բարեկիրթ վերաբերմունք ցուցաբերել դատավարության մասնակիցների, դատավորների, դատարանի աշխատակազմի և բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ դատավորը շփվում է ի պաշտոնե.

…

10) ապահովել իր պատշաճ մասնագիտական պատրաստվածությունն ու հմտությունների շարունակական կատարելագործումը.

…

12) դատական նիստերը վարել պատմուճանով.

…

14) ողջամտության սահմաններում իրեն դրսևորել այնպես, որ նվազագույնի հասցվեն ինքնաբացարկի անհրաժեշտություն առաջացնող դեպքերը.

…

16) տեղյակ պահել համապատասխանաբար՝ փաստաբանների պալատին կամ գլխավոր դատախազին փաստաբանի կամ դատախազի կողմից վարքագծի կանոնների այնպիսի խախտման մասին, որը կասկածի տակ է դնում այդ փաստաբանի կամ դատախազի ազնվությունը.

17) զանգվածային լրատվության միջոցների հետ շփումներն իրականացնել Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կանոններին համապատասխան:

Դատավարության ընթացքում կողմերի ու մասնակիցների հաղորդակցման իրավական հիմքերը, ինչպես նաև դրա կազմակերպման սկզբունքներն ու պայմանները *inter alia* նախատեսված են միջազգային-իրավական ակտերով, ԵՄ տարբեր կառույցների կողմից ընդունված առանձին փաստաթղթերով և ներպետական օրենսդրությամբ:

Այդուհանդերձ, դատավարության ընթացքում արդյունավետ հաղորդակցության ապահովման համար առանցքային նշանակություն ունի Բանգալորյան սկզբունքների լույսի ներքո դատավորի վարքագծի ձևերի ճշգրիտ սահմանումն ու դրանց

անշեղ պահպանումը[3], որոնցից առավել բնութագրականները կներկայացվեն ստորև:

Այսպես, դատավորի և դատարանի անկախության, անկողմնակալության և արդարության հանդեպ հասարակական վստահության ապահովման երաշխիք է դատավորի՝ «բարձր չափանիշներին» համապատասխանող վարքագիծը:

Անշուշտ, դատավորի կողմից «բարձր չափանիշներին» և, հետևաբար՝ նաև Բանգալորյան սկզբունքների շարքում ամրագրված սկզբունքներին չհամապատասխանող վարքագիծ դրսևորելը կարող է խարխլել դատավորի և դատարանի անկախության, անկողմնակալության և արդարության հանդեպ հասարակության վստահությունը: Ուստի տրամաբանական է, որ ակներև և համոզիչ արդարադատություն իրականացնելու համար դատավորը պետք է նախ և առաջ լինի անաչառ: Տեսանելի և համոզիչ արդարադատության իրականացումը պահանջում է դատավորից նաև հարգել օրենքը, դատական գործունեությունն իրականացնել իրավունքի գիտակցված ընկալմանը համապատասխան, ինչպես նաև պահպանել հասարակական բարոյականության նորմերը:

> ***Արդարադատությունը պետք է լինի ակներև, համոզիչ և ընկալվի որպես արդարության հաստատում, ինչը նշանակում է, որ թվացյալ անպատշաճությունը նույնքան բացասական է արդարադատության իրականացման համար, որքան իրական անպատշաճությունը:***

Հանրության վստահությունը պառակտվում է, երբ տպավորություն է ստեղծվում, որ դատավորն անպատշաճ վարքագիծ է դրսևորում: Հետևաբար, դատավորները պետք է խուսափեն

[3] Այս կապակցությամբ պետք է նշել, որ դեռևս 2012թ. ՀՀ դատավորների միության խորհրդի որոշմամբ ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ պատրաստվել և հրապարակվել է «Դատավորի վարքագծի կանոնների մեկնաբանություններ» վերտառությամբ ձեռնարկը:

ոչ միայն անպատշաճ վարքագիծ դրսևորելուց, այլ նաև՝ նման տպավորություն թողնելուց: Դատավորն իր վարքագիծը կարող է վերլուծել այն թեստի կիրառման միջոցով, թե արդյոք վարքագիծը և՛ դատարանում, և՛ դատարանից դուրս կողմնակի, խելամիտ դիտորդի կողմից ընկալվել է այնպես, որ դատավորը տվյալ դեպքում անկարող է անաչառ որոշում կայացնել:

Իրական անպատշաճություն

Դատավորը բոլոր վկաներին հարցաքննելուց առաջ նշում է, թե, հավանաբար, ինչ որոշում է կայացնելու կամ արտահայտվում է որևէ կողմի կամ վկայի ռասայի, կրոնի, տարիքի, սեռի կամ տեսքի վերաբերյալ: Անկողմնակալության դրսևորում է, երբ դատավորը որոշում է կայացնում հօգուտ այն կողմի, որը հանդիսանում է, ասենք, իր հարևանը, և նա կապեր ունի բարձրաստիճան պաշտոնատար անձանց շրջանում:

Թվացյալ անպատշաճություն

Դատավորը ռեստորանում ճաշում է այն իրավաբանի հետ, ով կողմերից մեկին է ներկայացնում այդ դատավորի վարույթում գտնվող գործերից մեկով: Դատավորը մանկուց ճանաչում է իրավաբանին, նրանք չեն խոսում գործի մասին, և դատավորը համոզված է, որ կարող է արդար որոշում կայացնել:

Ընդ որում, դատավորը պետք է հասարակության կողմից ընկալվի բարեկիրթ, հավասարակշռված և արդարամիտ նաև իր առօրյա կյանքում: Անձնական սահմանափակումները նրա ուղեկիցն են ինչպես աշխատանքում, այնպես էլ կենցաղում, խրախճանքի վայրում, ընկերական շրջապատում և այլն: Դատավորի նման վարքագիծը հասարակությանը վստահություն է ներշնչում և քաղաքացիների մոտ համոզմունք ձևավորում այն մասին, որ արդարություն որոնելիս նրանք այն անպայմանորեն կգտնեն դատարանում:

Այսինքն՝ ցանկացած քաղաքացի պետք է ընկալի դատավորի վարքն այնպես, որ վերջինս, լինելով յուրահատուկ իշխանության կրող, իրեն կարող է թույլ տալ որոշակի ազատություն իշխանական լծակներն օգտագործելիս, սակայն նա դա չի անում, ավելին՝ ինքնակամ հրաժարվում է նման վարքագիծ դրսևորելուց՝ դրանով իսկ դրական օրինակ ծառայելով շարքային քաղաքացիների համար:

> ***Դատավորը պետք է լինի արժանապատիվ, համբերատար ու բարեկիրթ: Նա պարտավոր է հարգալից վերաբերմունք դրսևորել գործով կողմերի, դատավարության այլ մասնակիցների, գործընկեր դատավորների, դատարանի աշխատակազմի և բոլոր այն անձանց հանդեպ, որոնց առնչվում է դատարանում: Դատավորը նման վարքագիծ պետք է պահանջի նաև դատավարության մասնակից բոլոր անձանցից:***

Դատավորը պետք է գիտակցի, որ օժտված է արդարադատություն իրականացնելու բացառիկ լիազորությամբ, որ որևէ այլ պաշտոնատար անձ չի կարող հանդես գալ իբրև դատական իշխանության կրող և լուծել դատարանի իրավասությանը ենթակա գործերը: Իր վարքագծով դատավորը հասարակության մոտ պետք է համոզմունք ձևավորի, որ կողմերը դատարանում հասնելու են արդարության:

Կողմերը կամ դատական գործընթացի մյուս մասնակիցները հաճախ չեն կողմնորոշվում, թե որ փաստերն ու իրադարձություններն են կարևոր գործի լուծման համար, և կարող են բացատրություն, ցուցմունք տալ կամ ճառով հանդես գալ երկար, խոսել գործի հետ չկապված կամ դրա լուծման համար էական նշանակություն չունեցող հանգամանքների մասին: Նման դեպքերում մեծ է գայթակղությունն անմիջապես ընդհատելու ելույթ ունեցողին: Սակայն նման վարքագիծն անհարիր

է դատավորին, քանի որ դա, նախ՝ կողմի մոտ կարող է ստեղծել տպավորություն, թե դատավորը չի ցանկանում տիրապետել գործի մանրամասներին, կողմնակալ է և գործի ելքով շահագրգռված, և երկրորդ՝ ելույթ ունեցողին անմիջապես և հաճախակի ընդհատելը կոպիտ և անքաղաքավարի վերաբերմունք է, որը խարխլում է դատավորի նկատմամբ հարգանքը: Սակայն միևնույն ժամանակ դատավորը պարտավոր է ապահովել գործի արդյունավետ քննություն և հետևել, որպեսզի քննությունն անհարկի չձգձգվի:

Եթե դատավորը քաղաքավարի է, հարգալից և համբերատար, ապա ավելի հավանական է, որ վիճող կողմերը վստահություն կունենան նրա որոշման արդարացիության, անաչառության նկատմամբ, այդ իսկ պատճառով դատավորից պահանջվում է լինել համբերատար և բարեկիրթ: Դա, իհարկե, չի նշանակում, թե դատավորը չպետք է պատշաճ կերպով կատարի դատական նիստը նախագահողի իր պարտականությունները և թույլ տա, որ դատական նիստը վերածվի գործի հետ առնչություն չունեցող հանգամանքների քննարկման, սակայն դիտողություններ կատարելու, անձանց խոսքն ընդհատելու, այլ կարգադրիչ գործողություններ կատարելու անհրաժեշտության դեպքում դատավորը պետք է գործի հնարավորինս նրբանկատ, չդրսևորի զայրացկոտություն, տաքարյունություն և կոպիտ վերաբերմունք:

Եթե դատավորը խոսում է զայրացած կամ գործում անքաղաքավարի, ապա նա, փաստորեն, չարաշահում է դատական իշխանությունը, քանի որ դատական նիստերի դահլիճում գտնվողներին արգելված է նույն կերպ արձագանքել, իսկ վերջիններիս կողմից նման վարքագիծ դրսևորելը կարող է պատժվել նախագահող դատավորի կողմից դատական սանկցիաների կիրառմամբ: Գործնականում դատավորի անբարեկրթության հնարավոր դրսևորումները տարբեր են, սակայն վերլուծության արդյունքում այդ բնույթի խախտումները կարելի է դասել մի

քանի տեսակների՝

1. *կոպիտ վարքագիծ,*
2. *կողմնակալ մեկնաբանություններ,*
3. *դատական ակտեր ընդունելու իրավունքի չարաշահում:*

Դատավորն արժանապատիվ, համբերատար ու բարեկիրթ լինի ոչ միայն դատական նիստերի դահլիճում, այլև այն բոլոր անձանց հետ հարաբերություններում, որոնց առնչվում է իր ծառայական գործունեության ընթացքում: Բացի դրանից, նման կեցվածքը նրան բարոյական իրավունք կտա **համարժեք վարքագիծ պահանջել նաև մյուսներից:**

Դատավորի արժանապատիվ լինելու պահանջի հետ անհամատեղելի է դատական նիստը դատավորի աշխատասենյակում կամ առանց պատմուճանի անցկացնելը, քանի որ դա ստեղծում է տնավարության մթնոլորտ: Դատական նիստն աշխատասենյակում անցկացնելու դեպքում այնտեղ չեն կարող մուտք գործել այն բոլոր անձինք, ովքեր ցանկություն ունեն ներկա լինել դատական նիստին, ինչով ոչ միայն խախտվում է դատաքննության հրապարակայնության սկզբունքը, այլև տպավորություն է առաջանում, որ դատավորն արդարացի լուծում չի տալու գործին, քանի որ սահմանափակում է հասարակության ներկայությունը դատական քննությանը:

Դատավորի անարժանապատիվ կեցվածքի և անբարեկրթության բնորոշ օրինակ է վերաքննիչ դատարանում երեք դատավորի կազմով գործի քննությանը երկու դատավորների ձևական մասնակցությունը: Եղել են դեպքեր, երբ դատաքննության ընթացքում, բացի նախագահողից, մյուս երկու դատավորները զբաղվել են թերթեր կամ ամսագրեր կարդալով, կամ դատավորներից մեկը ժամանակավորապես բացակայել է դատական նիստի դահլիճից՝ վկայակոչելով որևէ հարգելի պատճառ, կամ դատավորներից մեկը խոսել է բջջային հեռախոսով:

Ընդունելի չէ նաև, երբ հաճախ մեղադրողն առանց դատարանի թույլտվության միջամտում է ամբաստանյալի կամ վկայի հարցաքննությանը, դիտողություն է անում դատավարության մասնակիցներին՝ ընդհուպ մինչև նրանց վիրավորելն ու սպառնալը. անընդունելի է, որ նման դեպքերում մեղադրողից բարեկիրթ վերաբերմունք պահանջելու փոխարեն դատավորը դրսևորում է հանդուրժող վարքագիծ: Անթույլատրելի է, երբ նախագահողն ստանձնում է մեղադրողի գործառույթների կատարումը՝ ակնհայտորեն ակնարկելով, որ մեղադրանքը հիմնավորված է:

Դատավորը պետք է արժանապատիվ, համբերատար և բարեկիրթ վերաբերմունքի դրսևորում պահանջի նաև դատարանի աշխատակազմից:

Իրավիճակային օրինակներ.

Ընդունելի է արդյոք:

Ձայն բարձրացնել իրավաբանի, կողմի, վկայի կամ դատարանի անձնակազմի անդամի վրա կամ վախեցնել նրանց:

Ասել իրավաբանին, որ նա մասնագիտության համար թյուրիմացություն է:

Ասել ապահովագրական կազմակերպության ներկայացուցչին, որ ապահովագրական ոլորտը, որպես ամբողջություն, անիմաստ է:

Ձայն բարձրացնել իրավաբանի վրա դատական նիստին ուշացումով ներկայանալու կամ անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու համար, փոխանակ բացթողմանը պատշաճ ձևով անդրադառնալու և հարցնելու իրավաբանին, թե արդյոք նա բացատրություն ունի:

Սպառնալ ամբաստանյալին երկարատև պատժով, եթե նա իրեն հանգիստ չի պահում կամ բարկացնում է դատավորին որևէ այլ կերպ:

Դատարանի անձնակազմին, իրավաբանին, կողմին կամ վկային արժանապատվությունը նվաստացնող սե-

ական բնույթի դիտողություն անել:

- Դատական նիստերի դահլիճում դատավորի մոտ բջջային հեռախոսի, սուրճ կամ այլ ուտելիք, կամ գործի հետ առնչություն չունեցող կարդալու նյութի առկայությունը:
- Դատավորը մեկ այլ դատավորի մասին ասել է, թե՝ մեկ այլ դատավորի կայացրած դատական ակտերի որակը հայտնի է բոլորին:
- Դատավորը հայտարարել է, թե ինքն իր իրավասության մեջ մտնող հարցը ճիշտ լուծելու համար փոքր մարդ է:

Միևնույն ժամանակ դատավորը պարտավոր է գործի ելքով շահագրգռված յուրաքանչյուր անձի կամ նրա փաստաբանին հնարավորություն տալ իրականացնելու դատարանի կողմից լսվելու՝ օրենքով նախատեսված իրավունքը: Այդ իրավունքը կողմերը կամ նրանց փաստաբաններն իրականացնում են դատական նիստի ժամանակ, երբ, որպես կանոն, ներկա են լինում բոլոր կողմերը և գործի ելքով շահագրգռված մյուս անձինք: Դատական նիստից դուրս դատավորի միակողմանի (ex parte) շփումները խախտում է կողմերի հավասարության սկզբունքը: Նշված խախտումից բացի, դատական նիստից դուրս դատավորի միակողմանի (ex parte) շփումները կարող են հասարակության մոտ կարծիք ձևավորել, թե դատավորը կարևորություն է տալիս դատական նիստերի դահլիճում ներկա չգտնված անձի մասնավոր կարծիքին:

Բացի դրանից, ex parte հաղորդակցության վտանգն այն է, որ դատավորը կարող է ստանալ ոչ ճշգրիտ տեղեկություն, որ կարող էր հեշտությամբ կողմնորոշվել, եթե բոլոր կողմերը ներկա լինեին դատական նիստին: Առերևույթ անվնաս շփումները կարող են ունենալ աննկատ ազդեցություն, որ նույնիսկ բարեխիղճ դատավորը չի կարող գնահատել, և այդ գործընթացում մասնակցություն չունեցած կողմը կհամարի, թե հակառակորդն առավելություն է ստացել:

Վերոնշյալ ex parte շփումը բնորոշվում է որպես ցանկացած շփում, որը կապված է դատավորի վարույթում գտնվող գործի հետ, տեղի է ունենում գործը քննող դատավորի մասնակցությամբ կամ ներկայությամբ և կողմի բացակայությամբ կամ առանց նրա գիտության:

Կարևոր է համարվում վարույթում գտնվող կամ վարույթում ակնկալվող հասկացությունների մեկնաբանությունը:

Վարույթում գտնվող է համարվում այն գործը, որն արդեն մուտքագրվել է դատարան և քննության համար նշանակվել է կոնկրետ դատավոր: Այն համարվում է վարույթում գտնվող այնքան ժամանակ, քանի դեռ բոլոր բողոքարկումների ժամկետները չեն ավարտվել: Վարույթում ակնկալվող է համարվում այն գործը, որը դեռ չի մուտքագրվել կամ հանձնարարվել կոնկրետ դատավորի, բայց հայտնի է համայնքում, որ գործը կարող է ներկայացվի դատարան:

Նման արգելքը վերաբերում է ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր շփումներին:

Շփման միակողմանիությունը նշանակում է, որ հաղորդակցությանը ներկա չեն դատավարության բոլոր կողմերը կամ նրանց փաստաբանները: Միակողմանի հաղորդակցությունն արգելված է, քանի որ այն կասկածի տակ է դնում դատավորի անկողմնակալությունը: Միակողմանի հաղորդակցության ընթացքում դատավորը կարող է ստանալ ոչ ստույգ կամ ոչ լիարժեք տեղեկություններ, որից կարելի է խուսափել, եթե ներկա գտնվեն գործի բոլոր կողմերը: Այդ տեղեկությունները կարող են դատավորի վրա լուրջ ազդեցություն ունենալ՝ այս կամ այն կողմի օգտին տրամադրվելու, անկախ այն հանգամանքից՝ դատավորը գիտակցում է դա, թե՝ ոչ: Կողմերի, դատավարության այլ մասնակիցների հետ առանձին շփման ընթացքում գործի հանգամանքների քննարկումը հանգեցնում է փաստերի անկախ քննության, որն անխուսափելիորեն նպաստում է դատավորի մոտ նախատրամադրվածության առաջացմանը: Միակողմանի շփումները վտանգավոր են նաև այն առումով, որ եթե հաղորդակցությանը չմասնակցած կողմը կասկածի

կամ իմանա մյուս կողմի հետ առանձին շփման մասին, նրա մոտ անխուսափելիորեն կարծիք կառաջանա, որ մյուս կողմն իր նկատմամբ առավելություն է ստացել: Նման դեպքում, անկախ այն հանգամանքից՝ իրականում դատավորի մոտ կողմնակալություն առաջացել է, թե՝ ոչ, նրա անաչառությունը կարող է կասկածի տակ դրվել և հանգեցնել նրա դեմ բացարկի կամ նրա կայացրած դատական ակտի նկատմամբ անվստահության:

Առանձին շփումների արգելքը նշանակում է, որ, նախ՝ դատավորն ինքը չպետք է նախաձեռնի նման շփումներ, և երկրորդ՝ դատավորը չպետք է թույլ տա այդպիսի շփումներ, երբ դրանք նախաձեռնում են կողմերը կամ այլ անձինք: Եթե, այնուամենայնիվ, հանգամանքների բերումով նման շփում տեղի է ունեցել, ապա դատավորը պարտավոր է հաշվի չառնել այդ ընթացքում իր ստացած տեղեկությունները, տպավորությունները, քանի որ հակառակ դեպքում նա կխախտի օրենքի այն պահանջը, համաձայն որի՝ գործը լուծելիս դատավորի ներքին համոզմունքը պետք է հենված լինի օրինական ճանապարհով ձեռք բերված փաստական տվյալների օբյեկտիվ գնահատման վրա:

Շփումների արգելքը չի վերաբերում օրենքով թույլատրված միակողմանի շփումներին, օրինակ, երբ քննության է առնվում խուզարկության, օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման թույլտվությունների վերաբերյալ հարց:

Որպես թույլատրելի առանձին շփման օրինակ է դիտարկվում այն, երբ դատավորը, կողմերի նախնական համաձայնությամբ, առանձին հանդիպում է կողմերի կամ նրանց փաստաբանների հետ՝ նպատակ ունենալով կողմերին բերել հաշտության համաձայնության: Նման պայմաններում դատավորի կողմից կողմերին հաշտության համաձայնության բերելու գործընթացում պետք է պահպանվեն որոշակի կանոններ:

Այսպես՝ հաշտության համաձայնության բերելու ընթացքում դատավորը կարող է կողմերին համոզել փոխել իրենց դիրքորոշումները որոշակի հարցերի վերաբերյալ, ինչը կարող է նրա կողմնակալության տպավորություն ստեղծել: Նման հանդիպումների ընթացքում դատավորը պետք է գործի չափազանց զգույշ, հատկապես փաստերի ու օրենքների մեկնաբանության հարցում, քանի որ հաշտության համաձայնությունը չկայանալու դեպքում նույն դատավորը պետք է վեճը լուծի ըստ էության, իսկ համաձայնության բանակցությունների ընթացքում հայտնած նրա կարծիքը կարող է կասկածներ առաջացնել նրա անաչառության նկատմամբ: Ինքնաբացարկից խուսափելու նպատակով նման դեպքերում առանձին շփումներին անպայման պետք է հաջորդի շփումը՝ բոլոր կողմերի մասնակցությամբ, որպեսզի կողմերն ի վերջո իրազեկ լինեն առանձին շփումների ընդհանուր բովանդակությանն ու արդյունքներին:

Նպատակահարմար է, որպեսզի դատավորը վերահսկողություն իրականացնի նախատեսված սահմանափակումները դատարանի աշխատակազմի և իր ղեկավարության կամ վերահսկողության ներքո գտնվող այլ անձանց կողմից պահպանելու նկատմամբ: Դատավորները պետք է նաև հանձնարարեն իրենց քարտուղարներին ու անձնակազմին մերժել այլ անձանց դատավորի գրասենյակ մուտք գործելը, բացել դատավորին հասցեագրված ամբողջ նամակագրությունը և գործի քննության հետ կապված նամակներին տիպային նամակով պատասխանել: Տիպային նամակը պետք է փաստի, որ դատավորը չի կարող քննարկել նման տեղեկություն:

Եթե իրավաբանը կամ կողմերից մեկի բարեկամը պատահաբար տեսնում է դատավորին սրահում և մի բան է ասում, իսկ դատավորը դեռևս վստահ է, որ ինքը կարող է արդար լինել, ապա դատավորը պետք է դատական նիստերի դահլիճում բոլոր կողմերի ներկայությամբ ներկայացնի, որ այդպիսի բան է պատահել, և որ ինքը կարող է շարունակել տվյալ գործի քննությունն անաչառորեն և արդար:

Իրավիճակային օրինակներ.

- **Դատական պրակտիկայում նշված պահանջի խախտման դեպքեր են դիտվում, երբ դատավարության մասնակիցները, առավելապես՝ ամբաստանյալները, հարկ չհամարելով դատական նիստի դահլիճում ցուցմունք տալ գործի որոշակի հանգամանքների, մասնավորապես՝ իրենց արարքի դրդապատճառների կամ տուժողների հակաօրինական և հակաբարոյական վարքագծի վերաբերյալ, առանձին հանդիպում են խնդրում նախագահողի հետ՝ ակնկալելով, որ վերջինս կհասկանա իրենց և դատավորին առանձին հայտնած տեղեկատվությունը նշանակություն կունենա գործի լուծման կամ նշանակվող պատժաչափի համար: Դատավորը, որքան էլ նրա հետաքրքրասիրությունը գրգռված լինի, պետք է ձեռնպահ մնա նման առանձին հանդիպման միջոցով տեղեկատվություն ստանալուց, քանի որ դա կարող է ազդել գործի օբյեկտիվ լուծման վրա:**

- **Դատական նիստի ընդմիջման ժամանակ կողմն առանձին հանդիպում է դատավորի հետ ճշտելու համար՝ ինքն արդյոք կարողանո՞ւմ է ներկայացնել իր գործը կամ պաշտպանվել, թե իրեն անհրաժեշտ է վարձել փաստաբան: Որպես կանոն, նման հարցերը պետք է լուծվեն դատական նիստում՝ բոլոր կողմերի համար բացահայտ կերպով:**

- **Դատավորը գործի քննության ընթացքում դատախազին, փաստաբանին կամ այլ անձի հրավիրում է իր աշխատասենյակ, սուրճ հյուրասիրում:**

▶ ***Մինչև գործի քննության ավարտը դատավորը պարտավոր է՝***

ա) ձեռնպահ մնալ փաստերի կամ օրենքների այնպիսի մեկնաբանությունից, որը կարող է գործի լուծման կանխորոշվածության տպավորություն ստեղծել,

բ) չարտահայտել իր դրական կամ բացասական վերաբերմունքը դատավարության կողմերի հանդեպ,

գ) չցուցաբերել այնպիսի վարքագիծ (միմիկա, ժեստիկուլյացիա, հեգնանք, ծաղր և այլն), որը դատավարության մասնակիցների կողմից կարող է ընկալվել որպես նախապրամադրվածության դրսևորում,

դ) խուսափել գործի հանգամանքների վերաբերյալ հայտարարություններից, հրապարակային ելույթներից ու մեկնաբանություններից,

ե) չմիջամտել ձայնագրման համակարգի անխափան աշխատանքին,

զ) նիստերը վարել օրենքով սահմանված հանդերձանքով,

է) խուսափել ամբաստանյալի մեղավորության վերաբերյալ կարծիք հայտնելուց:

Դատական ակտ կայացնելով՝ դատավորը վերլուծում է գործի փաստական տվյալները և մեկնաբանում օրենքները, սակայն մինչ գործի լուծումը դատավորին արգելվում է մեկնաբանել փաստերն ու օրենքները, եթե այդ մեկնաբանությունը կարող է գործի լուծման կանխորոշվածության տպավորություն ստեղծել: Այս կանոնը հենվում է հստակ սկզբունքի վրա, այն է՝ դատավարության ընթացքում չանես մեկնաբանություններ ու արտահայտություններ, որոնք կարող են խարխլել դատավորի

անկողմնակալությունը: Բանգալորյան 2.4.-րդ սկզբունքը հստակորեն է ներկայացնում այս կանոնը, *այն է՝ դատավորը, քանի դեռ զբաղված է կամ կարող է զբաղվել գործի դատական վարույթով, չպետք է կանխամտածված կերպով անի որևէ մեկնաբանություն, որը կարող է ողջամտորեն ակնկալվել, որ կազդի տվյալ վարույթի ելքի վրա կամ կխարխլի վարույթի բացահայտ արդարությունը: Դատավորը չպետք է նաև որևէ հրապարակային մեկնաբանություն կամ ցանկացած այլ գործողություն կատարի, որը կարող է ազդել անձի արդարացի դատական քննության իրավունքի կամ կոնկրետ հարցի արդար քննության վրա:*

Գործնականում հնարավոր չէ, որ գործի քննության ընթացքում դատավորն ընդհանրապես չմեկնաբանի փաստերը կամ օրենքները: Դատավորը հաճախ որոշակի հրապարակային հայտարարություններ է անում՝ կապված իր պաշտոնեական պարտականությունների կատարման հետ, ինչպես նաև դատավարության կարգի կամ իրավական դաստիարակությանն աջակցելու նպատակներով: Դատավորին չի արգելվում հանդես գալ դատավարության վերաբերյալ մեկնաբանություններով, որում նա համարվում է որպես կողմ կամ մասնավոր անձ: Հաճախ դատավորն ստիպված է մեկնաբանություններ տալ միջանկյալ դատական ակտերում, դատական նիստի ժամանակ՝ բանավոր կերպով, այդ իսկ պատճառով խոսքն այստեղ այնպիսի մեկնաբանության մասին է, որը կարող է դատավորի անաչառության նկատմամբ կասկածներ հարուցել: Այլ կերպ՝ թեև դատավորը կարող է միջանկյալ մեկնաբանություններ անել գործի փաստերի կամ օրենքների մասին, սակայն դատավորը պետք է զգույշ լինի, որ կողմնակալության տպավորություն չստեղծի: Հատկապես այն դեպքերում, երբ կողմերը կամ նրանց ներկայացուցիչներն ունեն իրավագիտակցության բարձր մակարդակ և իրենց պահանջները հիմնավորում են նաև օրենքների մատնանշումով: Իհարկե, դատավորը մանրակրկիտ մեկնաբանություններ է անում փաստերի և օրենքի վերաբերյալ, սակայն արգելվում է, որ, նախքան որոշում

կայացնելը, դատավորը որևէ կանխորոշվածություն դրսևորի այս կամ այն մեկնաբանության վերաբերյալ: Դատավորը պարտավոր է գործել զգուշորեն և նրբանկատորեն, որպեսզի մինչև գործի քննության ավարտը կողմերը վերջնական կարծիք չձևավորեն այն մասին, թե որ փաստերը, փաստարկներն ու օրենքի մեկնաբանություններն է ընդունում դատավորը, և որոնք՝ մերժում: Նման վարքագիծը թույլ կտա ոչ միայն խուսափել կողմնակալություն դրսևորելուց, այլև կամրապնդի դատավորի հեղինակությունը, քանի որ մինչև գործի քննության ավարտը նրա կատարած մեկնաբանությունները կարող են լինել հապճեպ և ոչ իրավացի, ինչը կարող է պարզվել միայն վերջնական դատական ակտը կայացնելիս՝ գործի բոլոր ապացույցներն ու վեճի վերաբերյալ օրենքների դրույթներն ուսումնասիրելու արդյունքում:

Նման պահանջի խախտման դեպքեր կարող են լինել, եթե դատավորները հայտարարում են, որ իրենք պայմանավորվել են որևէ հանցագործության կատարման մեջ մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակել ազատազրկում: Սա հիմք է տալիս ամբաստանյալին դատավորին ինքնաբացարկ հայտնելու միջնորդությամբ դիմելու այն պատճառաբանությամբ, որ դատավորը նախատրամադրված է: Սա արդարացված է նաև այն դեպքում, երբ դատավորը հայտարարում է, որ ինքն այդ պատժատեսակը որոշել է իր ներքին համոզմամբ՝ հիմնվելով գործի փաստական հանգամանքների և օրենքի պահանջների վրա: Նման հայտարարությունը կարող է գնահատվել որպես ոչ իրավաչափ, քանի որ դա ենթադրում է, որ դատավորի դիրքորոշման վրա կարող են ազդել հասարակության տրամադրվածությունները կամ այն, որ նա կարող է ենթարկվել հասարակության կողմից քննադատության: Բացի դրանից, այն կարող է իրենից ներկայացնել որպես անթույլատրելի հանրային մեկնաբանություն քննության փուլում գտնվող գործի վերաբերյալ:

Կարևոր է, որպեսզի դատավորը մինչև գործի քննության ավարտը չարտահայտի իր դրական կամ բացասական վերաբերմունքը դատավարության կողմերի հանդեպ: Սա, ըստ

էության, դատավորի անկողմնակալության և այդպիսի տպավորություն թողնելու պարտականության մասնավոր դրսևորում է: Իրականում դատավորի մոտ կողմերի հանդեպ որոշակի վերաբերմունք է ձևավորվում նաև գործի քննության ընթացքում: Դատավորից պահանջվում է չբացահայտել իր մոտ ձևավորված վերաբերմունքը մինչև գործի քննության ավարտը, քանի որ հակառակ վարքագիծը հղի է դատավորի և նրա կայացրած դատական ակտի նկատմամբ անվստահության առաջացման վտանգով:

Դատավարության ընթացքում հնարավոր են իրավիճակներ, երբ դատավորը կարող է ցուցաբերել իր կողմնակալ վերաբերմունքը դատավարության մասնակիցների հանդեպ: Վարքագծի այդ ձևերը պայմանականորեն կարելի է բաժանել **2 խմբի՝ *ֆիզիկական և մտավոր***:

Առաջին խմբի մեջ մտնում են միմիկան (դեմքի շարժումները), ժեստիկուլյացիան (մարմնի տարբեր մասերի շարժումները), իսկ *երկրորդ խմբի* մեջ՝ հեգնանքը, ծաղրը և այլն: Ընդ որում, վարքագծի բաժանումը ֆիզիկականի և մտավորի՝ խիստ պայմանական է, քանի որ անցանկալի վարքագիծը կարող է դրսևորվել ինչպես խոսքով, այնպես էլ վարվեցողությամբ: Օրինակ՝ հեգնանքը կարող է դրսևորվել և՛ խոսքով (դա կարևոր չէ, զուր ջանքեր մի թափեք և այլն), և՛ ձեռքի թափահարումով, և՛ միաժամանակ երկու ձևերով էլ: Գործնականում դատավորի նախատրամադրվածության տպավորություն թողնող վարքագծի դրսևորման ձևերն անսահմանափակ են, ուստի ենթադրյալ խախտման յուրաքանչյուր դեպքում դատավորի գործողություններին գնահատական պետք է տա իրավասու մարմինը՝ ԲԴԽ-ի կարգապահական հանձնաժողովը:

Դատավորը պետք է խուսափի գործի հանգամանքների վերաբերյալ հայտարարություններից, հրապարակային ելույթներից ու մեկնաբանություններից: Քանի դեռ դատական գործով վարույթն ընթացքի մեջ է կամ ակնկալվում է, որ կսկսվի որևէ դատարանում, դատավորը պետք է ձեռնպահ մնա այնպիսի հրապարակային մեկնաբանություններից, որոնք, ողջամտո-

րեն կարող է ակնկալվել, որ կազդեն տվյալ գործի ելքի վրա կամ կխարխլեն վարույթի արդարությունը: Դատավորը պետք է նաև զերծ մնա ոչ հրապարակային այնպիսի մեկնաբանություններ անելուց, ինչը կարող է զգալիորեն խոչընդոտել դատավարության կամ դատական նիստի արդարությանը:

Դատավորը պետք է ձեռնպահ մնա մամլո ասուլիսների մասնակցելուց, չպետք է տպագիր կամ էլեկտրոնային հոդվածներ տրամադրի կամ զրուցի լրագրողների հետ որևէ գործի կապակցությամբ, որը դատավորի վարույթում է կամ կարող է լինել նրա կամ այլ դատավորի վարույթում, քանի դեռ բողոքարկման բոլոր հնարավորություններն ավարտված չեն: Մինչև գործի լուծումը հայտարարություններ ու մեկնաբանություններ կատարելով և ելույթներ ունենալով՝ դատավորը վտանգում է որոշ արժեքներ: Նախ՝ այդպիսի հայտարարությունները, ելույթներն ու մեկնաբանությունները կարող են ազդել գործի ճիշտ լուծման վրա, քանի որ որևէ կարծիք հայտնելով, հատկապես հրապարակայնորեն՝ դատավորը գործը լուծելիս կարող է զուտ ինքնասիրությունից դրդված հավատարիմ մնալ դրան, մինչդեռ այդ կարծիքը կարող է լինել սխալ: Բացի գործի օբյեկտիվ լուծմանը խոչընդոտելուց, նման վարքագիծն ստեղծում է նաև դատավորի կողմնակալության տպավորություն, ինչը կարող է հանգեցնել բացարկի և խարխլել նրա կայացրած դատական ակտի նկատմամբ վստահությունը: Գործը պետք է լուծվի միայն դրա համար անհրաժեշտ բոլոր փաստական տվյալներն ու դրանց վերաբերյալ օրենքներն ուսումնասիրելուց հետո, իսկ մինչև գործի քննության ավարտը ենթադրվում է, որ դատավորը դեռևս լիովին չի ուսումնասիրել եթե ոչ օրենքները, ապա գոնե գործի փաստական տվյալները: Նման վարքագիծ դրսևորելը բացասաբար է անդրադառնում դատավորի և դատական ողջ համակարգի հեղինակության վրա, քանի որ հասարակությունն իրավունք ունի ակնկալելու, որ դատական համակարգում ընդգրկված են ոչ թե հապշտապ ու կասկածելի, այլ կշռադատված ու հիմնավորված որոշումներ կայացնելու ընդունակությամբ օժտված մարդիկ: Վերջապես,

դատավորի հայտարարությունները, հրապարակային ելույթներն ու մեկնաբանությունները կարող են հանգեցնել կողմերի, այլ անձանց, լրատվամիջոցների հետ բանավեճերի, ինչից դատավորը պարտավոր է խուսափել:

Դատական քննության, մինչդատական քննության մեջ գտնվող կամ ակնկալվող գործերի հանգամանքների վերաբերյալ հրապարակային մեկնաբանություններն արգելող կանոնից նախատեսվում են հետևյալ բացառությունները.

1. դատավորները կարող են ավարտված գործերին հղումներ կատարել իրենց արտադատական դասավանդման աշխատանքը կատարելիս և իրենց գրած արտադատական աշխատություններում.
2. դատավորները կարող են գործի քննության ընթացքում դատավարության կողմերին և հասարակությանը տեղեկացնելու նպատակով բացատրել դատարանի ընթացակարգերը: Դռնբաց դատական նիստերի ընթացքում դատավորները միշտ կարող են բացատրել, թե ինչ են անում և ինչու, և իրականում պարտավոր են այդպես վարվել՝ հանրությանը կամ լրատվամիջոցների ներկայացուցիչներին կրթելու նպատակով: Դատական վարույթը հասկանալու և այն իմաստալից ու ազնվորեն ներկայացնելու գործում լրատվամիջոցներին օգնելու նպատակով դատավորները կարող են նաև, ընդհանուր առմամբ, սահմանել իրավական հասկացություններ՝ առանց խոսելու գործի փաստերի մասին: Հանրային մեծ հնչեղություն ունեցող գործերի պարագայում դատավորների կողմից դատական ակտի կայացման հիմքերը բացատրելու համար լավագույն ճանապարհը որոշումը կայացնելուց հետո այդ դատական ակտի պատճենի տրամադրումն է լրատվամիջոցներին.
3. դատավորները կարող են վարքագծի մյուս կանոնների պահպանմամբ գործի հանգամանքների վերաբերյալ հրապարակային հայտարարություններ անել դատական

նիստերի դահլիճում.

4. դատավորները կարող են մեկնաբանություններ անել այն գործերի հանգամանքների վերաբերյալ, որոնցում դատավորն անձամբ հանդես է գալիս որպես վիճող կողմ:

Գործի հանգամանքների վերաբերյալ հայտարարություններից բառակապակցության մեջ բացակայում է հրապարակային բառը: Դա նշանակում է, որ դատավորը պարտավոր է ձեռնպահ մնալ նաև ոչ հրապարակային հայտարարություններից (օրինակ՝ իր գործընկերոջն առանձին հայտնելուց), եթե դրանք կարող են ազդել գործի լուծման վրա: Դատավորը պարտավոր է կանոնով սահմանված վարքագծի պահպանում պահանջել դատարանի աշխատակազմից և իր ղեկավարության ու վերահսկողության ներքո գտնվող անձանցից, քանի որ վերջիններիս կողմից այդ պահանջների խախտումը կարող է հանգեցնել այն բացասական հետևանքներին, որոնք շարադրվեցին սույն կանոնի մեկնաբանության սկզբում: Դատավորից պահանջվում է մինչև գործի քննության ավարտը չմիջամտել ձայնագրման համակարգի անխափան աշխատանքին:

Ձայնագրման համակարգն ունի կրկնակի նպատակ: Այն թափանցիկության հնարավորություն է ընձեռում հետաքրքրված կողմերին և լրատվամիջոցներին, որոնք ի վիճակի են լինում ունենալ դատարանում ասված ամեն ինչի ճշգրիտ արձանագրությունը: Թափանցիկությունն անկողմնակալության որոշ երաշխիքներ է տալիս, քանի որ այն կանխում է նիստերի դահլիճում ասվածը թաքցնելը: Դատական նիստի արձանագրությունն օգնում է նաև վերաքննիչ դատարանին՝ բողոքարկված գործի քննության հարցում: Սա, ըստ էության, դատավորի անկողմնակալության և այդպիսի տպավորություն չթողնելու պարտականության մասնավոր դրսևորում է: Այս պահանջը կոչված է երաշխավորելու ոչ միայն դատարանի անկախությունն ու անկողմնակալությունը, այլև հանդիսանում է դատավորի կողմից նիստի ընթացքում էթիկայի կանոնների չխախտման երաշխիք:

Դատավորը պարտավոր է նիստը վարել օրենքով սահմանված հանդերձանքով:

Այս պահանջի նպատակն է ընդգծել այն, որ դատավորի պատմուճանը խորհրդանշում է արդարություն, մարմնավորում իշխանություն, վկայում է այն մասին, որ պատմուճանը կրող անձն է արդարադատություն իրականացնողը, ստեղծում է դատավորի նկատմամբ հարգալից վերաբերմունք: Նա կարգապահություն է մտցնում դատական նիստերի դահլիճում ներկա գտնվող անձանց շրջանում:

Մինչև գործի քննության ավարտը դատավորը չպետք է կարծիք արտահայտի անձի մեղավորության վերաբերյալ՝ անկողմնակալ և նախատրամադրվածության տպավորություն չստեղծելու համար:

Իրավիճակային օրինակներ.

- **Քրեական գործով դատաքննության ընթացքում դատավորը հայտարարել է, որ լրատվամիջոցների մեկնաբանություններն այդ նիստի վերաբերյալ ամբողջովին կեղծիք են, և գործի հետազոտված տվյալներով ամբաստանյալի կատարած արարքը հիմնավորված է, իսկ թե ինչ պատիժ կնշանակի ինքը, դա արդեն լրատվամիջոցների գործը չէ:**
- **Քրեական գործով լսելով պաշտպանի ճառը՝ դատավորը հայտարարել է. «Եվ դուք ցանկանում եք նման փաստարկներով հասնել հաջողության»:**
- **Առաջին ատյանի դատարանի դատավորը, ի պատասխան անարդար ակտ ընդունելու դեպքում կողմի բողոքարկման սպառնալիքի, հայտարարել է, որ գործի հաստատված հանգամանքներում կողմը դժվար թե հաջողության հասնի վերադաս ատյաններում:**
- **Դատավորն իր վարույթում գտնվող գործով վկայի վստահելիության մասին կարծիք է արտահայտում հրապարակայնորեն:**

ԴԱՍ 2.

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ ԶԼՄ-ՆԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Թեմա 1.

ԶԼՄ-ների ու դրանց ներկայացուցիչների հետ հաղորդակցման կազմակերպաիրավական հիմքերն ու հիմնական եղանակները

Ընդհանրապես հանցավորության դեմ պայքարի գործում ԶԼՄ-ների մասնակցությունը բարձրացնում է քննության արդյունավետությունը: Մասնավորապես, վարույթն իրականացնող մարմինները ԶԼՄ-ների աջակցությունը կարող են օգտագործել ոչ միայն հանցագործությունների բացահայտման և դրանք կատարած անձանց հայտնաբերելու, այլ նաև դրանց քրեական պատասխանատվության ենթարկելու, արդարացի պատիժ նշանակելու, ինչպես նաև հանցագործությունների կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները բացահայտելու և դրանք վերացնելու գործում: Ընդ որում, ԶԼՄ-ների միջոցով հանրությունը նույնպես կարող է արդյունավետ մասնակցություն ունենալ ոչ միայն հանցագործությունների բացահայտման, այլ նաև գործի արդարացի քննության գործում: Հանրության աջակցության ճիշտ կիրառումը հաճախ նպաստում է խնայելու իրավապահ ու դատական համակարգի մարմինների ժամանակն ու միջոցները: Սակայն հարկ է նկատի ունենալ, որ ԶԼՄ-ների ու վարույթ իրականացնող մարմինների փոխգործողության կարգավորման իրավական հիմքերն առանձնահատուկ են:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային պակտի 19-րդ հոդվածում ամրագրված է յուրաքան-

ցյուր անձի՝ իր հայացքներին հավատարիմ լինելու, սեփական կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը, որը ներառում է բոլոր տեսակի տեղեկատվություն որոնելու, ստանալու և տարածելու իրավունքները՝ անկախ պետական սահմաններից, սեփական ընտրությամբ՝ գրավոր կամ բանավոր, տպագրելու կամ գեղարվեստականորեն արտահայտվելու միջոցով:

ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածն ամրագրում է տեղեկատվության հասանելիության և ազատության սկզբունքը՝ գրաքննության արգելքը: Համաձայն այդ հոդվածի.

«1. Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք:

2. Տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Տեղեկություններ ստանալու կարգը, ինչպես նաև տեղեկությունները թաքցնելու կամ դրանց տրամադրումն անհիմն մերժելու համար պաշտոնատար անձանց պատասխանատվության հիմքերը սահմանվում են օրենքով»:

Իրավական իրազեկումն իրականացվում է վարույթն իրականացնող մարմինների, լրագրողների, այլ կազմակերպությունների աշխատակիցների կողմից: Այն ամրագրված է նորմատիվ իրավական և գերատեսչական ակտերով, մասնավորապես՝ «Տեղեկատվության ազատության մասին», «Զանգվածային լրատվական միջոցների մասին» և այլ ՀՀ օրենքներում:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է տեղեկատվության ազատության հետևյալ հիմնական սկզբունքները.

1. *Տեղեկատվության արձանագրման, դասակարգման և պահպանման վերաբերյալ սահմանված կարգը:*

2. *Տեղեկատվություն որոնելու և այն ստանալու ազատության պահպանումը:*
3. *Տեղեկատվություն տրամադրելու իրավունքի ապահովումը:*
4. *Հրապարակայնությունը:*

«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը կարգավորում է ԶԼՄ-ների հետ կազմակերպությունների և քաղաքացիների հարաբերությունները: Այդ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «զանգվածային տեղեկատվություն» եզրույթը հասկացվում է որպես անսահմանափակ թվով անձանց համար հասանելի տեղեկատվության տարածում, որի հիմնական նպատակն է ապահովել մարդու սահմանադրական իրավունքը՝ ազատորեն, անկախ պետական սահմաններից՝ փնտրելու, ստանալու և տարածելու տեղեկություններ ու գաղափարներ:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ տեղեկատվությունը տարածվում է զանգվածային լրատվության միջոցով, որը բնորոշվում է որպես լրատվություն իրականացնելու միջոց, որը բաժանորդագրությամբ կամ առանց դրա, վճարովի կամ անվճար հիմունքներով տարածվում է՝

- մշտական անվանում, հերթական համար և ամսաթիվ ունեցող պարբերական թողարկումներով՝ նյութական կրիչի վրա, որոնց միևնույն բովանդակությամբ օրինակների քանակը պակաս չէ հարյուրից,
- հեռուստառադիոհաղորդմամբ,
- հանրային հեռահաղորդակցության ցանցով (ցանցային լրատվության միջոց)՝ որպես որոշակի հասցե ունեցող, անսահմանափակ թվով անձանց համար հասանելի և լրատվություն ներառող տեղեկատվական պաշար՝ անկախ թարմացման պարբերականությունից, պահման ժամանակի տևողությունից և այլ չափանիշներից:

Լրատվության միջոց են նաև լրատվական գործակալության և նմանատիպ բնույթի այլ կազմակերպությունների պարբերա-

կան հաղորդումները՝ ուղղված լրատվական գործունեություն իրականացնողներին՝ անկախ տարածման ձևից, թողարկման օրինակների քանակից կամ որևէ այլ չափանիշից:

Տեղեկատվության միջոցներից է նաև տեղեկատվական գործակալների և նմանատիպ կազմակերպությունների պարբերական հաղորդումները, որոնք հաշվարկված են հատուկ տեղեկատվական գործունեություն իրականացնողների համար՝ անկախ տարածման տեսակից, տպագրության քանակից կամ այլ չափորոշիչներից:

1. Իրավաբանական կամ ֆիզիկական անձ (այդ թվում գործարար), որը տեղեկատվական գործունեություն է իրականացնում և իր անունից տարածում տեղեկատվություն:

Այն դեպքում, երբ ՀՀ տարածքում տեղեկատվական գործունեությամբ զբաղվող անձն այլ անձանց հետ կնքած պայմանագրի հիման վրա (տարածող, տպագրող և այլն) իրականացնում է նշված գործունեության առանձին փուլերը, ապա տվյալ օրենքի համաձայն՝ այդ անձինք տեղեկատվական գործունեություն իրականացնողներ չեն:

2. Լրագրողը տեղեկատվական գործունեություն իրականացնող անձ է, տեղեկատվական գործունեություն իրականացնող անձի ներկայացուցիչ է, որը փնտրում, հավաքում, ստանում, պատրաստում և խմբագրում է տեղեկատվություն՝ կնքված աշխատանքային կամ այլ պայմանագրի հիման վրա:

Պետք է նշել, որ քրեական դատավարությունում ԶԼՄ-ների և դրանց միջոցով հանրության մասնակցության առանձին ձևերի նորմատիվ կարգավորման անհրաժեշտության խնդիրներից է հանցագործությունների դեմ պայքարը:

Այսպես, ՔԴՕ 176-րդ հոդվածի 1-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ քրեական գործ հարուցելու առիթ կարող է լինել զանգվածային լրատվական միջոցներով կատարված կամ նա-

խապատրաստվող հանցանքի վերաբերյալ հաղորդումը: Նման դեպքերում տվյալ հոդվածից հետևում է, որ խմբագրությունը, տվյալ խմբագրության գլխավոր խմբագիրը վարույթն իրականացնող մարմնի պահանջով պարտավոր են տրամադրել հանցագործության վերաբերյալ իրենց տրամադրության տակ գտնվող տեղեկատվությունը հաստատող նյութերը:

ԶԼՄ-ների դերը հանցագործությունների քննության ընթացքում արտահայտվում է նաև օրենքով սահմանված կարգով հանրությանը քննության ընթացքին և արդյունքներին տեղյակ պահելու, ինչպես նաև հանցագործությունների բացահայտման ընթացքում հանրության մասնակցություն ապահովելու մեջ:

Դատավորների կողմից հանցագործությունների մասին ԶԼՄ-ների հրապարակումները քննարկվում են ԲԴԽ-ում՝ դրանցում առերևույթ հանցագործության հատկանիշների մասին տեղեկատվության առկայության տեսանկյունից, և ըստ այդմ էլ՝ բավարար հիմքերի առկայության պարագայում դրանք ուղարկվում են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին:

Եթե հանցագործության մասին հաղորդումները, ըստ էության, չեն բովանդակում որևէ առերևույթ իրավախախտման մասին տվյալներ կամ անանուն են կամ կեղծ անուններով են, ապա դրանց արձագանքելը թողնվում է համապատասխանաբար դատավորի հայեցողությանը: Այս ենթատեքստում հարկ է նշել, որ հանցագործության մասին հաղորդումները, ձևական պահանջներից բացի, պետք է համապատասխանեն նաև Վճռաբեկ դատարանի կողմից սահմանված բովանդակային որոշակի չափանիշների: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն *Է. Կարապետյանի գործով 13.07.2007թ. № ՎԲ-133/07, Ռ. Նիազյանի գործով 31.05.2014թ. № ԵԿԴ/0118//11/13 և Հ. Մանուկյանի գործով 30.03.2019թ. № ԵԿԴ/0154/11/14* որոշումներով իրավական դիրքորոշում է արտահայտել, համաձայն որի՝ *որպեսզի հանցագործության մասին հաղորդումը քրեական գործ հարուցելու համար առիթ հանդիսանա, այն պետք է պարունակի տեղեկություն նախապատրաստվող կամ կատար-*

ված կոնկրետ հանցագործության հատկանիշները մատնանշող, այլ ոչ թե ցանկացած փվյալների առկայության մասին:

ԶԼՄ-ների միջոցով տարածվող նյութերը, բացատրական աշխատանքները նպաստում են հանցագործության դեպքի հետ որևէ կերպ առնչություն ունեցող յուրաքանչյուր քաղաքացուն պատկերացում կազմելու իր համար հանցագործության հետևանքների վերաբերյալ: Տվյալ դեպքում էական նշանակություն ունի կատարվող հանցագործության վտանգավորության և գործի արդարացի քննության մասին հանրության պատկերացումը:

Հարկ է փաստել, որ բոլոր տեսակի հանցագործությունների քննության ընթացքում ԶԼՄ-ների դերն էական է, հատկապես, երբ գործ ունենք հասարակական հնչեղություն ունեցող հանցագործությունների, կազմակերպված հանցագործությունների դեպքերի հետ և այլն:

Բացի դրանից, քրեական գործով դատավարության քննության ընթացքում ԶԼՄ-ների կարևորագույն դերերից մեկը դրական հասարակական կարծիքի ձևավորումն է՝ նպաստելով դատարանների հանդեպ հասարակական վստահության բարձրացմանը:

Խոսելով ԶԼՄ-ների հնարավորություններն օգտագործելու պայմանների մասին՝ պետք է նշել, որ օրենսդրությամբ կարող են սահմանվել որոշակի սահմանափակումներ, մասնավորապես՝ ԶԼՄ-ներին տեղեկատվություն տրամադրելու հարցում: Այս կապակցությամբ «Տեղեկատվության ազատության» մասին ՀՀ օրենքով սահմանվում են տեղեկատվության ազատության սահմանափակումները: Համաձայն այս օրենքի 8-րդ հոդվածի՝

«1. Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝

1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք.

2) խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը.

3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության փվյալները.

4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).

5) խախտում է հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները:

2. Եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ:

Տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա՝

1) վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը և առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաև տարերային (ներառյալ՝ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին և դրանց հետևանքներին.

2) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առևտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը.

3) չտրամադրելը բացասական ազդեցություն կունենա Հայատանի Հանրապետության սոցիալ-տնտեսա-

կան, գիտատեխնիկական և հոգևոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա»:

Ընդհանուր առմամբ վարույթն իրականացնող մարմինների և ՀԼՄ-ների փոխգործողության ձևերից են.

ա) վարույթն իրականացնող մարմինների մամլո ծառայությունների աշխատակիցների աջակցությամբ նրանց համատեղ գործունեության կարգավորումը,

բ) վարույթն իրականացնող մարմինների մամլո ծառայությունների կողմից կազմակերպվող հեռուստա- և ռադիոհաղորդումներում վարույթն իրականացնող մարմինների մասնակցությունը,

գ) մամլո ծառայության աշխատակցի կողմից վարույթն իրականացնող մարմնի աշխատակցին աջակցություն ցուցաբերելը՝ հեռուստատեսային, ռադիո կամ այլ հաղորդումներ նախապատրաստելիս տարաբնույթ ելույթներով հանդես գալու համար,

դ) վարույթն իրականացնող մարմինների՝ տպագիր մամուլում տարաբնույթ հոդվածներով հանդես գալը,

ե) տարածքային իրավապահ մարմիններում վստահության հեռախոսակապի հնարավորությունների օգտագործումը,

զ) վարույթն իրականացնող մարմինների կողմից էլեկտրոնային տեղեկատվական կայքերի ու միջոցների հնարավորությունների օգտագործումը:

Բացի դրանից, պետք է նաև նկատի ունենալ հանցագործության բնույթը, հասարակական հնչեղությունը և տարածվածությունը, ինչպես, օրինակ՝ զանգվածային անկարգությունները, ահաբեկչական, դիվերսիոն գործողությունները և այլն, երբ

գործ ունենք ոչ միայն կոնկրետ հանցագործության փաստի, այլ նաև դրանց շարունակականության, առավել ծանր հետևանքների հետ, երբ հասարակության մի ստվար զանգված հետաքրքրված և շահագրգռված է դրանք բացահայտելու, հանցավորներին, կազմակերպիչներին հայտնաբերելու և պատժելու գործում:

Թերևս հարկ է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք ևս՝ որոշակի գործի մինչդատական ընթացքում դեպքի ու այն կատարելու մեջ կասկածվող անձանց վերաբերյալ հաղորդագրությունների հրապարակված լինելու հանգամանքը: Անմեղության կանխավարկածի սկզբունքի պահանջների պահպանման տեսանկյունից՝ նպատակահարմար է բոլոր դեպքերում օրենքով սահմանված եղանակներով տեղեկություններ հրապարակել տվյալ գործով դատավարության արդյունքների մասին, հատկապես անձի մեղավորությունը կամ անմեղությունը հաստատող վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո:

ՁԼՄ-ների հետ արդյունավետ հաղորդակցման ապահովումը միևնույն ժամանակ նպաստում է՝

- բնակչության լայն զանգվածների վրա կանխարգելիչ և դաստիարակչական ազդեցությանը, իրավախախտումների վերաբերյալ անհանդուրժողականություն սերմանելուն, քաղաքացիների շրջանում օրենքն անվերապահորեն կատարելու և հարգելու ամրապնդմանը,
- հանցագործությունների դեմ պայքարի, դրանց կանխարգելման և դրանց կատարմանը նպաստող հանգամանքների վերացման գործում քաղաքացիների ներգրավմանը,
- օրենքի շրջանակներում դատական, քննչական և դատախազական գործունեության նկատմամբ վերահսկողության սահմանմանը,
- քրեական գործով օբյեկտիվ ճշմարտության բացահայտմանը, ինչպես նաև դատավարության մասնակիցների

իրավունքների երաշխիքների ապահովմանը,

- դատաքննության ընթացքում օրինականության ապահովմանը, օրենքի հանդեպ հարգանքի, ինչպես նաև վկաների, տուժողների, փորձագետների և գործին մասնակցող այլ անձանց պատասխանատվության բարձրացմանը,
- դատավարական գործունեության օրինականության ապահովմանը, վարույթն իրականացնող մարմինների կողմից իրենց պարտականությունների կատարմանը:

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ ԶԼՄ-ների ներկայացուցիչների և այլ կառույցների հետ վարույթն իրականացնող մարմինների համագործակցության արդյունավետ կազմակերպման արդի պայմաններում կարևոր նշանակություն ունի էլեկտրոնային մամուլի և համացանցի հնարավորությունների օգտագործումը, քանի որ դրանք արդեն հանցավորության դեմ պայքարի առավել արդյունավետ գործիք են դառնում:

ԶԼՄ-ների ներկայացուցիչների հետ վարույթն իրականացնող մարմինների փոխգործողության ձևերը կախված են բազմաթիվ հանգամանքներից, մասնավորապես՝ քննվող դեպքի հանգամանքներից, քննության առջև ծառացած խնդիրներից: Անհրաժեշտ է նշել, որ փոխգործողության ավանդական մեթոդներին և ձևերին ներկայումս ավելացել են նաև նոր մեթոդներ[4]:

Պետք է նշել, որ **լրագրողական բազմակողմանի, օբյեկտիվ քննությունները** բավականին հաճախ կլանում են ընթերցողներին և հեռուստադիտողներին, չնայած դրանք տեղեկատվության ազատությունը չարաշահելով, կարող են ոտնահարել քաղաքական գործիչների, պաշտոնատար անձանց իրավունքները՝ առանց ստուգելու այդ փաստերի արժա-

[4] Այս մասին առավել մանրամասն տե՛ս ***Ենգիբարյան Վ. Գ.*** Հանցագործությունների քննության կազմակերպման քրեադատավարական և կրիմինալիստիկական հիմքերը: Մենագրություն: Երևան, 2016, «Անտարես, էջեր 238-241:

նահավատությունը[5]:

Առավել պատրաստված մամլո ծառայությունների գործունեությունը հաճախ նպաստում է, որ որոշ լրատվամիջոցներ փոփոխեն իրենց դիրքորոշումը վարույթն իրականացնող մարմինների աշխատանքը լուսաբանելիս: Նրանք առավել պատասխանատվությամբ են վերաբերվում իրենց գործին՝ ցուցաբերելով անաչառություն, ինչը նպաստում է բնակչության օբյեկտիվ իրազեկությանը հանցավորության դեմ պայքարի գործում, քաղաքացիների՝ օրենքի նկատմամբ հարգանքի ձևավորմանը, ինչպես նաև օգնում առանձին քրեական գործերով ապացույցներ հավաքելուն:

Հանցագործությունների քննության ընթացքում վարույթն իրականացնող մարմինների կողմից ԶԼՄ-ների օգտագործման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է լրագրողների հետ բարենպաստ, կառուցողական և ոչ կոնֆլիկտային պայմաններում փոխգործողության կազմակերպմամբ:

Մասնավորապես, խորհուրդ է տրվում, երբ լրագրողը նախապես տեղեկացրել է իր այցի նպատակի մասին, ապա պատրաստվել այդ հանդիպմանը՝ հաշվի առնելով վերջինիս հրապարակումների բնույթն ու ուղղվածությունը և այլն: Անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ վիճակագրական և այլ տվյալներ, որոնց անհրաժեշտությունը կարող է զգացվել նրա հետ զրույցի ընթացքում: Լրագրողին հանդիպելիս անհրաժեշտ է հետաքրքրվել պատրաստվող հոդվածի ուղղության, դրա օբյեկտիվության վերաբերյալ, լրագրողին օգնել թեման առավել խորը լուսաբանելու համար, նրանից ճշտել խնդրի մասին իր տեսակետը, ծանոթացնել վիճակագրական տվյալներին և այլն:

Պետք է նշել, որ վարույթն իրականացնող մարմնի լրագրող-

[5] Տե՛ս ***Кулагин Н. И.*** Использование органами следствия средств массовой информации. Волгоград, 1971 и др. работы; ***Томин В. Т.*** Использование средств массовой информации в борьбе с преступностью. Горький, 1976; ***Ларин А. М.*** Криминалистика и подокриминалистика. М., 1996; Бахин В. П. Особенности расследования заказных убийств. Киев, 1999 և ուրիշներ:

ների հետ շփման ընթացքում սոցիոլոգներն առանձնացնում են հետևյալ «հեռավորության գոտիները».

- Միջանձնային տարածություն (15-45 սմ). այն հանձնարարելի է միայն մտերիմ, լավ ծանոթ անձանց շփման ընթացքում, զրուցակցի կողմից այդ տարածություն ներխուժելը գրեթե միշտ դիտվում է որպես իր անձնական անձեռնմխելիությունը խախտելու փորձ կամ անքաղաքավարություն:
- Անձնական գոտի (45-120 սմ). ընկերների, գործընկերների հետ առօրյա զրույցների համար է, այն ենթադրում է գործընկերների միջև տեսողական շփում:
- Սոցիալական գոտի (120-400 սմ). սովորաբար պահպանվում է աշխատասենյակներում պաշտոնական հանդիպումների ընթացքում, որպես կանոն, բավականաչափ ծանոթ անձանց հետ:

Հասարակական գոտի (400 սմ և ավելի). ենթադրում է մարդկանց մեծ խմբի հետ շփում[6]:

Սույն «գոտիների» առանձնահատկությունների իմացությունը կարևոր է վարույթն իրականացնող մարմինների համար լրագրողների հետ շփումն արդյունավետ դարձնելու համար:

Ընդունված կարծիք կա, որ յուրաքանչյուր զրույց բաղկացած է հինգ փուլերից՝ *շփում, կողմնորոշում, տեղեկացում, հիմնավորում, որոշումների ընդունում*: Լրագրողների հետ վարույթն իրականացնող մարմինների շփման խնդիրները դիտարկելիս կարևոր դեր ունի առաջին փուլը:

Նախքան զրուցելն անհրաժեշտ է վերացնել զրուցակցի լարվածությունը, ցույց տալ, որ բարյացակամ է տրամադրված նրա հանդեպ: Դրա համար անհրաժեշտ է բարեհաճ վերաբերմունք ցուցաբերել զրուցակցի նկատմամբ:

[6] Տե՛ս ***Столяренко Л. Д.***, ***Самыгин С. И.*** Психология и педагогика в вопросах и ответах. Ростов-на Дону, 1999, с. 225:

Այդ նպատակով անհրաժեշտ է զրույցի սկզբում փորձել լուծել հետևյալ խնդիրները.

- հաստատել արդյունավետ շփում *(անհրաժեշտ է ոտքի կանգնել, սեղմել նրա ձեռքը, ժպտալ, ուղեկցել նրան այնտեղ, որտեղ կայանալու է զրույցը, հնարավորության դեպքում հաճոյախոսություն անել)*,
- ստեղծել հաճելի միջավայր *(անհրաժեշտ է հարգանք ցուցաբերել զրուցակցի անձի, նրա կարծիքի և հետաքրքրությունների հանդեպ, ցանկալի է նստել զրուցակցի կողքին, քանի որ սեղանը «բաժանող» հանգամանք է)*,
- ուշադրությունը հրավիրել որևէ թեմայի, հարցի վրա *(կարելի է որևէ բանից «կառչելու», զրույցի թեմային վերաբերող որևէ դեպք հիշելու կամ անեկդոտ պատմելու ձևով)*,
- հետաքրքրություն առաջացնել զրույցի նկատմամբ *(անհրաժեշտ է համոզել, որ այն չափազանց կարևոր թեմա է)*:

Անհրաժեշտ է խուսափել շատ հաճախ ներողություն խնդրելուց կամ անվստահության, անհարգալից վերաբերմունք ցուցաբերելուց, հարկավոր չէ զրուցակցին ստիպել պաշտպանողական դիրք ընդունել: Զրույցը պետք է սկսել «Դուք»-ով: Նման մոտեցումը զրույց վարելու, զրուցակցին ավելի լավ ճանաչելու անձի ունակությունն է: Անհրաժեշտ է օգտագործել հետևյալ արտահայտությունները. «Կցանկանայիք արդյոք», «Ձեզ հետաքրքրում է արդյոք», «Ինչպես գիտեք» և այլն[7]:

Փորձը ցույց է տալիս, որ լրագրողներն իրենց հետաքրքրող տեղեկությունը ստանալու նպատակով հազվադեպ են բավարարվում միայն պաշտոնական աղբյուրներով: Այս միտումը

[7] Տե՛ս ***Ершов А. А.*** Психология соактивности людей. СПб. Знание, 1992, էջ 18:

ներկայումս լայն տարածում է ստանում ԶԼՄ-ների շրջանում: Ցավոք, ԶԼՄ-ներում քրեական թեմաները լուսաբանելու համար ձայնա- և տեսաձայնագրություններ ստանալու իրավական, բարոյաէթիկական շատ հարցեր օրենսդրությամբ կանոնակարգված չեն:

Միաժամանակ պետք է նշել, որ ԶԼՄ-ները շատ հաճախ տարածում են ոչ հավաստի տեղեկություն՝ էական խեղաթյուրումներով, սեփական ենթադրություններով, ինչպես նաև իրադարձությունների և փաստերի վերաբերյալ «սեփական տեսակետով»: Այդ պատճառով նպատակահարմար է իրականացնել հետևյալ միջոցառումները.

ա) ակտիվացնել վարույթ իրականացնող մարմինների մամլո ծառայությունների դերը,

բ) նյութեր հրատարակելն այնպիսի անձանց կողմից, ովքեր տեղյակ են քրեական գործով օբյեկտիվ իրականությանը և իրենց փաստարկները հիմնավորում են ապացույցներով: Պրակտիկան վկայում է, որ ԶԼՄ-ներին կարելի է շահագրգռել և ներգրավել արդյունավետ համագործակցության, որի հիմքում պետք է ընկած լինի փոխշահավետ փոխգործողությունը: Անհրաժեշտ է նաև նշել, որ դեռևս «չեն մշակվել հրապարակայնության ապահովման ոչ միայն տեսական մեթոդոլոգիական, այլ նաև գերատեսչական գործունեության կիրառական եղանակները»[8]:

Միաժամանակ նշենք, որ ի տարբերություն դատական քննության, որն ընթանում է հրապարակային, նախնական քննության դեպքում ԶԼՄ-ների հետ փոխգործողության կազմակերպումը պետք է դիտարկել նախաքննության գաղտնիության սկզբունքի համատեքստում, որի սահմանները յուրա-

[8] Տե՛ս ***Зажицкий В. И.*** «Акулы пера և уголовное судопроизводство// Преступность и культура. М, 1999, էջ 123:

քանչյուր գործով տարբեր են, սակայն ընդհանուր են փոխգործողության ձևերն ու մեթոդները:

Ի տարբերություն մինչդատական վարույթի, որն իրականացվում է գաղտնիության սկզբունքի և նախաքննական տվյալների հրապարակման սահմանափակման պայմաններում, դատական քննությունն իրականացվում է հրապարակային, թեև օրենսդրորեն և միջազգային իրավական ակտերով սահմանված են այդ սկզբունքի սահմանափակման պայմաններ, ինչն իր հերթին ենթադրում է մի կողմից է դատարանի և ՁԼՄ-ների ներկայացուցիչների միջև հաղորդակցության առավել ակտիվություն, իսկ մյուս կողմից էլ՝ հրապարակվող տվյալների կամ տեղեկատվության առավել մեծ ծավալ ու բովանդակություն:

Խոսելով դատական քննության ընթացքում ՁԼՄ-ների ներկայացուցիչների հետ արդյունավետ հաղորդակցության կազմակերպման մասին՝ հարկ է հիշատակել ԵԴԽԽ-ի թիվ 12 (2009) Կարծիքի 67-70-րդ կետերի սահմանումները.

«Լրատվամիջոցներն առանցքային դեր են խաղում ժողովրդավարական հասարակությունում ընդհանուր առմամբ և դատական համակարգի առնչությամբ՝ մասնավորապես: Արդարադատության որակի մասին հասարակության ընկալումների վրա մեծապես ներգործում են մամուլի լուսաբանումներն այն մասին, թե արդարադատության համակարգն ինչպես է գործում: Հրապարակայնությունն իր հերթին նպաստում է արդար դատաքննության իրականացմանը, քանի որ պաշտպանում է դատական կողմերին և պաշտպանության կողմին արդարադատության ոչ թափանցիկ իրականացումից:

Քրեական և քաղաքացիական վարույթի նկատմամբ աճող հանրային և լրատվական ուշադրությունը հրամայական է դարձրել օբյեկտիվ տեղեկատվության անհրաժեշտությունը, որը պետք է տրամադրվի լրատվամիջոցներին դատարանների և հանրային դատախազների կողմից:

Ժողովրդավարական հասարակությունում հիմնարար կարևորություն ունի, որ դատարանները վստահություն ներշնչեն

հանրության շրջանում: Վարույթի հանրային բնույթն առանցքային միջոցներից մեկն է՝ պահպանելու համար դատարանների նկատմամբ վստահությունը:

Այս հարցին վերաբերում են Եվրոպայի խորհրդի երկու փաստաթղթեր՝

ա) «Լրատվամիջոցների օգնությամբ քրեական վարույթի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման մասին» Rec (2003)13 հանձնարարականը,

բ) «Արդարադատության և հասարակության մասին» ԵԴԽԽ թիվ 7 Կարծիքը (2005թ.)»:

Վերջինս, մասնավորապես, սահմանում է. «ԶԼՄ-ների դերը կարևոր է, հանրության տեղեկություններ տրամադրելով, դատարանների դերի և գործառույթների հարցում», և նշում է, որ «Դատական մարմիններն առավել հասանելի դարձնելու առաջին ձևն ընդհանուր միջոցներով հանրությանը դատարանների գործառույթների հետ ծանոթացնելն է»:

Այնուհետև սահմանելով.

«33. Լրատվամիջոցներին պետք է հասանելի լինեն դատարանների գործունեության և դատական նիստերի վերաբերյալ տեղեկությունները՝ պահպանելով ներպետական օրենքով սահմանված սահմանափակումներն ու ընթացակարգերը (տե՛ս, օրինակ՝ «Քրեական գործերով վարույթների վերաբերյալ լրատվամիջոցների միջոցով տրամադրվող տեղեկությունների մասին» Rec(2003)13 առաջարկությունը): Լրատվամիջոցների ներկայացուցիչները լիովին ազատ են՝ որոշելու, թե որ պատմությունները պետք է ներկայացվեն հանրության ուշադրությանը և ինչպես պետք է ներկայացվեն դրանք: Փորձեր չպետք է կատարվեն՝ կանխելու լրատվամիջոցներին դատական համակարգի կազմակերպման կամ գործունեության մասին քննադատությունից: Արդարադատության համակարգը պետք է ընդունի լրատվամիջոցների դերակատարումը՝ որպես արտաքին դիտորդների, որոնք կարող են վեր հանել թերացումները և կառուցողական ներդրում կատարել դատարանների գործու-

նեության մեթոդների և դատարանների մատուցած ծառայությունների որակի բարելավման հարցում:

34. Դատավորներն ինքնարտահայտվում են ամենից առաջ իրենց որոշումներով և պարտավոր չեն բացատրել դրանք մամուլում կամ հրապարակային հայտարարություններ կատարել այն գործերի վերաբերյալ, որոնք գտնվում են իրենց քննության ներքո: Այնուամենայնիվ, լրատվամիջոցների և դատարանների միջև շփումների բարելավումը կարող է օգտակար լինել՝

i) ամրապնդելու իրենց դերի մասին ընկալումները,

ii) տեղեկացնելու հանրությանը դատարաններում աշխատանքի բնույթի, շրջանակի, սահմանափակումների և բարդության մասին,

iii) ուղղելու կոնկրետ գործերով զեկույցներում հանդիպող հնարավոր սխալները:

…

39. ԵԴԽԽ-ն գտնում է, որ յուրաքանչյուր մասնագիտության շրջանակում (դատավորների և լրագրողների) պետք է մշակվի վարվելակերպի կանոնագիրք՝ մյուս մասնագիտության հետ հարաբերությունների և դատական գործերի մասին հաղորդում ներկայացնելու վերաբերյալ: Ինչպես նման համակարգեր արդեն ունեցող պետությունների փորձը ցույց է տալիս՝ դատական իշխանությունը պետք է սահմանի այն պայմանները, որոնց համաձայն կարելի է հաղորդումներ կատարել դատական գործերի վերաբերյալ լրատվամիջոցներին, իսկ լրագրողները պետք է ունենան ուղեցույցներ ընթացիկ գործերի մասին հաղորդումներ տալու, դատական վարույթում ներգրավված անձանց (կողմեր, փուժողներ, վկաներ, դատախազներ, հետաքննչական դատավորներ, նախագահող դատավորներ) անունները (կամ նկարները) հրապարակելու և այն գործերով վճիռների մասին հաղորդումներով հանդես գալու համար, որոնք հանրային մեծ ուշադրության են արժանացել: Թիվ 3 (2002) Կարծիքի 40-րդ պարբերության համաձայն՝ ԵԴԽԽ-ն

առաջարկում է, որ ներպետական դատական մարմիններն այս առնչությամբ քայլեր ձեռնարկեն:

…

41. Անհրաժեշտ է խրախուսել դատարաններում ստեղծելու ընդունարաններ և տեղեկատու ծառայություններ, ոչ միայն, ինչպես նշվեց վերևում, տեղեկություններ տրամադրելու հանրությանը և օգնելու դատական ծառայություններից օգտվելու հարցում, այլև օժանդակելու լրատվամիջոցներին՝ առավել լավ հասկանալու, թե ինչպես է աշխատում դատական համակարգը:

42. Այս ծառայությունները, որոնք պետք է վերահսկվեն դատավորների կողմից, կարող են հետապնդել հետևյալ նպատակները՝

- *լրատվամիջոցներին տրամադրել դատական որոշումների ամփոփագրերը,*
- *լրատվամիջոցներին փաստական տեղեկություններ տրամադրել դատական որոշումների վերաբերյալ,*
- *տեղեկություններ տրամադրել լրատվամիջոցներին հատուկ հանրային հետաքրքրություն ներկայացնող դատական լսումների վերաբերյալ,*
- *փաստական պարզաբանումներ կամ ուղղումներ կատարել՝ լրատվամիջոցներում լուսաբանված գործերով հաղորդումների վերաբերյալ (տե՛ս նաև վերոնշյալ 34, iii պարբերությունը): Դատարանի ընդունարանի ծառայությունը կամ մամուլի խոսնակը կարող են զգուշացնել լրատվամիջոցներին այն հարցերի մասին, որոնք կոնկրետ գործով հարուցում են իրավական դժվարություններ, կարող են կատարել դատական լսումների կազմակերպչական աշխատանքներ և ձեռք բերել համապատասխան գործնական պայմանավորվածություններ, մասնավորապես, նպատակ հետապնդելով պաշտպանելու այն անձանց, որոնք մասնակցում են գործում որպես կողմեր, երդվյալ ատենակալներ կամ վկաներ:*

43. Դատարանի կողմից լրատվամիջոցներին տրամադրված բոլոր տեղեկությունները պետք է մատուցվեն թափանցիկ և ոչ խտրական եղանակով:

44. Այն հարցը, թե արդյոք հեռուստատեսության տեղադրած տեսախցիկներ պետք է թույլատրվեն նիստերի դահլիճում բացառապես ընթացակարգային հարցեր լուսաբանելո՞ւ, թե՞ նաև այլ նպատակներով, լայն քննարկումների թեմա է եղել թե՛ Դատավորների եվրոպական 2-րդ համաժողովում և թե՛ ԵԴԽԽ հանդիպումների ժամանակ: ԵԴԽԽ-ի որոշ անդամներ խիստ վերապահումով են վերաբերվել դատարանների աշխատանքի մասին հանրությանը տեղեկատվություն տրամադրելու այս նոր ձևին:

45. Դատական նիստերի հանրային բնույթը ժողովրդավարական հասարակության դատավարական հիմնական երաշխիքներից է: Չնայած միջազգային իրավունքով և ներպետական օրենսդրությամբ բացառություններ են թույլատրվում այն սկզբունքից առ այն, որ դատական վարույթը պետք է հրապարակային լինի, կարևոր է, որ այդ բացառությունները սահմանափակվեն ՄԻԵԿ-ի 6.1 հոդվածով սահմանված շրջանակով:

46. Վարույթի հրապարակայնության սկզբունքից հետևում է, որ քաղաքացիները և լրատվամիջոցների ներկայացուցիչները պետք է իրավունք ունենան մտնելու նիստերի դահլիճ, որտեղ դատաքննություն է տեղի ունենում, բայց արդի տեսալսողական լուսաբանման սարքավորումները դեպքերին այնպիսի հնչեղություն են տալիս, որ միանգամայն փոխվում է հրապարակային դատական լսման գաղափարը: Սա կարող է ունենալ այն առավելությունը, որ մեծանում է հանրային իրազեկությունը բարձրացնելու հնարավորությունը, թե դատական վարույթն ինչպես է ընթանում, ինչպես նաև դրական է անդրադառնում դատական համակարգի հեղինակության վրա: Սակայն վտանգ կա, որ տեսախցիկների առկայությունը դատարանում կարող է խախտել վարույթի ընթացքը և փոխել դատաքննության ընթացքում ներգրավված անձանց վարքագիծը

(դատավորներ, դատախազներ, փաստաբաններ, կողմեր, վկաներ և այլք):

47. Երբ դատական նիստը նկարահանվում է հեռուստատեսությամբ, պետք է կիրառել ֆիքսված տեսախցիկներ: Նախագահող դատավորը պետք է հնարավորություն ունենա որոշելու, թե ինչ պայմաններով պետք է տեղի ունենա նկարահանումը, և պետք է իրավունք ունենա ցանկացած պահի դադարեցնելու հեռարձակումը: Այս և անհրաժեշտ ցանկացած այլ միջոց պետք է ուղղված լինի ներգրավված անձանց իրավունքների պաշտպանությանը և ապահովի, որ նիստը պատշաճ մակարդակով անցնի:

48. Պետք է հաշվի առնել նաև վարույթում ներգրավված անձանց կարծիքը, մասնավորապես, մարդկանց անձնական կյանքին վերաբերող դատաքննությունների ժամանակ:

49. Հաշվի առնելով հեռուստատեսային հեռարձակման հատկապես հզոր ազդեցությունը և ոչ առողջ հետաքրքրասիրության միտումը՝ ԵԴԽԽ-ն խրախուսում է լրատվամիջոցներին՝ մշակելու մասնագիտական վարվելակերպի սեփական կանոնագրքեր, որոնց նպատակը պետք է լինի իրենց կողմից նկարահանվող վարույթի հավասարակշիռ լուսաբանումը՝ օբյեկտիվ հաղորդումներ տրամադրելու նպատակով:

50. Կարող են գոյություն ունենալ գերակա պատճառներ, որոնք կհիմնավորեն որոշակի, հստակ սահմանված հատուկ գործերով դատական նիստերի նկարահանումը: Դա կարող է լինել, օրինակ՝ կրթական նպատակներով կամ պատմական կարևորություն ունեցող դատական նիստի նկարահանումը պահպանելու նպատակով: Նման դեպքերում ԵԴԽԽ-ն շեշտում է դատաքննությունում ներգրավված անձանց պաշտպանելու կարևորությունը, մասնավորապես՝ ապահովելով, որ նկարահանման մեթոդները չխանգարեն դատաքննության պատշաճ ընթացքը:

51. Չնայած լրատվամիջոցներն առանցքային դեր են կատարում հանրության՝ տեղեկատվություն ստանալու իրավունքն ապահովելու գործում և, Մարդու իրավունքների եվրոպական

դատարանի բնորոշմամբ, հանդես են գալիս որպես «ժողովրդավարության դիտորդներ», այնուամենայնիվ, նրանք երբեմն կարող են խախտել մարդու մասնավոր կյանքի գաղտնիությունը, վնաս տալ հեղինակությանը կամ խախտել նրանց անմեղության կանխավարկածը: Սրանք այնպիսի գործողություններ են, որոնց համար անհատները իրավաչափորեն կարող են իրենց իրավունքների պաշտպանության բավարարում պահանջել դատարանում: Սենսացիոն պատմություններ ունենալու ձգտումը և մրցակցությունը տարբեր լրատվական գործակալությունների միջև պարունակում են պատշաճ սահմանները գերազանցելու և սխալներ գործելու վտանգ: Քրեական գործերով մեղադրվողները հրապարակայնորեն ներկայացվում և ենթադրվում են որպես հանցագործություն կատարած անձ՝ նախքան դատարանը կհաստատի մեղքը: Եթե նրանք արդարացվում են, միևնույն է, լրատվամիջոցներն արդեն անփոխարինելի վնաս են հասցրել նրանց հեղինակությանը, իսկ դա դատավճիռը չի կարող փոխել:

52. Ուստի դատարանները՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպին համապատասխան, պետք է մինչև վերջ կատարեն իրենց պարտականությունն այնպես, որ հնարավոր լինի հավասարակշռել մի կողմից՝ մարդու արժանապատվության պաշտպանության, մասնավոր կյանքի, հեղինակության և անմեղության կանխավարկածի, մյուս կողմից՝ տեղեկատվության ազատության արժեքները:

53. Ինչպես նշված է Դատավորների եվրոպական 2-րդ համաժողովի եզրակացություններում (տե՛ս վերոնշյալ 3-րդ պարբերությունը), անձնական իրավունքների (ինչպես, օրինակ՝ հեղինակության, արժանապատվության կամ անձնական կյանքի) խախտումներին արձագանքը քրեական իրավունքի տեսանկյունից պետք է սահմանափակվի բացառիկ դեպքերով: Այնուամենայնիվ, դատարանները պարտականություն ունեն ապահովելու վնասի հատուցում՝ հաշվի առնելով ոչ միայն տուժողին պատճառված վնասը, այլև իրավախախտման լրջության աստիճանը և հրապարակայնության մասշտաբները:

54. Դատարանները պետք է հստակ սահմանված բացառիկ դեպքերում, որպեսզի բացառվեն գրաքննության մեղադրանքները, իրավունք ունենան հրատապ միջոցներ ձեռնարկելու՝ անհապաղ վերջ դնելով մարդկանց անձնական իրավունքների ամենակոպիտ խախտումներին (օրինակ՝ հեղինակության, արժանապատվության կամ մասնավոր կյանքին միջամտության)՝ բռնագրավելով հրապարակումները կամ արգելանք դնելով հեռարձակման վրա:

55. Երբ դատավորը կամ դատարանը քննադատվում կամ հարձակման է ենթարկվում լրատվամիջոցների կողմից (կամ լրատվամիջոցների միջոցով՝ քաղաքական կամ հասարակական այլ գործիչների կողմից) արդարադատության իրականացման հետ կապված հիմքերով, նման դեպքերում ԵԴԽԽ-ն գտնում է, որ դատական ինքնափիրապետման պարտականության համաձայն՝ ներգրավված դատավորը չպետք է արձագանքի նույն ճանապարհով: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ դատարանները կարող են ուղղել մամուլի կողմից տարածված ոչ ճիշտ տեղեկությունները՝ ԵԴԽԽ-ն հավատացած է, որ ցանկալի է, որ ազգային դատական մարմիններին օժանդակություն ցուցաբերեն անձինք կամ մարմիններ (օրինակ՝ Դատական իշխանության բարձրագույն խորհուրդը կամ դատավորների միությունները), որոնք կարող և պատրաստակամ են համապատասխան դեպքերում արագ և արդյունավետ կերպով արձագանքելու նման մարտահրավերներին կամ հարձակումներին»:

Բացի դրանից, 2018 թվականի դեկտեմբերին CEPEJ-ն ընդունել է *«ԶԼՄ-ների և հասարակության հետ հաղորդակցման ուղեցույց դատարանների և դատախազության մարմինների համար»:*

Դատական իշխանության խորհուրդների եվրոպական ցանցն ընդունել է մի շարք հաշվետվություններ հանձնարարականներով՝ հասարակության վստահության և ԶԼՄ-ների հետ հարաբերությունների հարցերի առնչությամբ:

Այս հանձնարարականներն առնչվում են դատավորների հետ կապված մի շարք թեմաների, ինչպիսիք են՝

- *Դատավորների նույնականացումը ԶԼՄ-ներում:*
- *Բովանդակությունը և վարքագիծը ԶԼՄ-ներում:*
- *Ընկերությունը և կապերը ԶԼՄ-ներում:*
- *ԶԼՄ-ների օգտագործումն ապացույցներ ձեռք բերելու և ապօրինի խուզարկություն իրականացնելու նպատակով:*
- *Անձնական կյանքի անձեռնմխելիությունն ու պաշտպանվածությունը ԶԼՄ-ներում:*
- *Ուսուցառում:*

Այս տեսանկյունից թերևս հարկ է նկատի ունենալ, որ անհրաժեշտ է տարբերակել դատավարության ընթացքում ԶԼՄ-ների ներկայացուցիչների հետ պաշտոնական հաղորդակցության երկու հիմնական եղանակ՝

1. ***դատական նիստի շրջանակներում դատավորի և ԶԼՄ-ների ներկայացուցիչների միջև հաղորդակցություն,***
2. ***դատական իշխանության՝ ի դեմս լրատվական ծառայության և ԶԼՄ-երի ներկայացուցիչների միջև պաշտոնական հաղորդակցություն****:*

Առաջին եղանակի պարագայում դա հիմնականում վերաբերում է ԶԼՄ-ների կողմից առանձին դատական նիստերի լուսաբանմանը՝ դատական քննության հրապարակայնության սկզբունքի համատեքստում:

Ինչ վերաբերում է հաղորդակցման երկրորդ եղանակին, ապա պետք է նշել, որ ԶԼՄ-ների ու դրանց ներկայացուցիչների հետ հաղորդակցության հիմնական մեթոդները սահմանված են ՀՀ օրենսդրությամբ, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ դատական օրենսգրքով, «Զանգվածային լրատվության միջոցների մասին» ՀՀ օրենքով և այլ օրենքներով,

ինչպես նաև լրատվական ծառայության գործունեության կազմակերպման վերաբերյալ ԲԴԽ-ի համապատասխան որոշումներով և այլ ենթաօրենսդրական ակտերով:

Այս առնչությամբ հարկ է նշել, որ ԲԴԽ-ի 2019թ. հունվարի 11-ի ԲԴԽ-2-Ն-1 որոշմամբ հաստատված հավելվածի 24-րդ կետը սահմանում է. ***«Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների գործունեության լուսաբանումը կազմակերպվում է Բարձրագույն դատական խորհրդի Մամուլի և հասարակայնության հետ կապերի ծառայության (այսուհետ՝ Մամուլի ծառայություն) կողմից: Այդ նպատակով Մամուլի ծառայությունը, պահպանելով օրենսդրությամբ և Կանոններով նախատեսված ընթացակարգը և լրատվություն հաղորդելու շրջանակները, հրապարակում է Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների գործունեության վերաբերյալ մամլո հաղորդագրություններ, աջակցում է Բարձրագույն դատական խորհրդին և դատարաններին՝ զանգվածային լրատվության միջոցների հետ փոխհարաբերությունում»:***

ՀՀ դատական օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 17-րդ կետի համաձայն՝ *ի պաշտոնե գործելիս դատավորը պարտավոր է՝ զանգվածային լրատվության միջոցների հետ շփումներն իրականացնել Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կանոններին համապատասխան, իսկ նույն օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը հաստատում է զանգվածային լրատվության միջոցների հետ իր և դատարանների փոխհարաբերության կանոնները:*

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավակարգավորումները՝ ԲԴԽ-ն 2019թ. հունվարի 11-ի ԲԴԽ-2-Ն-1 որոշմամբ հաստատել է զանգվածային լրատվության միջոցների հետ ԲԴԽ-ի և դատարանների փոխհարաբերության կանոնները:

Մասնավորապես, վերը նշված որոշմամբ հաստատված հավելվածի 1-2-րդ կետերով սահմանվում է, որ *զանգվածային լրատվության միջոցների հետ Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների փոխհարաբերության կանոնները (այ-*

սուիեր՝ Կանոններ) կարգավորում են զանգվածային լրատվության միջոցներով Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների գործունեության լուսաբանմանը, Դատական իշխանության վերաբերյալ հանրության համակողմանի իրազեկվածությանն ու դատական իշխանության համակարգում զանգվածային լրատվության միջոցների գործունեությանն առնչվող հարաբերությունները:

Կանոնների նպատակն է Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների փոխհարաբերությունը կանոնակարգելու միջոցով նպաստել արդար դատաքննության իրավունքի համատեքստում հրապարակայնության և տեղեկություններ ստանալու իրավունքի արդի խնդիրներին համահունչ պատշաճ իրավական մշակույթի ձևավորմանը: Մամուլը պետք է ընկալվի որպես արտաքին անաչառ դիտորդ, որն ունակ է բացահայտելու թերությունները և կառուցողական ներդրումներ ունենալու արդարադատության արդյունավետության բարձրացման գործում:

ԶԼՄ-ների հետ դատավորների հաղորդակցման հիմնական մեթոդները հետևյալներն են.

Առաջին, ԶԼՄ-ներով դատավորները հայտարարությամբ հանդես են գալիս մամուլի ծառայության միջոցով: Ընդ որում, տվյալ դեպքում, եթե դատավորի կարծիքը տարբերվում է համապատասխան հարցադրման առնչությամբ ԲԴԽ-ի՝ որոշակիորեն արձանագրված դիրքորոշումից, ապա վերջինս ընդգծում է, որ ինքը ներկայացնում է իր սեփական կարծիքը:

Երկրորդ, դատավորի կողմից ԶԼՄ-ներին տեղեկատվությունը կարող է տրամադրվել ինչպես անմիջականորեն, այնպես էլ մամուլի ծառայության միջոցով: Ընդ որում, դատավորները լրատվության միջոցներին որևէ եղանակով տեղեկատվություն տրամադրելու դեպքում այդ մասին հնարավորինս սեղմ ժամկետում իրազեկում են մամուլի ծառայությանը:

Այն դեպքերում, երբ դատավորը սեփական նախաձեռնությամբ է ելույթով հանդես գալիս իր լիազորությունների առնչությամբ կամ որևէ այլ կերպ փոխհարաբերվելու հարցով, նրան պատշաճ աջակցություն է ցուցաբերում մամուլի ծառայությունը:

Հատկանշական է, որ տեղեկատվություն տրամադրելու դեպքում դրա եղանակներն ու սահմանները որոշում են դատավորները՝ իրենց հայեցողությամբ: Իսկ հարցադրումների առնչությամբ մամուլի ծառայությունը պարտավոր է տալ համապատասխան խորհրդատվություն:

Երրորդ, դատարանները կարող են արձագանքել այն հրապարակումներին, որոնք իրենց դիտարկմամբ էական նշանակություն ունեն: Այդ դեպքում նրանք կարող են մամուլի ծառայության աջակցությամբ պատրաստել հաղորդագրություններ, հանդես գալ հարցազրույցներով կամ անհրաժեշտ համարվող նյութը լուսաբանել այլ եղանակներով:

Դատական իշխանության գործունեությանն առնչվող զանգվածային լրատվության միջոցներով հրապարակված տեղեկատվությանը կարող են արձագանքել նաև դատավորները՝ Մամուլի ծառայության միջոցով:

Բոլոր դեպքերում ՁԼՄ-ների ներկայացուցիչների հետ հաղորդակցման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել վերը նշված որոշմամբ սահմանված **սկզբունքներով**, որոնցից առավել հատկանշականներն են.

- ***Դատական իշխանության վերաբերյալ հանրությանը լիարժեք տեղեկատվության տրամադրումը զանգվածային լրատվության միջոցներով.***

Հանրությունը պետք է զանգվածային լրատվության միջոցներով հնարավորինս լիարժեք տեղեկատվություն ստանա դատական իշխանության մարմինների կազմավորման ու գործունեության վերաբերյալ: Լրագրողները պետք է գործնա-

կանում ի վիճակի լինեն ազատ լուսաբանելու և մեկնաբանելու արդարադատության գործառույթի իրականացումը, բացառությամբ՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված սահմանափակումների:

■ ***Անմեղության կանխավարկածը.***

Անմեղության կանխավարկածի սկզբունքի հարգումն արդար դատաքննության իրավունքի կարևոր բաղադրիչ է: ԶԼՄ-ներով տրամադրվող յուրաքանչյուր տեղեկատվություն կամ կարծիք չպետք է խաթարի կասկածյալի, մեղադրյալի կամ ամբաստանյալի անմեղության կանխավարկածի սկզբունքը: Վարչաիրավական և քաղաքացիաիրավական գործերով հրապարակվող տեղեկատվությունը կամ կարծիքը չպետք է խաթարի կողմերի բարեխղճության կանխավարկածը, քանի դեռ օրենքի խախտման փաստը չի հաստատվել օրինական ուժի մեջ մտած դատական ակտով:

■ ***Տեղեկատվության ճշգրտությունը.***

Բարձրագույն դատական խորհուրդը կամ դատարանները պարտավոր են զանգվածային լրատվության միջոցներին տրամադրել բացառապես պատշաճ կարգով ստուգված կամ առնվազն հիմնավորված եզրահանգումներով տեղեկատվություն:

■ ***Տեղեկատվության մատչելիությունը և տրամադրման հավասարությունը.***

Եթե դատական իշխանությանն առնչվող ցանկացած տեղեկատվություն օրինական կարգով տրամադրվել է որևէ լրագրողի, ապա հարկ է ապահովել, որպեսզի նույն այդ տեղեկատվությունը նույն պայմաններով հասանելի լինի այդ առնչությամբ հարցում ներկայացրած զանգվածային լրատվության մյուս միջոցների համար: Այդ նկատառումով լրագրողին կամ զանգվածային լրատվության միջոցին տրամադրված տե-

ղեկատվությունը կարող է, հաշվի առնելով նյութի նկատմամբ հանրային հետաքրքրության աստիճանը, անհապաղ զետեղվել դատական իշխանության պաշտոնական կայքում՝ *նշելով, որ այն արդեն իսկ տրամադրվել է կոնկրետ լրատվամիջոցի՝ վերջինիս հարցման արդյունքում*:

■ ***Հանրային էական շահերին առնչվող գործերով դատաքննության վերաբերյալ տեղեկատվության պարբերականությունը.***

Հանրային շահերը շոշափող գործերով տեղեկատվություն տրամադրվում է՝ անկախ դրա առնչությամբ զանգվածային լրատվության միջոցների միջնորդությունների: Այդպիսի գործերով դատական քննությունը տևական լինելու դեպքում համարժեք տեղեկատվություն է տրվում դատաքննության շրջանակներում յուրաքանչյուր էական նշանակություն ունեցող դատավարական գործողության վերաբերյալ:

■ ***Տեղեկատվության ապօրինի օգտագործման արգելքը.***

ԲԴԽ-ի, դատարանների, ինչպես նաև Դատական դեպարտամենտի տնօրինության տակ գտնվող տեղեկատվությունը չի կարող օգտագործվել օրենսդրությամբ չնախատեսված նպատակներով:

■ ***Անձնական կյանքի և անձնական տվյալների պաշտպանությունը.***

Դատական իշխանության իրավասու մարմինների կողմից դատավարության մասնակիցների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելիս անհրաժեշտ է հարգել ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված անձնական տվյալների պաշտպանության, մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքը: Հատուկ ուշադրություն պետք է դարձվի անչափահասների, տուժողների, վկաների, ամբաստանյալների և նրանց ընտանիքների անդամների հիշյալ իրա-

վունքի պաշտպանությանը: Տեղեկատվության տրամադրումը չպետք է հանգեցնի դատավարության մասնակիցների համար ոչ իրավաչափ և ոչ բարվոք հետևանքների, ինչպես նաև առանց իրավաչափ հիմքերի՝ չբացահայտի նրանց ինքնությունը:

■ ***Զանգվածային լրատվության միջոցներին հերքում կամ պատասխան ներկայացնելու իրավունքի հարգումը.***

Պետք է պատշաճ միջոցներ ձեռնարկվեն, որպեսզի անվերապահորեն հարգվի ու իրացվի յուրաքանչյուր անձի վերաբերյալ ԲԴԽ-ի և դատարանների կողմից տրամադրված, այդ թվում՝ մամլո հաղորդագրություններում արտացոլված տեղեկատվության իրավաչափության կամ իսկության առնչությամբ տվյալ անձի կողմից հերքում կամպատասխան ներկայացնելու իրավունքը:

■ ***Արդարադատության շահն էապես վտանգող տեղեկատվություն տրամադրելու արգելքը.***

ԲԴԽ-ի և դատարանների կողմից տրամադրված, այդ թվում՝ մամլո հաղորդագրություններում արտացոլված տեղեկատվությունն իր բովանդակությամբ չպետք է էապես վտանգի կոնկրետ գործով արդարադատության շահը: Այդպիսի տեղեկատվության նկատմամբ հանրային մեծ հետաքրքրության առկայության դեպքում այն կարող է հրապարակվել ինչպես կոնկրետ գործով դատական քննության որոշակի փուլի, այնպես էլ ամբողջ դատավարության ավարտից և դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո: Դատավարության ընթացքում նյութը հրապարակելու նպատակահարմարության վերաբերյալ գործը քննող դատավորի դիրքորոշումը վճռորոշ է:

■ ***Հրապարակայնության սկզբունքի ոչ պատշաճ կիրառմամբ պատճառված վնասի հատուցումը.***

Եթե դատավարության մասնակիցը գտնում է, որ ԲԴԽ-ի և դատարանների կողմից տրամադրված, այդ թվում՝ մամլո հաղորդագրություններում արտացոլված տեղեկատվության հրապարակմամբ խախտվել է իր արդար դատաքննության իրավունքը, ապա վերջինիս պետք է տրվի իր իրավունքների պաշտպանության վերաբերյալ համարժեք պարզաբանում:

■ ***Լրագրողների անարգել ներկայությունը դատական նիստերին և մուտքը դատարանի դահլիճ.***

Լրագրողները դռնբաց դատական նիստում, առանց որևէ խտրականության և առանց նախնական հավատարմագրման, կարող են անարգել ներկա գտնվել դատական նիստերին: Նրանք կարող են մնալ նիստերի դահլիճում այնքան ժամանակ, քանի դեռ նիստերի դահլիճում են գտնվում նիստին ներկա գտնված մյուս անձինք: Նիստերի դահլիճում, հնարավորության սահմաններում, անհրաժեշտ է լրագրողների գործունեության համար ապահովել պայմաններ և հատուկ այդ նպատակի համար նախատեսված տեղ:

■ ***Դատական նիստի ընթացքում դատարանի դահլիճից ուղիղ եթերով ձայնագրություններ և լուսա-տեսանկարահանումներ հեռարձակելը.***

Դատարանի դահլիճից ուղիղ եթերով ձայնագրություններ և լուսա-տեսանկարահանումներ հեռարձակելը կարող է իրականացվել բացառապես դատարանի թույլտվությամբ: Դատարանը թույլտվություն կարող է տալ՝ համապատասխան լրագրողի միջնորդության քննարկման արդյունքներով, ընդ որում՝ պետք է համարժեք հաշվի առնվի արդար դատաքննության իրավունքի լիարժեք պաշտպանության անհրաժեշտությունը: Դատարանի դահլիճից ուղիղ եթերով ձայնագրություններ և տեսանկարահանումներ կատարելու և ուղիղ եթերով հեռարձակելու վերաբերյալ թույլտվություն տալու կամ մերժելու որոշումները պետք է ուղեկցվեն անհրաժեշտ *և բավարար* հիմնավորումներով: Ընդ որում՝ դատարանը պարտավոր է

օրենքին համապատասխան համարժեք հաշվի առնել արդարադատության շահը: ***Ուղիղ եթերով ձայնագրություններ և լուսա-տեսանկարահանումներ հեռարձակելու թույլտվության հարցը քննարկվում և լուծվում է՝ նիստից անմիջապես առաջ նիստերի քարտուղարին ուղղված լրագրողի բանավոր դիմումի հիման վրա: Թույլտվությունը տրվում է տվյալ գործով դռնբաց դատական նիստերի ընթացքն ուղիղ եթերով ձայնագրություններ և լուսա-տեսանկարահանումներ հեռարձակելու համար և ընդհատվում է միայն օրենսդրությամբ նախատեսված հիմքերով՝ դատարանի պատճառաբանված որոշման հիման վրա***: Այս կարգը տարածվում է նաև դատական նիստի ընթացքում լուսա-տեսանկարահանումներ կատարելու համար թույլտվություն ստանալու գործընթացի վրա:

- ***Զանգվածային լրատվության միջոցներին պարզեցված ընթացակարգով նյութեր տրամադրելը.***

Հրապարակման ենթակա տեղեկատվությունը, այդ թվում՝ հրապարակված դատական ակտերը ԲԴԽ-ի և դատարանների կողմից զանգվածային լրատվության միջոցներին և լրագրողներին պետք է տրվեն պարզեցված կարգով, այդ թվում՝ Դատական իշխանության պաշտոնական կայքում զետեղելու եղանակով և հնարավորինս սեղմ ժամկետում: Ընդ որում, լրագրողներն իրենց հասանելի դարձած փաստաթղթերի կամ դատական ակտերի պատճենները կարող են անարգել տարածել:

- ***Վկաների և տուժողների պաշտպանությունը.***

Օրենսդրությանը համապատասխան՝ *դատաքննության ընթացքում* ԲԴԽ-ի և դատարանների կողմից չի կարող վկայի կամ տուժողի ինքնությունը բացահայտվել, քանի դեռ նրանք հստակ արտահայտված եղանակներով չեն տվել իրենց համաձայնությունը կամ նրանց անձն ունի հանրային նշանակություն կամ նրանք արդեն իսկ հրապարակայնորեն տվել են ցուց-

մունքներ: Վկայի կամ տուժողի ինքնությունը բոլոր դեպքերում չի կարող բացահայտվել, եթե նրանց կյանքին կամ առողջությանը վտանգ է սպառնում:

■ ***Դատական ակտերի կատարման վերաբերյալ ԶԼՄ-ների թողարկումները.***

Զանգվածային լրատվության միջոցների հարցումներով՝ վերջիններիս դատական ակտերի կատարման վերաբերյալ տեղեկատվություն ԲԴԽ-ի և դատարանների կողմից տրվում է այն չափով, որ չափով այդ տեղեկատվությունը գտնվում է նրանց տնօրինության ներքո: Այլ մարմինների իրավասությանը վերապահված հարցերով զանգվածային լրատվության միջոցներին տրվում է համապատասխան պարզաբանում:

■ ***Դատավճիռների կատարումից հետո ԶԼՄ-ների թողարկումները.***

ԶԼՄ-ների հարցումներով՝ վերջիններիս՝ հանրության մեջ դատապարտյալների արդյունավետ ինտեգրման, ինչպես նաև մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության երաշխավորման նպատակով, դատավճիռների կատարումից հետո պատիժը կրած անձանց ազատվելու վերաբերյալ տեղեկատվություն կարող է տրամադրվել, եթե այդ անձինք նախապես համաձայնություն են տվել, կամ եթե նրանք կամ նրանց կատարած հանցագործությունները շոշափում են հանրության շահերը: ԲԴԽ-ի կամ դատարանների տնօրինության ներքո գտնվող այդպիսի տեղեկատվությունը տրվում է անարգել: Այլ մարմինների իրավասությանը վերապահված հարցերով զանգվածային լրատվության միջոցներին տրվում է համապատասխան պարզաբանում:

■ ***Զանգվածային լրատվության միջոցներով Բարձրագույն դատական խորհրդի անդամների և դատավորների ելույթներում ապաքաղաքականացվածությունը.***

ԲԴԽ-ի անդամները և դատավորները զանգվածային լրատվության միջոցներով ելույթներում և ցանկացած այլ հրապարակային ելույթներում պարտավոր են դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն: Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ մասնագիտական քննարկումները կամ եզրակացությունները, դատական իշխանության գործունեության վերաբերյալ քննարկումներն ու հայտարարությունները, այդ թվում՝ հրապարակային, ապաքաղաքականացվածության սկզբունքի խախտում չեն համարվում:

Եվ վերջապես, ԶԼՄ-ների ներկայացուցիչների հետ արդյունավետ հաղորդակցության ապահովման համար հարկ է նկատի ունենալ ԵԴԽԽ-ի թիվ 12 (2009) Կարծիքի 73-75-րդ կետերի պահանջները.

«73. Հետաքննության կամ դատաքննության փուլում գործերի լրատվական լուսաբանումը կարող է անտեղի միջամտություն հանդիսանալ և հանգեցնել ոչ պատշաճ ազդեցության ու ճնշումների՝ գործով պատասխանատու դատավորների, երդվյալ ատենակալների և հանրային դատախազների նկատմամբ: Այս մարտահրավերին դիմակայելու համար դատավորներից և հանրային դատախազներից պահանջվում են լավ մասնագիտական հմտություններ, բարձր էթիկական չափանիշներ և խիստ զսպվածություն՝ ընթացքի մեջ գտնվող գործերի կապակցությամբ ժամանակից շուտ մեկնաբանություններ չկատարելու համար:

74. Լրատվամիջոցների հետ կապերի համար պատասխանատու անձինք, օրինակ՝ հանրային տեղեկատվության մասնագետները կամ լրատվամիջոցների հետ կապերի գծով վերապատրաստում անցած դատավորները և դատախազները, կարող են օգնել լրատվամիջոցներին՝ դատարանների աշխատանքի և որոշումների մասին ճշգրիտ տեղեկատվություն տարածելու հարցում և դրանով նպաստել դատավորների և դատախազների աշխատանքին:

75. Դատավորները և դատախազները պետք է փոխադարձ

հարգանք տածեն արդարադատության համակարգում իրենց հատուկ դերակատարման նկատմամբ: Թե՛ դատավորները և թե՛ դատախազները պետք է մշակեն լավագույն գործելակերպի կանոնագիրք կամ յուրաքանչյուր մասնագիտության գծով ուղեցույցներ՝ լրատվամիջոցների հետ հարաբերությունների առնչությամբ: Էթիկայի որոշ ներպետական կանոնագրքերով պահանջվում է դատավորներից՝ ձեռնպահ մնալ ընթացիկ գործերի վերաբերյալ մեկնաբանություններից, որպեսզի չկատարեն այնպիսի հայտարարություններ, որոնք կարող են հարցականի տակ դնել դատավորների անաչառությունը հանրության աչքերում, ինչպես նաև անմեղության կանխավարկածը չխախտելու համար: Ցանկացած դեպքում դատավորները պետք է դրսևորեն իրենց նախ և առաջ իրենց որոշումների միջոցով: Հայեցողությունը և ձևակերպումների ընտրությունը կարևոր են, երբ դատավորները հայտարարություններով են հանդես գալիս լրատվամիջոցների առջև ընթացքի մեջ գտնվող գործերի վերաբերյալ կամ օրենքով սահմանված կարգով՝ արդեն որոշում կայացրած գործերով: Հանրային դատախազները պետք է զգոն լինեն, երբ մեկնաբանություններ են կատարում դատավորի կողմից իրականացվող դատաքննության մասին կամ արդեն կայացրած դատավճռի առնչությամբ: Իրենց անհամաձայնությունը որոշման կապակցությամբ նրանք պետք է արտահայտեն բողոքարկման միջոցով, եթե դրա անհրաժեշտությունը կա»:

Թեմա 2.

ԶԼՄ-ների ու դրանց ներկայացուցիչների հետ հաղորդակցման առանձնահատկությունները, դատավարության հրապարակայնության սկզբունքի սահմանափակման չափանիշները

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է՝

« … Դատավճիռը հրապարակվում է դռնբաց դատական նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասի շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը»:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածը նախատեսում է արդար դատաքննության իրավունքը, որի 2-րդ մասի համաձայն՝ *«դատական վարույթը կամ դրա մի մասը, օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով»:*

Դատավարության հրապարակայնության սկզբունքի սահմանափակման հնարավոր դեպքեր նախատեսված են նաև

Դատական օրենսգրքի 11-րդ հոդվածով, որի համաձայն՝

«…

2. Դատական վարույթը կամ դրա մի մասն օրենքով սահմանված դեպքերում և կարգով դատարանի որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով:

3. Դատական նիստի ընթացքն օրենքով սահմանված կարգով արձանագրվում է:

4. Դատական նիստին ներկա անձն ունի սղագրություն և ձայնագրություն կատարելու իրավունք:

5. Դատական նիստում լուսանկարելը, տեսաձայնագրելը կամ դատական նիստը հեռարձակելն իրականացվում են օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ դատարանի որոշմամբ:

6. Դատական ատյանում վարույթը եզրափակող դատական ակտերը (այսուհետ՝ եզրափակիչ դատական ակտ), իսկ օրենքով կամ Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ նախատեսված դեպքերում նաև այլ դատական ակտերը ենթակա են պարտադիր հրապարակման դատական իշխանության պաշտոնական կայքում:

7. Դատական վարույթը կամ դրա մասը դռնփակ անցկացվելու դեպքում դատական իշխանության կայքում հրապարակվում է եզրափակիչ դատական ակտի եզրափակիչ մասը, եթե այն չի պարունակում օրենքով պահպանվող գաղտնիք:

8. Օրենքով նախատեսված դեպքերում դատական ակտի եզրափակիչ մասը հրապարակվում է նաև դատական նիստում:

9. Դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվում են գործի և դրա ընթացքի վերաբերյալ տեղեկու-

թյունները, որոնց ցանկը և հրապարակման կարգը սահմանում է Բարձրագույն դատական խորհուրդը:

10. Դատական իշխանության պաշտոնական կայքում անձնական կյանքի տվյալներ, կենսաչափական և հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ, երեխայի անձնական տվյալներ պարունակող դատական ակտերը հրապարակվում են ապանձնավորված կարգով: Բարձրագույն դատական խորհուրդը կարող է սահմանել անձնական տվյալների ապանձնավորման այլ դեպքեր: Ապանձնավորման կարգը սահմանում է Բարձրագույն դատական խորհուրդը:

11. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ծանոթանալու ավարտված դատական գործին, որով եզրափակիչ դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ: Դատական վարույթի դռնփակ մասին կամ օրենքով պահպանվող գաղտնիքին կամ չհրապարակված կամ մասնակի հրապարակված դատական ակտին անձը կամ նրա ներկայացուցիչը կարող է օրենքով սահմանված կարգով ծանոթանալ դատական ակտը կայացրած դատարանի որոշմամբ: Դատարանը կայացնում է նման որոշում, եթե դատական ակտն առերևույթ առնչվում է դիմողի իրավունքներին կամ պարտականություններին:

12. Անձը և նրա ներկայացուցիչը ստորագրություն վերցնելու միջոցով նախազգուշացվում են օրենքով պահպանվող գաղտնիքը հրապարակելու և սահմանված կարգի խախտմամբ օգտագործելու համար պատասխանատվության մասին:

13. Վարույթ ընդունված վճռաբեկ բողոքի քննության արդյունքով Վճռաբեկ դատարանի կայացրած որոշումը հրապարակվում է նաև ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը հրապարակելու համար օրենքով սահմանված կարգով, եթե այն չի պարունակում պետական կամ ծառայողական գաղտնիք»:

Դռնփակ դատական նիստեր անցկացնելու կարգն ու պայմանները նախատեսված են ՔԴՕ-ի 16-րդ հոդվածով, համաձայն որի՝

«…

2. Քրեական դատավարությանը մասնակցող անձանց մասնավոր կյանքի, պատվի և արժանապատվության, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության, վարույթի մասնակիցների կամ նրանց մերձավոր ազգականների պաշտպանության նպատակով դատարանը դատավարության մասնակիցների միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ գործը կամ դրա մի մասը կարող է քննել դռնփակ դատական նիստում: Դատարանը դռնփակ դատական նիստում քննություն իրականացնում է նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

3. Եթե դատարանի որոշմամբ լրատվական գործունեություն իրականացնողին կամ լրագրողին պարտադրվում է բացահայտել տեղեկատվության աղբյուրը, ապա լրատվական գործունեություն իրականացնողի կամ լրագրողի միջնորդությամբ դատական քննությունն իրականացվում է դռնփակ:

4. Գործը կամ դրա մի մասը դռնփակ նիստում քննելու հարցը լուծվում է դռնփակ:

5. Գործը կամ դրա մի մասը դռնփակ նիստում քննելու մասին դատարանը կայացնում է որոշում:

6. Դռնփակ դատական նիստում գործի քննությունն իրականացվում է սույն օրենսգրքով սահմանված կանոնների պահպանմամբ: Գործը կամ դրա մի մասը դռնփակ նիստում քննելու դեպքում դատական նիստին իրավունք ունեն ներկա լինելու դատական նիստերի քարտուղարը, դատական կարգադրիչները, դատավարության մասնակիցները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ընթերական, թարգմանիչը, մասնագետը, փորձագետը և վկան: Նշված անձինք դատարանի կողմից ստորագրություն վերցնելու միջոցով նախազգուշացվում են օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունները հրապարակելու և սահմանված կարգի խախտմամբ օգտագործելու համար պատասխանատվության մասին:

7. Գործը կամ դրա մասը դռնփակ նիստում քննելու դեպքում հրապարակվում է դատական ակտի եզրափակիչ մասը, բացառությամբ այն դեպքերի, երբ այն պարունակում է օրենքով պահպանվող գաղտնիք: Դատական ակտի՝ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող մասերը, ինչպես նաև այն մասերը, որոնք հիմք են հանդիսացել դռնփակ դատական քննություն անցկացնելու համար, հրապարակվում են դռնփակ նիստում:

8. Գործը կամ դրա մի մասը դատարանի որոշմամբ դռնփակ նիստում քննելու դեպքում տվյալ գործի հետագա քննությունն այլ դատական ատյաններում կատարվում է դռնփակ»:

Հարկ է նկատել, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը չի բացարձականացնում դատական քննության հրապարակայնության սկզբունքը և նախատեսում է որոշակի սահմանափակումներ, որոնցից հետևում է, որ յուրաքանչյուր գործով դատական նիստն ամբողջությամբ կամ դրա մի մասը ոչ հրապարակային անցկացնելու հարցի լուծումը թողնվում է դատարանին: Վերջինս որոշում կայացնելիս պետք է հաշվի առնի պաշտպանվող սոցիալական արժեքների կարևորությունը՝ ինչպես անհատի, այնպես էլ հասարակության և պետության համար: Այդուհանդերձ, այդ որոշումը պետք է լինի պատճառաբանված:

Ոչ հրապարակային դատավարություն անցկացնելու միակ հիմքն այն է, որ հրապարակայնությունը կարող է վնասել՝

- բարոյականությանը.
- հասարակական կարգին.
- ազգային անվտանգությանը.
- անչափահասների շահերին.
- մասնավոր կյանքին.
- արդարադատության շահերին:

Այս հիմքերն ունեն գնահատող բնույթ, բայց դրանցից յուրաքանչյուրի բացարձականացումը կարող է անդառնալի վնաս

հասցնել արդարադատության շահերին:

Հոկանսոնը և Ստուրեսոնն ընդդեմ Շվեդիայի գործով Եվրոպական դատարանն ընդունել է, որ տեղի է ունեցել դիմողների լռելյայն հրաժարում իրենց՝ հրապարակային դատաքննության իրավունքից, քանի որ նրանք խնդրանքով չեն դիմել դրա իրականացման համար, այն դեպքում, երբ այդպիսի հնարավորությունը հստակորեն ձևակերպված է Շվեդիայի օրենսդրության մեջ:

Եվրոպական դատարանը նշել է, որ բանտարկյալների կարգապահական զանցանքների վերաբերյալ քննությունը կարող է իրականացվել դռնփակ: *Քեմպբելը և Ֆելն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով* Եվրոպական դատարանը նշել է, որ չի կարելի հաշվի չառնել այն փաստերը, որոնք վերաբերում են հասարակական կարգին և անվտանգության հարցերին, երբ նման քննությունն իրականացվում է դռնբաց: Դա աներևակայելի դժվարություններ կստեղծեր պետական իշխանության համար:

Եվրոպական դատարանը որոշել է, որ չնայած հրապարակային քննությունների իրականացման լիովին արգելումը չի կարող արդարացված լինել, այնուամենայնիվ, պրոֆեսիոնալ կարգապահական քննությունը, հանգամանքներից կախված՝ կարող է իրականացվել դռնփակ: Հրապարակային դատաքննության անհրաժեշտության հարցը որոշելիս պետք է հաշվի առնվեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են մասնագիտական գաղտնիքի պահպանումը և այցելուների կամ հիվանդների մասնավոր կյանքի պաշտպանությունը:

Եվրոպական դատարանը քննության է առել *Բայրամն ընդդեմ Միացյալ Թագավորության գործը*, որը վերաբերում էր այն կանոնին, որ երեխաների խնամակալության հարցի վերաբերյալ որոշ դատաքննություններ պետք է իրականացվեն ինչպես առանց լրատվության միջոցների, այնպես էլ առանց հասարակության մասնակցության: Մինչդեռ երեխաներին վերաբերող նմանատիպ դատաքննությունները որոշ դատարաններում ենթադրում են լրատվության միջոցների և դատաքննությանը որ-

պես կողմ չմասնակցող որոշ մերձավոր ազգականների մասնակցություն: 2001թ. ապրիլի 24-ի իր վճռում Եվրոպական դատարանը նշել է, որ որևէ խախտում տեղի չի ունեցել:

Հրապարակային դատավարության կարևորագույն բաղադրիչն է նաև դատական նիստերի լուսաբանումը ԶԼՄ-ների կողմից:

Դատական պրակտիկայում խնդրահարույց է դատական նիստերի լուսաբանման ժամանակ օգտագործվող տեխնիկական միջոցների հարցը (լուսանկարում, տեսա- և (կամ) կինոնկարահանում, ձայնագրում և այլն):

ՔԴՕ-ն ըստ էության նշված հարցերը չի կարգավորում, ուստի այդ կապակցությամբ նպատակահարմար է ՔԴՕ 16-րդ հոդվածում լրացում կատարել՝ սահմանելով, որ *«դռնբաց դատական քննությանը ներկա գտնվող անձինք իրավունք ունեն գրավոր նշումներ կատարելու: Լուսանկարում, տեսա- և (կամ) կինոնկարահանում թույլատրվում է դատական նիստը նախագահողի կողմից՝ կողմերի համաձայնության դեպքում, եթե դրանով խոչընդոտներ չեն առաջանում դատական քննության համար: Ձայնագրության կատարումը չի թույլատրվում, եթե դրանով խոչընդոտներ են ստեղծվում դատական քննության համար»*:

Վերը նշված ձևակերպումը բխում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներից և նպատակաուղղված է ինչպես հանրության, այնպես էլ կողմերի և արդարադատության շահերի հավասարակշռմանը: Նման նորմ ամրագրված է նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի (2003) 13 Հանձնարարականում՝ ուղղված Եվրոպայի խորհրդի անդամ երկրներին, որի 14-րդ սկզբունքում ասված է. *«Լրատվամիջոցների կողմից ուղիղ հեռարձակումը դատական նիստերի դահլիճից կամ նկարահանումը պետք է արգելվի՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա բացահայտորեն թույլատրվում է օրենքի կամ համապատասխան պաշտոնատար անձանց կողմից: Տեղեկատվություն հաղորդելու այդ ձևը չպետք է թույլատրվի, եթե դրանով ստեղծվում է քրեական*

դատավարության փուժողների, վկաների, կողմերի, երդվյալների կամ դատավորների վրա անցանկալի ներգործության լուրջ վտանգ»:

Հարկ է նշել, որ դատավարության լուսաբանումը պետք է կրի հավասարակշռված բնույթ այն հաշվով, որպեսզի մի կողմից չխախտի անձի անմեղության կանխավարկածի սկզբունքը, իսկ մյուս կողմից չվտանգի գործի արդարացի քննության հնարավորությունը: Այս տեսանկյունից ուշագրավ է ԵԴԽԽ-ի թիվ 12 (2009) Կարծիքի 71-72-րդ կետերի բովանդակությունը՝ «*Մշտապես հիշելով, որ հանրությունն իրավունք ունի ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջը տեղեկատվություն ստանալու՝ լրագրողներին պետք է անհրաժեշտ տեղեկություններ տրամադրել, որպեսզի վերջիններս կարողանան լուսաբանել և մեկնաբանել արդարադատության համակարգի աշխատանքը: Այս հարցում դատավորները և դատախազներն ունեն հայեցողության իրավունք ընթացքի մեջ գտնվող գործերի առնչությամբ: Կարող են գործել նաև ներպետական օրենսդրությամբ և Դատարանի նախադեպով սահմանված սահմանափակումներ:*

Լրատվամիջոցները, ինչպես նաև դատավորները և հանրային դատախազները պետք է պահպանեն հիմնարար սկզբունքներ, ինչպիսին են՝ անմեղության կանխավարկածը և արդար դատաքննության իրավունքը, համապատասխան անձանց մասնավոր կյանքի իրավունքը, գործում ներգրավված դատավորների և հանրային դատախազների անաչառության սկզբունքի խախտման կամ նման տպավորություն թողնելու արգելքը»:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի Եվրոպայի խորհրդի անդամ երկրներին ուղղված «Լրատվամիջոցների կողմից քրեական դատավարության վերաբերյալ տեղեկատվություն հաղորդելու մասին» 10.07.2003թ. Հանձնարարականում նշված է.

«Վկաների ինքնությունը չպետք է հրապարակայնացվի, բացառությամբ այն դեպքերի, երբ վկան նախապես տվել է իր հա-

մածայնությունը, վկայի անձի հրապարակայնությունը հանրային կարևորություն ունի, կամ երբ վերջինս արդեն իսկ վկայություն է տվել հրապարակայնորեն: Վկաների անձը (ինքնությունը) երբեք չպետք է հրապարակայնացվի, եթե դա սպառնում է նրանց կյանքին կամ անվտանգությանը: Պատշաճ կարևորություն պետք է տրվի վկաների պաշտպանության ծրագրին՝ հատկապես կազմակերպված հանցավորության դեմ տարվող կամ ընտանիքում կատարված հանցագործություններին առնչվող քրեական դատավարություններում»:

Այս առումով ՀՀ օրենսդրությունը դեռևս կատարելագործման կարիք ունի:

Այս ենթատեքստում տեղին է հիշատակել *Վան Մեխելենը և այլոք ընդդեմ Նիդեռլանդների գործը*, որով Հոլանդիայի չորս քաղաքացիներ 1989թ. կալանավորվել էին փոստատանը զինված կողոպուտ իրականացնելու համար, որի ժամանակ չորս ոստիկան էր վիրավորվել: Բոլոր մեղադրյալները ժխտել և շարունակել են ժխտել իրենց մասնակցությունը հանցագործության կատարմանը: Շրջանային դատարանը բոլոր չորսին էլ ճանաչել էր մեղավոր և յուրաքանչյուրին դատապարտել տասը տարվա ազատազրկման:

«Մեղադրանքները հիմնվել են inter alia ոստիկանության սպաների ցուցմունքներ բովանդակող ոստիկանական զեկույցների վրա, որոնք վերջիններս տվել են որոշակի համարների տակ, բայց մնացած առումներով՝ մնացել անանուն, ինչպես նաև վկաների ցուցմունքներ՝ ինչպես ոստիկան, այնպես էլ սովորական բնակիչներ:

Դիմումատուները բողոք են ներկայացրել Վերաքննիչ դատարան … Պաշտպանական կողմը պահանջել է, որպեսզի ոստիկանները հարցաքննվեն բաց դատավարության ընթացքում: Վերաքննիչ դատարանը, սակայն, որոշել է, որ բոլոր վկաներին առանձին-առանձին կհարցաքննի քննիչը:

Քննիչը երդմամբ լսել էր քսան վկայի ցուցմունք, որոնցից տասնմեկի ինքնությունը պաշտպանական կողմին չէր հայտնվել, քանի որ նրանց հարցաքննության ժամանակ պաշտպանը

և դատախազը գտնվելիս են եղել առանձին սենյակներում, որոնք քննիչի աշխատասենյակի հետ միացվել են ձայնային կապի միջոցով:

Համարների տակ վկայություն տվածները՝ ոստիկանության սպաները, պնդել են, որ իրենց անունները գաղտնազերծելու դեպքում իրենք այլևս չեն կարողանա պատշաճ ձևով կատարել իրենց պարտականությունները: Ավելին, նրանք բոլորը ցանկացել են մնալ անանուն՝վախենալով իրենց ու իրենց ընտանիքի անդամների նկատմամբ վրեժխնդիր լինելուց: Նրանք բոլորը հաստատել են իրենց ցուցմունքները գործն ըստ էության քննած շրջանային դատարանում:

Իր պաշտոնական զեկույցում քննիչը հայտարարել է, որ իրեն հայտնի է անանուն վկաներից յուրաքանչյուրի անձը, և այն, որ նրանք եղել են տասնմեկ տարբեր անձինք: Զեկույցում շարադրվել են այն պատճառները, որոնց հիման վրա վկանեը ցանկացել էին մնալ անանուն: Քննիչը պատճառները դիտել էր համոզիչ և բավարար, իսկ ցուցմունքները՝ վստահության արժանի: Ինչպես պաշտպանական, այնպես էլ մեղադրանքի կողմը հնարավորություն են ունեցել հարցեր տալու … :

… Հետագայում վերաքննիչ դատարանը մերժել է պաշտպանական կողմի միջնորդությունը՝ բաց դատավարությունում անանուն վկաներին կրկին հարցաքննելու վերաբերյալ, սակայն հարցաքննել է մի շարք վկաների, որոնց ինքնությունը գաղտնապահված չէր:

… Վերաքննիչ դատարանը բոլոր չորսին էլ ճանաչել է մեղավոր սպանության փորձի և կողոպտման մեջ և դատապարտել յուրաքանչյուրին 14 տարվա ազատազրկման»[9]:

Սույն գործով Եվրոպական դատարանը գտել է, որ խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված դատական քննության հրապարակայնության պահանջը՝ բերելով հետևյալ փաստարկները.

«Դատարանի խնդիրը, Կոնվենցիայի համաձայն, ոչ թե վկաների ցուցմունքներին գնահատական տալն է, այլ այն,

[9] Европейский суд по правам человека, т. 2, М. 2000, с. 440-441.

որպեսզի համոզվի, թե արդյոք դատաքննությունը, ընդհանուր առմամբ, եղել է արդար՝ ներառյալ նաև այն, թե ինչպես են ձեռք բերվել ապացույցները...:

Սովորաբար բոլոր ապացույցները պետք է ներկայացվեն հրապարակային դատական լսման ընթացքում, մեղադրյալի ներկայությամբ՝ մրցակցությունն ապահովելու նպատակով: Այս սկզբունքից կան բացառություններ, սակայն դրանք որևէ կերպ չեն կարող նսեմացնել պաշտպանության իրավունքը. ընդհանուր կանոնի համաձայն՝ 6-րդ հոդվածի 1-ին և 3 (դ) կետերը պահանջում են, որպեսզի մեղադրյալին տրվի իր դեմ վկայող անձանց պնդումները վիճարկելու և նրանց հարցաքննելու համաչափ հնարավորություն, կամ երբ նրանք ցուցմունք են տալիս դատարանում, կամ էլ հետագա փուլերում»[10]:

Եվրոպական դատարանն սույն վճռում հենվում է մեկ այլ նախադեպային վճռի վրա, որում նշվել է. *«Այսպիսի հանգամանքներում արդարացի դատաքննության սկզբունքները պահանջում են նաև, որպեսզի համապատասխան դեպքերում պաշտպանական կողմի շահերը համադրվեն այն վկաների կամ զոհերի շահերի հետ, որոնք դատարան են կանչվել ցուցմունք տալու համար»*[11]*:*

Այս պատճառաբանությունից հետևում է, որ վերը նշված երկու արժեքներին Եվրոպական դատարանը տալիս է հավասար նշանակություն: Սակայն, նկատի ունենալով Եվրոպական դատարանի որոշումը հենց այս գործով, պետք է եզրակացնել, որ նախապատվությունը, վերջին հաշվով, թեկուզև՝ միջնորդավորված, սակայն տրվել է հրապարակայնության սկզբունքին: Դատարանը կտրական նշել է՝ *«պետք է հիշեցնել, որ մեղադրական դատավճիռը չպետք է բացառապես կամ որոշիչ կերպով հիմնվի միայն անանուն պնդումների վրա»:*

Այստեղից հետևում է, որ Եվրոպական դատարանը չի ժխտում «անանուն պնդումների» օգտագործումը դատավճռի

[10] Европейский суд по правам человека, т. 2. М. 2000, с. 443.

[11] Европейский суд по правам человека, т. 2. М. 2000, с. 444.

տեքստում՝ պայմանով, որ այն ամբողջովին կամ որոշիչ կերպով չպետք է հիմնվի այդպիսի ապացույցների վրա: Այլ կերպ ասած՝ Եվրոպական դատարանը գտնում է, որ մեղադրական դատավճիռը հիմնականում և որոշիչ կերպով պետք է հենվի դատաքննությամբ հետազոտված ապացույցների վրա[12]:

Միաժամանակ դատական նիստի հրապարակայնությունը պահանջում է, որպեսզի հրապարակայնորեն հետազոտված ապացույցներն իրենց արտացոլումը գտնեն դատավճռում: Հենց դատավճռով է, որ ինչպես քրեական, այնպես էլ քրեադատավարական օրենքները կիրառվում են կոնկրետ դեպքերում: Եվ հասարակությունը կվստահի միայն այն դատավճռին, որն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված: Դատարանն իրավունք չունի որևէ ապացույց, որը վերաբերում է ապացուցման առարկայի այս կամ այն հանգամանքների հաստատմանը կամ հերքմանը, մատնել անուշադրության: Միայն այդպիսի որակներ ունեցող դատական ակտը կարող է համապատասխանել Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին:

Այսպիսով, դատավճռի, ինչպես և դատական այլ որոշման հրապարակումը պետք է կատարվի դռնբաց դատական նիստում:

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում սահմանվում է, որ դատական որոշումը հայտարարվում է հրապարակավ: Տվյալ դրույթը չի ենթադրում այնպիսի բացառություններ, որոնք թույլ էին տրվում այն սկզբունքի կապակցությամբ, հա-

[12] Տե՛ս նույն տեղում:
Ի դեպ, ՔԴՕ-ի 23-րդ հոդվածն այս հարցում որևէ բացառություն չի նախատեսում՝ ամրագրելով, որ ‘դատարանը դատավճիռը հիմնավորում է միայն այն ապացույցներով, որոնց հետազոտման ընթացքում կողմերից յուրաքանչյուրի համար ապահովվել են հավասար պայմաններ: Համանման պահանջ է պարունակում նաև ՔԴՕ-ի 358 հոդվածը, ըստ որի՝ դատարանի դատավճիռը հիմնավորված է, եթե *«դրա հետևությունները հիմնված են միայն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա»:*

մածայն որի՝ քննությունը պետք է իրականացվի հրապարակայնորեն: Այսպիսով, տվյալ դրույթն իր ավանդն է ներդնում արդարացի դատաքննության ապահովման գործում, այն է՝ դատական իշխանության նկատմամբ հրապարակային հսկողություն սահմանելով:

Եվրոպական դատարանը նշել է, որ հրապարակավ հայտարարումն անպայմանորեն չի նշանակում, որ դատարանում որոշումը պետք է միշտ բարձրաձայն ընթերցվի*: Պրետոն և այլոք ընդդեմ Իտալիայի գործով* Եվրոպական դատարանը նշել է, որ *«գտնում է, որ բոլոր դեպքերում «դատական որոշման» հայտարարման ձևը պետք է գնահատվի պատասխանող պետության ներքին իրավունքին համապատասխան՝ նրա դատավարական համակարգի առանձնահատկությունների լույսի ներքո՝ հաշվի առնելով 3-րդ հոդվածի 1-ին կետի առարկան»*[13]*:*

Տվյալ գործով Եվրոպական դատարանը հայտարարել է, որ, հաշվի առնելով Վերաքննիչ դատարանի սահմանափակ իրավասությունը, նրա որոշումը դատական մատյանում գրանցելը, որը դրա ամբողջական տեքստը դարձրել էր հանրամատչելի, լիովին բավարարում է «դրա հրապարակավ հայտարարման» պահանջին:

Այնուհետև Եվրոպական դատարանը *Ախսենն ընդդեմ ԳԴՀ-ի գործով*[14] նշել է, որ Գերագույն դատարանի կողմից ընդունված որոշման հրապարակավ հայտարարումն անհրաժեշտ չէր՝ հաշվի առնելով այն, որ ստորին ատյանի դատարանների որոշումները մինչև այդ արդեն հայտարարվել էին հրապարակավ:

Զուտերն ընդդեմ Շվեյցարիայի գործով[15] Եվրոպական դատարանը նշել է, որ Վերաքննիչ զինվորական դատարանի

[13] Տե՛ս, Պրետոն և այլոք ընդդեմ Իտալիայի գործով 1983 թ. դեկտեմբերի 8-ի վճիռը:

[14] Տե՛ս, Ախսենն ընդդեմ ԳԴՀ-ի գործով 1982 թ. հունիսի 29-ի վճիռը:

[15] Տե՛ս, Զուտերն ընդդեմ Շվեյցարիայի գործով 1984 թ. փետրվարի 22-ի վճիռը:

որոշման հրապարակավ հայտարարումն անհրաժեշտ չի եղել, քանի որ հասարակության համար տվյալ որոշման մատչելիությունն ապահովվում էր այլ միջոցներով, նախևառաջ, դատական մատյաններից որոշման պատճենների ստացման հնարավորությամբ, նաև՝ շնորհիվ դատական որոշումների պաշտոնական հավաքածուի մեջ դրա հետագա հրատարակման:

Բոլոր վերոհիշյալ գործերը վերաբերում էին այն որոշումներին, որոնք ընդունվել էին վերին ատյանի դատարանների կողմից, և Դատարանը դրանցում որևէ խախտում չի արձանագրել: Սակայն *Վերներն ընդդեմ Ավստրիայի*[16] *և Շյուկսն ընդդեմ Ավստրիայի*[17] *գործերով*, որտեղ հրապարակավ չէր հայտարարվել ոչ առաջին ատյանի դատարանի, ոչ էլ Վերաքննիչ դատարանի որոշումը, այդ որոշումների ամբողջական տեքստը մատչելի չի եղել հասարակությանը, դատական մատյաններում դրանք մատչելի են եղել միայն այն անձանց համար, ովքեր ունեցել են «օրինական շահեր», Եվրոպական դատարանն արձանագրել է 6-րդ հոդվածի խախտում:

Բերված նախադեպային որոշումներն արտացոլում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի ոչ թե ձևը կամ տառը, այլ ոգին՝ այն իմաստով, որ ապահովում է դատական որոշման մատչելիության իրավունքը՝ անկախ դրա իրականացման ձևից:

Մյուս կողմից էլ, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը նոր որակ է հաղորդում նաև դատական որոշումների մատչելիության պայմաններին: Եթե ընդունեինք, որ դատավճռի հրապարակային ընթերցմամբ սահմանափակվում է պետության այդ մատչելիության ապահովման պարտականությունը, ապա կարող էինք պնդել, որ դա հանրության միակ հնարավորությունն էր ծանոթանալու որոշման տեքստին:

Այս կապակցությամբ հարկ է հիշատակել Եվրոպայի խորհր-

[16] Տե՛ս, Վերներն ընդդեմ Ավստրիայի գործով 1997 թ. նոյեմբերի 24-ի վճիռը:

[17] Տե՛ս, Շյուքսն ընդդեմ Ավստրիայի գործով 1997 թ. նոյեմբերի 24-ի վճիռը:

դի Նախարարների կոմիտեի՝ անդամ երկրներին ուղղված *«Իրավական տեղեկատվական-որոնողական համակարգերում դատական որոշումների ընտրության, մշակման, ներկայացման և արխիվավորման վերաբերյալ» N-R (95/11 Հանձնարարականի (11 սեպտեմբերի 1995թ.)* հետևյալ պահանջների վրա.

«… բոլոր դատարանների պրակտիկայի վերաբերյալ լիովին տեղեկացված լինելը հանդիսանում է օրենքի արդարացի կիրառման հիմնական պայմաններից մեկը», որ՝

«… արդարադատության իրականացման համար չափազանց կարևոր է, որպեսզի դատական պրակտիկայի վերաբերյալ տեղեկատվության որոնողական համակարգերը լինեն օբյեկտիվ և ներկայացուցչական», որ՝

«… համակարգչայնացված համակարգերն ավելի հաճախակի օգտագործվեն իրավաբանական հետազոտությունների համար և … դատական որոշումների աճող թիվն ու բարդությունը պայմանավորում են այդ նոր մեթոդների առավել լայն կիրառումը», որ՝

«… տեղեկատվության այդ նոր միջոցները պետք է մատչելի լինեն հասարակայնության լայն շրջանակների և, հատկապես՝ իրավաբանների համար», հետևաբար, անհրաժեշտ է.

«Ձեռնարկել պատշաճ միջոցներ՝ ապահովելու բոլոր օգտագործողների ազատ մուտքն իրավական տեղեկատվական-որոնողական համակարգեր, որոնք բաց են հանրային օգտագործման համար»:

Դատական քննության հրապարակայնության սկզբունքը ժողովրդավարական հասարակությունում արդարադատության իրականացման հիմնարար սկզբունքներից է: Դատական իշխանության նկատմամբ համարժեք հասարակական վերաբերմունք կարող է ձևավորվել միայն այն դեպքում, երբ դատարանն իրականացնի «թափանցիկ¦ արդարադատություն՝ մի կողմից հասարակությանն ընձեռելով իր գործունեությունը վերահսկելու հնարավորություն, մյուս կողմից՝ ապահովելով հաշվետու լինելը նույն հասարակության առաջ:

Եվրոպական դատարանի կարծիքով՝ քննության հրապարակային բնույթը դիմողներին պաշտպանում է գաղտնի, հասարակության կողմից ոչ վերահսկելի արդարադատության իրականացումից, հրապարակայնությունը նաև դատարանների՝ ինչպես բարձրագույն, այնպես էլ ստորադաս ատյանների, գործունեության նկատմամբ վստահությունն ամրապնդելու միջոցներից մեկն *է (տե՛ս Ֆիշերն ընդդեմ Ավստրիայի 1995թ. ապրիլի 26-ի գործով վճիռը): Եվրոպական դատարանը Բարբերան, Մեսեգեն և Ջաբարդոն ընդդեմ Իսպանիայի գործով (10590/83, 06.12.1988թ.)* Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում է արձանագրել այն պատճառով, որ ապացույցների շատ կարևոր մասեր բավարար չափով չեն ներկայացվել և քննարկվել դիմողների ներկայությամբ և հասարակության աչալուրջ հսկողության ներքո իրականացված վարույթի ընթացքում (89-րդ կետ):

Վերոնշյալից հետևում է, որ դատական քննության հրապարակայնությունը, կրկնակի նպատակ է հետապնդում: Նախ՝ այդ սկզբունքը դատավարության կողմերին պաշտպանում է գաղտնի, հանրության հսկողությունից զուրկ արդարադատության իրականացումից և ապահովում է վստահությունը դատարանների նկատմամբ: Երկրորդ՝ թույլ է տալիս հանրությանը տեսնել, թե ինչ է տեղի ունենում իր երկրի դատարաններում: Սա է պատճառը, որ դատական քննության հրապարակայնությունը բարձրացվել է մինչև սահմանադրական և միջազգային իրավական սկզբունքների մակարդակի:

Դատական քննության հրապարակայնության սկզբունքը ենթադրում է, որ ԶԼՄ-ները և հասարակության ներկայացուցիչներն իրավունք ունեն մասնակցել դատական քննությանը և գործող օրենքներին համապատասխան դատարաններից ստանալ ու տարածել տեղեկատվություն, իսկ դատավորը պետք է հանդուրժող լինի ԶԼՄ-ների ներկայացուցիչների հանդեպ: Ավելին, դատավորը որոշ դեպքերում պարտավոր է ակտիվորեն համագործակցել ԶԼՄ-ների հետ: Եվրոպական դատարանը *Ռիեպանն ընդդեմ Ավստրիայի գործով (35115/97,*

14.11.2000թ.) գտել է, որ վարույթը համարվում է հրապարակայնության պահանջները պահպանած, եթե միայն հասարակությանը հնարավորություն է ընձեռված տեղեկություն ստանալ դրա ժամանակի և տեղի վերաբերյալ, և եթե այդ վայրը հասարակության համար դյուրին հասանելի է: … *Դատարանը գտել է, որ սովորական դատարանի դահլիճից դուրս վարույթի իրականացումը, խոսքը վերաբերում է, մասնավորապես, այնպիսի վայրի, ինչպիսին կալանավայրն է, որտեղ սովորական հրապարակային քննություն, սկզբունքորեն, տեղի չի ունենում, լուրջ խոչընդոտներ է առաջացնում դրա հասարակական բնույթի համար: Նման գործերով Պետությունը պարտավոր է փոխարինող միջոցներ իրականացնել՝ համոզվելու համար, որ հասարակությունը և լրատվության միջոցները պատշաճ կերպով տեղեկացվել են լսման տեղի վերաբերյալ և արդյունավետ մասնակցության հնարավորություն են ստացել (29-րդ կետ): … Դատարանը նշել է, որ լսումները ներառված են եղել Ստեուրի Շրջանային դատարանի մեկ շաբաթվա լսումների ցուցակում, ինչը, անկասկած, նշում է պարունակել այն մասին, որ լսումները տեղի են ունենալու Գարսթեն բանտում…: Այս ցուցակն ուղարկվել էր լրատվամիջոցներին, իսկ հասարակությունն այդ մասին տեղեկացվել էր Շրջանային դատարանի գրասենյակից և հայտարարությունների ցուցանակից: Սակայն այս ընդհանուր ծանուցումից բացի, որևէ այլ մասնավոր միջոցառում չէր իրականացվել, ինչպիսին, օրինակ՝ Շրջանային դատարանի հայտարարությունների ցուցանակին փակցված առանձին տեղեկությունն այն մասին, թե ինչպես հասնել Գարսթեն բանտ, ինչպես նաև հստակ նշում այն մասին, թե որոնք են մասնակցության պայմանները: Բացի դրանից, լսման իրականացման մյուս պայմանները հազիվ թե խրախուսեին հասարակության մասնակցությունը, այն իրականացվել է վաղ առավոտյան, մի սենյակում, որը լսարան ընդունելու համար չափազանց փոքր չէր, սակայն սովորական դատարանի դահլիճի նման կահավորված չի եղել (30-րդ կետ):*

Այսպիսով, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Ստեռուրի Շրջանային դատարանը չի ձեռնարկել համապատասխան փոխարինող միջոցներ՝ հավասարակշռելու համար այն վնասակար ազդեցությունը, որը դիմողի գործի հրապարակայնության վրա ունեցել է Գարսթեն բանտի փակ տարածքում անցկացված լսումը: Հետևաբար, եզրակացրել է, որ 1996թ.-ի հունվարի 29-ի լսումները չեն կատարվել Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ հրապարակայնության պահանջներին համապատասխան ... (կետ 31):

Այսպիսով, դատավորը ոչ միայն չի կարող արգելել լրատվամիջոցի կամ հասարակության ներկայացուցչի մասնակցությունը դատական քննությանը լոկ այն պատճառով, որ նրան նախապես չեն տեղեկացրել ԶԼՄ-ների ներկայացուցիչների մասնակցության մասին, կամ եթե դատավորն անձնական անբարյացակամ հարաբերությունների մեջ է տվյալ ԶԼՄ-ների ներկայացուցչի հետ, կամ նման այլ պատճառաբանությամբ, այլև պարտավոր է միջոցներ ձեռնարկել հրապարակայնության սկզբունքի իրականացումն ապահովելու առումով: Ասվածը, սակայն, չի նշանակում, որ դատական քննության հրապարակայնության և տեղեկատվության ազատության սկզբունքները բացարձակ բնույթ են կրում: Հաճախ անհրաժեշտություն է առաջանում այլ կարևոր շահեր պաշտպանելու նպատակով նահանջել դատական քննության հրապարակայնությունից և տեղեկություններ ստանալու ազատությունից, քանի որ արդարադատության շահը պահանջում է, որպեսզի հրապարակայնության սկզբունքը չվնասի այլ կարևոր շահերի: Եթե դատարանը հարկադրված է ընտրություն կատարել, մի կողմից, դատավարության հրապարակայնության, մյուս կողմից՝ այլ շահերի միջև, ապա պարտավոր է դրսևորել արդար և հավասարակշռված մոտեցում:

Ելնելով հրապարակայնության սկզբունքի կարևորությունից՝ ինչպես միջազգային իրավական ակտերը, այնպես էլ ներպետական օրենսդրությունը սահմանում են այդ հիմնարար սկզբունքի սահմանափակման հիմքերը և կարգը, որպեսզի

բացառվի հրապարակայնության սկզբունքի չհիմնավորված սահմանափակումը:

Այսպես, դռնփակ դատական քննություն անցկացնելու մասին դատարանի որոշումը կարող է կայացվել ամբողջ դատական քննության կամ դրա համապատասխան մասի վերաբերյալ: Դռնփակ դատական քննությունն անցկացվում է քրեական դատավարության նորմերի պահպանմամբ: Դատարանների դատավճիռները և այլ վերջնական որոշումները հայտարարվում են հրապարակայնորեն: Դռնփակ դատական քննություն անցկացնելու դեպքում դատարանի որոշման հիման վրա կարող են հրապարակայնորեն հայտարարվել դատավճռի կամ այլ վերջնական որոշման միայն ներածական և եզրափակիչ մասերը. չեն հրապարակվում այն մասերը, որոնք հիմք են հանդիսացել դռնփակ դատական քննություն անցկացնելու համար:

Դատական քննության հրապարակայնության ապահովման և դրա իրավաչափ սահմանափակման մասին որոշում կայացնելու առումով ուղղորդող նշանակություն կարող է ունենալ Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան:

Կրաքիսն ընդդեմ Իտալիայի գործով (25337/94, 17.07.2003թ.) Եվրոպական դատարանը գտել է, որ 1995 թվականի սեպտեմբերի 29-ին կայացած լսման ժամանակ հեռախոսային խոսակցությունների լսման բովանդակությունը հրապարակելը և մամուլի համար դրա բացահայտելը հանգեցրել են դիմողի՝ Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքի խախտմանը... (57-րդ կետ): Եվրոպական դատարանը գտել է, որ սույն գործով մամուլում հրապարակված խոսակցությունների մի մասը խիստ անձնական բնույթ են ունեցել: Դրանք վերաբերել են փաստաբանի, նախկին գործընկերոջ, քաղաքական կողմնակցի և պրն Բերլուցկոնիի կնոջ հետ դիմումատուի և նրա կնոջ փոխհարաբերություններին: Եվրոպական դատարանն այն կարծիքին է, որ դրանց բովանդակությունը չնչին կապ է ունեցել կամ ընդհանրապես կապված չի եղել դիմողին առաջադրված քրեական մե-

ղադրանքների հետ...(66-րդ կետ): Ուստի, Եվրոպական դատարանի կարծիքով, մամուլում դրանց հրապարակումը պայմանավորված չէ սոցիալական անհրաժեշտությամբ: Հետևաբար, Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքների խախտումները չեն համապատասխանում այն իրավաչափ նպատակներին, որոնք պետք է հետապնդվեն, և, հետևաբար, այս դրույթի երկրորդ մասի իմաստով «անհրաժեշտ չեն եղել ժողովրդավարական հասարակությունում»... (67-րդ կետ):

Մ.-ն ընդդեմ Ֆրանսիայի (10147/82, 04.10.1984թ., DR 40) գործով դիմումատունն inter alia վիճարկել է, որ Ասիզների դատարանում նախագահող դատավորը, իրականացնելով իր հայեցողության իրավունքը, թույլատրել է, որ գործի նյութերի որոշ փաստաթղթեր ցուցադրվեն դատարանի դահլիճի հեռուստացույցների փակ ցանցով: Նա վիճարկել է, որ հակասելով քննության բանավորության սկզբունքին, այն նախ խախտել է իր գործը Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներին համապատասխան քննելու իր իրավունքը...: Վճռաբեկ դատարանի 1982 թ. ապրիլի 21-ի դատավճռից պարզ է դառնում, որ Ասիզների դատարանն այդ ընթացակարգը կիրառել է հանցագործության վայրի քարտեզը և լուսանկարները միաժամանակ ատենակալներին, դատավորներին, գլխավոր պաշտպանին, վնասների հատուցում պահանջող կողմերին և նրանց փաստաբաններին, ինչպես նաև մեղադրյալներին և նրա պաշտպանին ցույց տալու համար: Թեև դիմողը վիճարկել է այդպիսի վարույթը, որի ժամանակ գործի նյութերը հրապարկվել են և այդպիսով կարող էին ազդել ընդհանուր սրահում գտնվող անձանց և ատենակալների կարծիքի վրա, դրա տարածման մասին տեղեկությունից Հանձնաժողովի համար ակներև չէ, թե ինչպես է այդ գործընթացը վնաս պատճառել վարույթի օրինականությանը և, այդպիսով, նաև՝ արդարությանը, հատկապես, քանի որ փաստաթղթերը եղել են գործի նյութերում, և պաշտպանության կողմը պարտավոր էր դրանց մասին տեղյակ լինել (66-րդ կետ):

Զեթն ընդդեմ Ֆինլանդիայի (22009/93, 25.02.1997թ.) գործով Եվրոպական դատարանը, քննարկելով այն հարցը, թե առկա են եղել արդյոք հիմնավոր պատճառներ Վերաքննիչ դատարանի դատավճռում դիմողի անձը և նրա՝ ՄԻԱՎ վարակակիր լինելու փաստի բացահայտումն արդարացնելու համար, ինչի արդյունքում այն հայտնի էր դարձել մամուլին՝ արձանագրել է Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

Եվրոպական դատարանը, մասնավորապես, նշել է՝ Ֆինլանդիայի համապատասխան օրենսդրության համաձայն՝ Վերաքննիչ դատարանը պետք է ողջամտություն ցուցաբերեր՝ առաջին հերթին դատավճռում չհիշատակելով որևէ անուն, որը թույլ կտար անհատականացնել դիմողին և, երկրորդ՝ որոշ ժամանակով ամբողջական պատճառաբանությունը գաղտնի պահելով, դրա փոխարեն հրապարակեր պատճառաբանությունների կրճատված տարբերակը, այն է՝ ներածական մասը և կիրառված օրենքի նշումը…: Անկախ այն բանից, թե դիմողն արդյոք անձամբ խնդրել էր Վերաքննիչ դատարանին չհիշատակել իր անձը և իր առողջական վիճակը, նրա պաշտպանը տեղեկացրել էր դատարանին գաղտնիության պահպանման վերաբերյալ պահանջ՝ տասը տարի այն պահպանելու նրա ցանկության մասին…: Դրանից ակնհայտորեն բխում է, որ նա դեմ կլիներ քննարկվող տեղեկության վերաբերյալ հասարակությանն իրազեկելուն: Այս հանգամանքներում… Եվրոպական դատարանը չի գտնում, որ վիճարկվող հրապարակումը որևէ հիմնավոր պատճառով անհրաժեշտ է եղել: Հետևաբար, քննարկվող տեղեկության հրապարակումը հանգեցրել է դիմողի՝ Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտման…:

Նյուս Վերլագս ԳմՀ-ն և Ք�օԿԳ-ն ընդդեմ Ավստրիայի (31457/96, 11.01.2000թ.) գործով Եվրոպական դատարանն ընդունել է, որ կարող են լինել հիմնավոր պատճառներ հենց կասկածյալի լուսանկարը հրատարակելու համար՝ հիմնված քննարկվող հանցագործության բնույթի և գործի մասնավոր

հանգամանքների վրա…: Սակայն այդ կապակցությամբ որևէ հիմնավոր պատճառ Վիեննայի Վերաքննիչ դատարանի կողմից ներկայացված չի եղել (58-րդ կետ):

Եվրոպական դատարանը գտել է, որ իրավամբ սահմանված արգելքները որևէ կերպ չեն սահմանափակել դիմողի կազմակերպության իրավունքը հրատարակելու Բ.-ի դեմ հարուցված քրեական գործի վերաբերյալ մեկնաբանություններ: Սակայն դրանք սահմանափակել են դիմումատուի կազմակերպության ընտրությունը՝ կապված իր զեկույցների ներկայացման հետ, մինչդեռ անվիճելի է, որ մյուս լրատվամիջոցներն ազատ են եղել շարունակելու տպագրել Բ.-ի լուսանկարները նրա դեմ հարուցված քրեական վարույթի ընթացքում: Անդրադառնալով այս հանգամանքներին և ներպետական դատարանների կարծիքին առ այն, որ դիմումատուի կազմակերպության կողմից օգտագործված լուսանկարները չէ, որ խախտել են Բ.-ի իրավունքները, այլ դրանց համադրությունը տեքստի հետ, Եվրոպական դատարանը նշել է, որ Բ.-ի լուսանկարները տպագրելու բացարձակ արգելքն ավելին է եղել, քան անհրաժեշտ էր զրպարտությունից կամ անմեղության կանխավարկածի խախտումից Բ.-ին պաշտպանելու համար: Հետևաբար, հիմնավոր կապ չի եղել Վիեննայի Վերաքննիչ դատարանի կողմից սահմանված արգելքների և հետապնդված իրավաչափ նպատակների համաչափության միջև (59-րդ կետ): Վերոնշյալ դատողություններից ելնելով՝ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ միջամտությունը դիմողի կազմակերպության ազատ արտահայտվելու իրավունքին՝ «անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում» (60-րդ կետ):

Դաբրովսկին ընդդեմ Լեհաստանի (18235/02, 19.12.2006թ.) գործով դիմումատուն երեք հոդվածներում տեղեկացրել է տեղական պաշտոնյայի նկատմամբ հարուցված՝ դեռևս չավարտված վարույթների և Օստրոդայի Շրջանային դատարանի հետագա դատավճռի վերաբերյալ: Եվրոպական դատարանը գտել է, որ հոդվածների բովանդակությունը և տոնը՝ ամբողջությամբ, արդարացիորեն հավասարակշռված են եղել… (33-րդ

կետ): Եվրոպական դատարանը նաև համաձայնել է, որ դիմողների հայտարարությունների մի մասը եղել են արժեքավոր դատողություններ հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ, որոնք չի կարելի ասել, որ զուրկ են եղել որևէ փաստական հիմքից: Բացի դրանից, դիմողի հայտարարությունները չեն հանդիսացել անցանկալի անձնական ոտնձգություններ այդ պաշտոնյայի նկատմամբ: Անհրաժեշտ է նաև նշել, որ քննարկվող հայտարարությունների նպատակը հանդիսացել է քննադատվող անձի մեղքի հաստատումը կամ նվաստացումը (34-րդ կետ): …Ներպետական դատարանները… չեն անդրադարձել այն հարցին, որ դիմումատուն, որպես լրագրող, պարտավոր էր տեղեկություն և դատողություններ ներկայացնել քաղաքական հարցերի և հասարակական հետաքրքրություններ ներկայացնող այլ հարցերի վերաբերյալ, որ դրա իրականացման ժամանակ նա հնարավորություն ուներ դիմելու որոշ աստիճանի չափազանցության: Եվրոպական դատարանը նաև նշել է, որ ո՛չ առաջին ատյանի, ո՛չ վերաքննիչ դատարանը հաշվի չեն առել այն փաստը, որ պրն. Լուբազևսկին, լինելով պաշտոնատար անձ, պետք է քննադատության նկատմամբ ավելի բարձր աստիճանի հանդուրժողականություն ցուցաբերեր: Եզրակացնելով՝ Եվրոպական դատարանն այն կարծիքն է հայտնել, որ ներպետական դատարանների կողմից ներկայացված պատճառները չեն կարող դիտվել որպես հիմնավոր և բավարար արդարացնելու համար քննարկվող միջամտություն (35-րդ կետ):

Եվրոպական դատարանը նշել է, որ չնայած դիմողի նկատմամբ նշանակված պատիժը համեմատաբար մեղմ է եղել (1000 PLN տուգանք և ծախսերի հատուցում՝ 300 PLN չափով, որը հավասար է մոտավորապես 300 EUR-ի), և թեև նրա նկատմամբ հարուցված վարույթները պայմանականորեն դադարեցվել են, այնուամենայնիվ, ներպետական դատարանները գտել են, որ դիմողը կատարել է զրպարտության հետ կապված քրեական հանցանք: Դրա արդյունքում դիմողը դատվածություն է ձեռք բերել: Բացի դրանից, դատարանի կողմից չլուծված է

մնացել վարույթների վերաբացման հարցը՝ նրա նկատմամբ նշանակված փորձաշրջանի ցանկացած պահին, եթե օրենքով սահմանված հանգամանքները դա կպահանջեն… (36-րդ կետ):

Բացի դրանից, քանի որ պատիժը չի կանխել դիմողի կողմից իր կարծիքը հայտնելը, նրա դատապարտումը, այնուամենայնիվ, հանգեցրել է որոշակի վերահսկողության սահմանման, որը կարող էր խոչընդոտել ապագայում նրա կողմից նման քննադատության իրականացմանը: Նման դատապարտումը կարող էր հետ պահել լրագրողներին հասարակության կյանքի վրա ազդեցություն ունեցող հարցերի հրապարակային քննարկումներին աջակցելուց: Նույն կերպ այն իրավասու է խոչընդոտել մամուլի կողմից տեղեկատվություն տարածելու իր իրավասություններն իրականացնելուն և որպես հասարակական հսկողություն իրականացնող հանդես գալուն …(37-րդ կետ):

Հիմք ընդունելով վերոգրյալ դատողությունները՝ Եվրոպական դատարանը գտել է, որ դիմումատուի դատապարտումն անհամաչափ է եղել հետապնդված օրինական նպատակին՝ կապված, մասնավորապես, մամուլի ազատության ապահովման և պահպանման՝ ժողովրդավարական հասարակության շահի հետ:

Դուպուիսը և այլոք ընդդեմ Ֆրանսիայի (1914/02, 07.06.2007թ.) գործով Եվրոպական դատարանը նշել է, որ իրավաչափ է, որպեսզի առանձնահատուկ պաշտպանություն տրամադրվի գործի դատական քննության գաղտնիությանը՝ հաշվի առնելով քրեական դատավարությունում կարևորվող ինչպես արդարադատության իրականացումը, այնպես էլ նախնական քննության մեջ ներգրավված անձի անմեղության կանխավարկածի ապահովումը: Սակայն սույն գործի հանգամանքներում Եվրոպական դատարանը գտել է, որ 1996թ. հունվարին, այսինքն՝ այն ժամանակ, երբ հանցագործության առարկա գիրքը հրատարակվել է, արդեն առկա է եղել լրատվական բավականին մեծ ցանց այսպես կոչված «Էլիզեի գաղտնալսումները» գործի վերաբերյալ, արդեն հանրահայտ

էր, որ Գ.Մ.-ն ներգրավվել էր նախնական քննությանը մի գործով, որը հարուցվել էր մոտ երեք տարի առաջ, և որն ի վերջո հանգեցրել էր նրա դատապարտմանը և նրա նկատմամբ 2005թ. նոյեմբերի 9-ին, այսինքն՝ գրքի հրատարակումից մոտ ինը տարի և ինն ամիս հետո ազատազրկման հետ կապված պայմանական պատիժ նշանակելուն: Բացի դրանից, Կառավարությունը ցույց չի տվել, թե ինչպես սույն գործի հանգամանքներում գաղտնի տեղեկության բացահայտումը կարող էր բացասաբար անդրադառնալ Գ.Մ.-ի անմեղության կանխավարկածի վրա կամ գրքի հրատարակումից մոտ տասը տարի անց ազդել նրա նկատմամբ պատիժ նշանակելու վրա: Իրականում վիճարկվող գրքի հրատարակումից հետո և դատական քննության ընթացքում Գ.Մ.-ի գործը հաճախ մեկնաբանվել է բազմաթիվ հոդվածներում: Այս հանգամանքներում դրա գաղտնիության հետ կապված տեղեկության պաշտպանությունը չի հանդիսացել գերակա պահանջ: Այս կապակցությամբ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ թեև դիմողների՝ վերլուծության հետ կապված հանցագործության համար դատապարտումը հիմնված է եղել նախաքննության նյութերից կազմված ամբողջ փաստաթղթերի վերարտադրության և օգտագործման վրա, և որը համապատասխանաբար դիտվել է որպես նախնական քննության գաղտնիության և մասնագիտական գաղտնիքի խախտում, սակայն այդ դատապարտումն անխուսափելիորեն վերաբերել է տեղեկության բացահայտմանը: Չլուծված է մնում այն հարցը, թե արդյոք եղել է որևէ անհրաժեշտություն կանխել այն տեղեկության բացահայտումը, որն արդեն թերևս մասամբ հասանելի է եղել հասարակությանը... և արդեն պետք է, որ հայտնի լիներ շատ մարդկանց... կապված գործի փաստերի և քննարկվող հեռախոսային խոսակցությունների լսման շատ զոհերի վերաբերյալ մամուլում տրված լուսաբանման հետ (44-45-րդ կետեր): Եվրոպական դատարանը գտել է նաև, որ ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ է լուրջ հոգածություն ցուցաբերել նախաքննության գաղտնիության կամ մասնագիտական գաղտնիքի

խախտմամբ ձեռք բերված տեղեկություն օգտագործած լրագրողներին պատժելու անհրաժեշտության գնահատման նկատմամբ այն ժամանակ, երբ այդ լրագրողներն աջակցել են նման կարևոր հասարակական քննարկումներ անցկացնելուն և այդպիսով իրականացրել են ժողովրդավարության «հսկիչի» իրենց պարտականությունը: Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը պաշտպանում է լրագրողների իրավունքները՝ տարածելու հասարակական հետաքրքրություն ներկայացնող նման տեղեկություն, եթե նրանք գործել են բարեխիղճ և պատշաճ փաստական հիմնավորմամբ և լրագրության էթիկային համապատասխան տրամադրել են «արժանահավատ և հստակ» տեղեկություն…: Սույն գործով դիմումատուների անվիճելի փաստարկներից երևում է, որ նրանք գործել են իրենց՝ որպես լրագրողների մասնագիտությունը կանոնակարգող չափանիշներին համապատասխան, քանի որ վիճարկվող հրատարակումը կապված է եղել ոչ միայն քննարկվող առարկայի, այլև տրամադրվող տեղեկության արժանահավատության հետ՝ կապված դրա հստակության և արժանահավատության հիմնավորման համար ներկայացված ապացույցների հետ… (46-րդ կետ): Եվրոպական դատարանը … նշում է, որ երկու հեղինակներից յուրաքանչյուրի նկատմամբ նշանակվել է 762.25 եվրո տուգանք, և համապարտության կարգով նրանք պարտավորեցվել են վճարել 7.622.50 եվրո՝ որպես Գ.Մ.-ին պատճառված վնասի հատուցում: Ի լրումն դրա, դիմող ընկերությունը ճանաչվել է քաղաքացիական պատասխանող: Սակայն որևէ կարգադրություն գրքի ոչնչացման կամ առգրավման վերաբերյալ չի եղել և դրա հրատարակությունը չի արգելվել…: Այսպիսով, տուգանքի չափը, թեև ենթադրաբար արդարացիորեն էր որոշվել և վնասների փոխհատուցումը լրացնում էր այն, սակայն գործի հանգամանքներից ելնելով՝ դրանք չի կարելի դիտել արդարացված …: Ավելին, ինչպես Եվրոպական դատարանը բազմիցս նշել է, արտահայտվելու ազատությանը միջամտությունը կարող է «ճնշող ազդեցություն» ունենալ այդ ազատության իրականացման վրա…, ազ-

դեցություն, որը կարող է ժխտվել տուգանքի համեմատաբար չափավոր բնույթով (47-րդ կետ): Եզրակացնելով՝ Եվրոպական դատարանը գտել է, որ դիմումատուների նկատմամբ կայացված դատավճիռն անհամաչափ միջամտություն է նրանց արտահայտվելու իրավունքին և, հետևաբար, այն, որպես այդպիսին, անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում (49-րդ կետ):

Լամանն ընդդեմ Ավստրիայի (28923/95, 10.07.2001թ.) գործով Զալցբուրգի Շրջանային դատարանի 1994թ. հոկտեմբերի 10-ի որոշումը, որը թեև կայացվել էր դիմումատուի կողմից ներկայացված հատուցման պահանջի դռնբաց դատական նիստից հետո, չէր հրապարկվել, քանի որ հիմնված էր նրա արդարացման վերջնական որոշման վրա: Փոխարենն այն տրամադրվել էր գրավոր՝ 1994թ. նոյեմբերի 4-ին: Լինցի վերաքննիչ դատարանի 1995թ. փետրվարի 1-ի որոշումը, որն ամփոփում էր շրջանային դատարանի որոշումը և, հիմնավորելով վերջինիս կողմից 1969թ. օրենքի 2-րդ բաժնի 1-ին մասի (b) կետի կիրառումը, դատարանի որոշումը ճանաչել է վերջնական, ի սկզբանե տրամադրվել է գրավոր և հասարակությանը չի ներկայացվել այլ կերպ: Սակայն Գերագույն դատարանի՝ 2000թ. նոյեմբերի 9-ի դատավճռից հետո այն հրապարակվել է 2001թ. փետրվարի 9-ին (կետ 33):

Քննարկելով ընդհանուր առմամբ հատուցման վարույթները, ինչպես նաև դրանց առանձնահատուկ գծերը, Եվրոպական դատարանը գտել է, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի նպատակները, հատկապես դատարանի որոշումը հասարակությանը վերահսկողության առարկա դարձնելը, այդպիսով հասարակությանը հնարավորություն տալով հասկանալ, թե ինչպիսին է սովորաբար դատարանների մոտեցումը կալանավորման համար փոխհատուցման հայցերին, սույն գործով ապահովվել է վերաքննիչ դատարանի որոշման հրապարակման միջոցով: Հետևաբար, տեղի չի ունեցել Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում (34-րդ կետ):

Այսպիսով, դատավորները ոչ միայն պետք է հարգեն դատավարության հրապարակայնության սկզբունքը, այլև այդ սկզբունքի սահմանափակման յուրաքանչյուր դեպքում պետք է կայացնեն սահմանափակումների կիրառումն արդարացնող և օրենքով սահմանված ողջամիտ ու պատճառաբանված որոշում:

Միևնույն ժամանակ դատավորը սահմանափակված է իր վարույթում քննվող որևէ գործի վերաբերյալ մեկնաբանություններ անելու հարցում: Առաջարկվում է ընդհանրապես ձեռնպահ մնալ վարույթում գտնվող գործերով մեկնաբանություններ ասելուց, հատկապես՝ ԶԼՄ-ների ներկայացուցիչների հետ հարցազրույցներ ունենալուց՝ այդ շփումը սահմանափակելով բացառապես դատական քննության ընթացքով: Ի վերջո, դատավարությունը հրապարակային է, ինչը նշանակում է, որ դատավորն իր վերաբերմունքն արտահայտում է նիստի ընթացքում իր հարցադրումների միջոցով, իսկ դատական ակտում արտացոլում է իր կարծիքը (ներքին համոզմունքը) գործի վերաբերյալ:

Այն դեպքում, երբ լրատվամիջոցները հաղորդում են որևէ գործի վարույթի կամ կայացված որոշման վերաբերյալ ոչ ճիշտ կամ սխալ տեղեկատվություն, իսկ դատավորը նպատակահարմար է գտնում ուղղել այդ սխալը, ապա մամլո ծառայության միջոցով կարող է տարածել մամուլի հաղորդագրություն, ներկայացնի իրականությունը կամ կարող է ձեռնարկել միջոցներ լրատվամիջոցների տարածած հաղորդագրության մեջ հստակություն մտցնելու համար:

Իրավիճակային օրինակներ

- **դատավորը հայտարարել է, որ տվյալ ամսագրի որևէ ներկայացուցիչ իր դատարանում անելիք չունի, ինքը չի հանդուրժի նրանց ներկայությունը,**
- **դատավորը հեռախոսով հարցազրույց է տվել ՁԼՄ-ի ներկայացուցչին և զրույցի ընթացքում արտահայտել որոշակի վերաբերմունք գործի կողմերից մեկի հանդեպ, հարցազրույցը տպագրվել է թերթում,**
- **դատավորը լրագրողներին չի թույլատրել մասնակցելու դատական նիստին՝ այն պատճառաբանությամբ, որ ինքը չի կարողանում նիստ վարել լրագրողների ներկայությամբ,**
- **լրագրողը ներկայանում է դատական նիստին և մինչև դատավորի՝ դատական նիստերի դահլիճ ներկայանալը միացնում տեսախցիկը և տեսաձայնագրում է ուղիղ հեռարձակման ռեժիմով,**
- **դատական նիստի օրն ու ժամը կողմին ծանուցում է նիստից մեկ օր առաջ՝ ծանուցագիր ուղարկելու միջոցով, իսկ դատական նիստերի ցուցատախտակին այդ նիստի օրվա մասին ծանուցում ընդհանրապես չի փակցվում,**
- **դատավորը դռնփակ դատաքննության արդյունքում կայացված ակտը նույնպես հրապարակում է դռնփակ՝ արգելելով որևէ անձի մասնակցելու դատական ակտի հրապարակման նիստին:**

Եվ վերջապես, ՁԼՄ-ների ներկայացուցիչների հետ արդյունավետ հաղորդակցության ապահովման տեսանկյունից առավել կարևորվում է նաև ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների լայնորեն կիրառումը դատարանների ամենօրյա աշխատանքում: Այս կապակցությամբ հետաքրքրական է ԵԴԽԽ-ի թիվ 14 (2011) Կարծիքը, որը վերաբերում է տեղեկատվական տեխնոլոգիաների և արդարադատության մատչե-

լիության փոխհարաբերակցության արդյունավետությանը: Մասնավորապես.

«22. ՏՏ-ն արժեքավոր գործիք է դատարանների գործառույթներին օժանդակելու համար: ՏՏ-ն կարող է նաև բարելավել այն մեթոդները, որոնցով դատարանները համապատասխան անձանց մանրամասն տեղեկություններ են տրամադրում ընդհանուր դատավարական ընթացակարգերի մասին: Ուստի ԵԴԽԽ-ն առաջարկում է, որ դատարանները ներմուծեն դրանից օգտվողների համար հեշտ կիրառելի էլեկտրոնային տեղեկատվական ծառայություններ:

23. ՏՏ-ն թույլ է տալիս դատարանից օգտվողներին հայց հարուցել էլեկտրոնային եղանակով (գործերի էլեկտրոնային ներկայացում): ԵԴԽԽ-ն խրախուսում է շարունակել զարգացնել այս գործելակերպը:

24. ԵԴԽԽ-ն գտնում է, որ դատական իշխանությունը պետք է ստեղծի նախադեպային իրավունք կամ առնվազն ունենա կարևոր որոշումներ, որոնք հասանելի են համացանցում՝

i) անվճար,

ii) հեշտ հասանելի ձևաչափով,

iii) հաշվի է առնված անձնական տվյալների պաշտպանության անհրաժեշտությունը:

ԵԴԽԽ-ն ողջունում է միջազգային նախադեպային իրավունքի նույնականացուցիչների ներմուծումը (ինչպես, օրինակ՝ Եվրոպական միության նախադեպի նույնականացուցիչ ECLI-ը), ինչը կնպաստի օտարերկրյա նախադեպի հասանելիությանը:

25. ՏՏ-ն հնարավորություն է ստեղծում գործերին ընթացք տալու առավել արդյունավետ, հստակ և որոշակի եղանակով:

26. Համակարգչայնացումն օժանդակում է դատարաններին գործերի կառավարումը ռացիոնալ դարձնելու հարցում, ինչպես նաև գործերը գրանցելիս և դրանց ընթացքին հետևելիս: Այս

եղանակով հնարավոր է առավել ապահով պայմաններում կառավարել մի շարք փոխկապակցված գործեր: Կարելի է մշակել դատական որոշումների կամ կարգադրությունների ձևանմուշներ՝ դրանց ձևակերպմանն օժանդակելու համար: Կարելի է կազմել նաև բազմաչափանիշ վիճակագրություն՝ ըստ վեճի տեսակի, որը կարելի է հրապարակել:

27. Համակարգչայնացումը կարող է նաև բարելավել դատավորի աշխատանքի որակը, օրինակ՝ դատական ակտերի, օրենսդրության, իրավունքի նմանատիպ հարցերի ուսումնասիրությունների, դատարանի կողմից կայացված տարբեր որոշումների կապակցությամբ իրավական մեկնաբանությունների և գիտելիքների փոխանակման այլ հղումներ պարունակող տվյալների բազաների միջոցով: Շուկայում հասանելի նմանատիպ ամենաառաջադեմ և ամբողջական մեթոդները պետք է անվճար հասանելի լինեն դատավորներին, որոնք պետք է կարողանան ստուգել իրավական տեղեկատվության բոլոր աղբյուրները, որոնցից օգտվում են դատական պրոցեսի այլ մասնակիցները (փաստաբանները, փորձագետները և այլք): Դատական ակտերին նպաստող միջոցները պետք է մշակվեն և դիտարկվեն որպես դատավորի կողմից որոշումների կայացման գործընթացի օժանդակ միջոցներ, որոնք պետք է դյուրացնեն դատավորի աշխատանքը և ոչ թե սահմանափակեն:

28. Այնուամենայնիվ, ՏՏ-ի կիրառումը չպետք է սահմանափակի դատավարական երաշխիքները (կամ ազդի տրիբունալի կազմի վրա) և որևէ կերպ չպետք է դատարանից օգտվողներին զրկի մրցակցային դատավարության, բնօրինակ ապացույցներ ներկայացնելու, վկաներին կամ փորձագետներին լսելու և ի շահ իրենց ցանկացած նյութ ներկայացնելու կամ հայտարարություն կատարելու իրավունքներից: Ավելին՝ ՏՏ-ի կիրառումը չպետք է խախտի պարտադիր նիստ հրավիրելու և օրենքով սահմանված այլ առանցքային ձևականություններ կատարելու պահանջը: Դատավորը նաև մշտապես պետք է իրավասություն ունենա կարգադրելու դատարան ներկայացում,

պահանջելու բնօրինակով փաստաթղթերի տրամադրում և վկաների լսում: Նման հնարավորությունների համար խոչընդոտ չպետք է հանդիսանան անվտանգության պահանջները:

29. ՏՏ-ի կիրառելը հեշտացնում է փաստաթղթերի փոխանակումը: Կողմերը և նրանց ներկայացուցիչները կարող են օգտվել դատարանում գործի վերաբերյալ տեղեկություններից: Այս կերպ նրանք կարող են հետևել գործի ընթացքին՝ մուտք գործելով գործի համակարգչային տեղեկատու (գործի պատմություն):

30. Տեսահամաժողովները կարող են դյուրացնել նիստերն առավել ապահով պայմաններում իրականացնելու կամ հեռահար կերպով վկաներին կամ փորձագետներին լսելու հարցում: Այնուամենայնիվ, սա կարող է ունենալ թերություն այն առումով, որ դատավորն ուղղակիորեն կամ հստակ կարող է չընկալել կողմի, վկայի կամ փորձագետի բառերը կամ արձագանքը: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել, որ տեսահամաժողովները և նման միջոցներով ապացույցների ներկայացումը երբեք չխախտեն պաշտպանության համար նախատեսվող երաշխիքները:

31. ՏՏ-ի դերը պետք է սահմանափակվի դատավարական քայլերը փոխարինելով և պարզեցնելով՝ հանգեցնելով գործի ըստ էության քննության արդյունքում անհատականացված որոշումներ կայացնելուն: ՏՏ-ն չի կարող փոխարինել դատավորին նիստի ժամանակ և գործի կապակցությամբ փաստական ապացույցները գնահատելիս, կիրառելի իրավունքը սահմանելիս և որոշումներ ընդունելիս, որոնց կապակցությամբ կարող են լինել բացառապես օրենքով սահմանված սահմանափակումներ»:

ԴԱՍԵՐ 3-6.

Հաղորդակցում վկաների, տուժողների, մեղադրյալների/ամբաստանյալների, իրավաբանների/պաշտպանի և դատավարության մյուս մասնակիցների հետ

Եվրոպական դատավորների խորհրդակցական խորհրդի (ԵԴԽԽ) թիվ 3 (2002) Կարծիքի 24-րդ և 25-րդ կետերում ներկայացված է, որ *դատավորները պետք է իրենց գործառույթներն իրականացնեն պատշաճ կերպով՝ պահպանելով բոլոր կողմերի նկատմամբ հավասար վերաբերմունքի սկզբունքը՝ խուսափելով ցանկացած կողմնակալությունից կամ խտրական վերաբերմունքից՝ պահպանելով կողմերի միջև հավասարակշռությունը և յուրաքանչյուրի համար ապահովելով արդար դատաքննության իրավունքը:*

Դատական համակարգի արդյունավետությունը նաև պահանջում է, որ դատավորներն ունենան մասնագիտական բարձր գիտակցություն: Նրանք պետք է ապահովեն մասնագիտական բարձր մակարդակի գիտելիքներ՝ անցնելով հիմնական և ընթացիկ վերապատրաստում, որի շնորհիվ կապահովվի պատշաճ որակավորման մակարդակ:

Դատավարության կողմերի ու մասնակիցների հետ հաղորդակցման գործընթացի իրավական հիմքերը նախատեսված են ՔԴՕ համապատասխան նորմերում, որոնց իրացման շրջանակներում էլ ապահովվում է վերջիններիս միմյանց, ինչպես նաև դատարանի հետ քրեադատավարական փոխհարաբերությունները: Թեև դատական քննության շրջանակներում մեր ուսումնասիրության առարկայի տեսանկյունից՝ առավել հրա-

տապ են բանավոր հաղորդակցման հիմնահարցերը՝ հաշվի առնելով դատավարության հրապարակային բնույթն ու առավելապես բանավոր ընթացակարգը, այդուհանդերձ, հարկ է նկատի ունենալ, որ հաղորդակցման այս եղանակին բնորոշ են ինչպես որոշակի ընդհանուր օրինաչափություններ, պայմաններ, որոնք առավել ընդհանրական ու համակարգային բնույթ ունեն, այնպես էլ առանձնահատուկ գործոններ, որոնք պայմանավորված են վերջիններիս քրեադատավարական կարգավիճակի առանձնահատկություններով ու հետապնդվող դատավարական շահերով, ինչպես նաև այն հոգեբանական գործոններով, որոնք անհրաժեշտ են յուրաքանչյուր խմբի հետ հոգեբանական հարմարավետության պայմաններում արդյունավետ շփում հաստատելու համար, ինչն անհրաժեշտ է դատավարության մասնակիցների ընկալողականությունը բարձրացնելու համար:

Ընդհանուր օրինաչափություններ

- Կողմերի հավասարության ու հավասար հնարավորությունների ապահովման սկզբունքի պահանջները:
- Օրենքի առաջ բոլորի հավասարության սկզբունքից բխող պահանջները:
- Վարքագծի համընդհանուր և մասնագիտական էթիկայի կանոնների պահանջները և այլն:

Առանձնահատուկ գործոններ	**Հոգեբանական գործոններ**
• քրեադատավարական կարգավիճակը, • սոցիալական զարգացվածության աստիճանը, • կրթության մակարդակը և այլն:	• հոգեբանական հարմարավետության պայմանները, • հոգեբանական հարմարավետ շփման ապահովումը և այլն:

Դատական քննության ընթացքում հաղորդակցման հիմնական եղանակներից է հարցաքննությունը, որի իրականացումը հարցաքննողից պահանջում է ընդհանուր և մասնագիտական բարձր գիտելիքներ, մարդկանց ճանաչելու մեծ ունակություն, նրանց հոգեբանության խորն իմացություն, հարցաքննության տակտիկական հնարքների գերազանց տիրապետում:

Հարցաքննության բարդությունը պայմանավորված է նրանով, որ մի կողմից հարցաքննողը երբեմն ստիպված է լինում հաղթահարելու ճշմարտությունը թաքցնող և ցուցմունքներ տալուց հրաժարվող անձանց հակազդեցությունը, իսկ մյուս կողմից՝ պարտավոր է ժամանակին հայտնաբերել և ցուցմունքների գնահատման ժամանակ նկատի ունենալ, որ քրեական գործով իրեն հայտնի տեղեկություններն անկեղծորեն հայտնել ցանկացող անձի ցուցմունքներում կարող են լինել սխալներ և աղավաղումներ, մոլորություններ, հորինվածք և այլն:

Հարցաքննությունն իրենից ներկայացնում է ապացուցողական և կողմնորոշիչ տեղեկատվության հավաքման գործընթաց, որը հարցաքննող սուբյեկտն իրականացնում է երկխոսության ձևով՝ վերբալ և ոչ վերբալ հաղորդակցման միջոցով[18]:

Հարցաքննության նպատակը լրիվ և օբյեկտիվ իրականությանը համապատասխանող ցուցմունքներ ստանալն է: Հարցաքննությունն իրենից ներկայացնում է հարցաքննությունն իրականացնող սուբյեկտին հարցաքննվողի կողմից քննվող գործի և նրա հետ կապված անձանց և հանգամանքների մասին տեղեկության փոխանցման գործընթաց: Ընդ որում, այդ տեղեկությունը հարցաքննվողը ստանում է այս կամ այն երևույթների կամ առարկաների ընկալումից, որը մտապահվում, ապա հարցաքննության ժամանակ վերհիշման ու վերարտադրման միջոցով փոխանցվում է հարցաքննողին: Իսկ այդ տեղեկությունն ու ցուցմունքները, ընդհանրապես, ձևավորվում են մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների ազդեցու-

[18] Տե՛ս Криминалистика, Institunes, Под ред. ***В. А. Образцова***, М., 1997, էջ 443:

թյամբ: Հարցաքննության ճիշտ իրականացման համար հարցաքննողը պետք է հստակ պատկերացնի, թե ինչ տեղեկություն և ինչպիսի հնարքների ու միջոցների օգնությամբ է այն պատրաստվում ստանալ հարցաքննվողից:

Արդյունավետ հաղորդակցման ապահովման տեսանկյունից՝ կիրառվելիք հնարքների և միջոցների մասին խոսելիս, նկատի ունենալով ցուցմունքների ձևավորման ողջ գործընթացի հոգեբանական կողմը, պետք է նշել, որ հարցաքննությունն իրականացնող սուբյեկտն իր «զինանոցում» անպայման պետք է ունենա կրիմինալիստիկայի գիտության մշակած, հոգեբանության գիտելիքների վրա հիմնված տակտիկական հնարքների համակարգ: Ընդ որում, հարցաքննության տակտիկան որոշելիս՝ պետք է հաշվի առնել քրեական գործի որոշակի հանգամանքները, հավաքված ապացույցների որակական և քանակական կազմը, հարցաքննվողի անհատական առանձնահատկությունները: Այս կապակցությամբ հարկ է մատնանշել, որ չի կարող գոյություն ունենալ երկու ամբողջական միանման դատավարություն, միանման անհատական առանձնահատկություններով օժտված երկու մեղադրյալ կամ ամբաստանյալ, հետևաբար, չկա այնպիսի տակտիկական հնարք, որը կարող է կիրառվել յուրաքանչյուր դեպքում և յուրաքանչյուր դատավարության ընթացքում:

Հարցաքննությունը հանդիսանում է ոչ միայն նոր տեղեկությունների ստացման աղբյուր, այլ նաև այլ ճանապարհով ստացված տվյալների ստուգման, ճշգրտման միջոց:

Այդուհանդերձ, որպես փոխներգործողության գործընթաց՝ հարցաքննությունը բնութագրվում է երկու հակադիր կողմով՝ հոգեբանական պայքարով և հոգեբանական շփումով՝ կախված նրանից, թե ինչպիսի բնույթ ունի՝ կոնֆլիկտային, թե ոչ կոնֆլիկտային[19]:

[18] ***Ենգիբարյան Վ. Գ.*** Առանձին քննչական գործողությունների կատարման տակտիկա: Կրիմինալիստիկական տակտիկա: Գիտագործնական ձեռնարկ, Երևան, «Թասկ ՍՊԸ, 2018, էջ 450:

Արդյունավետ հաղորդակցման կազմակերպման տեսանկյունից՝ առավել կարևորվում է հարցաքննության ընթացքում տակտիկական հնարքների, հոգեբանական ներգործության միջոցների իրավաչափության հարցը:

Հարցաքննության տակտիկական հնարքների քննարկման շրջանակներում վերը նշված հիմնական չափանիշներին ավելացվում են նաև *ներգործության ընտրողականությունը,* որը ենթադրում է, որ տակտիկական հնարքը պետք է վերաբերի, ներգործի միայն պահանջվող տեղեկատվությանը տիրապետող անձի վրա և մնա չեզոք բոլոր այն անձանց նկատմամբ, ովքեր չեն տիրապետում նման տեղեկատվության[20]:

Այս ենթատեքստում կարևոր է նաև այն, որ, օրինակ՝ վկան պետք է նախազգուշացվի ցուցմունք տալուց հրաժարվելու կամ ակնհայտ կեղծ ցուցմունք տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Օրենքի այս պարտադիր պահանջը նախագահողը կարող է իրականացնել բացատրելու, տեղյակ պահելու, նախազգուշացնելու և այլ ընդունելի ձևերով՝ հաշվի առնելով հարցաքննվողի անձը և գործի հանգամանքները: Նույնը վերաբերում է նաև այն դեպքերին, երբ պետք է հարցաքննության ընթացքում մեղադրյալին կամ ամբաստանյալին ներկայացնել քննությանն օժանդակելու՝ որպես օրենքով սահմանված պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքի մասին: Այս դեպքում ևս այն չպետք է պարունակի խաբեության, սպառնալիքի կամ հոգեբանական ներգործության տարրեր:

Քրեական դատավարության, կրիմինալիստիկայի և դատական հոգեբանության առաջնային խնդիրներից է հարցաքննության տակտիկական հնարքների կիրառման թույլատրելիության սահմանների որոշումը: Գիտական հիմնավորվածությունը հարցաքննության ժամանակ կիրառվող հնարքների, մեթոդների համապատասխանությունն է քրեական դատավարության, կրիմինալիստիկայի, դատական հոգեբա-

[20] Տե՛ս ***Баев О. Я.***, Солодов Д. А., Производство следственных действий: криминалистический анализ УПК России, практика, рекомендации: Практическое пособие, 2-е изд., испр и доп., М., «Эксмоե, 2010, էջ 104:

նության դրույթներին, որոնք ապահովում են դրա օրինականությունը և բարձր արդյունավետությունը:

Հարցաքննության հոգեբանական նախապատրաստական փուլում նախագահողը, հիմնվելով քրեական գործի նյութերի և այլ տեղեկությունների վրա, որոշում է հարցաքննության հոգեբանական կողմը, բովանդակությունը, հարցերի հերթականությունը և հարցադրման առանձնահատկությունները, միջոցներ է ձեռնարկում բարոյական նորմերի պահպանման և արդյունավետ հաղորդակցման ապահովման ուղղությամբ:

Հարցաքննության նախապատրաստումը պետք է սկսվի քրեական գործի նյութերի ուսումնասիրմամբ: Հաճախ հարցաքննության լրիվությունը և բազմակողմանիությունը կախված են գործի նյութերի ուսումնասիրման խորությունից: Գործի հանգամանքների մակերեսային ուսումնասիրման դեպքում հարցաքննության ժամանակ հնարավոր է բաց թողնվեն կարևոր մանրամասներ, որոնք էապես կդժվարացնեն ստի դեմ պայքարը:

Եթե պետք է հարցաքննվեն մի քանի անձինք, անհրաժեշտ է որոշել հարցաքննության հերթականությունը, որը տակտիկական տեսանկյունից կարևոր նշանակություն ունի: Ուստի հարցաքննության հերթականությունը որոշելիս խորհուրդ է տրվում պահպանել հետևյալ կանոնները.

- Նախ պետք է հարցաքննվեն այն անձինք, ովքեր ենթադրվում է, որ կտան ճիշտ ցուցմունքներ:
- Սկզբում պետք է հարցաքննվեն այն վկաները, ովքեր ավելի լավ են ընկալել կամ մտապահում դեպքը:
- Նախ պետք է հարցաքննվեն այն վկաները, ովքեր կարող են ավելի շատ տեղեկություններ հաղորդել մեղադրյալի, կասկածյալի, տուժողի կամ այլ վկաների մասին:
- Այլ հավասար պայմանների դեպքում նախ պետք է հարցաքննվեն այն վկաները և տուժողները, ովքեր կարող են պատմել առավել վաղ տեղի ունեցած իրադարձությունների մասին:

Արդյունավետ հաղորդակցություն ապահովելու տեսանկյունից՝ կարևորվում է հարցաքննվողի անձի ուսումնասիրությունը: Այս գործընթացը պայմանականորեն կարելի է բաժանել երկու փուլի.

1. *Հարցաքննվողի անձի ուսումնասիրություն՝ հարցաքննությունից առաջ:*
2. *Հարցաքննվողի անձի ուսումնասիրություն՝ հարցաքննության ժամանակ:*

Հարցաքննվողի անձի մասին տեղեկությունները վերաբերում են նրա հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններին և հոգեկան վիճակին, հասարակական-քաղաքական, աշխատանքային գործունեությանը, կոլեկտիվի հետ հարաբերություններին, հարցաքննվողի բարոյական կերպարին, ընտանիքում և ընկերական շրջապատում նրա վարքագծին: Այս փուլում կիրառվում են հոգեբանության, տրամաբանության և մանկավարժության մշակած մեթոդները: Հարցաքննողը ծանոթանում է հարցաքննվողի կենսագրությանը, հնարավորության դեպքում՝ նրա անձնական գրառումներին, նամակներին և լուսանկարներին: Դա հնարավորություն է տալիս պարզելու հարցաքննվողի անձի հոգեբանական և բարոյական կերպարը: Անհրաժեշտ է ընդհանրացնել տարբեր աղբյուրներից ստացված տեղեկությունը, ինչը հնարավորություն է տալիս ձևավորել տակտիկական հնարքների համակարգ, որը կապահովի ոչ միայն հոգեբանական հարմարավետ շփում, այլ ամբողջ հարցաքննության արդյունավետությունն ընդհանրապես: Հիմնականում պետք է ուշադրություն դարձնել անձնական այն հատկանիշների վրա, որոնք անձը կարող է դրսևորել հարցաքննողին հակազդման ընթացքում (ակտիվություն, համարձակություն, էգոիզմ, պասիվ կամ ակտիվ ագրեսիվություն և այլն): Հատուկ նախապատրաստական աշխատանք պետք է տարվի հանցավոր գաղափարախոսության կրող վկայի կամ տուժողի հետ՝ նրա մեջ արթնացնելով զղջման, ամոթի, պարտքի զգացում:

Հարցաքննվողի մասին տեղեկություններ կարելի է ստանալ նաև դաջվածքներից: Եթե հարցաքննողը նկատել և վերծանել է հարցաքննվողի մարմնի դաջվածքները, չպետք է վերջինիս ուշադրությունը հրավիրի դրանց վրա կամ այդ կապակցությամբ հարցեր տա: Դա կարող է խոչընդոտել հոգեբանական հարմարավետ շփման հաստատմանը, հատկապես, եթե հարցաքննվողը փորձում է թաքցնել դրանք: Սակայն որոշ անձինք, հիմնականում երիտասարդները, ոչ միայն չեն թաքցնում իրենց դաջվածքները, այլ ցանկանում են, որ դրանք երևան: Դաջվածքների վերլուծությունը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել հարցաքննվողի «հանցավոր մասնագիտացվածության» մասին, որը հնարավորություն է տալիս կանխատեսելու դատավարական գործողություններին նրա հակազդեցության ձևերը: Օրինակ՝ հայտնի է, որ հանցավոր գաղափարախոսության կրողները գերադասում են չհամագործակցել վարույթն իրականացնող մարմնի հետ, ցուցմունք չտալ իրենց հայտնի դարձած հանգամանքների մասին[21]:

Հարցաքննվողի մասին տեղեկություններ նախագահողը կարող է ստանալ նաև դատահոգեբանական և դատահոգեբուժական փորձաքննությունների եզրակացություններից, վկաների հարցաքննությունից, ինչպես նաև քրեական գործում առկա այլ նյութերից: Ընդ որում, այդ տեղեկություններից նախագահողը կարող է պատկերացում կազմել մեղադրյալի հետ վկայի կամ տուժողի հարաբերությունների բնույթի, վկայի կամ տուժողի նկատմամբ գործադրված ճնշումների, նախքան հանցանքի կատարումը տուժողի դրսևորած հակաօրինական կամ հակաբարոյական վարքագծի, գործի քննությանը խոչընդոտել ցանկացող առանձին վկաների դիտավորության մասին և այլն:

Հարցաքննությանը նախապատրաստվելիս նպատակահարմար է նաև հստակեցնել այն հարցերի շրջանակը, որոնց կապակցությամբ պետք է ցուցմունք ստանալ, այլ կերպ ասած՝

[21] Մանրամասն տե՛ս ***Ենգիբարյան Վ. Գ.*** Հանցագործությունների քննության մեթոդիկա: Կրիմինալիստիկական մեթոդիկա: Բուհական դասագիրք: Երևան, «Թասկ ՍՊԸԵ, 2017, էջեր 77; 465:

հստակեցնել հարցաքննության առարկան, հնարավոր լրացուցիչ հարցերը և այլն:

Հարցաքննության նախապատրաստական փուլում հետագա հնարավոր հաղորդակցական խնդիրներից խուսափելու, ինչպես նաև անձի հետ արդյունավետ շփում հաստատելու համար առանձնահատուկ կարևոր է, որպեսզի նախագահողը խորապես անդրադառնա սեփական վերաբերմունքներին և դիրքորոշումներին տվյալ անձի նկատմամբ: Հավաքելով նախնական տեղեկատվություն նրա մասին, ինչպես նաև ծանոթ լինելով նրա հոգեբանական և վարքային դիմանկարի առանձնահատկություններին՝ նախագահողը կարող է ենթագիտակցաբար ձևավորել անցանկալի հուզական (դրական կամ բացասական), ինչպես նաև խտրական վերաբերմունք տվյալ անձի, նրա կենսաձևի, բնավորության հնարավոր գծերի, աշխարհայացքի և վարքի դրսևորումների, սոցիալ-հոգեբանական պատկանելիության, հնարավոր իրականացված հանցագործության և այլնի վերաբերյալ, ինչն իր հերթին կարող է հստակ խոչընդոտ հանդիսանալ ինչպես վստահելի կամ հոգեբանորեն գրագետ շփման կայացման, այնպես էլ ողջ հաղորդակցման արդյունավետության համար:

Ըստ այդմ՝ ստորև կներկայացվեն հոգեբանական որոշակի գործոններ, որոնք կարևոր նշանակություն ունեն արդյունավետ հաղորդակցության ապահովման, ինչպես նաև տեխնոլոգիապես գրագետ հարցաքննության կազմակերպման համար:

Դիրքորոշումը չգիտակցված հոգեբանական վիճակ է, անձի վերաբերմունքային համակարգի բաղադրիչ տարր, որը հիմնվում է անձի նախորդող փորձի, որոշակի իրավիճակներում որոշակի ակտիվություն ցուցաբերելու նախատրամադրվածության վրա: Սոցիալական դիրքորոշումները հաճախ ձևավորվում են որոշակի կենսափորձի և դրանից արված սուբյեկտիվ հետևությունների կամ արտաքին սոցիալական պիտակների ազդեցության ներքո, ինչպես նաև սերտորեն կապված են անձի արժեքային համակարգի ու աշխարհայացքի հետ:

Լինելով գերազանցապես չգիտակցված՝ դիրքորոշումները սովորաբար չեն ենթարկվում սթափ բանական վերլուծության կամ վիճարկման, ավտոմատ կերպով նպաստում են անձի հուզական և վարքային արձագանքի ընտրությանը, ստեղծում են կանխակալ նախատրամադրվածություն երևույթների կամ անձանց նկատմամբ: Փաստորեն, հայտնվելով որոշակի իրավիճակում կամ բախվելով որոշակի երևույթի հետ, անձի մոտ կարող են գործարկվել այսպես կոչված ենթագիտակցական հիպերակտիվ դիրքորոշումներ, որոնք էականորեն կազդեն նրա՝ այդ իրավիճակը կամ երևույթն ընկալելու և գնահատական տալու անաչառության վրա: Ընդ որում, գործնականում ոչ մի տարբերություն չկա՝ դրական, թե բացասական դիրքորոշում է գործարկվել. ցանկացած դեպքում անձը, ամենայն հավանականությամբ, հակված կլինի իրավիճակը կամ դիմացինի անձն ընկալել որոշակի հուզական և իմաստային աղճատվածությամբ՝ ըստ իր դիրքորոշման:

Միևնույն ժամանակ, հանդիսանալով հուզական վերաբերմունքի կրիչներ, դիրքորոշումները բավականին ոչ ճկուն են և դժվար փոփոխելի: Հաճախ դրանք նույնիսկ գիտակցվելիս ստանում են համոզմունքի կամ սկզբունքի, կանոնի դրսևորում, և անձը մեծամասամբ նախատրամադրված է դրանք պահպանելու և արդարացնելու: Սա, իր հերթին, դժվարություն է ստեղծում դիրքորոշումների գիտակցման և վերափոխման համար:

Հարցաքննության ընթացքում նախագահողի չգիտակցված բացասական (կամ դրական) դիրքորոշման ակտիվացման խթան կարող է հանդիսանալ հարցաքննվողի ցանկացած դրսևորում կամ առանձնահատկություն, ինչը հետագայում հնարավոր է՝ էականորեն ազդի նախագահողի վերաբերմունքի, հարցաքննության ընտրված մարտավարության, հանգամանքների և ցուցմունքների կարևորության գնահատման, ինչպես նաև հաղորդակցման օպտիմալ ոճի ընտրության և արդյունավետության վրա:

Այդ պատճառով բացառիկ կարևոր է, որպեսզի հարցաքննության նախապատրաստական փուլում նախագահողն ի-

րականացնի որոշակի ներքին վերլուծական աշխատանք՝ բացահայտելու, վերլուծելու և վերակառուցելու կամ չեզոքացնելու իր մոտ առկա հնարավոր բացասական (չընդունում, պախարակում, արհամարհանք, ատելություն, նախանձ և այլն) կամ դրական (ոգևորություն, հիացմունք, խղճահարություն և այլն) վերաբերմունք արտացոլող դիրքորոշումները: Դա անելու համար անհրաժեշտ է, որպեսզի նախագահողն ինքն իրեն պարտադիր կարգով տա հետևյալ հարցադրումները և առավելագույն անկեղծությամբ պատասխանի դրանց.

- Ինչ եմ ես զգում և մտածում այս անձի, նրա կերպարի, արտաքինի, ազգության, կրոնական պատկանելիության, սեռական կողմնորոշման, ընտանեկան վիճակի, մասնագիտության, զբաղմունքի, կենսակերպի, անձնային դրսևորումների, բարոյական կերպարի վերաբերյալ (ցանկացած անձնային առանձնահատկություն կամ որակ, որն առկա է անձի մասին տեղեկություններում):
- Ինչ հույզեր է արթնացնում տվյալ անձի կյանքի կոնկրետ հանգամանքը, գործողությունները, պահվածքը, դրդապատճառները, հանցակազմ պարունակող կամ չպարունակող վարքը և այլն: Ինչ բարոյական կամ մարդկային գնահատական եմ ես տալիս դրանց:
- Ինչ ուժեղ հույզեր է ինձ մոտ արթնացնում տվյալ գործը կամ դեպքը (բարկություն, ցասում, զզվանք, խղճահարություն, հուզմունք, տագնապ և այլն): Ինչ պիտակներ եմ ես արդեն «կպցրել» հարցաքննվողին (ո՞վ է նա իմ աչքում): Որո՞նք կլինեն «Ինչպիսի՞նն է հարցաքննվողը» հարցին իմ մտքին եկած առաջին երեք պատասխանները:

Այնուհետև, գիտակցելով սեփական բացասական դիրքորոշումները հարցաքննվողի կամ նրա կյանքի իրավիճակի/վարքի վերաբերյալ, անհրաժեշտ է պատասխանել հետևյալ վիճարկող հարցադրումներին.

- Որքանո՞վ եմ ես վստահ իմ գնահատականներում: Որքանո՞վ եմ հավատում դրանց արժանահավատությանը:

- Ինչ հիմք ունեմ այդպես մտածելու: Որո՞նք են նման վերաբերմունքի հիմնավորումները և փաստարկները: Արդյոք բավարար է իմ տեղեկացվածությունը նմանատիպ վերաբերմունք ձևավորելու համար:
- Իմ անձնական պատմությունը (անցյալը) որքանո՞վ է նպաստում իմ նման վերաբերմունքին: Արդյոք խոցո՞ւմ է ինձ հուզականորեն այս դեպքը, վարքը, իրավիճակը, անձի կերպարը:
- Ինչ այլընտրանքային, չեզոք մեկնաբանություն կամ վերաբերմունք կարող եմ ես ձևավորել տվյալ անձի կամ նրա վարքի նկատմամբ:

Ակնհայտ է, որ նման ներքին կանխարգելիչ աշխատանքն իմաստ ունի միայն, եթե նախագահողն անկեղծ է ինքն իր հետ և հստակորեն գիտակցում է իր հնարավոր կողմնակալ վերաբերմունքի և դիրքորոշվածության բացասական հետևանքների պատասխանատվությունը:

Հարցաքննության ժամանակ տրվող հարցերը կարելի է դասակարգել հետևյալ տեսակների.

- ***Լրացնող հարցեր***, որոնք տրվում են ցուցմունքներն ամբողջացնելու և առկա բացերը վերացնելու համար:
- ***Հստակեցնող հարցեր***, որոնք ուղղված են ցուցմունքները մանրամասնելուն ու հստակեցմանը:
- ***Հիշեցնող հարցեր***, որոնց նպատակն է արթնացնել հարցաքննվողի հիշողությունը, ստեղծել անհրաժեշտ կապեր՝ ասոցիացիաներ: Հիշեցնող հարցերն անհրաժեշտ է տարբերել ուղղորդող հարցերից, որոնք իրենց մեջ արդեն իսկ պատասխան են պարունակում: Ուղղորդող հարցերն էական ազդեցություն են ունենում հարցաքննվողի վրա, ապակողմնորոշում նրան և ուղղորդում են տալ այնպիսի պատասխաններ, որոնք ցանկանում է հարցաքննողը: Ուղղորդող հարցերն առավել վտանգավոր են տուժողի համար, քանի որ, եթե հարցն իր օգտին է, վերջինս այն կարող է ընկալել որպես «հուշում»: Այդ պատ-

ճառով էլ տակտիկական տեսանկյունից արգելվում են ուղղորդող հարցերը, և այդ արգելքն ուղղակիորեն պետք է նախատեսվի օրենքով: Բացի այդ, ուղղորդող հարցերը տուժողների համար վտանգավոր են նաև նրանց մոտ վերատրավմատիզացիա խթանելու բարձր ռիսկի առումով: Թեև տեսակետ կա, որ ուղղորդող հարցեր կարող են տրվել միայն այն դեպքում, երբ որևէ հանգամանքի կապակցությամբ առկա է վկայի ցուցմունքը, իսկ ուղղորդող հարցը տրվում է՝ պարզելու այդ ցուցմունքի կապակցությամբ վկայի համոզվածությունն ու հաստատակամությունը: Սրա վտանգն առավել մեծ է անչափահասների հարցաքննության ժամանակ: Ամեն դեպքում, եթե ուղղորդող հարցերի արգելքը նախատեսվի օրենքով, ցանկացած պայմաններում կբացառվի դրանց կիրառումը:

- ***Մերկացնող հարցեր***, որոնց նպատակը սուտ ցուցմունքների բացահայտումն է: Որպես կանոն, այդ հարցերը զուգորդվում են հարցաքննվողին որոշակի ապացույցներ ներկայացնելու հետ:
- ***Ստուգողական հարցեր:*** Այս հարցերը տրվում են ստացված ցուցմունքները ստուգելու կամ այդ նպատակով փաստեր ձեռք բերելու համար:

Բացի դրանից՝ մասնագիտական գրականության մեջ վերը նշված տեսակներին ավելացվում են նաև **բացահայտող** և **որոշակիացնող** տեսակի հարցեր, որոնք հատկապես օգտագործվում են թրաֆիքինգի վերաբերյալ քրեական գործերի քննության ընթացքում[22]:

Հարցերը պետք է լինեն հստակ, որոշակի, լակոնիկ, հասկանալի, վերաբերեն հարցաքննության առարկային: Կարևորվում է նաև հարցերի տրամաբանական հաջորդականությունը

[22] Մանրամասն տե՛ս, Մարդկանց թրաֆիկինգ, Կանխարգելում, քրեական հետապնդում, պաշտպանություն, ***Գ. Սարգսյան***, ***Վ. Ենգիբարյան, Դ. Թումասյան*** և այլոք, Երևան, ՀՀ «Դատախազության դպրոցե, 2011, էջ 135:

և հիմնավորվածությունը: Հարցերը պետք է ձևակերպվեն այնպես, որպեսզի որոշ դեպքերում բացառվեն հակիրճ պատասխանները (այո կամ ոչ):

Ընդ որում, ինչպես քրեադատավարական օրենսդրությամբ, այնպես էլ տակտիկական նկատառումներից ելնելով արգելվում է վկայի հարցաքննության ընթացքում վերջինիս տալ նրան մերկացնող բնույթի հարցեր:

Հարցաքննության արդյունքում ստացված տեղեկատվության լրիվությունն ու օբյեկտիվությունը որոշակիորեն պայմանավորված են հարցաքննության տակտիկայի ***հոգեբանական առանձնահատկությունների*** իմացությամբ ու այդ հնարքների արդյունավետ կիրառմամբ: Հարցաքննողը, որպես կանոն, առնչվում է նախկինում ձևավորված հոգեբանական «հետքերի» հետ: Այդ հետքերը գտնվում են դինամիկ վիճակում, մարդկային գիտակցության կողմից ենթարկվում են փոփոխման և կրում են այլ հոգեբանական երևույթների ազդեցությունը: Որպես հիշողության «հետքերի» փոփոխման հաճախակի հանդիպող մեխանիզմի օրինակ՝ կարելի է բերել հիշողության կոնսոլիդացիայի երևույթը, երբ նոր մտապահված տեղեկությունը բարդ փոխներգործության մեջ է մտնում անձի ներքին փորձում և հիշողության մեջ առկա տեղեկությունների հետ, ինչի արդյունքում ենթարկվում է որոշակի սուբյեկտիվիզացիայի. ստանում է սուբյեկտիվ հուզական երանգավորում ու իմաստավորում և արդյունքում կարող է կորցնել որոշակի բաղադրիչներ կամ աղճատվել: Այդ պատճառով հարցաքննության հոգեբանության շրջանակներում ուսումնասիրվում է նաև ցուցմունքների ձևավորման ողջ ընթացքը՝ դրանց ստացման աղբյուրներից մինչև վարույթն իրականացնող մարմնին հայտնելն ու օրենքով սահմանված կարգով դրանց ամրագրելը:

Արդյունավետ հաղորդակցության ապահովման նպատակով շատ կարևոր է, որպեսզի հարցաքննողը քայլեր ձեռնարկի հարցաքննվողի հետ հոգեբանորեն վստահելի շփում ստեղծելու, հոգեբանական ներգործության միջոցների իրավաչափությունն ապահովելու ուղղությամբ:

Հարցաքննության տակտիկայի հոգեբանական առանձնահատկություններն առավել խոր ըմբռնելու տեսանկյունից՝ անհրաժեշտ է մանրամասն ուսումնասիրել ցուցմունքների ձևավորման հոգեբանական գործընթացը:

Բանն այն է, որ դեպքի հանգամանքներն ընկալելուց մինչև հարցաքննվելը մարդու գիտակցության մեջ ընթացող հոգեբանական գործընթացները բաժանվում են որոշակի փուլերի, որոնք ընդունված է անվանել ցուցմունքների ձևավորման փուլեր:

Ինչևէ, այս տեսանկյունից ցուցմունքների ձևավորման գործընթացը կարող է ունենալ ինչպես հոգեբանական, այնպես էլ քրեադատավարական կողմեր, որտեղ առաջինն իր մեջ ներառում է ցուցմունքների ձևավորման ժամանակ անձի մոտ ընթացող հոգեբանական գործընթացները, մասնավորապես՝ ընկալումը, հիշողությունը և վերարտադրումը, իսկ երկրորդը՝ բոլոր այն փուլերը, որոնք անհրաժեշտ են դրանք ապացույց համարելու համար: Այս դեպքում ապացույցների ձևավորումը կանցնի նաև բառային ձևակերպման, նախագահողի կողմից ցուցմունքի ընկալման և ցուցմունքների ամրագրման փուլերը:

Ժամանակի ընթացքում անձը կարող է մոռանալ գործի համար նշանակություն ունեցող շատ հանգամանքներ: Մոռացման գործընթացը կարող է տարբեր ընդգրկում ունենալ: Դրան համապատասխան՝ մոռացված պատկերների և մտքերի ժամանակին և անհրաժեշտ վերարտադրումը նախագահողի համար որոշակիորեն դժվարանում, իսկ երբեմն էլ անհնար է դառնում: Ուստի անհրաժեշտ է նկատի ունենալ դեպքից մինչև դատաքննությունն անցած ժամանակահատվածը:

Այսպիսով, կարծում ենք, ցուցմունքների ձևավորման հոգեբանական գործընթացը պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ ***երեք փուլերի.***

1) ընկալում,

2) մտապահում,

3) վերարտադրում:

Նման բաժանումն անհրաժեշտ է յուրաքանչյուր փուլում ընթացող երևույթների գիտական առավել խոր ուսումնասիրության համար: Երևույթների մասին տեղեկության ստացման առաջին և ամենապարզ եղանակը զգայությունն է, որն արտացոլում է այդ երևույթի առանձին կողմերն ու հատկանիշները: Զգայություններն ձևավորվում են զգայարանների աշխատանքի արդյունքում՝ ընկալիչների և անալիզատորային աղեղի օգնությամբ: Անշուշտ, մարդու զգայարանների հնարավորություններն անսահմանափակ չեն: Մարդու այս կամ այն զգայարանը որոշակի սահմանված ժամանակահատվածի ընթացքում ունակ է ընկալելու սահմանափակ քանակությամբ օբյեկտներ կամ հատկանիշներ: Զգայարանների աշխատանքի արդյունավետությունը կախված է տարբեր անհատական և իրադրային գործոններից. արտացոլվող օբյեկտի և միջավայրի ֆիզիկական հատկանիշներից, տվյալ զգայարանի ֆունկցիոնալության աստիճանից, անձի անհատական առանձնահատկություններից և արտացոլման պահին ֆիզիկական վիճակից և հոգեվիճակից և այլն: Զգայությունները կարող են լինել թույլ կամ ուժեղ, իրական կամ աղճատված (պատրանքներ), ինչպես նաև կրել հիվանդագին բնույթ՝ հալյուցինացիաներ:

Ընկալումն արտացոլման ավելի բարդ գործընթաց է, որն օբյեկտի տարբեր հատկանիշների վերաբերյալ (գույն, ձև, չափ, հոտ, տարածական տեղակայում և այլն) առանձին զգայարանների միջոցով ստացված տեղեկությունների համադրման, ամբողջականացման և ճանաչման մեխանիզմն է:

Այս կամ այն երևույթի ընկալումը միևնույն անձի մոտ կարող է տարբեր լինել՝ կախված այդ պահին նրա ֆիզիկական և հոգեկան վիճակից: Ուստի յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է պարզել որոշակի երևույթն ընկալելու անձի ունակությունը:

Հայտնի է, որ ընկալման հստակության և ամբողջականության վրա որոշակի ազդեցություն ունեն գիտելիքները, նախկին փորձը, պահանջմունքները, դիրքորոշումները, հետաքրքրությունները և, որ ամենակարևորն է, այն նպատակը, որն

իր առջև դրել է ընկալողը: Սրանով է պայմանավորված ընկալման ընտրողականությունը, այսինքն՝ ընկալողի կողմից որոշակի օբյեկտների կամ հատկանիշների առանձնացումը և մյուսների անտեսումը կամ զտումը: Վկայի ընկալած տեղեկությունը կարող է ենթարկվել վերափոխման: Դա հաճախ կատարվում է ներքին ուժեղ հուզական գործընթացների, ինչպես նաև իրադարձությունների հետագա քննարկման, հասարակական կարծիքի, ԶԼՄ-ների ազդեցության հետևանքով:

Վկայի և տուժողի հիշողության մեջ զգայարանների վրա ներազդածը չի պահպանվում ուղղակիորեն: Իրադարձությունների ընթացքն ինքնըստինքյան նույնական մտապահում չի ապահովում: Ամեն ինչ կախված է նրանից, թե ինչ է անում անձն ընկալված տեղեկության հետ ընկալման առաջին րոպեների ընթացքում, ինչպես նաև ավելի ուշ փուլերում: Բնական է, որ գործունեության միևնույն արտաքին պայմանները տարբեր մարդկանց մոտ մտապահման բացարձակապես նույն արդյունքների չեն հանգեցնում, քանի որ դրանք միշտ բեկվում են մարդու անցյալի փորձի, նրա անհատական առանձնահատկությունների, հուզական վիճակի, դիրքորոշումների, ընկալման ընտրողականության և այլնի միջով: Հարցաքննության ժամանակ նախագահողը պետք է պարզի ընկալված տեղեկության նշանակությունը հարցաքննվողի համար: Այն տեղեկությունը, որն անձի համար չունի էական նշանակություն, ենթակա է կարճատև մտապահման և արագորեն կարող է մոռացվել: Տևական մտապահման ոլորտին է հիմնականում տրվում այն տեղեկությունը, որն անձի գործունեության կենսականորեն կարևոր նպատակների նվաճման համար ունի առանցքային նշանակություն:

Սակայն հիշողության պահպանման նշված օրինաչափությունը կարող է խախտվել ուժեղ սթրեսային կամ հոգեբանորեն տրավմատիզացնող իրավիճակներում, երբ անձի հոգեկանը ենթարկվում է ինտենսիվ հուզական ծանրաբեռնվածության, ինչն ակտիվացնում է նրա ենթագիտակցական պաշտպանական մեխանիզմները: Վերջիններս, նպատա-

կաուղղված լինելով անհապաղ իջեցնելու անձի սթրեսի ապրումը, կարող են էականորեն խանգարել իրադարձությունների օբյեկտիվ մտապահմանը՝ ձևափոխելով կամ արտամղելով դրանց մասին տեղեկությունները, ինչպես նաև հետագայում խոչընդոտելով դրանց վերհիշմանը: Այսինքն՝ ուժեղ սթրեսային իրավիճակներում պաշտպանական արտամղման (մոռացման) կարող է ենթարկվել ոչ թե անկարևոր կամ անիմաստ տեղեկությունը, այլ հենց ամենանշանակալիցն ու արժեքավորը (օրինակ՝ բռնություն գործած անձի դիմագծերը կամ նրա վարքի վերաբերյալ ամբողջական հատվածները), ինչը տրավմատիզացիայի արդյունք է, այլ ոչ թե զոհի կամ վկայի կամակորություն կամ քննությանը խոչընդոտելու միտում: Նրանց հետ հարցաքննության ընթացքում արդյունավետ հաղորդակցման ապահովման նպատակով նման դեպքերում նախագահողը կարիք ունի հաշվի առնելու սթրեսային կամ տրավմատիկ իրադարձություններում հոգեկան գործընթացների և հիշողության վերոնշյալ յուրահատկությունը և իր հարցերը կառուցելու արտամղված տեղեկության աստիճանական և անվնաս վերականգնմանը համահունչ:

Վերարտադրությունը կարելի է սահմանել որպես հիշողության այնպիսի գործընթաց, որի հետևանքով տեղի է ունենում նախկինում ամրապնդված հոգեկան բովանդակության ակտիվացումը: Նախկինում յուրացված նյութի վերականգնման գործընթացը կարող է բնութագրվել ընթացքի դժվարության կամ հեշտության տարբեր աստիճաններով՝ մեզ շրջապատող առարկաների «ավտոմատացված» ճանաչումից մինչև մոռացված նյութի տանջալից մտաբերումը: Ըստ այդմ՝ վերարտադրության գործընթացում դրա տարբեր տեսակներն առանձնացնելով, դրանք կարելի է դասակարգել հետևյալ կարգով. *ճանաչում, բուն վերարտադրություն և մտաբերում*:

Ճանաչումը որևէ օբյեկտի մտովի վերարտադրությունն է՝ նրա նոր ըմբռնման պայմաններում: Ճանաչումը՝ ըստ իր որոշակիության, հստակության և լրիվության աստիճանի, տարբեր

է լինում: Այն կարող է իրագործվել կամ որպես ոչ կամածին, կամ որպես կամածին գործընթաց: Սովորաբար, երբ ճանաչումը լրիվ, պարզորոշ և որոշակի է, այն իրագործվում է որպես միաչափ չկանխամտածված գործողություն: Բուն վերարտադրությունը ճանաչումից տարբերվում է նրանով, որ իրագործվում է առանց վերարտադրվող օբյեկտի կրկնակի ըմբռնման: Բայց նման վերարտադրությունն ինքնին կամ առանց դրդման չի կատարվում: Ուստի հարցաքննության ժամանակ նախագահողի հիմնական խնդիրը հոգեբանական մեխանիզմների միջոցով անձին՝ մտապահված տեղեկության վերարտադրությանը դրդելն է: Ոչ կամածին վերարտադրության կարող են դրդել ծանոթ առարկաների ըմբռնումները, մտապատկերները, մտքերը, որոնք իրենց հերթին առաջանում են որոշակի արտաքին ազդեցությունների հետևանքով: Այդպիսի ազդեցություն կարող է լինել հարցաքննության ժամանակ վկային կամ տուժողին ապացույցների ներկայացումը: Մտաբերման հաջողությունը կախված է նրանից, թե մտաբերման կամ վերհիշելու համար ինչպիսի հնարքներ են օգտագործվում: Դրանցից առավել կարևոր են. մտաբերվող նյութի գրավոր կամ բանավոր պլանի կազմումը, գիտակցության մեջ համապատասխան օբյեկտների պատկերներն ակտիվորեն կյանքի կոչելը, միջնորդող գործողությունների կանխամտածված առաջացումը, որոնք կողմնակի ճանապարհով հանգեցնում են անհրաժեշտ նյութի վերարտադրությանը:

Կարևոր է նաև հիշել, որ իրադարձությունների դետալիզացված մտաբերումը կարող է հանգեցնել տուժողի կամ վկայի մոտ հաճախ առկա հոգետրավմատիզացիայի վերապրմանը՝ իր բոլոր բացասական և սուր հուզական դրսևորումներով: Այս երևույթը կոչվում է վերատրավմատիզացիա, անձը, ասես, կրկին անգամ գրեթե նույն ինտենսիվությամբ վերապրում է իր հետ տեղի ունեցածը, ինչը կարող է հոգեբանական մեծ վնաս հասցնել նրան: Ընդ որում, նշված վերատրավմատիզացիան կարող է տեղի ունենալ թե վերհիշմանը զուգընթաց աստիճանաբար աճող բացասական հույզերի դրսևորմամբ, թե որոշա-

կի, հաճախ ոչ կարևոր թվացող ազդակից (ձայն, շարժում, հոտ, գույն) խթանված ուժեղ հուզական պոռթկումի ձևով: Երկու դեպքում էլ, անձի հոգեբանական առողջության տեսանկյունից, անհրաժեշտ է դադարեցնել հարցաքննությունը և աջակցություն ցույց տալ նրան:

Մտաբերման հաջողությունն էականորեն կախված է նաև վերարտադրման պատճառաբանվածության աստիճանից: Անցյալում անձի յուրացրած գիտելիքները վերարտադրելիս դրանք կապվում են նոր գիտելիքների հետ, նոր ձևով են կարգավորվում և ավելի խորն են գիտակցվում: Վերարտադրման վրա մեծ ազդեցություն է գործում մտաբերելու հնարավորության մեջ անձի վստահության աստիճանը: Անձը տեղեկությունն ընկալում է երկու ճանապարհով. *գիտակցված և ենթագիտակցական*: Նա ընդունակ է հաղորդելու միայն գիտակցված տեղեկությունը: Սակայն հարցաքննողի կողմից համապատասխան հնարքների կիրառման դեպքում կարելի է ստանալ նաև անձի ենթագիտակցության մեջ գտնվող տեղեկությունը: Եթե տեղեկությունը երկար ժամանակ պահպանվում է մարդու հիշողության մեջ, այն ենթարկվում է վերափոխման, ընդհանրացման և կրճատման: Դա պայմանավորված է ինչպես տվյալ անձի համար ստացված տեղեկության նշանակությամբ, այնպես էլ ընկալողի անձնային առանձնահատկություններով, արժեհամակարգով և հոգեվիճակով: Մարդկային ուղեղը ոչ միայն տեղեկության կուտակման, այլ նաև վերամշակման կենտրոնն է: Այդ պատճառով էլ արտաքին աշխարհից ստացվող տեղեկությունը տարբերվում է այն տեղեկությունից, որը վերջինս փոխանցում է ուրիշին: Ուստի նախագահողի հիմնական գործառույթը պետք է լինի վկայի ցուցմունքից սկզբնական, օբյեկտիվ տեղեկության առանձնացումը: Հարցաքննության ընթացքում նախագահողը պետք է բազմակողմանիորեն աջակցի հարցաքննվողին՝ վերհիշելու գործի մոռացված հանգամանքները: Սակայն այդ օգնությունը ոչ մի դեպքում չպետք է դուրս գա թույլատրելի շրջանակներից և վերածվի ներշնչանքի կամ ճնշման:

Այս փուլերից յուրաքանչյուրն իր մեջ ներառում է բավականին տարաբնույթ հոգեբանական երևույթներ: Հաճախ այս երևույթներից շատերը, նույնիսկ նրանք, որոնք էական ազդեցություն են ունենում ցուցմունքների ձևավորման վրա, հաշվի չեն առնվում և դուրս են մնում հարցաքննողի ուշադրությունից, որը և հանգեցնում է անսպասելի սխալների: Մտապահումը, օրինակ, բարդ գործընթաց է, որում առանձնանում են առաջնային պատկերումը, ընկալվածի հետագա մշակումը, հիշողությունների ջնջումն ու դրանց վերականգնումը: Վերարտադրումն իր հերթին բաղկացած է այնպիսի գործընթացներից, ինչպիսիք են վերհիշումն ու բառային ձևակերպումը:

Սակայն ցուցմունքների ձևավորման գործընթացն այսքանով չի ավարտվում: Հարցաքննվողի ցուցմունքներն իրենց հերթին *ընկալում և վերարտադրում* է հարցաքննողը:

Այս տեսանկյունից հարկ է նշել, որ հոգեբանները հաստատում են, որ զրույցի ընթացքում տեղեկատվության միայն 7%-ն է փոխանցվում անմիջապես բառերի միջոցով: Օգտակար տեղեկության մնացած 38%-ը փոխանցվում է ձայնի և ինտոնացիայի միջոցով, իսկ 55-%-ը՝ ժեստերի, դիրքի, շարժումների միջոցով, ուստի ոչ վերբալ տեղեկության տակտիկապես գրագետ օգտագործումը հարցաքննության արդյունավետ իրականացման կարևոր նախապայման է հանդիսանում[23]:

Ուշագրավ է նաև սուտ ցուցմունքների ձևավորման գործընթացը: Ինչպես մտածողության ցանկացած տեսակ, սուտը նույնպես ենթարկվում է որոշակի օրինաչափությունների: Սուտ ցուցմունք տվող անձինք, անշուշտ, խախտում են որոշակի հոգեբանական օրինաչափություններ: Մասնավորապես, խախտվում է հիշելու ընթացքը, քանի որ սուտ ցուցմունք տվողի հիշողության մեջ գոյակցում են դեպքի երկու տարբերակ՝ իրական և մտացածին: Սուտ ցուցմունք տվող անձինք մշտապես գտնվում են լարված վիճակում, քանի որ ցուցմունք տալու

[23] Տե՛ս Следственные действия, Криминалистические рекомендации, Типовые образцы документов, Под ред. ***В. А. Образцова***, М., «Юристъ», 2001, էջ 46:

ժամանակ իրենց հիշողությունից պետք է հանեն իրականությունը և դրա փոխարեն աշխատեն պահել մտացածինը: Գիտակցության մեջ ընթացող հոգեբանական այդ երևույթները հանգեցնում են հակասությունների, ինչն էլ նպաստում է սուտ ցուցմունքների բացահայտմանը: Սուտ ցուցմունք տալու ժամանակ խախտվում է նաև հարցաքննվողի մտածողության բնականոն ընթացքը: Վերջիններս, լսելով նախագահողի հարցը, նախ պատասխանը ձևակերպում են մտքում՝ նպատակ ունենալով համադրել իրենց սուտ պատասխանն իրականության հետ: Այդ ընթացքում նախագահողի աչքից չի կարող վրիպել հարցաքննվողի պատասխանների ուշացումն ու վերջինիս գրգռվածությունը: Մտադրված սուտ ցուցմունք տվող հարցաքննվողը, որպես կանոն, դրսևորում է բարձր լարվածություն և տագնապ, ինչպես նաև դրանք զսպելու ջանքեր: Սա կարող է դրսևորվել դյուրագրգռության, ավելորդ շտապողականության, խոսքի խառնվածության, չափազանցված ինքնավստահության, ինտենսիվ քրտնարտադրության, ձայնի ինտոնացիայի տատանման, մարմնի դողի և այլ եղանակներով: Սակայն նշված դրսևորումները միանշանակորեն չեն մատնանշում սուտ ցուցմունքի առկայությունը, այլ «ախտորոշիչ» են միայն այլ հիմնավոր կասկածների առկայության դեպքում:

Կարևոր է հարցաքննվողի կեղծ ցուցմունքների պատճառների պարզումը:

Այսպես՝ վկայի սուտ ցուցմունքների հիմնական պատճառներն են.

- Գործով անցնող այլ անձանց հետ հարաբերությունները վատթարացնելու, ինչպես նաև կասկածյալի, մեղադրյալի, նրանց հարազատների և բարեկամների կողմից իրենից վրեժ լուծելու վախը:
- Սեփական անօրինական, անբարոյական վարքագիծը թաքցնելու ձգտումը:
- Բարեկամական, ընկերական և այլ նկատառումներից ելնելով՝ կասկածյալի կամ մեղադրյալի վիճակի բարելավ-

ման կամ ընդհակառակը՝ վրեժի, խանդի կամ այլ նկատառումներով վերջինիս վիճակի վատթարացման ձգտումը:

- Հետագայում որպես վկա դատարան կանչվելուց խուսափելու ձգտումը:

Տուժողի սուտ ցուցմունքները հիմնականում կարող են պայմանավորված լինել հետևյալ պատճառներով.

- Տուժողի և հանցավորի միջև առկա է արյունակցական, ընկերական, հանցավոր (նախկինում միասին հանցանք են կատարել) կամ այլ կապ:
- Տուժողը վախենում է հանցավորի կամ նրա մերձավորների վրեժից:
- Տուժողը, ելնելով շահադիտական կամ այլ նպատակներից, ցանկանում է մեծացնել իրեն պատճառված վնասը:
- Տուժողը ցանկանում է թաքցնել սեփական հակաօրինական կամ հակաբարոյական արարքը:
- Տուժողի և հանցավորի միջև տրավմատիկ կապի ձևավորում (ստոկհոլմյան համախտանիշ) [24]:

Կասկածյալի կամ մեղադրյալի սուտ ցուցմունքներ տալու հիմնական դրդապատճառներից են.

- Սեփական մեղքը թաքցնելու և պատասխանատվությունից խուսափելու համար քննությանը շեղել ճիշտ ուղուց:
- Մեղադրյալը կամ ամբաստանյալը ցանկանում են թեթևացնել սեփական մեղքը և պատասխանատվության

[24] Ստոկհոլմյան համախտանիշը զոհի և ագրեսորի միջև ենթագիտակցական պաշտպանական «տրավմատիկ կապնե է, որն առաջ է գալիս բռնության կիրառման կամ սպառնալիքի ընթացքում: Ուժեղ շոկի ազդեցության տակ զոհը սկսում է կարեկցել ագրեսորին, արդարացնել նրա գործողությունները և ի վերջո նույնականանալ նրա հետ՝ ընդունելով նրա գաղափարները և համարելով իր զոհողությունն անհրաժեշտ «ընդհանուրե նպատակին հասնելու համար:

աստիճանը՝ այն բարդելով հանցակիցների վրա:

- Մեղադրյալը կամ ամբաստանյալը ցանկանում են վրեժ լուծել տուժողից կամ դատավարության այլ մասնակցից:
- Մեղադրյալը կամ ամբաստանյալը գտնվում են բարեխիղճ մոլորության մեջ:

Սուտ ցուցմունք տվող անձի գիտակցության մեջ անընդհատ պայքար է ընթանում սուտ ցուցմունք տալու և ճշմարիտն ասելու շարժառիթների միջև: Եթե նախագահողը կարողանա հասկանալ հարցաքննվողի սուտ ցուցմունք տալուն հարկադրող դրդապատճառը, ապա կարող է որոշակի տեղեկություն տրամադրելու ճանապարհով ազդել այդ դրդապատճառի վրա, ստիպել վերանայել սուտ ցուցմունքների նկատմամբ իր դիրքորոշումը: Խնդիրը մի փոքր այլ է մեղադրյալի կամ ամբաստանյալի հարցաքննության դեպքում, երբ վերջիններս, օգտվելով իրենց ցուցմունք տալու իրավունքից, կարող են հայտնել ակնհայտ կեղծ տեղեկություններ՝ դատական քննությունը ճիշտ ուղուց շեղելու, մյուս հանցակիցներին, հանցագործության հետքերը, ինչպես նաև գողոնը թաքցնելու նպատակով և այլն:

Սակայն պետք է նշել, որ նույնիսկ ճիշտ ցուցմունքներում կարող են լինել անճշտություններ և բացթողումներ, որոնք հիմնականում կարող են կապված լինել բարեխիղճ մոլորության, ինչպես նաև ընկալման աղճատումների և հիշողությունների հետագա վերափոխումների գործընթացի հետ:

Սուտ ցուցմունքների ձևավորման գործընթացը պարզելու համար կարևոր նշանակություն ունի դրանց կրիմինալիստիկական վերլուծությունը: Այն ենթադրում է ցուցմունքների ձևավորման պայմանների, հարցաքննվողի անձնային առանձնահատկությունների, հարցաքննության ժամանակ կիրառված տակտիկական հնարքների, ցուցմունքների բովանդակության, գործով ձեռք բերված այլ ապացույցների ուսումնասիրություն:

Այսպիսով, ցուցմունքի ձևավորման հոգեբանական գործընթացն ընդգրկում է հետևյալ երևույթները, որոնց վրա կարող են ազդել ինչպես օբյեկտիվ՝ արտաքին, այնպես էլ սուբյեկտիվ՝

ներքին գործոններ: Առաջինների թվին դասվում են անձի ընկալման վրա ազդող գործոնները, օրինակ՝ եղանակային պայմանները, լուսավորության տեսակը և այլն, իսկ երկրորդ խմբի մեջ մտնում են, օրինակ՝ անձի հոգեվիճակը երևույթն ընկալելու պահին (աֆեկտի վիճակ), որոշակի հիվանդությամբ տառապելը կամ դեպքից հետո սթրեսներ, ծանր հիվանդություն տանելը և այլն:

Ընդ որում՝ հարկ է նկատել, որ ցուցմունքների ձևավորման գործընթացն ունի երկակի նշանակություն. մի կողմից ձևավորվելով որոշակի անձի՝ հարցաքննվողի մոտ, մյուս կողմից այն ամբողջանում, վերջնական ձևավորված տեսք է ստանում հարցաքննողի կողմից ընկալվելուց, գնահատվելուց հետո, ով ոչ պակաս ակտիվ ու կարևոր դերակատարություն է ունենում այդ գործընթացում:

Հարցաքննվողից ճշմարտացի ցուցմունք ստանալու կարևոր նախապայման է ***հոգեբանական հարմարավետ և վստահելի շփման ապահովումը***: Թեև մասնագիտական գրականության մեջ տրվել են հոգեբանական արդյունավետ շփման բազմաթիվ բնորոշումներ, այդուհանդերձ, մեր կարծիքով, այն հոգեբանական հարմարավետ պայմաններում փոխըմբռնման գործընթաց է, փոխհամաձայնեցված գործնական փոխհարաբերությունների ամբողջություն: Բոլոր դեպքերում հոգեբանորեն նպաստավոր շփումը մի իրավիճակ է, երբ հարցաքննությունը հիմնվում է հարցաքննողի և հարցաքննվողի փոխադարձ վստահության վրա: Հարցաքննության ժամանակ նման շփման հաստատման հստակ տիպային մոդել գոյություն չունի: Յուրաքանչյուր դեպքում հարցաքննողը պետք է հաշվի առնի հարցաքննվողի անձնական և հոգեբանական առանձնահատկությունները, ինչպես նաև հարցաքննության ժամանակ նրա հոգեվիճակը: Հարցաքննության ընթացքում մասնակիցներից յուրաքանչյուրը ցանկանում է հոգեբանական ազդեցություն ունենալ մյուսի վրա և դրանով իսկ ապահովել իր համար տակտիկապես նպաստավոր պայմաններ:

Վստահելի շփման հաստատումը պարունակում է հոգեբանական պայքարի տարրեր: Եթե նույնիսկ հարցաքննվողը ցանկանում է տալ ճշմարտացի ցուցմունքներ, միևնույն է նախագահողը պետք է միջոցներ ձեռնարկի հոգեբանական արդյունավետ շփման հաստատման համար, քանի որ հակառակ դեպքում վերջինս չի կարողանա ճիշտ ընկալել և հասկանալ ցուցմունքը:

Պետք է նշել, որ վստահելի շփման հաստատման համար կարևոր է ինչպես հարցաքննվողի անձնական հոգեբանական առանձնահատկությունների պարզումը (խառնվածքի, բնավորության, արժեքային կողմնորոշումների, հետաքրքրությունների, շահերի, հակումների առանձնահատկությունները, ինտելեկտուալ և հաղորդակցական-խոսքային առանձնահատկությունները), այնպես էլ քննվող դեպքի վերաբերյալ նրա տրամադրության (դիրքորոշման) պարզումը: Հոգեբանորեն նպաստավոր շփում հաստատելու կարևոր նպատակներից է նաև հարցաքննվողին հոգեբանական օգնություն ցուցաբերելը: Դա հիմնականում վերաբերում է տուժողին, ում հանցագործությամբ հոգեբանական մեծ վնաս է պատճառվել: Հարցաքննողի հիմնական նպատակը հարցաքննության գործընթացում այն հոգեբանական բարդույթների վերացումն է, որոնք կարող են խոչընդոտել հարցաքննության նորմալ ընթացքը: Նման խոչընդոտներից մեկը վերը նկարագրված վերատրավմատիզացիայի երևույթն է, որի ակտիվացման պարագայում տուժողը վերապրում է ինտենսիվ բացասական հույզեր և հոգեվիճակներ, ինչը թույլ չի տալիս նրա իմացական գործընթացներին գործելու բնականոն կերպով:

Տուժողի հետ հոգեբանական հարմարավետ և վստահելի շփման հաստատման համար կարևոր նշանակություն ունի ցուցմունք տալուց հրաժարվելու կամ ակնհայտ սուտ ցուցմունք տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին նախազգուշացումը, որը պետք է կրի ոչ թե ձևական բնույթ, այլ յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնվեն տու-

ժողի անձնային առանձնահատկությունները, հանցագործությամբ նրան պատճառված վնասը, քննության ընթացքում նրա դրսևորած վարքագիծը և այլն: Եթե հարցաքննողը հաշվի չի առնում այս հանգամանքները, ապա նախազգուշացումը կարող է հոգեբանական նոր հարված լինել տուժողի համար, որը, բնականաբար, չի նպաստի հոգեբանական արդյունավետ շփման ապահովմանը:

Թեև հարցաքննողի ու հարցաքննվողի անձնական, հոգեբանական կարողություններով, հմտություններով, ինչպես նաև հարցաքննության տեսակի առանձնահատկություններով պայմանավորված՝ գործնականում կարող են հանդիպել հոգեբանական արդյունավետ շփման հաստատման տարաբնույթ ձևեր, այնուամենայնիվ, դրանց շարքում կարելի է առանձնացնել հետևյալ տիպային ձևերը.

1. Հարցաքննվողն առանց վարանելու վստահելի շփման մեջ է մտնում նախագահողի հետ: Նա կարծում է, որ նախագահողը, ելնելով իր պաշտոնական դիրքից, կարող է և պետք է հասկանա իրեն և իրադրությունը:
2. Նախագահողի հետ վստահելի շփման մեջ մտնելը պայմանավորված է զգայական այնպիսի գործոններով, ինչպիսիք են վախը, զայրույթը, արդարության զգացումը և այլն: Այսպիսի զգացմունքներ վկան ունենում է նախքան դատական նիստին ներկայանալը: Անտարբերությունը, կոպտությունը, անտակտությունը կարող են ստեղծել անվստահության մթնոլորտ, ինչն էապես կարող է ազդել հոգեբանական հարմարավետ շփման հաստատման վրա: Շփման նշված ձևը հիմնականում բնորոշ է բռնությամբ կատարվող հանցագործություններից տուժած անձանց:
3. Հարցաքննվողը նախագահողի հետ հոգեբանական արդյունավետ շփման մեջ է մտնում հարցաքննության ընթացքում ծագած հուզական գրգռվածության հետևանքով: Սա հիմնականում վերաբերում է այն դեպքերին, երբ հարցաքննվողի շահերն համընկնում են վարույթն իրա-

կանացնող մարմնի շահերի հետ, սակայն վերջինս բացասաբար է վերաբերվում քրեական հետապնդման մարմիններին՝ չցանկանալով նրանց հետ համագործակցել և ճշմարտացի ցուցմունքներ տալ: Այսպիսի մոտեցումը բնութագրական է հակասոցիալական ուղղվածություն ունեցող անձանց համար: Այս դեպքում նախագահողը, հարցաքննվողի մեջ արթնացնելով ամոթի, հպարտության, զղջման, սիրո և այլ զգացումներ, կարող է փոխել նրա դիրքորոշումներն ու վերջինիս հետ մտնել վստահելի շփման մեջ:

4. Հարցաքննվողը վստահելի շփման մեջ է մտնում նախագահողի հետ՝ նախապես մանրամասն վերլուծության ենթարկելով ստեղծված իրավիճակը: Այս պարագայում հարցաքննվողի վարքագիծն աչքի է ընկնում մտածվածությամբ և կայունությամբ:
5. Հարցաքննվողը վստահելի շփման մեջ է մտնում նախագահողի հետ՝ ունենալով դատական քննության նպատակներից տարբերվող դիրքորոշում: Սա հիմնականում բնորոշ է այն անձանց, ովքեր քննության սկզբից հակված են կեղծ ցուցմունք տալուն: Այս դեպքում նախագահողի և հարցաքննվողի հարաբերություններն արտաքինից կարող են ունենալ հոգեբանական հարմարավետ շփման առանձնահատկություններ, սակայն հիմնականում բնութագրվում են կոնֆլիկտայնությամբ: Հարցաքննվողը գտնվում է երկընտրանքի և մոտիվացիաների պայքարի վիճակում: Այս պարագայում նախագահողի հիմնական նպատակն այն մոտիվացիայի ակտիվացումն է, որը հարցաքննվողին կդրդի մտնել վստահելի շփման մեջ:

Հոգեբանական հարմարավետ շփման հաստատման համար կարևոր նշանակություն ունի հարցաքննության համար նպաստավոր պայմանների ստեղծումը: Ոչինչ չպետք է շեղի նախագահողի և հարցաքննվողի ուշադրությունը: Հարցաքննության ընթացքում հարցաքննվողը պետք է գիտակցի նախա-

գահողի անաչառությունն ու անկողմնակալությունը, գործի համար նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները բացահայտելու նրա ցանկությունը: Նախագահողը պետք է կարողանա վերացնել նաև սեփական լարվածությունը: Հոգեբանական արդյունավետ շփում ստեղծելու համար նախագահողը կարող է գտնել ընդհանուր հետաքրքրություններ և հարցաքննությունից առաջ զրուցել դրանց մասին:

Արդյունավետ հաղորդակցում կազմակերպելու գործընթացի համար առանցքային նշանակություն ունի հոգեբանական ներգործության վրա հիմնված տակտիկական հնարքների կիրառման իրավաչափության հարցը:

Խնդրո առարկայի վերաբերյալ ճիշտ մոտեցում ձևավորելու համար նախևառաջ անհրաժեշտ է միմյանցից տարբերակել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «հոգեբանական ներգործությունը» և «հոգեբանական ճնշումը», «տակտիկական խորամանկությունը» և «խաբեությունը»: Հոգեբանական ներգործությունը կարող է լինել ինչպես իրավաչափ, այնպես էլ ոչ իրավաչափ: Անվիճելի է, որ քրեական դատավարությունում որևէ տեսակի բռնություն կամ խաբեություն անընդունելի է: ՔԴՕ 11-րդ հոդվածի համաձայն՝ քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում՝ բժշկական դեղամիջոցների օգտագործմամբ, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկվելու, ինչպես նաև այլ դաժան վերաբերմունքի: Արգելվում է կասկածյալից, մեղադրյալից, ամբաստանյալից, տուժողից, վկայից կամ քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանցից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով:

Սպառնալիքները, խաբեությունը, հարցաքննվողի կամ նրա մերձավորների արժանապատվության նվաստացումը միանշանակորեն դիտվում են որպես հոգեբանական ճնշում և արգելվում են օրենքով: Թերևս մարդկային յուրաքանչյուր հա-

րաբերություն, այդ թվում՝ հարցաքննությունը, չի կարելի պատկերացնել առանց հոգեբանական ներգործության: Մարդու վրա կարելի է ներգործել հեղինակությամբ, խոսքով, նույնիսկ արտաքինով: Հարցաքննության ժամանակ իրավաչափ է համարվում այն ներգործությունը, որն ուղղված է հարցաքննվողի մտավոր, կամային և էմոցիոնալ ոլորտներին: Հոգեբանական ներգործությունը փոխադարձ գործընթաց է: Սուտ ցուցմունք տվող անձը ձգտում է նախագահողի մոտ ստեղծել համապատասխան տրամադրվածություն, համոզել իր ցուցմունքների ճշմարտացիության մեջ և այլն:

Հարցաքննության ժամանակ հարցաքննողը բախվում է սուր կոնֆլիկտային իրավիճակների, օրենքով պահպանվող արժեքների նկատմամբ տարբեր դիրքորոշումների, հարցաքննվողի բարոյական և քաղաքացիական տարբեր որակների հետ: Գտնվելով որոշակի միկրոմիջավայրում՝ նրանք, որպես կանոն, կրում են այդ միջավայրի ազդեցությունը: Յուրաքանչյուր անձ, ելնելով իր առանձնահատկություններից, յուրովի է մեկնաբանում կատարվածը: Ընդ որում՝ վերջինիս մեկնաբանությունները շատ հաճախ պայմանավորված են կյանքի ընթացքում ձևավորված սոցիալական կարծրատիպերով:

Անձի ներգրավումը քրեական դատավարությանը նրա մոտ ձևավորում է հատուկ հոգեբանական վիճակ՝ պայմանավորված սեփական գործողությունների համար պատասխանատվությամբ:

Հարցաքննության ժամանակ անձն անմիջապես չի հայտնում պատրաստի տեղեկություն, այլ ձևավորում է այն: Ընկալելով նախագահողի հարցը՝ հարցաքննվողը մշակում և գնահատում է վերարտադրության ենթակա տեղեկությունը: Այստեղ հնարավոր են դժվարություններ՝ կապված անձի կողմից տեղեկությանը լեզվական ձևակերպում տալու հետ: Այս գործընթացն անցնում է երկու փուլով: Նախ, անձն իր զգացումներին լեզվական արտահայտություն է տալիս ինքն իրեն և բարձրաձայն չի արտահայտում և երկրորդ՝ իր զգացումները լեզվական արտահայտման միջոցով փոխանցում է նախագա-

հողին: Ընդ որում, նա կարող է օգտագործել այնպիսի բառեր և արտահայտություններ, որոնք սխալ կընկալվեն նախագահողի կողմից: Հետևաբար հարցաքննության ժամանակ նախագահողը հատուկ ուշադրություն պետք է դարձնի հարցաքննվողի խոսակցական և լեզվական հատկանիշներին, որը նպատակ է հետապնդում բացահայտելու հարցաքննվողի լեզվական առանձնահատկությունները և ուսումնասիրելու ցուցմունք տալու ժամանակ հարցաքննվողի մոտ տեղի ունեցող հոգեֆիզիոլոգիական փոփոխությունները: Հարցաքննվողի ցուցմունքների լեզվաբանական ուսումնասիրումը հնարավորություն է տալիս բացահայտել մի կարևոր օրինաչափություն: Կեղծ ցուցմունքների պլանավորման և իրագործման ընթացքում անձը, հանդիպելով որոշակի դժվարությունների, կիրառում է այնպիսի բառեր, որոնք բնորոշ չեն իր և այն սոցիալական խմբի բառամթերքին, որին նա պատկանում է:

Հաճախ հարցաքննության ժամանակ անձինք փորձում են կանխագուշակել հարցաքննողի համար ցանկալի պատասխանները և իրենց ցուցմունքը համապատասխանեցնել դրան: Այս երևույթը հիմնականում կապված է նախագահողի դրսևորած վարքագծի հետ: Օրինակ՝ նախագահողի դրական հուզական վերաբերմունքը մեղադրական բովանդակություն ունեցող ցուցմունքների նկատմամբ՝ վկայի մոտ ակամայից ձևավորում է համապատասխան վերաբերմունք:

Նախագահողի ուշադրությունից չպետք է վրիպի հարցաքննվողի ցուցմունքների մեղադրական կամ արդարացնող ուղղվածությունը: Օրինակ՝ վկան ուժեղ հուզական ապրումներ է ունենում ինչպես իրադարձությունների ընկալման, այնպես էլ հարցաքննության ընթացքում: Այդ ապրումները հետագայում էական ազդեցություն են ունենում ցուցմունքների ձևավորման վրա:

Պետք է նշել նաև, որ տուժողի հարցաքննությունն իր հոգեբանական առանձնահատկություններով էապես տարբերվում է վկայի հարցաքննությունից: Դա նախևառաջ պայմանավորված է տուժողի հոգեկան վիճակով, որը շատ հաճախ փոխա-

նցվում է նաև հարցաքննության ողջ ընթացքի վրա: Բացի դրանից, քանի որ ցուցմունք տալը տուժողի՝ իր իրավունքները պաշտպանելու միջոց է, վերջինս իր այդ իրավունքի իրագործումը զուգորդում է խիստ արտահայտված հուզականությամբ: Տուժողի հիշողության մեջ երկար ժամանակ պահպանվում է վախի, հուսահատության, ցավի զգացումը, որը նա ապրել է հանցագործության ժամանակ: Տուժողի հարցաքննության ժամանակ նախագահողը պետք է պարզի վերջինիս հարաբերությունները մեղադրյալի հետ հանցագործությունից առաջ, հանցագործության ընթացքում և դրանից հետո: Դա անհրաժեշտ է հանցագործության կատարման շարժառիթներն ու մեխանիզմը հասկանալու համար: Տուժողի հետ նախագահողի հարաբերությունները պետք է կառուցվեն որպես հանցագործությունից տուժած և արդարություն փնտրող անձի հարաբերություններ: Նախագահողը հարցաքննությունից առաջ պետք է հանգստացնի տուժողին, հնարավորին չափ վերացնի նրա սթրեսային վիճակը: Հակառակ դեպքում, հարցաքննողի ոչ նրբանկատ կամ կոշտ վերաբերմունքը կարող է տուժողի վերատրավմատիզացիայի առիթ հանդիսանալ, երբ նա հարցաքննողին ենթագիտակցորեն ասոցիացնի իր նկատմամբ բռնություն գործած անձի հետ: Ցուցմունք տալուց հրաժարվելու կամ ակնհայտ սուտ ցուցմունք տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին նախագահողը տուժողին պետք է նախազգուշացնի այնպես, որ չվիրավորի նրա արժանապատվությունը:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ հարցաքննության նախապատրաստման կարևորագույն բաղադրիչներից մեկը դրա հոգեբանական կողմն է, որի ուսումնասիրումը նպաստում է ոչ միայն ցուցմունքների ձևավորման գործընթացի պարզաբանմանն ու հոգեբանական շփման հաստատմանը, այլ նաև ստի բացահայտմանը, կեղծ ցուցմունք տալուց հրաժարվելուն և օբյեկտիվ ու լիարժեք տեղեկություն ստանալուն ուղղված տեխնոլոգիայի կիրառմանը:

Թեմա 1.

Հաղորդակցում վկաների հետ

Դատավարության ընթացքում վկայի հետ հաղորդակցման իրավական հիմքերը պայմանավորված են վերջինիս քրեադատավարական կարգավիճակով:

Այսպես, ՔԴՕ-ի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վկան ցուցմունքներ տալու նպատակով կողմի կամ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից կանչված այն անձն է, ում կարող է հայտնի լինել տվյալ գործով պարզելու ենթակա որևէ հանգամանք: Այնուհետև նույն հոդվածը սահմանում է.

«…

3. Վկան պարտավոր է՝

1) ցուցմունքներ տալու, քննչական և այլ դատավարական գործողությունների կատարմանը մասնակցելու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով.

2) տալ ճշմարտացի ցուցմունքներ՝ հայտնել գործով իրեն ամբողջ հայտնի դարձածը և պատասխանել առաջադրված հարցերին, ստորագրությամբ հաստատել քննչական կամ այլ դատավարական գործողության, արձանագրության մեջ իր տված ցուցմունքների գրառումների ճշտությունը.

3) քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով տրամադրել իր մոտ եղած առարկաները, փաստաթղթերը, ինչպես նաև նմուշներ՝ համեմատական հետազոտման համար.

4) քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել քննման.

5) քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել արտահիվանդանոցային փորձաքննության՝ ստուգելու համար քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու նրա ունակությունը, եթե հիմքեր կան կասկածի տակ դնելու նրա այդպիսի ունակությունը.

6) ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի իրավաչափ կարգադրություններին.

7) չմեկնել այլ վայր՝ առանց դատարանի թույլտվության կամ առանց քրեական հետապնդման մարմնին իր գտնվելու նոր վայրի մասին նախապես տեղեկացնելու.

8) առանց նախագահողի թույլտվության չլքել դատական նիստերի դահլիճը կամ դատարանի շենքը.

9) դատական նիստի ժամանակ պահպանել կարգուկանոն:

4. Վկայի կողմից իր պարտականությունները չկատարելն առաջ է բերում օրենքով նախատեսված պատասխանատվություն:

5. Վկան իրավունք ունի՝

1) իմանալ, թե որ քրեական գործով է կանչվում.

2) հրաժարվել իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք տալուց, եթե ողջամտորեն ենթադրում է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ.

3) հրաժարվել նյութեր և տեղեկություններ ներկայացնելուց, եթե ողջամտորեն ենթադրում է, որ դրանք հետագայում կարող են օգտագործվել ի վնաս իրեն, իր ամուսնու կամ մերձավոր ազգականների.

4) ցուցմունքներ տալիս քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ օգտվել փաստաթղթերից և իր գրավոր նշումներից.

5) ցուցմունքներ տալիս կազմել պլաններ, սխեմաներ և գծանկարներ.

6) անձամբ շարադրել մինչդատական վարույթի ընթացքում տրվող իր ցուցմունքները.

7) ծանոթանալ իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրությանը, ինչպես նաև համապատասխան մասով՝ դատական նիստի արձանագրությանը և իր ցուցմունքների գրառումների լրիվության և ճշտության հետ կապված դիտողություններ անել, որոնք մտցվում են արձանագրության մեջ.

8) ստանալ քրեական գործով վարույթի ընթացքում կրած ծախսերի հատուցում.

9) հետ ստանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից որպես իրեղեն ապացույց կամ այլ հիմքերով իրենից վերցված գույքը, իրեն պատկանող պաշտոնական փաստաթղթերի բնօրինակները.

10) քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալ փաստաբանի հետ»:

Վերը ներկայացված ընդհանուր նորմի իրավակարգավորումները նկատի ունենալով՝ ՔԴՕ-ն սահմանում է նաև դատաքննության ընթացքում վկայի հետ հաղորդակցման կարգն ու պայմանները:

Մասնավորապես, ՔԴՕ-ի 339-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հարցաքննությունից առաջ նախագահողը պարզում է վկայի ինքնությունը և պարզաբանում է՝

1) իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք տալուց հրաժարվելու նրա իրավունքը, եթե ողջամտորեն ենթադրում է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ.

2) ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու կամ

սուտ ցուցմունքներ տալու համար պատասխանատվության մասին:

2. *Սույն հոդվածի առաջին մասի պահանջների կատարումը նշվում է դատական նիստի արձանագրության մեջ:*
3. *Տասնվեց տարեկան չդարձած վկան ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու կամ սուտ ցուցմունքներ տալու համար պատասխանատվության մասին չի նախազգուշացվում»:*

ՔԴՕ-ի 340-րդ հոդվածով էլ սահմանվում է վկայի հարցաքննության կարգը.

«1. Վկաները հարցաքննվում են միմյանցից անջատ և դեռևս չհարցաքննված վկաների բացակայությամբ:

2. *Նախագահողը պարզում է վկայի հարաբերությունն ամբաստանյալի, տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի և գործին մասնակցող այլ անձանց հետ և վկային առաջարկում է հայտնել այն ամենը, ինչ հայտնի է իրեն գործի վերաբերյալ: Չի թույլատրվում վկային հարցերով ընդհատել:*
3. *Կողմի միջնորդությամբ դատական քննության կանչված կամ նրա կողմից ներկայացված վկային առաջին հերթին հարցաքննում է միջնորդություն հարուցած կամ վկային ներկայացրած անձը, այնուհետև՝ տվյալ կողմում հանդես եկող այլ անձինք, իսկ վերջում՝ հակառակ կողմի ներկայացուցիչները և դատարանը:*
4. *Դատարանի նախաձեռնությամբ կանչված վկային առաջին հերթին հարցաքննում է մեղադրանքի կողմը, ապա՝ պաշտպանության կողմը, այնուհետև՝ դատարանը»:*

Ընդ որում, ՔԴՕ-ն նախատեսում է նաև վկայի հետ հաղորդակցման այսպես կոչված միջնորդավորված եղանակ:

Մասնավորապես, ՔԴՕ-ի 342-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հետաքննության, նախաքննության կամ նախորդ դատական քննության ընթացքում վկայի տված ցուցմունքների հրապարակումը, ինչպես նաև նրա ցուցմունքների ձայնագրառման վերարտադրումը դատական քննության ժամանակ թույլատրվում է, երբ վկան դատական նիստից բացակայում է այնպիսի պատճառներով, որոնք բացառում են նրա դատարան ներկայանալու հնարավորությունը, էական հակասություններ կան այդ ցուցմունքների և դատարանում վկայի տված ցուցմունքների միջև, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

2. Վկայի ցուցմունքների ձայնագրառման վերարտադրումը հնարավոր է միայն նրա հարցաքննության արձանագրությունը կամ դատական նիստի արձանագրության այն մասը հրապարակելուց հետո, որտեղ ամրագրված են վկայի ցուցմունքները»:

Անհրաժեշտ է նշել, որ վկայի բացակայության դեպքում նրա ցուցմունքները հրապարակելու դեպքում նպատակահարմար է այն ընթերցել բառացի, առանց կրճատումների կամ լրացուցիչ մեկնաբանությունների: Վերջինս կարևոր է ոչ միայն իրավական նկատառումներով՝ դրա բովանդակությունն ու արժանահավատությունը ճիշտ գնահատելու, այլ նաև հոգեբանական տեսանկյունից, դատավարության մասնակիցների մոտ վկայի ու նրա հաղորդած փաստական տվյալների վերաբերյալ հստակ ու ճիշտ պատկերացում կազմելու, թյուրըմբռնումներից խուսափելու համար:

Նախքան հարցաքննությունը սկսելը, նախագահողը հավաստիանում է հարցաքննվողի ինքնության մեջ, տեղեկացնում, թե որ գործով է նա կանչվել: Թյուրիմացություններից խուսափելու համար նպատակահարմար է հարցաքննությունից առաջ հարցաքննվողից պահանջել ներկայացնելու անձը հաստատող փաստաթուղթ: Այնուհետև նահագահողն առաջարկում է դեպքի վերաբերյալ պատմել այն ամենը, ինչը հայտնի է իրեն: Մասնավորապես՝ վկան կարող է հարցաքննվել ոչ մի-

այն հանցագործության փաստի, այլ նաև դրան նախորդող և հաջորդող հանգամանքների վերաբերյալ: Հարցաքննության առարկայի մեջ կարող են մտնել նաև այնպիսի տեղեկություններ, որոնք նախագահողը կօգտագործի նոր ապացույցներ ձեռք բերելու, ինչպես նաև առկա ապացույցները ստուգելու և գնահատելու համար: Վկան կարող է հայտնել տեղեկություններ, որոնք վերաբերում են ամբաստանյալի կամ տուժողի անձին, վերջիններիս հետ ունեցած հարաբերություններին: Վկայի ցուցմունքների ճիշտ գնահատման համար նրան կարող են տրվել վերջինիս անձնական առանձնահատկությունների և զգայարանների առողջական վիճակի հետ կապված հարցեր: Վկայի ցուցմունքները կարող են պարունակել ոչ միայն փաստական տվյալներ, այլ նաև ենթադրություններ, դատողություններ և կարծիքներ:

Ազատ շարադրանքի ժամանակ հարցաքննվողը ներկայացնում է իրեն հայտնի փաստերն այն հերթականությամբ, ինչպես առաջարկում է նախագահողը կամ նպատակահարմար է համարում ինքը: Հարցաքննության այս փուլի անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- **նախագահողը ոչ միշտ է պատկերացնում, թե ինչ ծավալի տեղեկության է տիրապետում հարցաքննվողը, ուստի կարող է հայտնել այնպիսի տեղեկություններ, որի մասին նախագահողը նույնիսկ պատկերացում չուներ և չէր կարող պարզել հարցերի միջոցով,**
- **ազատ շարադրանքն օգնում է հարցաքննվողին առավել մանրամասնությամբ վերհիշել դեպքի հանգամանքները,**
- **ազատ շարադրանքը նախագահողին օգնում է ճիշտ պատկերացում կազմել գործով անցնող այլ անձանց հետ հարցաքննվողի փոխհարաբերությունների մասին:**

Պետք է նշել, որ ազատ շարադրանքի չպահպանումը կարող է հանգեցնել հարցաքննվողի ցուցմունքներում էական

բացթողումների, քանի որ նախագահողի հարցերի պատասխանները չեն կարող բացահայտել դեպքի բոլոր հանգամանքները: Բացի դրանից, վտանգվում է ստացվող տեղեկության արժանահավատությունը, քանի որ հարցերով նախագահողն ուղղորդում է հարցաքննվողին, ինչպես նաև կարող է բացահայտել հարցաքննության տակտիկական գիծը, նախագահողի տրամադրության տակ գտնվող ապացույցները և այլն:

Գոյություն ունեն ազատ շարադրանքի հետևյալ ձևերը.

- *ժամանակագրական*, որի ընթացքում հարցաքննվողը ներկայացնում է գործի հանգամանքներն այն հերթականությամբ, ինչպես դրանք կատարվել են,
- *դրվագային,* որի ժամանակ հարցաքննվողը դեպքը ներկայացնում է ոչ թե ըստ կատարման ընթացքի, այլ մանրամասն ներկայացնում է դրա առանձին դրվագները (օրինակ՝ զոհին հետապնդելու դրվագը, նրա վրա հարձակվելու դրվագը և այլն),
- *հատվածային*, երբ վկան կամ տուժողը ներկայացնում են դեպքն՝ ըստ առանձին ժամանակահատվածների (ըստ օրերի, ժամերի և այլն),
- *տարածքային*, երբ վկան կամ տուժողը նախ ներկայացնում են մեկ վայրում կատարվածը, այնուհետև անցնում մյուսին,
- *անձնային*, այս դեպքում նախ շարադրվում են մեկ անձի կատարած գործողությունները, այնուհետև՝ մյուսներինը:

Ազատ շարադրանքի ընթացքում կիրառվող տակտիկական հնարքների քննարկման ենթատեքստում նշենք, որ դատական պրակտիկայում առավել տարածված տակտիկական հնարքներից է, երբ առաջարկվում է ազատ շարադրել ցուցմունքը, որից հետո առկա ապացույցներով ձևակերպվում են հարցերը, որոնք մերկացնում են անձին կամ բացահայտում են սուտը: Օրինակ՝ հարցաքննվողը հերքում է դեպքի տեղում կամ մոտակայքում այդ պահին իր գտնվելու փաստը, սակայն նախագա-

հողի մոտ առկա են հեռախոսազանգերի և տեղակայումների վերծանումները, որոնք հաստատում են վերջինիս այդ պահին դեպքի տեղի շրջակայքում գտնվելը: Եթե նախագահողը նախապես այդ մասին հայտնի հարցաքննվողին, ապա հնարավոր է, որ վերջինս լեգենդի կամ հորինվածքների միջոցով փորձի իր ցուցմունքները հարմարեցնել վերծանումների արդյունքներին և այլն:

Որոշ դեպքերում նախագահողը, տակտիկական նկատառումներից ելնելով, կարող է հարցաքննվողին առաջարկել որոշակի փաստեր լուսաբանելուց հետո միայն անցնել ազատ շարադրանքին: Այս տակտիկական հնարքը պրակտիկայում ստացել է «ազատ շարադրանքի թեմայի բաժանում» անվանումը: Դրա կիրառումն ունի երկակի նշանակություն. գործի համար առավել կարևոր նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու նպատակով շարադրանքին տալ ցանկալի ընթացք և երկրորդ՝ հարցաքննվողին հետ պահել կեղծ ցուցմունք տալուց, եթե այդպիսի վտանգ կա: Երկրորդ դեպքում, ցուցմունք տալով որոշակի հանգամանքների մասին, վկան և տուժողը հետագայում էլ հակասություններից խուսափելու համար ստիպված կլինեն տալ ճշմարտացի ցուցմունք: Ազատ շարադրանքը չի կարելի ընդհատել հարցերով, նկատողություններով կամ ռեպլիկներով, քանի որ վկան կարող է շփոթվել և մոռանալ գործի համար կարևոր նշանակություն ունեցող շատ հանգամանքներ: Միայն այն դեպքում, երբ վկան բավականին շեղվում է հարցաքննության առարկայից, նախագահողը կարող է ընդհատել նրան և պահանջել ցուցմունք տալ ըստ էության: Խորհուրդ չի տրվում ընդհատել շարադրանքը և հարցաքննվողից պահանջել որոշակի հանգամանքների մասին խոսել առավել մանրամասն: Դա կարելի է անել հարցաքննության հաջորդ փուլում:

Ազատ շարադրանքի ժամանակ խորհուրդ չի տրվում ընդհատել վկայի կամ տուժողի ցուցմունքները: Դա կարող է շեղել հարցաքննվողի ուշադրությունը, դժվարացնել որոշակի հանգամանքների վերհիշումը, խոչընդոտել ասոցիատիվ կապերի

հաստատմանը: Այս ընթացքում նախագահողը միայն պետք է նշի բացթողումները, այն հարցերը, որոնք պետք է տրվեն հարցաքննվողին: Հարցաքննվողը միշտ պետք է զգա նախագահողի հետաքրքրությունն իր ցուցմունքների նկատմամբ: Դա վերջինիս մոտ կարթնացնի քաղաքացիական պարտքի կատարման զգացում և կնպաստի ճիշտ ցուցմունք տալուն:

Քանի որ ազատ շարադրանքը, որպես կանոն, չի սպառում հարցաքննության առարկան, նախագահողը հարցաքննվողին առաջադրում է հարցեր՝ նպատակ ունենալով մանրամասնել նրա ցուցմունքը, բացահայտել նոր հանգամանքներ, ձեռք բերել ստուգողական տվյալներ և օգնել հարցաքննվողին վերհիշել մոռացածը: Հաճախ հարցաքննվողն ազատ շարադրանքի ընթացքում չի հիշատակում գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներ, քանի որ չի տեսնում կապն այդ հանգամանքների և քննվող գործի միջև: Նախագահողի խնդիրն առաջադրված հարցերի միջոցով այդ փաստերը վերհանելն է: Եթե ստացված ցուցմունքը նախագահողի գնահատմամբ սուտ է, հարցաքննության այս փուլում նա պետք է մերկացնի սուտը և հարցաքննվողին ստիպի տալ ճիշտ ցուցմունք: Առաջադրված հարցերի որակն ուղիղ համեմատական կապի մեջ է գտնվում տրված պատասխանների բովանդակության հետ: Այդ պատճառով ցուցմունքների որոշակիացման, լրացման և ճշտման համար առաջադրվող հարցերին ներկայացվում են հետևյալ պահանջները.

- **հարցը պետք է լինի որոշակի, վերաբերի որոշակի փաստի և թույլ չտա երկիմաստ մեկնաբանություն,**
- **անհրաժեշտ է խուսափել այնպիսի հարցերից, որոնց կարող են տրվել ենթադրական պատասխաններ,**
- **հարցը պետք է ձևակերպել այնպես, որպեսզի հարցաքննվողը չկարողանա պատասխանից դուրս թողնել նախագահողին հետաքրքրող որոշակի հանգամանքներ,**

- **նախագահողը պետք է նախապես որոշի հարցերի հերթականությունը: Առաջադրվող հարցերի մեջ պետք է լինի տրամաբանական կապ, այսինքն՝ յուրաքանչյուր հաջորդ հարցը պետք է լինի նախորդի տրամաբանական շարունակությունը,**
- **հարցեր ձևակերպելու ընթացքում նախագահողը պետք է օգտագործի պարզ բառեր և արտահայտություններ, հարցերը պետք է լինեն կարճ և լակոնիկ, պետք է օգտագործվեն փաստեր և ոչ դատողություններ: Նախագահողը հարցերը պետք է շարադրի հարցաքննվողի մտավոր և մշակութային զարգացման մակարդակին համապատասխան:**

Հաճախ հարցաքննության ժամանակ հարցաքննվողը չի կարողանում վերարտադրել ողջ տեղեկությունը, որին տիրապետում է: Նախագահողը պետք է օգնի հարցաքննվողին՝ վերհիշել գործի բոլոր հանգամանքները: Այդ նպատակով հարցաքննության ժամանակ նախագահողը կարող է կիրառել մի շարք տակտիկական հնարքներ: Առավել տարածված են *ասոցիատիվ կապերի սկզբունքի վրա հիմնված տակտիկական հնարքները:* Սրանց էությունն այն է, որ եթե հարցաքննվողի գիտակցության մեջ միաժամանակ կամ հաջորդաբար առաջ են գալիս մտապատկերներ, ապա նրանց միջև ձևավորվում է ասոցիատիվ կապ, և այդ կապի տարրերից մեկի կրկին անգամ հայտնվելը գիտակցության մեջ վերականգնում է մնացած կապերի մասին պատկերացումները: Ասոցիատիվ կապի ձևավորման համար անհրաժեշտ և բավարար պայման է դեպքի կապակցությամբ տպավորությունների միաժամանակյա առաջացումը մարդու գիտակցության մեջ: Ասոցիատիվ կապերի ստեղծման համար նախագահողն առաջադրում է այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են ոչ թե բացահայտման ենթակա հանգամանքներին, այլ դրանց հարակից փաստերին, որոնք հաստատելուց հետո հաստատվում է նաև փոխադարձ կապը: Ասոցիատիվ կապի հաստատմանն ուղղված կարևոր

տակտիկական հնարք է հարցաքննության կազմակերպումը դեպքի տեղում: Դա հնարավորություն է տալիս հարցաքննվողին կրկին վերապրել այն իրադրությունը, որի պայմաններում կատարվել է հանցագործությունը: Սակայն հարցաքննությունը հանցանքի կատարման վայրում չի կարելի շփոթել այնպիսի քննչական գործողության հետ, ինչպիսին է ցուցմունքի ստուգումը տեղում: Ի տարբերություն այս քննչական գործողության՝ դեպքի տեղում հարցաքննության ժամանակ տեղազննություն չի կատարվում, և ցուցմունքները չեն համադրվում դեպքի տեղի պարագայի հետ: Դեպքի տեղում հարցաքննության ժամանակ անձին կարող են ներկայացվել տարբեր առարկաներ, որոնց արտաքին տեսքը հարցաքննվողի մոտ կարող է առաջացնել ասոցիատիվ կապեր և նպաստել մոռացված տեղեկության վերհիշմանը:

Ասոցիացիայի հաստատման գործում էական դեր է պատկանում զգայական հիշողությանը: Ասոցիատիվ կապերի հաստատմանը կարող է նպաստել հարցաքննության ընթացքում վկայի կամ տուժողի կողմից համապատասխան իրադրության գրաֆիկական պատկերումը պլանի, սխեմայի, գծագրի, նկարի միջոցով (օրինակ՝ դեպքի տեղում առարկաների դասավորվածությունը):

Ասոցիատիվ կապերը նախագահողը կարող է կիրառել նաև այն դեպքերում, երբ հարցաքննվողը տալիս է սուտ ցուցմունք, սակայն նրան թվում է, թե իր տված ցուցմունքը ճշմարտացի է: Այդպիսի մոլորությունը կարող է հետևանք լինել սեփական մտածմունքների, դեպքերի հանգամանքների ոչ ճիշտ ընկալման, կողմնակի անձանց ազդեցության և այլն: Նախագահողի խնդիրը պետք է լինի վերացնել այս բոլոր խոչընդոտները և հարցաքննվողի գիտակցության մեջ վերականգնել դեպքերի իրական պատկերը:

Ասոցիատիվ կապերի վերականգնման համար կարևոր նշանակություն ունի այնպիսի տակտիկական հնարքի կիրառումը, ինչպիսին է հարցաքննության ժամանակ ապացույցների օգտագործումը:

Բարեխիղճ մոլորության մեջ գտնվող վկաների և տուժողների հարցաքննության ժամանակ ապացույցների օգտագործումը պայմանավորված է մարդկային հիշողության մեջ հոգեբանական գործընթացների ընթացքով: Այս տակտիկական հնարքը նպատակ ունի աջակցելու բարեխիղճ հարցաքննվողին՝ վերհիշել գործի մոռացված հանգամանքները, ուղղորդել հարցաքննվողին՝ ցուցմունք տալու այն հանգամանքների վերաբերյալ, որոնք հետաքրքրում են քննությանը, մանրամասնել և որոշակիացնել ցուցմունքները, մերկացնել կեղծ ցուցմունք տվող վկային և տուժողին:

Մոռացված հանգամանքների վերհիշմանն ուղղված կարևոր տակտիկական հնարք է հարցաքննվողին այլ անձանց ցուցմունքներին կամ դրանց առանձին հատվածներին ծանոթացնելը: Սակայն ավելորդ ներշնչանքից խուսափելու համար ներկայացվող ցուցմունքները պետք է վերաբերեն ոչ թե որևէ բացահայտված փաստի կամ դեպքի, այլ այն պայմաններին, որոնցում տվյալ դեպքը տեղի է ունեցել:

Հարցաքննության բնույթով պայմանավորված՝ այս փուլում կիրառվող տակտիկական հնարքները դասակարգվում են կոնֆլիկտային և ոչ կոնֆլիկտային իրավիճակներում կիրառվող տակտիկական հնարքների: Կոնֆլիկտը հակադիր շահերի, ձգտումների, հայացքների, ուժերի բախում է[25]: Այն կարող է լինել ակնհայտ և թաքնված: Եթե վկայի և տուժողի հարցաքննությունը կրում է ոչ կոնֆլիկտային բնույթ, ապա դրա ընթացքում կիրառվող տակտիկական հնարքներն ուղղվում են նոր ապացույցների ձեռք բերմանը: Կոնֆլիկտային իրավիճակներում տակտիկական հնարքը հիմնականում ուղղվում է ստի դեմ պայքարին: Ընդ որում՝ նախագահողի մոտ ցուցմունքների ճշմարտացիության վերաբերյալ կասկածներ կարող են առաջանալ հարցաքննության ընթացքում, այդպիսի կասկածների հիմք կարող են լինել վկայի կամ տուժողի ցուցմունքներում առկա հակասությունները, ներքին տրամաբանության

[25] Տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երևան, 1974, էջ 184:

բացակայությունը, գործի հանգամանքներին և նախագահողի մոտ առկա ապացույցներին անհամապատասխանությունը:

Այսպիսով, վկայի հարցաքննության տեխնոլոգիան կարելի է դասակարգել՝ հիմք ընդունելով հարցաքննության իրադրությունը: Այս հիմքով վկայի հարցաքննության տակտիկական հնարքները կարելի է բաժանել երեք խմբի.

1. *ճշմարտացի ցուցմունք տվող վկայի հարցաքննության տակտիկական հնարքներ,*
2. *սուտ ցուցմունք տվող վկայի հարցաքննության տակտիկական հնարքներ,*
3. *բարեխիղճ մոլորության մեջ գտնվող վկայի հարցաքննության տակտիկական հնարքներ:*

Սակայն պետք է նշել, որ նման դասակարգումը նույնպես պայմանական բնույթ ունի, քանի որ, օրինակ՝ բարեխիղճ մոլորության մեջ գտնվող վկայի հարցաքննության տակտիկական որոշ հնարքներ կարող են կիրառվել սուտ ցուցմունք տվող վկայի հարցաքննության ժամանակ:

Արդյունավետ հարցաքննության համար, ինչպես արդեն նշվել է, կարևոր է հարցաքննողի՝ վկայի հանդեպ ունեցած կանխակալ դիրքորոշումների և վերաբերմունքների գիտակցումն ու չեզոքացումը, ինչն իրականացվում է ինչպես հարցաքննության նախապատրաստական փուլում, այնպես էլ բուն հարցաքննության ընթացքում: Բացասական դիրքորոշումների առկայության մասին հաճախ կարող են հուշել տվյալ անձի հետ կապված (կամ նրա հետ հաղորդակցման ընթացքում ծագող) ուժեղ բացասական հույզերը՝ բարկությունը, ատելությունը, զզվանքը և այլն (կանխակալ վերաբերմունքի ցուցիչներ են նաև ուժեղ դրական հույզերը՝ հիացմունքը, արտահայտված համակրանքը կամ խղճմտանքը):

Կախված վկայի անձի տիպից և նրա հետ հոգեբանական հարմարավետ շփման որակից, ինչպես նաև հարցաքննողի անձնային առանձնահատկություններից ու փորձից՝ վկայի վե-

ռաբերյալ վերջինիս դիրքորոշումները կարող են տատանվել մեծ տիրույթում: Առավել անընդունելի դիրքորոշումներն են վկային՝ որպես լոկ տեղեկությունների աղբյուր վերաբերվելը (գործիքային վերաբերմունք), նախապես վկային որպես խոչընդոտող կամ ստող ընկալելը, նրան ի սկզբանե չվստահելը կամ ագրեսիվ վերաբերվելը: Նաև պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ որոշ, առավել ծանր հանցագործությունների դեպքում վկաները նույնպես ենթարկվում են լուրջ հոգեբանական սթրեսի և տառապանքի, ինչն իր հետքն է թողնում նրանց՝ հիշողության մեջ և խոսքում, հանգամանքները վերականգնելու գործընթացի և հուզական վերապրման վրա: Նման դեպքերում անընդունելի է վկայի նկատմամբ որևիցե ճնշման կիրառումը, քանի որ դա կարող է վերատրավմատիզացիայի խթան հանդիսանալ: Կարևոր է հաղորդակցման խոսքային և ոչ խոսքային մեթոդներով հնարավորինս հարգալից դիրք զբաղեցնել նման վկայի հանդեպ՝ նպաստելով նրա հոգեբանական անվտանգության և ապահովության զգացմանը:

Թեմա 2.

Հաղորդակցում տուժողների հետ

Ինչպես արդեն նշել ենք, տուժողի հետ հաղորդակցման առանձնահատկությունները պայմանավորված են վերջինիս քրեադատավարական կարգավիճակով և հետապնդվող որոշակի շահերով:

Բանն այն է, որ տուժողը, որպես կանոն, շահագրգռված է հանցագործության բացահայտմամբ, մեղավորներին պատասխանատվության ենթարկելու, ինչպես նաև առավելագույն խիստ պատժի ու պատժաչափի նշանակմամբ:

ՔԴՕ-ի 58-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Տուժող է ճանաչվում նաև այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը:

Տուժողի քրեադատավարական կարգավիճակը պայմանավորված է վերջինիս իրավունքների ու պարտականությունների շրջանակով: Համապատասխանաբար, ՔԴՕ-ի 59-րդ հոդվածի համաձայն՝

«1. Տուժողը, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի՝

1) ծանոթանալ առաջադրված մեղադրանքին.

2) տալ ցուցմունքներ.

3) տալ բացատրություններ.

4) ներկայացնել նյութեր քրեական գործին կցելու և հետա-

զոտելու համար.

5) հայտնել բացարկներ.

6) հարուցել միջնորդություններ.

7) առարկել քրեական վարույթն իրականացնող մարմինների գործողությունների դեմ և պահանջել իր առարկությունները մտցնել քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրության մեջ.

8) ծանոթանալ քննչական և այլ դատավարական գործողությունների արձանագրություններին, որոնց նա մասնակցել է, և դիտողություններ ներկայացնել արձանագրությունում գրառումների ճշտության և լրիվության կապակցությամբ, քննչական և այլ դատավարական գործողությանը մասնակցելու, դատարանի նիստին ներկա գտնվելու դեպքում պահանջել նշված գործողության կամ դատարանի նիստի արձանագրության մեջ գրառումներ կատարել այն հանգամանքների մասին, որոնք, իր կարծիքով, պետք է նշվեն, ծանոթանալ դատական նիստի արձանագրությանը և ներկայացնել դրա մասին իր դիտողությունները.

9) նախաքննության ավարտման պահից ծանոթանալ գործի բոլոր նյութերին, դրանցից պատճեններ հանել և գործից դուրս գրել ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություններ.

10) մասնակցել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նիստերին.

11) իր խնդրանքով անվճար ստանալ քրեական գործը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումների պատճենները, մեղադրական եզրակացության կամ եզրափակիչ որոշման պատճենը, ինչպես նաև դատավճռի կամ դատարանի՝ այլ վերջնական որոշման պատճենը.

12) բողոքարկել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի գործողությունները և որոշումները, այդ թվում՝ դատավճիռը և դատարանի այլ վերջնական որոշումը.

13) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում հաշտվել կասկածյալի և մեղադրյալի հետ.

14) առարկություններ ներկայացնել դատավճռի կամ դատարանի՝ այլ վերջնական որոշման դեմ բերված դատավարության այլ մասնակիցների բողոքների վերաբերյալ.

15) օրենքով սահմանված կարգով ստանալ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառված վնասի փոխհատուցումը.

16) ստանալ քրեական գործով վարույթի ընթացքում կրած ծախսերի հատուցումը.

17) հետ ստանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից որպես իրեղեն ապացույց կամ այլ հիմքերով վերցված գույքը, իրեն պատկանող պաշտոնական փաստաթղթերի բնօրինակները.

18) ունենալ ներկայացուցիչ և դադարեցնել ներկայացուցչի լիազորությունները:

2. Տուժողը պարտավոր է՝

1) ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով.

2) քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով տալ ցուցմունքներ.

3) քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ներկայացնել իր մոտ եղած առարկաները, փաստաթղթերը, ինչպես նաև նմուշները՝ համեմատական հետազոտման համար.

4) իր նկատմամբ ենթադրաբար կատարված հանցագործու-

թյան մասին քրեական գործով քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել քննման.

5) *քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել արտահիվանդանոցային փորձաքննության՝ ստուգելու համար քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու նրա ունակությունը, եթե հիմքեր կան կասկածի տակ դնելու նրա մոտ այդպիսի ունակության առկայությունը.*

6) *ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի իրավաչափ կարգադրություններին.*

7) *դատարանի նիստում պահպանել կարգուկանոն:*

3. *Տուժողն ունի նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներ և պարտականություններ:*

4. *Տուժողն իրեն պատկանող իրավունքներից օգտվում և իր վրա դրված պարտականությունները կատարում է անձամբ կամ ներկայացուցչի միջոցով, եթե դա համապատասխանում է համապատասխան իրավունքների և պարտականությունների բնույթին: Անչափահաս կամ անգործունակ տուժողի իրավունքները սույն օրենսգրքով սահմանված կարգով նրա փոխարեն իրականացնում է նրա օրինական ներկայացուցիչը:*

5. *Տուժող կարող է ճանաչվել իրավաբանական անձը, որին հանցագործությամբ պատճառվել է բարոյական կամ նյութական վնաս: Տվյալ դեպքում տուժողի իրավունքները և պարտականություններն իրականացնում է իրավաբանական անձի ներկայացուցիչը»:*

Ինչ վերաբերում է դատավարության ընթացքում տուժողի հետ հաղորդակցման կարգին ու պայմաններին, ապա նախ՝ ՔԴՕ-ի 329-րդ հոդվածով սահմանված կարգով նախագահո-

ղը տուժողին բացատրում է վերը նշված հոդվածով նախատեսված նրա իրավունքները և պարտականությունները՝ դատական քննության ժամանակ, իսկ վերջինիս հարցաքննությունը ՔԴՕ-ի 343-րդ հոդվածի համաձայն՝ իրականացվում է վկայի հարցաքննության համար սահմանված կանոններով:

Հարկ է նկատի ունենալ, որ թե՛ իրավական պատշաճ մշակույթի, դատավարության մատչելիության և թե՛ հոգեբանական տեսանկյունից՝ միանգամայն արդարացված է մինչև բուն հարցաքննությանն անցնելը, տուժողին վերջինիս քրեադատավարական կարգավիճակի հստակեցումը՝ նրա իրավունքները և պարտականությունները բացատրելով: Այստեղ անհրաժեշտ է առանձնացնել երկու կարևոր հանգամանք. նախ՝ տուժողին բացատրվում են նրա իրավունքների ու պարտականությունների ողջ ծավալը, այլ ոչ թե միայն դատարանում հարցաքննվելու պարտականությունը, ապա նախագահողը ոչ թե լոկ թվարկում կամ ներկայացնում է տուժողի իրավունքներն ու պարտականությունները, այլև բացարտում է, ինչը նշանակում է՝ ըստ անհրաժեշտության, նախագահողը պարզաբանում, մեկնաբանում է առանձին դրույթներ, որոնք տուժողի համար կարող են որևէ կերպ անհասկանալի կամ դժվար ըմբռնելի լինել:

Ուստի անհրաժեշտ է, որպեսզի նախագահողը հավաստիանա, որ տուժողն ամբողջովին ըմբռնել ու հասկացել է իր իրավունքների ու պարտականությունների ողջ ծավալը, որից հետո միայն ձեռնամուխ լինի հարցաքննությանը:

Ինչպես արդեն նշել ենք, ՔԴՕ-ի 343-րդ հոդվածի համաձայն՝ տուժողի հարցաքննությունը կատարվում է վկայի հարցաքննության համար սահմանված կարգով: Դա պայմանավորված է նրանց միջև առկա ընդհանրություններով. երկուսն էլ իրենց ցուցմունքներում հիմնվում են գործի փաստական հանգամանքների վրա, երկուսն էլ քրեական դատավարությու-

նում անփոխարինելի սուբյեկտներ են և պարտավոր են ճիշտ ցուցմունքներ տալ:

Սակայն հարցաքննության տեխնոլոգիայի տեսանկյունից՝ տուժողի հարցաքննությունն էականորեն տարբերվում է վկայի հարցաքննությունից:

Դա պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

■ Տուժողն անմիջականորեն առնչվում է հանցագործության կամ հանցանք կատարած անձի հետ: Որպես կանոն, վերջինս ականատես է լինում դեպքին, հետևաբար, նրա ցուցմունքներն առավել ամբողջական են և հնարավորություն են տալիս նախագահողին ստուգել հնարավոր դատական վարկածները: Այնուամենայնիվ, չի կարելի տուժողի ցուցմունքներին նախապատվություն տալ, քանի որ քրեական դատավարությունում ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի (ՔԴՕ-ի 25-րդ հոդված): Նախագահողը չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերի տուժողի ցուցմունքներին, չպետք է դրանց առավել նշանակություն տա՝ մինչև պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում դրանց հետազոտումը: Տուժողի՝ գործի ելքով շահագրգռվածությունը հարցաքննության ընթացքում ունի երկակի նշանակություն՝ դրական և բացասական: Հիմնականում տուժողի շահերը համընկնում են դատական քննության շահերի հետ, այն է՝ հանցագործության ամբողջական բացահայտում, հանցանք կատարած անձանց պատժում և արդարության վերականգնում: Սակայն, մյուս կողմից, պետք է նկատի ունենալ, որ տուժողը գործով շահագրգռված մասնակից է, հետևաբար, նրա ցուցմունքները կարող են լինել հուզական և ոչ օբյեկտիվ կամ չափազանցված: Սակայն շահագրգռվածությունն ինքնին հիմք չէ տուժողի ցուցմունքները ոչ հավաստի համարելու և դրանք մերժելու համար:

■ Ցուցմունք տալը տուժողի ոչ միայն իրավունքն է, այլ նաև պարտականությունը: Հարցաքննության ընթացքում տուժողը կարող է դուրս գալ նախագահողի հարցերի շրջանակից, ներկայացնել սեփական կարծիքը, համապատասխան հետևու-

թյուններ անել: Նախագահողը հստակորեն պետք է սահմանազատի իրական փաստերը տուժողի ենթադրություններից: Սակայն այդ ենթադրությունները նույնպես պետք է մանրամասն ստուգվեն և դրանց հիման վրա առաջ քաշվեն հնարավոր բոլոր վարկածները:

■ Ի տարբերություն վկայի՝ տուժողը քրեական դատավարությունում օժտված է ավելի լայն իրավունքներով: Վերջինս իրավունք ունի ցանկացած պահի տալ ցուցմունքներ, քրեական գործին կցելու և հետազոտելու համար ներկայացնել նյութեր, ծանոթանալ քննչական և դատավարական գործողությունների արձանագրություններին, հարուցել միջնորդություններ և այլն:

■ Պետք է նկատի ունենալ տուժողի հոգեկան վիճակը դեպքն ընկալելու պահին (վախ, հուզմունք, տառապանք և այլն), որը խանգարում է նրան հավաստի տեղեկություններ հաղորդել:

Հաճախ, հանդիսանալով հանցավոր գործողությունների թիրախ, տուժողը ենթարկվում է ուժեղ սթրեսի կամ նույնիսկ հոգեբանական տրավմայի: Հոգետրավման բացառիկ սթրեսային և արտասովոր կյանքի փորձ է, որն առաջ է բերում ֆիզիկական և հոգեբանական դրսևորումների լայն շրջանակ: Այն միշտ ունի ուժեղ բացասական իմաստ և կարող է ունենալ տարբեր ազդեցություն տարբեր անձանց վրա: Հոգետրավմատիկ իրողությունն իր կործանիչ ինտենսիվությամբ շարքից հանում է մարդու հոգեկան պաշտպանական մեխանիզմները և նշանակալից վնասներ է հասցնում նրա կենսագործունեությանը:

Սովորաբար հոգեբանական տրավմայի հանգեցնող իրադարձություններն իրենց էությամբ այնչափ անսպասելի և անկանխատեսելի են, որ մարդու մինչ այդ արդյունավետ գործող հոգեբանական մեխանիզմները բավարար չեն մշակելու տվյալ փորձը: Մարդը չի կարողանում բավարար չափով հասկանալ և իմաստավորել տեղի ունեցածը, այն, ասես, «չի տեղավորվում նրա ուղեղում»: Հաճախ մարդը դժվարանում է իր ապ-

րումները բառերի վերածել և համարում է, որ այն, ինչ տեղի է ունենում, երազ է:

Նման ապակողմնորոշվածության պատճառն այն է, որ մարդու՝ փոքրուց ձևավորված հիմնարար համոզմունքները կարճ ժամանակում փլուզվում են: Որպես կանոն, հոգետրավմատիկ իրողությունը հիմնովին խաթարում է մարդու հավատն աշխարհի և մարդկանց բարյացակամության նկատմամբ, արժեզրկում է աշխարհի և կյանքի իմաստավորվածության, ինչպես նաև մարդկային էակի անգնահատելիության գաղափարը: Այլևս կյանքը կանխատեսելի և վերահսկելի չէ, իսկ «ճիշտն» ու «սխալը» դադարում են լինել մարդու համար հասկանալի և տարբերակելի: Արդյունքում, մարդը կորցնում է վստահությունն այլոց, ապագայի և ինքն իր նկատմամբ:

Որպես հոգետրավմայի դրսևորում, ի թիվս այլ հատկանիշների, կարելի է առանձնացնել հիմնարար համոզմունքները պահպանելու համար տրավմատիկ փորձի արտամղումը գիտակցությունից (մոռացում), ինչն էապես խանգարում է հանգամանքների բացահայտմանը:

Բացի դրանից, հոգետրավմատիկ ազդեցության ենթարկվելիս հաճախ խախտվում է մարդու՝ սեփական կոմպետենտության և ինքնավերահսկողության զգացողությունը. նրա մոտ կարող է ձևավորվել *սովորած կամ վարժված անօգնականություն (learned helplessness)*, երբ ճնշվածության և հոգեկան կոտրվածության արդյունքում մարդն այլևս դադարում է պայքարել և «հաշտվում» է իրողության հետ՝ նույնիսկ անտեսելով հնարավոր ելքերը և լուծումները: Սա անձի *զոհականացման* երևույթն է, որը հանգեցնում է կայուն և բարդ անձնային փոփոխությունների՝ պասիվություն, դեպրեսիվություն, թերարժեքության բարդույթ, ինքնամեղադրանք, սուիցիդալ վարք և այլն: Որպես նշված վիճակի գերփոխհատուցման միջոց՝ անձը կարող է նաև ստանձնել ագրեսորի դեր՝ հաղթահարելու տագնապը և անօգնականությունը:

Ելնելով տրավմատիզացիայի նշված յուրահատկություններից՝ նման անձանց հարցաքննությունը պետք է իրականացվի

հնարավորինս անվնաս և զգույշ՝ մի կողմից, չառաջացնելու անցանկալի վերատրավմատիզացիա, մյուս կողմից՝ նպաստելու պաշտպանական մոռացման ենթարկված տեղեկությունների վերհիշմանն ու վերարտադրությանը:

Հարցաքննողի խոսքը պետք է կառուցվի ապրումակցման հենքով, առանց քննադատականության, ճնշման կամ անհամբերության, քանի որ նման դրսևորումներն ուղղակիորեն կարող են գործարկել տուժողի պաշտպանական մեխանիզմները, ինչի արդյունքում նա ավելի կներփակվի և դուրս կգա հոգեբանական հարմարավետ շփումից:

Ճշգրտող հարցերը կարևոր է սկսել փորձող նախաբանով՝ *«Եթե ես Ձեզ ճիշտ հասկացա...», «Կարծես, Դուք ուզում եք ասել, որ...», «Ոնց հասկացա, այդ իրավիճակում Դուք...»* և այլն: Սա թույլ է տալիս իջեցնել տուժողի անապահովության զգացումը և թուլացնել պաշտպանական դիմադրությունը:

Վերատրավմատիզացիայի ցուցիչների *(դող, ապակողմնորոշվածություն, ուժեղ տագնապի կամ վախի դրսևորում, ագրեսիա, անադեկվատ ծիծաղ կամ լաց, ինտենսիվ քրտնարտադրություն կամ ֆիզիկական վատ ինքնազգացողություն և այլն)* ի հայտ գալուն պես հարցաքննությունը նպատակահարմար է անմիջապես դադարեցնել:

Հարցաքննության ընթացքում հոգեբանական հարմարավետ շփման պահպանմանը նպաստում է հարցաքննվողի խոսքի տեմպի և երանգավորման փոխառումը և հայելային շարժումների կիրառումը (սա օգտակար է ցանկացած հաղորդակցման համար, սակայն առանձնակի կարևոր է տրավմատիզացված տուժողների հետ աշխատանքում):

Կարևոր է հիշել նաև, որ տրավմատիկ փորձառությամբ անցած մարդկանց՝ հոգեկան լարվածությանը դիմակայելու հնարավորությունները, որպես կանոն, էականորեն նվազած են: Հետևապես, հարցաքննությունը պլանավորելիս անհրաժեշտ է նաև հաշվի առնել այն, որ հարցաքննվողին գուցե անհրաժեշտ լինեն ընդմիջումներ, իսկ երկարատև հարցաքննությունը նույնիսկ կարող է անհնար լինել: Նույն պատճառով երկարաշունչ

և բարդ նախադասությունները կարող են ուղղակիորեն անհասկանալի կամ անընմբռնելի լինել անձի համար, ուստի հարցերը պետք է լինեն հստակ և լակոնիկ:

Որպես տուժողի հետ արդյունավետ շփման կառուցման նախապայման, ինչպես և մյուս դեպքերում, հանդես է գալիս հարցաքննողի անաչառ և ոչ կանխակալ վերաբերմունքը: Առավել սպասելի դիրքորոշումները տուժողի նկատմամբ վերաբերվում են նրան խղճալուն կամ չափազանց կարեկցելուն: Ընդհանրապես, հանցագործության զոհի հետ առնչվելիս հաճախ ակտիվանում է «փրկչի» ենթագիտակցական դերը, որը կարող է խանգարել հարցաքննությանը: Դա կարող է դրսևորվել հետևյալ ձևերով. հարցաքննողը կարող է չգիտակցելով որոշակի իմաստով ուղղորդել տուժողի պատասխանները՝ դրանք նրա համար ավելի շահեկան դարձնելու նպատակով, տուժողի իրավիճակը հեշտացնելու միտումով հարցաքննողը կարող է մտածված կամ անգիտակցաբար խուսափել որոշակի թեմաների վերաբեյալ ծավալվելուց, տուժողի հոգեբանական հարմարավետությունն ապահովելու համար հարցաքննողը կարող է որոշակի պրոտեկցիոնիզմ դրսևորել իր վարքում և այլն:

Հնարավոր է նաև, սակայն, տուժողի նկատմամբ ուղիղ հակառակ հուզական վերաբերմունքը՝ բարկության, արհամարհանքի կամ սառնության տեսքով, ինչը հաճախ պաշտպանական մեխանիզմի ցուցիչ է՝ չզգալու և չվերապրելու տուժողի իրավիճակի հետ կապված ուժեղ բացասական հույզերը: Սրա հետևանքները նույնպես խիստ անցանկալի են, քանի որ կարող են հանգեցնել տուժողի հետ հոգեբանական վստահելի շփման կորստին և նրա վերատրավմատիզացիային: Հաճախ, լսելով տուժողից իր հետ կատարվածի մանրամասները, հարցաքննողը կարող է մեխանիկորեն չհավատալ ասվածին, գնահատել ասվածը չափազանցված կամ հորինված, ներքուստ մեղադրել տուժողին հուզական լինելու համար: Նման դրսևորումները նույնպես պաշտպանական են և միտված են իջեցնելու լսվածի հուզական ազդեցության չափը՝ արհեստականորեն քչացնելով դրա արժանահավատության աստիճանը: Ակնհայտ

է, որ նման ենթագիտակցական աղճատումը հստակ խոչընդոտ է ինչպես տուժողի հետ հաղորդակցման, այնպես էլ հարցաքննության արդյունավետության համար:

Նշված ենթագիտակցական վերաբերմունքների և դիրքորոշումների անցանկալի հետևանքներից խուսափելու համար անհրաժեշտ է, որպեսզի հարցաքննողն որքան հնարավոր է շուտ նույնականացնի իր հույզերն ու ավտոմատիկ մտքերը՝ կապված տուժողի և նրա պատմության հետ, ինչպես նաև հստակորեն գիտակցի սեփական վերաբերմունքի և տուժողի հոգեվիճակի միջև առկա սահմանը: Նա պետք է ինքն իրեն հիշեցնի, որ դա դժվար փորձառություն է, սակայն որը իրենը չէ, ուրիշինն է, և լավագույնը, ինչ նա կարող է անել տուժողի համար՝ քննության արդյունավետ գործընթացին նպաստելն է՝ գրագետ և անվնաս հարցաքննություն իրականացնելու միջոցով:

Թեմա 3.

Հաղորդակցում մեղադրյալների/ամբաստանյալների հետ

Քրեական արդարադատության համակարգում առանցքային դերակատարություն ունի ամբաստանյալի հետ հաղորդակցման արդյունավետ կազմակերպումը:

ՔԴՕ-ի 328-րդ հոդվածի համաձայն՝ նախագահողն ամբաստանյալին բացատրում է սույն օրենսգրքի 65-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև նրա իրավունքները սույն օրենսգրքի 314.2-րդ հոդվածի վեցերորդ մասով նախատեսված կարգով դատական սանկցիա կիրառելու դեպքում:

ՔԴՕ-ի 334-րդ հոդվածը սահմանում է.

«1. Նախագահողն ամբաստանյալին պարզաբանում է նրան ներկայացված մեղադրանքի էությունը, արարքի իրավաբանական որակումը, նրան ներկայացված քաղաքացիական հայցի հիմքերը և չափը: Մի քանի ամբաստանյալի առկայության դեպքում նման պարզաբանում տրվում է նրանցից յուրաքանչյուրին:

2. Նախագահողն ամբաստանյալներից յուրաքանչյուրին հարցնում է, թե նա արդյոք իրեն ճանաչում է մեղավոր և կոնկրետ ինչում: Ամբաստանյալին պետք է պարզաբանվի, որ նա կաշկանդված չէ նախաքննության ընթացքում մեղքն ընդունելու կամ չընդունելու վերաբերյալ արված հայտարարությամբ, պարտավոր չէ պատասխանել առաջադրված հարցերին և, որ պատասխանելուց հրաժարվելը չի կարող մեկնաբանվել ի վնաս նրա:

3. Նախագահողը հարցնում է ամբաստանյալին, թե նա լրիվ կամ մասնակի ընդունում է արդյոք իրեն ներկայացված քա-

ղաքացիական հայցը: Եթե ամբաստանյալը պատասխանում է այս հարցին, նա իրավունք ունի պատճառաբանել այն:

4. *Կողմերն իրավունք ունեն ամբաստանյալին տալ այնպիսի հարցեր, որոնք ուղղված են ամբաստանյալի դիրքորոշումը ճշտելուն»:*

Իսկ ամբաստանյալի հարցաքննության կարգը նախատեսված է ՔԴՕ-ի 336-րդ հոդվածով, համաձայն որի՝

«1. Նախագահողն ամբաստանյալին առաջարկում է ցուցմունք տալ նրան առաջադրված մեղադրանքի և գործի այլ հանգամանքների մասին: Ամբաստանյալին պարզաբանվում է, որ նա իրավունք ունի ցուցմունքներ չտալ, և դա չի կարող մեկնաբանվել ի վնաս նրա:

2. *Ամբաստանյալի կողմից ցուցմունքներ տալուց հետո նրան սկզբից հարցաքննում է իր պաշտպանը, մյուս ամբաստանյալները և նրանց պաշտպանները, քաղաքացիական պատասխանողը և նրա ներկայացուցիչը, իսկ հետո՝ մեղադրողը, տուժողը, քաղաքացիական հայցվորը և նրա ներկայացուցիչը:*

3. *Դատավորն ամբաստանյալին հարցեր է տալիս սույն հոդվածի երկրորդ մասում նշված անձանց կողմից նրան հարցաքննելուց հետո: Ամբաստանյալին վերջում հարցեր տալու իրավունքը բոլոր դեպքերում վերապահված է իր պաշտպանին:*

4. *Նախագահողը հանում է այն հարցերը, որոնք չեն առնչվում գործին:*

5. *Ամբաստանյալը նախագահողի թույլտվությամբ իրավունք ունի ապացույցներից յուրաքանչյուրը հետազոտելիս ցանկացած պահի տալ ցուցմունքներ:*

6. *Հարցաքննվելիս ամբաստանյալն իրավունք ունի օգտվել նշումներից, փաստաթղթերից:*

7. Ամբաստանյալի կողմից իր ցուցմունքներին վերաբերող նշումները և փաստաթղթերը կարդալուց հետո փաստաթղթերը դատարանի պահանջով, իսկ նշումները՝ ամբաստանյալի ցանկությամբ ներկայացվում են դատարան՝ գործին կցելու համար:

8. Ամբաստանյալին հարցաքննելիս կողմերը և դատարանը կարող են ներկայացնել գործին կցված կամ կողմի մոտ եղած առարկաներ կամ փաստաթղթեր: Կողմերն իրավունք ունեն միջնորդություններ անել այդ փաստաթղթերը հրապարակելու և գործին կցելու մասին: Կողմերը և դատարանն իրավունք ունեն ամբաստանյալին տալ հարցեր, որոնք կապված են նրան ներկայացված առարկաների և փաստաթղթերի հետ: Դատական նիստի արձանագրության մեջ պետք է նշվի, թե ամբաստանյալին հարցաքննելիս ինչպիսի առարկաներ, փաստաթղթեր են ներկայացվել և ում կողմից:

9. Բացառիկ դեպքերում, երբ դա անհրաժեշտ է գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, դատարանի պատճառաբանված որոշմամբ ամբաստանյալը կարող է հարցաքննվել մյուս ամբաստանյալի բացակայությամբ: Դատական դահլիճ ամբաստանյալի վերադառնալուց հետո նրա համար ընթերցվում են դատական նիստի արձանագրության մեջ ընդգրկված, նրա բացակայությամբ հարցաքննված ամբաստանյալի ցուցմունքները, և նրան հնարավորություն է ընձեռվում անհրաժեշտ ցուցմունքներ և հարցեր տալ իր բացակայությամբ հարցաքննված ամբաստանյալին»:

ՔԴՕ-ի 337-րդ հոդվածը սահմանում է մեղադրյալի, ամբաստանյալի ցուցմունքների հրապարակման կարգը, որի համաձայն՝

«1. Նախաքննության ընթացքում մեղադրյալի տված ցուցմունքների, նախորդ դատական քննության ընթացքում կամ տվյալ դատական քննության ընթացքում ամբաստանյալի

տված նախորդ ցուցմունքների հրապարակումը, ինչպես նաև այդ ցուցմունքների ձայնագրառումների վերարտադրումը թույլատրվում է, եթե՝

1) ամբաստանյալը հրաժարվում է դատական քննության ժամանակ ցուցմունքներ տալ մեղադրանքի էության մասին.

2) էական հակասություններ կան դատական քննության ընթացքում տված ցուցմունքների և նախորդ ցուցմունքների միջև: Այս դեպքում ամբաստանյալի ցուցմունքների հրապարակումը հնարավոր է միայն ամբաստանյալի կողմից ցուցմունքներ տալուց և առաջադրված հարցերին պատասխանելուց հետո:

2. Չի թույլատրվում ցուցմունքների ձայնագրառման վերարտադրությունն առանց նախապես հրապարակելու մեղադրյալի, ամբաստանյալի այն ցուցմունքները, որոնք պարունակվում են համապատասխան հարցաքննության արձանագրությունում կամ դատական նիստի արձանագրությունում»:

Ինչ վերաբերում է դատապարտյալին, ապա ՔԴՕ-ի 338-րդ հոդվածի համաձայն՝ դատաքննության ընթացքում դատապարտյալը հարցաքննվում է իր նկատմամբ կայացված և օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված հանգամանքների շուրջ՝ ամբաստանյալի հարցաքննության համար՝ սույն օրենսգրքով սահմանված կանոններով:

Մեղադրյալի և ամբաստանյալի հարցաքննության ընդհանուր տեխնոլոգիական պայմանների տեսանկյունից՝ ընդհանուր պայմանները նույնական են հարցաքննության բոլոր տեսակների համար: Այնուամենայնիվ, հիմք ընդունելով մեղադրյալի և ամբաստանյալի հարցաքննության իրադրությունը՝ կարելի է վերջիններիս հարցաքննության տակտիկական հնարքները դասակարգել երկու հիմնական խմբի.

1. Մեղադրյալի և ամբաստանյալի հարցաքննությունը *կոնֆլիկտային իրադրության* պայմաններում, երբ վերջիններս հրաժարվում են ցուցմունք տալուց կամ տալիս են ամբողջությամբ ոչ ճշմարիտ կամ մասնակի ճշմարիտ ցուցմունքներ:

2. Մեղադրյալի և ամբաստանյալի հարցաքննությունը *ոչ կոնֆլիկտային իրադրության* պայմաններում, երբ վերջիններս տալիս են ճշմարիտ ցուցմունքներ, ակտիվորեն օժանդակում են քննությանը:

Առաջին դեպքում հարցաքննության տեխնոլոգիան նպատակաուղղված է մեղադրյալի, ամբաստանյալի մոտ ցուցմունք (ընդ որում՝ օբյեկտիվ) տալու ցանկություն, մտադրություն առաջացնելուն, իսկ երկրորդ դեպքում՝ հիմնականում ստուգելու տրվող ցուցմունքների իրականությանը համապատասխանությանը:

Սակայն պետք է հիշել, որ մեղադրյալը և ամբաստանյալն իրենց հատուկ քրեադատավարական կարգավիճակի և հատուկ հոգեբանական վիճակի (պաշտպանական դոմինանտի) պատճառով առավելապես հակված են սուտ ցուցմունքներ տալու:

Սուտ ցուցմունքների հիմնական պատճառը քննության ընթացքի և արդյունքների մեջ հարցաքննվողի շահագրգռվածությունն է:

Հարկ է նկատել, որ վերը նշված սուբյեկտների կողմից սուտ ցուցմունքներ տալու շարժառիթների շարքում հաճախ հանդիպում են հետևյալները՝

- *հանցագործության կատարման մեջ բացահայտվելու վախը,*
- *քրեական պատասխանատվության ենթարկվելու վախը,*
- *որոշակի խմբի կողմից «դավաճան» ընդունվելու վախը,*
- *բարոյական դատապարտման վախը,*
- *կատարածի համար ամոթի զգացումը,*

- *կյանքի ինտիմ կողմերը թաքցնելու ձգտումը,*
- *և այլն:*

Եթե շարժառիթների համակարգի մեջ ընդգրկվող վերը նշված հանգամանքները դրդում են մեղադրյալին սուտ ցուցմունքներ տալ, ապա միևնույն ժամանակ հարկ է նշել, որ գոյություն ունեն այնպիսի դրդապատճառներ, որոնք մղում են ինքնախոստովանության, գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու ձգտման և այլն:

Մեղադրյալի ցուցմունքների և վարքագծի վրա էական ազդեցություն է ունենում վերջինիս հուզական վիճակը, զգացմունքները:

Որպես դրդապատճառ կարող են հանդես գալ նաև բարձր բարոյական զգացմունքները, որոնք կապված են հարցաքննվողի կողմից իր վարքագծին տրվող բարոյական գնահատականի հետ: Երբ մեղադրյալը հասկանում է իր արարքների անհամապատասխանությունը հասարակության բարոյական պահանջներին, նրա մոտ արթնանում և վարքագծի վրա ներգործում են հասարակական պարտքի, ազնվության, պատվի և անձնական արժանապատվության և այլ ապրումներ, որոնք միասին կոչվում են «խղճի խայթ»[26]:

Տարաբնույթ դրդապատճառները մարդու գիտակցության մեջ պայքարում են միմյանց հետ, որն էլ հաճախ հանգեցնում է ներքին կոնֆլիկտի: Որևէ խումբ պատճառների գերակայությունը պայմանավորված է նախևառաջ մեղադրյալի աշխարհայացքով, իրավագիտակցության մակարդակով, բարոյական-կամային հատկություններով, անձնական հետաքրքրություններով, դիրքորոշմամբ և այլն: Դրդապատճառների այդ անվերջ հակադրությանը հարցերի միջոցով կարող է ներազդել նաև նախագահողը՝ ապահովելով այն դրդապատճառների գերակայությունը, որոնք մղում են հարցաքննվողին ասել ճշմարտությունը:

[26] Տե՛ս ***Ратинов А. Р.***, Судебная психология для следователей, М., 2001, էջ 236:

Այս դեպքում քրեական գործում առկա տեղեկությունների, բնութագրերի ուսումնասիրության հիման վրա նրա, անձը դրականորեն բնութագրող հատկանիշների օգտագործմամբ, նախագահողը կարող է ներքին հոգեբանական կոնֆլիկտի լուծմանը նպաստել գործով ճշմարտության բացահայտման տեսանկյունից:

Առավել բարդ և դժվար տարբերվող շարժառիթների համակարգով են օժտված սուտ ցուցմունքները, որոնցով ամբաստանյալը հանցագործության կատարման մեջ մեղավոր է ճանաչում իրեն (ինքնազրպարտություն) կամ մեղադրում է մեկ ուրիշին (զրպարտություն):

Ինքնազրպարտության դրդապատճառները բազմազան են: Հաճախ գերիշխող բնույթ է կրում դրդապատճառների այն խումբը, որն ուղղված է վարույթն իրականացնող մարմնից որևէ օգուտ ստանալուն, մասնավորապես, վարույթն իրականացնող մարմինը կարող է տալ իրական կամ սուտ խոստումներ՝ խափանման միջոցը փոխելու, կալանքի տակ պահելու պայմանները լավացնելու, պատժի փոխարեն հասարակական ներգործության այլ միջոցներ կիրառելու մասին և այլն:

Ինքնազրպարտության դրդապատճառ կարող է լինել նաև իրական հանցագործին քրեական պատասխանատվությունից ազատելու ձգտումը, որը ձևավորվում է որոշակի բարեկամական կամ ընկերական զգացումների կամ կապերի հիման վրա, այն կարող է պայմանավորված լինել որոշակի մարգինալ խմբային հետաքրքրություններով (օրինակ՝ ռեցիդիվային հանցագործների մոտ):

Ամբաստանյալի եսասիրական հատկությունները նույնպես կարող են ինքնազրպարտության դրդապատճառ դառնալ: Մասնավորապես՝ թեթև ծանրության հանցագործության կատարման մասին ինքնազրպարտությամբ վերջինս կարող է նպատակ ունենալ խույս տալու ավելի ծանր հանցագործության համար նախատեսված պատժից: Ավելին՝ հնարավոր են դեպքեր, երբ ինքնազրպարտությունը պայմանավորված է եղել նախաքննության կամ դատական քննության անհարկի

ձգձգումներով: Նման եղանակով մեղադրյալը, ամբաստանյալը, կորցնելով իր անմեղության ապացուցման հույսը, փորձել է դուրս գալ ստեղծված անորոշ վիճակից:

Այս և նմանատիպ այլ դրդապատճառները կարող են մղել նաև ուրիշի զրպարտությանը:

Հարկ է նաև նշել, որ ինքնազրպարտության դրդապատճառների ձևավորման վրա նպաստավոր ազդեցություն է թողնում հարցաքննության ընթացքում վախը և այլն: Վախը ոչ միայն բացասաբար է ազդում հիշողության վրա, այլև հյուծիչ ազդեցություն է ունենում մարդու ամբողջ հոգեբանության վրա: Այն հաճախ թուլացնում է մարդու կամքը, բարոյական ինքնավերահսկողությունը, ինքնաքննադատության ունակությունը, խոչընդոտում է իրադրության ճիշտ գնահատմանը:

Ազատությունից զրկելը նույնպես հոգեբանական մեծ ազդեցություն է գործում մեղադրյալի վրա: Սովորական միկրոսոցիալական միջավայրից դուրս բերելը, կյանքի նորմալ, բնականոն ընթացքի փոփոխությունը, ֆիզիկական և հոգեբանական տառապանքներն էական բացասական ազդեցություն են թողնում վերջինիս վրա:

Վերը նշված հանգամանքներն էական ազդեցություն են թողնում ինչպես ինքնազրպարտման, այնպես էլ սուտ ցուցմունքներ տալու գործընթացի վրա: Այդ հանգամանքներով և հոգեբանական մյուս գործընթացներով պայմանավորված, կրիմինալիստիկական տակտիկայի կողմից մշակվել են ստի կանխարգելման, հայտնաբերման և բացահայտման տարաբնույթ հնարքներ:

Խոսելով ստի մասին՝ անհրաժեշտ է նշել, որ այն, լինելով դատողության տարատեսակ, ենթարկվում է որոշակի տրամաբանական օրինաչափությունների:

Գոյություն ունեն ստի տարբեր տեսակներ: Կան սուտ ցուցմունքներ, որոնք ամբողջովին բաղկացած են հորինվածքից: Նման ցուցմունքները պրակտիկայում քիչ են հանդիպում, որովհետև բավականին դյուրին են բացահայտվում: Հարցաքննողն առավելապես գործ ունի մասնակի ստից բաղկացած

ցուցմունքների հետ, երբ կասկածյալը կամ մեղադրյալը տեղեկատվությունը մշակում է այն խեղաթյուրելով[27]: Նման դեպքերում սուտ հավաստումները հաճախ ուղղակի կամ անուղղակի հակասության մեջ են մտնում ցուցմունքների այն մասի հետ, որը ճիշտ է արտացոլում իրականությունը:

Այս հանգամանքի կիրառման վրա էլ կառուցված է «լեգենդի թույլտվություն» տակտիկական հնարքը, որի էությունն այն է, որ հարցաքննողը, գիտենալով կամ ենթադրելով, որ անբարեխիղճ հարցաքննվողը տալիս է սուտ ցուցմունքներ, հնարավորություն է տալիս շարադրել դրանք, որպեսզի դրանք հակասության մեջ մտնեն նախկինում տրված ցուցմունքների կամ քրեական գործով հաստատապես հայտնի այլ տվյալների հետ: Այդ ընթացքում հարցաքննողն ուշադրությամբ հետևում է հարցաքննության ընթացքին, հարցաքննվողին ցույց է տալիս, որ հավատում է նրա ասածներին: Նման ձևով ստացված ցուցմունքները գրառվում են արձանագրության մեջ, այնուհետև հարցաքննողը հերքում է «լեգենդը»՝ բացահայտելով սուտը:

Այս ենթատեքստում հարկ է նշել, որ ստի բացահայտման համար կարևոր դեր կարող է ունենալ նախագահողի կողմից ամբաստանյալի կամ այլ անձանց նախաքննական ցուցմունքի կամ դրա վերաբերելի՝ հակասող մասի հրապարակումը, ինչպես նաև այլ ապացույցների ներկայացումը:

Նշենք, որ գոյություն ունեն ստի մերկացման այլ մեթոդներ, հնարքներ, որոնցից մի քանիսին կանդրադառնանք առավել մանրամասն:

- *Անուղղակի հարցման մեթոդ:*

Այս տակտիկական հնարքի էությունը հետևյալն է. հարցաքննվողին տրվում են հարցեր, երբ գլխավոր հարցը քողարկված է, իսկ ուշադրությունը շեղող հարցերը, ընդհակառակը,

[27] Տե՛ս ***Ратинов А. Р.***, Судебная психология для следователей, М., 2001, էջ 247:

ընդգծված են: Քողարկող հարցի պատասխանն անուղղակիորեն պատասխան է նաև քողարկված հարցին:

- *Հարցաքննվողի մոտ նախագահողի իրազեկության որոշակի պատկերացման ձևավորվում:*

Բանն այն է, որ հարցաքննողը հարցաքննության ընթացքում կասկածյալին կամ մեղադրյալին առանձին փաստեր և տվյալներ է հաղորդում, որոնց մասին նախագահողի իրազեկվածությունը հարցաքննվողին բերում են այն համոզման, որ նրան ամեն ինչ, յուրաքանչյուր դետալ հայտնի է:

Այդուհանդերձ, պետք է նշել, որ հարցաքննվողին ստի մեջ մերկացնելը և ընդհանրապես մեղադրյալի հարցաքննության ժամանակ հիմնական տակտիկական հնարքն առկա ապացույցների խելամիտ օգտագործումն է:

Ապացույցների ներկայացման խնդրի կապակցությամբ ներկայացնենք որոշ դրույթներ, որոնք անհրաժեշտ է պահպանել ամբաստանյալին որոշակի գործով ապացույցներ ներկայացնելիս: Մասնավորապես.

- *Ապացույցները պետք է ներկայացնել այն ժամանակ, երբ ամբաստանյալն այդ ապացույցի հետ կապված բոլոր հանգամանքների շուրջ արդեն հարցաքննվել է:*

- *Անհրաժեշտ է ներկայացնել լիովին հավաստի և մանրամասն ստուգված ապացույցներ:*

- *Եթե ամբաստանյալին ներկայացվում է վկայի հարցաքննության ցուցմունքի որևէ հատված, պետք է ճշտել մեղադրյալի և այդ վկայի փոխհարաբերությունների բնույթը:*

Բոլոր դեպքերում, ապացույցների ներկայացումը մեկուսի և ժամանակային մեծ ընդհատումով, որպես կանոն, հոգեբանորեն արդարացված չէ: Ընդհակառակը՝ ապացույցների որոշա-

կի համակցության միաժամանակյա ներկայացումը դրական ելք է ունենում ամբաստանյալի դիրքորոշման փոփոխման և ճիշտ ցուցմունքներ տալու առումով: Որպես կանոն, նախագահողն ապացույցները պետք է օգտագործի որոշակի տրամաբանական հաջորդականությամբ՝ այնպես, որ ամեն հաջորդ փաստը բխի նախորդից և կապված լինի վերջինիս հետ: Ամբաստանյալին ներկայացվող ապացույցների հաջորդականությունը որոշելիս պետք է նկատի ունենալ ապացույցների համակցության մեջ նրանց տեղն ու դերը, ինչպես նաև դրանց փոխադարձ կապը: Նախագահողը ապացույցների համակցության հիման վրա եզրակացություններ է անում երևույթների միջև պատճառական կապի առկայության մասին, որն օգտագործվում է ապացույցների ներկայացման հաջորդականությունը որոշելիս: Յուրաքանչյուր դեպքում ամբաստանյալին ապացույցների ներկայացման հաջորդականությունը որոշելիս քննիչը պետք է հաշվի առնի ապացույցների որոշակի բնույթը, մեղադրյալի անձնական առանձնահատկությունները և այլն:

Հարցաքննության տեխնոլոգիայի տեսանկյունից՝ նպատակահարմար է, որպեսզի նախագահողը նախ ներկայացնի գլխավոր ապացույցը, իսկ հետագայում, անհրաժեշտության դեպքում՝ նաև երկրորդական նշանակություն ունեցող փաստերն ապացուցող տվյալները: Այս հնարքի ճիշտ և գրագետ օգտագործումը, որպես կանոն, հանգեցնում է ամբաստանյալից ճիշտ և հավաստի ցուցմունքների ստացմանը:

Այդպիսով՝ վերոշարադրյալի հիման վրա կարող ենք նշել, որ ցանկացած տեխնոլոգիական հնարք, հիմնվելով հոգեբանության գիտական տվյալներիի վրա, պետք է կիրառվի՝ հաշվի առնելով մեղադրյալի և ամբաստանյալի անհատական հոգեբանական առանձնահատկությունները, միևնույն ժամանակ դրանց կիրառումը պետք է հիմնված լինի քրեական գործով ձեռք բերված ապացույցների համակցության ապացուցողական նշանակության օբյեկտիվ գնահատման վրա:

Կարևոր է շեշտադրել նաև այն, որ հարցաքննողի՝ մեղադրյալի նկատմամբ հնարավոր բացասական դիրքորոշումներն

ու վերաբերմունքը, ունենալով հասկանալի հոգեբանական պատճառներ, այնուամենայնիվ, կարող են էականորեն խոչընդոտել արդյունավետ հարցաքննությանը և նունիսկ այն հասցնել փակուղու: Բացարձակապես առաջնահերթ է, որպեսզի հարցաքննողը պահպանի չեզոքություն իր անձնական գնահատականներում և միտված լինի լոկ ճշմարտության բացահայտմանը և ոչ թե՝ մեղադրյալի վերադաստիարակմանը կամ պատժելուն: Նման վերաբերմունքները չեզոքացնելու համար, ինչպես և մյուս հարցաքննվողների դեպքում, հարցաքննողը պետք է իրականացնի որոշակի ինքնավերլուծական և ինքնավիճարկման աշխատանք՝ հայտնաբերելու և չեզոքացելու մեղադրյալի հանդեպ իր մոտ առկա պիտակները և դիրքորոշումները (հարցադրումները տես վերևում):

Թեմա 4.

Հաղորդակցում իրավաբանների/պաշտպանի և դատավարության մյուս մասնակիցների հետ

ՔԴՕ-ի 73-րդ հոդվածը սահմանում է պաշտպանի կարգավիճակը՝ նախատեսելով նրա իրավունքների ու պարտականությունների շրջանակը.

«1. Պաշտպանը, նպատակ ունենալով պարզելու մեղադրանքը հերքող, կասկածյալի կամ մեղադրյալի պատասխանատվությունը բացառող կամ պատիժը և դատավարական հարկադրանքի միջոցները մեղմացնող հանգամանքները, նրա օրինական շահերը պաշտպանելու, կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար, սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի՝

1) ծանոթանալ առաջադրված մեղադրանքին կամ իմանալ՝ ինչում է կասկածվում պաշտպանյալը, մասնակցել նրա հարցաքննություններին.

2) առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցել իր պաշտպանյալի հետ՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման.

3) քրեական հետապնդման մարմնի առաջարկով մասնակցել իրականացվող քննչական կամ այլ դատավարական գործողություններին, քրեական հետապնդման մարմնի թույլտվությամբ մասնակցել քրեական հետապնդման մարմնի կողմից իր միջնորդությամբ իրականացվող բոլոր քննչական և այլ դատավարական գործողություններին, մասնակցել իր պաշտպանյալի մասնակցությամբ իրականացվող ցանկացած քննչական կամ այլ դատա-

վարական գործողությանը, եթե դա պահանջում է կասկածյալը կամ մեղադրյալը, կամ գործողությունը սկսելիս դրա մասին միջնորդում է ինքը՝ պաշտպանը.

4) կասկածյալին և մեղադրյալին հիշեցնել իրենց իրավունքները, և քննչական կամ այլ դատավարական գործողություն իրականացնող անձի ուշադրությունը հրավիրել նրա կողմից թույլ տրված օրենքի խախտման վրա.

5) քրեական գործով ձեռք բերել նյութեր, դրանք ներկայացնել քրեական գործին կցելու և հետազոտելու համար.

6) հարցման ենթարկել մասնավոր անձանց, ինչպես նաև տարբեր կազմակերպություններից պահանջել տեղեկանքներ, բնութագրեր և այլ փաստաթղթեր, եթե դրանք չեն պարունակում պետական կամ ծառայողական գաղտնիք: Վերջիններս պարտավոր են սահմանված կարգով տրամադրել այդ փաստաթղթերը կամ դրանց պատճենները.

7) պաշտպանյալի համաձայնությամբ հարցնել մասնագետների կարծիքը՝ պարզաբանելու համար իրավաբանական օգնություն ցույց տալու հետ կապված այն հարցերը, որոնք պահանջում են հատուկ գիտելիքներ.

8) հայտնել բացարկներ.

9) հարուցել միջնորդություններ.

10) առարկել քրեական հետապնդման մարմինների գործողությունների դեմ և պահանջել իր առարկությունները մտցնել քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրության մեջ.

11) ծանոթանալ քննչական և այլ դատավարական գործողությունների արձանագրություններին, որոնց նա կամ իր պաշտպանյալը մասնակցել կամ ներկա է գտնվել, դիտողություններ ներկայացնել այն քննչական կամ դատավարական գործողության արձանագրությունում գրառումների ճշտության և լրիվության կապակցությամբ, որին նա մասնակցել է, քննչական և այլ դատավարական գործողությանը, ինչպես նաև դատարանի նիստին մաս-

նակցելու դեպքում պահանջել նշված գործողության կամ դատարանի նիստի արձանագրության մեջ գրառումներ կատարել այն հանգամանքների մասին, որոնք, իր կարծիքով, պետք է նշվեն, ծանոթանալ դատական նիստի արձանագրությանը և ներկայացնել դրա մասին իր դիտողությունները.

12) նախաքննության ավարտման պահից ծանոթանալ գործի բոլոր նյութերին, դրանցից պատճեններ հանել և գործից դուրս գրել ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություն.

13) մասնակցել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նիստերի և գործի նյութերի հետազոտմանը, հանդես գալ ճառով և ռեպլիկով.

14) իր խնդրանքով ստանալ այն որոշումների պատճենները, որոնք իր պաշտպանյալը սույն օրենսգրքով ստանալու իրավունք ունի.

15) բողոքարկել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի գործողությունները և որոշումները, այդ թվում՝ դատավճիռը և դատարանի այլ վերջնական որոշումը.

16) հետ վերցնել իր ներկայացրած ցանկացած բողոք, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի.

17) տուժողի հետ կասկածյալի և մեղադրյալի հաշտվելիս պաշտպանյալի հանձնարարությամբ հանդես գալ նրա անունից.

18) առարկություններ ներկայացնել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից իրեն տեղեկացված կամ այլ հանգամանքների արդյունքում իրեն հայտնի դարձած դատավարության այլ մասնակիցների բողոքների վերաբերյալ.

19) դատարանի նիստում կարծիք հայտնել դատավարության այլ մասնակիցների միջնորդությունների և առաջարկությունների առիթով.

20) բողոքել մյուս կողմի անօրինական գործողությունների դեմ.

21) առարկել նախագահողի անօրինական գործողությունների դեմ.

22) պաշտպանյալի հաշվին, իսկ կասկածյալին կամ մեղադրյալին անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության բյուջեի հաշվին սպանալ վարձատրություն:

2. Պաշտպանն իրավունք չունի կատարել պաշտպանյալի շահերին հակասող որևէ գործողություն: Պաշտպանը չի կարող հակառակ պաշտպանյալի դիրքորոշման՝ ընդունել դեպքի հետ նրա առնչությունը և մեղավորությունը դրա կատարման մեջ: Պաշտպանն իրավունք չունի հրապարակել այն տեղեկությունները, որոնք իրեն հայտնի են դարձել իրավաբանական օգնություն ցույց տալու ընթացքում, եթե դրանք կարող են օգտագործվել պաշտպանյալի շահերի դեմ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

3. Պաշտպանն իրավունք չունի ինքնակամ դադարեցնել իր լիազորությունները որպես այդպիսին, խոչընդոտել այլ պաշտպան հրավիրելուն կամ քրեական գործով վարույթին վերջինիս մասնակցելուն: Պաշտպանն իրավունք չունի քրեական գործով վարույթին մասնակցելու իր լիազորությունները վերավստահել այլ անձի:

4. Պաշտպանն իրավունք չունի առանց պաշտպանյալի հանձնարարության՝

1) հայտարարել հանցանքի կատարման մեջ նրա մեղավորության մասին.

2) հայտարարել տուժողի հետ պաշտպանյալի հաշտվելու մասին.

3) ընդունել քաղաքացիական հայցը.

4) հետ վերցնել պաշտպանյալի ներկայացրած բողոքը:

5. Պաշտպանը պարտավոր է՝

1) կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով.

2) ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի իրավաչափ կարգադրություններին.

3) մինչև ընդմիջում հայտարարելը առանց նախագահողի թույլտվության չլքել դատական նիստերի դահլիճը.

4) դատական նիստում պահպանել կարգուկանոն:

6. Պաշտպանն ունի նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներ»:

Պաշտպանի հետ արդյունավետ հաղորդակցման կազմակերպման կարևորագույն նախադրյալներից է նաև վերջինիս մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, ի տարբերություն դատավարության մյուս մասնակիցների:

Անշուշտ, վերոգրյալն ամենևին էլ չի նսեմացնում հոգեբանական գործոնների, ինչպես նաև մասնագիտական էթիկայի կանոնների պահանջների պահպանման անհրաժեշտությունը:

Արդյունավետ հաղորդակցման ապահովման տեսանկյունից՝ հատկանշական է ԵԴԽԽ-ի թիվ 12 (2009) Կարծիքը, որը նվիրված է դատավորների ու պաշտպանության կողմի փոխհարաբերություններին՝ մասնավորապես սահմանելով, որ.

«58. Դատավորները պետք է կիրառեն քրեական դատավարության կանոնները՝ լիարժեքորեն պահպանելով պաշտպանության կողմի իրավունքները (պաշտպանության կողմին իրավունք վերապահելով օգտվելու իրենց իրավունքներից, ծանուցել նրանց իրենց դեմ հարուցված մեղադրանքի մասին և այլն), դատավարության տուժողների իրավունքները, կողմերի իրավահավասարության սկզբունքը և հրապարակային դատաքննության իրավունքը, այնպես, որ բոլոր դեպքերում երաշխա-

վորվի արդար դատաքննության իրավունքը» (Հոչակագիր, 1-ին, 2-րդ, 6-րդ և 9-րդ պարբերություններ):

59. Քրեական վարույթում առանցքային դեր է խաղում մեղադրանքի ներկայացումը. մեղադրանքի ներկայացման պահից պաշտպանության կողմին գրավոր ծանուցում են հարուցված մեղադրանքի փաստական և իրավական հիմքերի մասին (Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 1989 թվականի դեկտեմբերի 19-ի վճիռ, Կամասինսկին ընդդեմ Ավստրիայի, § 79): Քրեական դատավարության ընթացքում ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ պահանջվող «արդար դատաքննության» իրավունքը ենթադրում է, որ պաշտպանության կողմը պետք է իրավունք ունենա վիճարկելու իրենց դեմ ներկայացված ապացույցները, ինչպես նաև մեղադրանքի իրավական հիմքը:

60. Այն երկրներում, որտեղ հետաքննությունը ղեկավարվում է հանրային դատախազների կողմից, դատախազը նաև պարտականություն ունի ապահովելու պաշտպանության կողմի իրավունքների պահպանումը: Այն երկրներում, որտեղ քրեական հետաքննությունը ղեկավարվում է ոստիկանության կամ այլ իրավապահ մարմինների կողմից, դատավորները հանդես են գալիս որպես անձնական ազատությունների (habeas corpus) երաշխավորներ, մասնավորապես՝ մինչդատական փուլում կալանքի մասով: Դատավորների պարտականությունն է նաև ապահովել, որ պաշտպանության կողմի իրավունքները պահպանվեն:

61. Շատ երկրներում, այնուամենայնիվ, դատավորը և դատախազը պատասխանատու են պաշտպանության կողմի իրավունքի մոնիտորինգի համար միայն, երբ հետաքննությունն ավարտված է, և սկսվում է մեղադրանքի քննության փուլը: Նման դեպքում քննիչների հաշվետվությունները ստացող դատախազի մեղադրանքներն ու հավաքված ապացույցները քննող դատավորի պարտականությունն է՝ ապահովել, որ քրեական հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձ

պատշաճ կերպով, իրեն հասկանալի լեզվով և մանրամասն տեղեկացվի իր դեմ հարուցված մեղադրանքի բնույթի և պատճառի մասին:

62. Կախված որոշակի երկրում իրենց դերից՝ դատախազները և դատավորները պետք է ապահովեն, որ անձը բավարար ժամանակ և նյութատեխնիկական հնարավորություններ ունենա նախապատրաստելու պաշտպանությունը: Հարկ եղած դեպքում պետք է կիրառվեն պաշտոնապես նշանակված փաստաբանի ծառայությունները, որին վճարում է պետությունը: Տվյալ անձի համար հասանելի պետք է լինեն նաև թարգմանչի ծառայություններ: Նա նաև պետք է կարողանա պահանջել, որ որոշակի գործողություններ ձեռնարկվեն, որոնք անհրաժեշտ են ճշմարտությունը վեր հանելու համար:

63. Երբ գործն ուղարկվում է դատարան, դատավորի և դատախազի իրավասությունները սկսում են տարբերվել՝ կախված, թե ինչ լիազորություններ ունեն նրանք դատաքննության ժամանակ: Ցանկացած դեպքում, եթե առկա չէ պաշտպանության կողմի իրավունքների որևէ տարր, ապա դատավորը կամ դատախազը, կամ երկուսը միասին (կախված ազգային համակարգի առանձնահատկություններից) պետք է կարողանան բարձրաձայնել իրավիճակը և օբյեկտիվ լուծում տալ դրան»:

Դատավորների և փաստաբանների հաղորդակցման հիմնախնդիրներին է նվիրված նաև ԵԴԽԽ-ի թիվ 16 (2013) Կարծիքը, որում, մասնավորապես, նշված է.

«10. Դատավորները և փաստաբաններն ունեն մի հիմնարար պարտավորություն, այն է՝ պահպանել արդար դատաքննության ընթացակարգային կանոններն ու սկզբունքները: ԵԴԽԽ-ն այն կարծիքին է, որ դատավորների և փաստաբանների միջև կառուցողական հարաբերությունները կբարելավեն վարույթների որակը և արդյունավետությունը: Սա կնպաստի կողմերի կարիքների բավարարմանը: Դատավարության կողմերն ակնկալում են, որ իրենց և իրենց փաստաբաններին

կլսեն դատաքննության ժամանակ, և որ դատավորներն ու փաստաբանները համատեղ կաշխատեն՝ օրենքի սահմանված կարգով և ողջամիտ ժամկետում իրենց գործին արդար լուծում տալու համար:

…

12. ԵԴԽԽ-ն գտնում է, որ նման օրենսդրությունը պետք է դատավորներին տրամադրի արդյունավետ ընթացակարգային գործիքներ՝ արդար դատաքննության սկզբունքները կիրառելու և անհարկի կամ անօրինական ձգձգումների մարտավարությունները կանխելու համար: Նման օրենսդրությունը պետք է բավարար կայուն լինի և նախատեսի հստակ և ողջամիտ ժամկետներ՝ անհրաժեշտ ճկունություն ապահովելու հետ մեկտեղ:

13. Դատավարական կանոններն առանցքային գործիք են իրավական վեճերի լուծման համար: Դատավարական կանոններով սահմանվում են դատավորների և փաստաբանների համապատասխան գործառույթները: Առանցքային է, որ թե՛ դատավորները և թե՛ փաստաբանները լավ իմանան և հասկանան այդ կանոնները՝ արդար և ողջամիտ ժամկետում վարույթին լուծում տալու համար:

…

15. Գործնականում դատավարական կանոնները, անկախ այն բանից՝ վերաբերում են քաղաքացիական, քրեական, թե վարչական գործերին, հաճախ բարդ են և նախատեսում են տարբեր դատավարական փուլեր և միջանկյալ բողոքարկման հնարավորություններ: Սա կարող է անհարկի ձգձգել գործընթացը և հանգեցնել կողմերի համար՝ մասնավորապես, հասարակության համար՝ ընդհանրապես, բարձր ծախսերի: ԵԴԽԽ-ն խորապես աջակցում է այն ջանքերին, որոնք ուղղված են անդամ պետություններում գործող դատավարական կանոնների վերլուծությանը և գնահատմանը, խրախուսելով անհրաժեշտության դեպքում մշակել առավել թափանցիկ և հա-

մարժեք կանոններ: Թե՛ դատավորների և թե՛ փաստաբանների կողմից միջազգային փորձի փոխանակումը պետք է նպաստի դատավարության ընթացքում «լավագույն գործելակերպերի» զարգացմանը: Միևնույն ժամանակ պետք է հաշվի առնել նաև տարբեր երկրներում առկա սոցիալական և իրավական ավանդույթների առանձնահատկությունները:

16. Դատավարական և նյութական օրենքների, ինչպես նաև ուղենշային նախադեպի մասին տեղեկատվության հավասար հասանելիությունը պետք է ապահովվի թե՛ դատավորների և թե՛ փաստաբանների համար: ԵԴԽԽ-ն հղում է կատարում թիվ 14 (2011) Կարծիքի 24-րդ պարբերությանը, որտեղ արտահայտվել է այն տեսակետը, որ դատական իշխանությունը պետք է ձևավորի նախադեպ կամ առնվազն ուղենշային որոշումներ, որոնք հասանելի են համացանցում՝ անվճար, մատչելի ձևաչափով և հաշվի առնելով անձնական տվյալների պաշտպանության անհրաժեշտությունը:

17. Դատավորները և փաստաբանները պետք է համագործակցեն՝ դատավարության մասնակիցների պահանջները բավարարելու համար: Այս նպատակով ԵԴԽԽ-ն կարևոր է համարում նիստերի պլանավորումը և դատավարական օրացույցի կազմումը՝ ի շահ կողմերի նպաստելու համար դատավորների և փաստաբանների միջև արդյունավետ համագործակցությանը: Ի լրումն՝ դատավորները և փաստաբանները պետք է համագործակցեն վեճերը հաշտության համաձայնությամբ լուծելու ուղղությամբ՝ ի շահ դատավարության մասնակից կողմերի: Իր թիվ 6 (2004) Կարծիքում ԵԴԽԽ-ն առաջարկել է գործերի հաշտության համաձայնությամբ լուծումներին նպաստող ընթացակարգերի մշակումը: Համատեղ վերապատրաստման դասընթացները կարող են բարելավել դատավորների ու փաստաբանների համապատասխան գործառույթների իրականացումը հաշտության համաձայնության կամ հաշտարարության միջոցով վեճերի հաշտությամբ լուծման ոլորտում:

18. Անհրաժեշտ է պատշաճ հաղորդակցություն զարգացնել դատարանների և փաստաբանների միջև՝ ապահովելու համար վարույթի արագությունը և արդյունավետությունը: ԵԴԽԽ-ն գտնում է, որ պետությունները պետք է ներմուծեն համակարգեր, որոնք օժանդակում են դատարանների և փաստաբանների միջև էլեկտրոնային հաղորդակցությանը՝ փաստաբանների ծառայությունների որակը բարելավելու և գործերի դատավարական կարգավիճակի մասին հեշտ տեղեկատվություն ստանալու համար: «Արդարադատությունը և տեղեկատվական տեխնոլոգիաները» թիվ 14 (2011) Կարծիքում ԵԴԽԽ-ն նկատել է, որ տեղեկատվական տեխնոլոգիաները կենտրոնական դեր են խաղում դատավորներին, փաստաբաններին և արդարադատության համակարգի շահագրգիռ այլ կողմերին, ինչպես նաև հանրությանը և լրատվամիջոցներին տեղեկատվություն տրամադրելու հարցում:

19. Թե՛ դատավորները և թե՛ փաստաբաններն ունեն իրենց ուրույն էթիկական սկզբունքները: Այնուամենայնիվ, որոշ էթիկական սկզբունքներ նույնն են դատավորների և փաստաբանների համար: Այդպիսի սկզբունքներից են օրենքի պահպանումը, մասնագիտական գաղտնիությունը, բարեվարքությունը և արժանապատվությունը, դատավարության մասնակից կողմերի շահերի պահպանումը, ձեռնհասությունը, արդարությունը և փոխադարձ հարգանքը: 20. Դատավորների և փաստաբանների էթիկական սկզբունքները պետք է առնչվեն նաև վերջիններիս՝ երկու մասնագիտությունների միջև փոխհարաբերության առումով: Դատավորների առնչությամբ ԵԴԽԽ-ն իր թիվ 3 (2002) Կարծիքի 23-րդ պարբերության մեջ նշել է, որ դատավորները պետք է բոլոր անձանց պատշաճ վերաբերվեն (օրինակ՝ դատավարության կողմերին, վկաներին, իրավախորհրդատուներին): Որևէ տարբերակում չպետք է կատարվի անօրինական հիմքով: Բանգալորյան սկզբունքների 5.3 պարբերության մեջ նշվում է, որ դատավորը պետք է իրականացնի իր դատավարական պարտականությունները՝ պատշաճ վերաբերմունք դրսևորելով բոլոր անձանց, ինչպես,

օրինակ՝ դատավարության մասնակից կողմերի, վկաների, փաստաբանների, դատարանի այլ աշխատակիցների և դատական գործընկերների նկատմամբ: Արգելվում է տարբերակում կատարել որևէ հիմքով, որը չի վերաբերում նման պարտականությունների պատշաճ կատարմանը: Դատավորը պարտավոր է պահպանել դատարան ներկայացված բոլոր վարույթներում բանավեճի կարգուկանոնը և արժանապատվությունը: Նա պետք է արժանապատիվ և քաղաքավարի վարվի դատավարության բոլոր կողմերի, երդվյալ ատենակալների, վկաների, փաստաբանների և այլոց հետ, որոնց հետ շփվում է պաշտոնական պարտականությունները կատարելիս: Փաստաբանների առնչությամբ ՓԻՄԵԽ կազմակերպության Եվրոպայի փաստաբանների վարվեցողության կանոնագրքի 4.1, 4.2, 4.3 և 4.4 պարբերություններն ամրագրում են հետևյալ սկզբունքները՝ փաստաբանը, ով ներկայանում կամ մասնակցում է դատարանում կամ տրիբունալում քննվող դատական գործում, պետք է պահպանի վարվեցողության կանոնները, որոնք կիրառելի են տվյալ դատարանում կամ տրիբունալում: Փաստաբանը մշտապես հարգանքով պետք է վերաբերվի վարույթի արդար իրականացմանը: Պահպանելով դատարանի նկատմամբ հարգանքը և քաղաքավարությունը՝ փաստաբանը պետք է պաշտպանի վստահորդի շահերը պատվով և առանց վախի: Այս ընթացքում չպետք է հաշվի առնվեն փաստաբանի սեփական շահերը, նրա կամ որևէ այլ անձի համար հետևանքները: Փաստաբանը երբեք գիտակցաբար սխալ կամ շփոթեցնող տեղեկատվություն չպետք է տրամադրի դատարանին:

24. Դատավորների և փաստաբանների միջև հարաբերությունների ընթացքում մշտապես պետք է պահպանվեն դատարանի անաչառությունը և անաչառության ճիշտ ընկալումը հանրության կողմից: Դատավորները և փաստաբանները պետք է մշտապես իրազեկ լինեն այս հանգամանքին: Նման անաչառությունը երաշխավորելու համար պետք է գործեն պատշաճ դատավարական և էթիկական կանոններ:

25. Թե՛ դատավորները և թե՛ փաստաբաններն ունեն Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝ ազատ արտահայտվելու իրավունք: Դատավորները, այնուամենայնիվ, պարտավոր են պահպանել դատական ակտերի գաղտնիությունը և իրենց անաչառությունը, ինչը ենթադրում է, որ նրանք չպետք է մեկնաբանություններ կատարեն դատական վարույթի և փաստաբանների աշխատանքի վերաբերյալ: Փաստաբանների արտահայտվելու ազատությունը ևս իր սահմանափակումներն ունի՝ պահպանելու համար Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված՝ դատական համակարգի հեղինակության և անաչառության մասին դրույթը: Պրոֆեսիոնալ գործընկերների նկատմամբ հարգանքի, օրենքի գերակայության և արդարադատության արդար իրականացման հարգանքի՝ ՓԻՄԵԽ-ի «Եվրոպայում իրավաբանի մասնագիտության հիմնարար սկզբունքների մասին» խարտիայում սահմանված սկզբունքներով պահանջվում է խուսափել գործընկերների, առանձին դատավորների և դատարանի ընթացակարգերի ու որոշումների վիրավորական քննադատությունից:

IV. ԵԴԽԽ-ն առաջարկում է դատարանների և փաստաբանների միջև ձևավորել հաղորդակցության ուղիներ: Դատավորները և փաստաբանները պետք է կարողանան հաղորդակցվել դատավարության բոլոր փուլերում: ԵԴԽԽ-ն գտնում է, որ պետությունները պետք է ներմուծեն դատարանների և փաստաբանների միջև հաղորդակցությանն օժանդակող էլեկտրոնային համակարգեր:

V. Կողմերի կարիքները բավարարելու համար ԵԴԽԽ-ն առաջարկում է զարգացնել վեճերը հաշտության համաձայնության շրջանակներում լուծելու ընթացակարգերը: ԵԴԽԽ-ն գտնում է, որ հաշտության համաձայնության և հաշտարարության միջոցով վեճերի բարեկամական լուծման շրջանակում դատավորների և փաստաբանների գործառույթների փոխըմբռնումն առանցքային գործոն է նման մոտեցում զարգացնե-

լու համար, և որ, հնարավորության սահմաններում, վեճերը հաշտությամբ լուծելու տարբեր մեթոդների մասին համատեղ վերապատրաստման դասընթացներ պետք է կազմակերպվեն:

VI. ԵԴԽԽ-ն առաջարկում է զարգացնել փոխադարձ հարաբերությունների մասին երկխոսությունը և աշխատանքային փոխանակումները դատավորների ու փաստաբանների միջև ինստիտուցիոնալ մակարդակում (ազգային և միջազգային)՝ հաշվի առնելով թե՛ փաստաբանների և թե՛ դատավորների էթիկական սկզբունքները: Նման երկխոսությունը պետք է նպաստի փոխըմբռնմանը և փոխադարձ գործառույթների նկատմամբ հարգանքին, ինչպես նաև թե՛ դատավորների և թե՛ փաստաբանների անկախության նկատմամբ հարգանքին:

VII. ԵԴԽԽ-ն գտնում է, որ, հարկ եղած դեպքում, ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող թեմաներով դատավորների և փաստաբանների հետ կազմակերպվող համատեղ վերապատրաստումները կարող են նպաստել վարույթի որակի և արդյունավետության բարելավմանը:

Ինչ վերաբերում է փաստաբանի վարքագծի էթիկային, ապա պետք նշել, որ այդ կանոնները նախատեսված են Փաստաբանի վարքագծի կանոնագրքում, մասնավորապես՝ հետևյալ իրավակարգավորումներում.

2.2. Վստահություն և հարգանք փաստաբանության նկատմամբ

2.2.1 Փաստաբանի մասնագիտական անկախությունը, պարկեշտությունը, ազնվությունը և բարեխղճությունը փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ քաղաքացու կամ հասարակության վստահության անհրաժեշտ պայմաններ են: Վստահության չարաշահումը անհամատեղելի է փաստաբանի կոչման հետ:

2.2.2 Մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական կամ այլ բնագավառում (ոլորտում) փաս-

փաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծից (գործողությունից կամ անգործությունից), որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

2.2.3 Կանոնագրքով սահմանված սկզբունքներն ավելի բարձր են վստահորդի կամքի համեմատությամբ: Արգելվում է կատարել Օրենքի, Պալատի կանոնադրության կամ սույն Կանոնագրքով նախատեսված

4.1. Վարվելակերպի կանոնները դատարանում

Փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի գործունեությունը կարգավորող կանոններին, այդ թվում պետք է հարգանքով վերաբերվի դատավորին և/կամ դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի, արբիտրի կամ վարույթի այլ մասնակիցների գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ հարգանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը:

4.2. Արդար դատաքննություն

Փաստաբանը վստահորդի շահերը ներկայացնելիս պետք է օգտվի արդար դատաքննության հնարավոր միջոցներից և իր հերթին նպաստի դատավարության արդար իրականացմանը:

4.3. Կեղծ կամ ապակողմնորոշիչ տեղեկություն

Փաստաբանը երբեք չպետք է գիտակցաբար կեղծ կամ ապակողմնորոշիչ տեղեկություն ներկայացնի դատարանին:

4.4. Դատավորների հետ շփումներ

Փաստաբանը կարող է դատավորի հետ շփվել մասնագիտական քննարկումներ կատարելու նկատառումներից ելնելով, բացառությամբ, եթե տվյալ դատավորը քննում է փաստաբանի մասնակցությամբ գործ, և քննարկումը վերաբերվում է այդ գործին կամ կարող է այդպիսի տպավորություն թողնել:

Ինչ վերաբերում է **մեղադրանքի կողմի** հետ արդյունավետ հաղորդակցման կազմակերպման միջազգային իրավական չափանիշներին, ապա պետք է նշել, որ ԵԴԽԽ-ի թիվ 12 (2009) Կարծիքի 39-րդ կետը սահմանում է. *«Դատավորները և դատախազները պետք է բարձր բարոյական կերպար ունենան, ինչպես նաև տիրապետեն բավարար մասնագիտական և կազմակերպչական հմտությունների: Իրենց կողմից գիտակցաբար ընդունված գործառույթների բնույթը ենթադրում է, որ դատավորները և դատախազները մշտապես ենթարկվում են հանրային քննադատության, հետևաբար, պետք է մշտապես զգոն լինեն, ինչն օրենքի շրջանակում չպետք է խանգարի գործերի մասով հաղորդակցվելու իրավունքին: Լինելով արդարադատության իրագործման առանցքային դերակատարներ՝ նրանք մշտապես պետք է բարձր պահեն իրենց մասնագիտության վարքը և արժանապատվությունը և մշտապես պետք է դրսևորվեն իրենց պաշտոնին հարիր եղանակով (Հոչակագիր, 11-րդ պարբերություն)»:*

ՔԴՕ-ի 54-րդ հոդվածը սահմանում է դատախազի լիազորությունները գործը կամ նյութը դատարանում քննելիս, որի համաձայն՝

«1. Քրեական գործը դատարանի կողմից քննելիս մեղադրողը լիազորված է՝

1) հայտնել բացարկներ.

2) հարուցել միջնորդություններ.

3) կարծիք հայտնել դատավարության մյուս մասնակիցների հարուցած միջնորդությունների վերաբերյալ.

4) ներկայացնել ապացույցներ, հետաքննության մարմնին նրա համար պարտադիր հանձնարարություններ տալ՝ ապահովելու դատարանին ապացույցներ ներկայացնելը.

5) մասնակցել գործի նյութերի հետազոտմանը.

6) բողոքել մյուս կողմի անօրինական գործողությունների դեմ.

7) առարկել նախագահողի անօրինական գործողությունների դեմ.

8) պահանջել դատական նիստի արձանագրության մեջ գրառումներ կատարելու իր նշած հանգամանքների մասին.

9) հրաժարվել մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց.

10) դատարանում հրապարակել մեղադրական եզրակացությունը, առաջին ատյանի և վերաքննիչ դատարանում հանդես գալ ճառով և ռեպլիկով, իսկ վճռաբեկ դատարանում՝ ներկա գտնվել նիստին.

11) բողոքարկել դատարանի դատավճիռները, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ դատարանի այլ որոշումներ.

12) օգտվել սույն օրենսգրքով նախատեսված այլ լիազորություններից:

2. Դատարանի նիստին մասնակցող դատախազը պարտավոր է՝

1) ենթարկվել դատարանի նիստում սահմանված կարգ ու կանոնին և նախագահողի իրավաչափ կարգադրություններին.

2) կատարել սույն օրենսգրքով նախատեսված այլ պարտականություններ:

3. Դատարանի կողմից քրեական գործեր և դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված հարցեր քննելիս դատախազի մասնակցությունը պարտադիր է»:

Միևնույն ժամանակ կարևոր է, դատավարության ողջ ընթացքում մեղադրողի՝ դատախազի կողմից վարքագծի այնպիսի ձևի ընտրությունը, որը ոչ միայն կնպաստի վերջիններիս հետ հաղորդակցության կազմակերպման արդյունավետության բարձրացմանը, այլ նաև զերծ մնալ այնպիսի գործողություններ կատարելուց, որոնք կասկածի տակ կարող են դնել դատավարության անաչառությունը և բացասաբար կազդեն դատավարության մյուս կողմի ու մասնակիցների վրա: Այս կապակցությամբ ԵԴԽԽ-ի թիվ 12 (2009) Կարծիքը սահմանում է.

« 41. Հանրային դատախազները չպետք է անեն այնպիսի հրապարակային մեկնաբանություններ և հայտարարություններ, այդ թվում՝լրատվամիջոցների միջոցով, որոնք կարող են տպավորություն ստեղծել, թե դատարանը որոշակի որոշում ընդունելու առումով ենթարկվում է ուղղակի կամ անուղղակի ճնշումների, կամ որոնք կարող են բացասաբար ազդել վարույթի արդարացիության վրա:

42. Դատավորները և դատախազները պետք է ծանոթ լինեն էթիկայի կանոններին, որոնցով կարգավորվում են իրենց գործառույթները: Սա կնպաստի միմյանց առաքելությունների նկատմամբ հարգանքին, ինչն իր հերթին կխթանի ներդաշնակ համագործակցությունը:

…

Ընդ որում,

55. Դատավարության ընթացքում դատախազների անաչառությունը պետք է հասկացվի հետևյալ իմաստով. նրանք պետք է գործեն արդար և օբյեկտիվ կերպով՝ ապահովելու, որ դատարանին տրամադրվեն համապատասխան բոլոր փաստերը և

իրավական փաստարկները, և, մասնավորապես, ապահովելու, որ մեղադրյալին պաշտպանող ապացույցները բացահայտվեն: Դատախազները պետք է պատշաճ հաշվի առնեն նաև մեղադրյալի և տուժողի կարգավիճակը, պետք է հավաստիանան, որ բոլոր ապացույցները ձեռք բերված լինեն դատավորի համար թույլատրելի մեթոդներով՝ արդար դատաքննության կանոններին համաձայն: Դատախազները պետք է հրաժարվեն այնպիսի ապացույցներ կիրառելուց, որոնք ձեռք են բերվել մարդու իրավունքների խախտմամբ, օրինակ՝ խոշտանգման միջոցով (Հոչակագիր, 6-րդ պարբերություն):

56. Դատախազը չպետք է նախաձեռնի կամ շարունակի հետապնդումը և պետք է առավելագույն ջանքեր գործադրի վարույթը դադարեցնելու համար, եթե անաչառ հետաքննության կամ ապացույցների վերանայման արդյունքում պարզվել է, որ մեղադրանքն անհիմն է»:

Պետք է նշել, որ դատավարության մյուս մասնակիցների հետ հաղորդակցման իրավական չափանիշները սահմանված են ՔԴՕ-ի առանձին նորմերով, իսկ հաղորդակցման կազմակերպման առանձնահատկությունները պայմանավորված են վերջիններիս քրեադատավարական կարգավիճակով՝ հաշվի առնելով դատական քննության ընդհանուր պայմաններն ու սկզբունքները:

Արդյունավետ հաղորդակցման տեսանկյունից՝ այդ մասնակիցների շարքում թերևս առավել հետաքրքրական է փորձագետի և մասնագետի մասնակցությունը կարգավորող իրավակարգավորումները, ինչպես նաև նրանց մասնագիտական էթիկայի կանոնները: Պարզապես հարկ է նկատի ունենալ, որ փորձագետն օժտված է որոշակի բնագավառի հատուկ գիտելիքներով, իսկ մասնագետը՝ բավարար մասնագիտական գիտելիքներով, ինչը ենթադրում է որոշակի կրթական ու սոցիալական ցենզի պարտադիր առկայություն:

ԴԱՍԵՐ 7-10.

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԵՏ (ԻՆՉՊԵՍ ՁԵՎԱԿԵՐՊԵԼ ՀԱՐՑԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ ՀԱՎԱՍՏԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ), ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ, ՏԱՐԲԵՐ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ ԵՎ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐՆ ՈՒ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

Թեմա 1.

Հաղորդակցում անչափահասների հետ *(ինչպես հարցերը ձևակերպել, ինչպես ստանալ հավաստի պատասխաններ)*

Դատական քննության ընթացքում անչափահասի հարցաքննության կարգն ու պայմանները նախատեսված են ՔԴՕ-ի իրավակարգավորումներում, մասնավորապես՝

Հոդված 341. Անչափահաս վկայի հարցաքննությունը

1. Անչափահաս վկայի հարցաքննությունը, եթե դա անհրաժեշտ է գործի հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտման համար, կողմերի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ կարող է կատարվել ամբաստանյալի բացակայությամբ: Դատական նիստի դահլիճ վերադառնալուց հետո ամբաստանյալի համար հրապարակվում են անչափահաս վկայի ցուցմունքները, նրան հնարավորություն է ընձեռվում տվյալ վկային տալ հարցեր և ցուցմունքներ՝ վկայի հաղորդած տվյալների վերաբերյալ:

2. Տասնվեց տարին չլրացած վկան պետք է հեռացվի դատական նիստի դահլիճից նրա հարցաքննությունն ավարտվելուց հետո, բացի այն դեպքերից, երբ դատարանը՝ կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ, անհրաժեշտ է համարում այդ վկայի հետագա ներկայությունը:

Ընդհանուր առմամբ անչափահասների հարցաքննությունն ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են երեխաների ու դեռահասների հոգեբանության յուրահատկություններով:

Նրանց կյանքի տարբեր փուլերը բնութագրվում են արտաքին աշխարհի երևույթների և առարկաների ընկալման ունակության, գիտակցելու աստիճանի և հոգեբանական գործընթացների տարբերություններով:

Մասնագիտական գրականության մեջ անչափահասներին հիմնականում դասակարգում են հետևյալ տարիքային խմբերի՝

1. *Նախադպրոցական տարիք (մինչև 7-8 տարեկան):*
2. *Փոքր տարիքի դպրոցականներ (7-8-ից մինչև 11-12 տարեկան):*
3. *Միջին տարիքի դպրոցականներ (11-12-ից մինչև 14-15):*
4. *Բարձր տարիքի դպրոցականներ (11-15-ից մինչև 18 տարեկան)*[28]*:*

Մի տարիքային խմբից անցումը մյուսին ուղեկցվում է զարգացման հայտնի «ճգնաժամերով», որոնք պայմանավորված են նոր պահանջմունքների և դրանց բավարարման հնարավորությունների միջև առկա անհամապատասխանությամբ[29]:

Դեռահասի աճի և զարգացման յուրաքանչյուր փուլին բնորոշ են տարբեր գերակա պահանջմունքներ, հակումներ, արժեքային կողմնորոշումներ, մտավոր զարգացվածության

[28] Տե՛ս ***Карнеева Л. М.***, ***Ордынский С. С.***, ***Розенблит С. Я.***, Тактика допроса на предварительном следствии, М., 1958, էջ 191:

[29] Տե՛ս ***Романов В. В.***, Юридическая психология, М., 1998, էջ 432:

տարբեր դրսևորումներ, որոնք էականորեն ազդում են վերջինիս վարքի, իրականության հանդեպ վերաբերմունքի, գիտակցության, այդ թվում՝ նաև հենց հարցաքննության ընթացքի վրա:

Այդ հանգամանքն անպայմանորեն պետք է հաշվի առնել՝ անկախ այն դատավարական կարգավիճակից, որով հանդես է գալիս անչափահասը:

Պետք է նշել, որ փուլայնության առումով անչափահասների հարցաքննությունը չի տարբերվում հարցաքննության այլ տեսակներից: Նախագահողը հատկապես հետևողական պետք է լինի և առանձնակի ուշադրություն հատկացնի անչափահասների հարցաքննության նախապատրաստական փուլին: Արգելանքի տակ չգտնվող անչափահասները, որպես կանոն, կանչվում են իրենց օրինական ներկայացուցիչների միջոցով: Նախապատրաստական բնույթի այս գործողության նման կարգավորումը տակտիկական նկատառումներով հիմնավորված կարելի է համարել, քանի որ հարցաքննության հրավիրելու նման կարգը հնարավորություն է տալիս խուսափել արդեն հարցաքննության կանչվելու փաստով լարվածության մեջ գտնվող անչափահասների հուզական գերլարումից:

Բացի դրանից, նախապատրաստական փուլում հարկավոր է մանրամասն ուսումնասիրել հարցաքննվողի անձը: Վերջինիս բնավորության, մտավոր զարգացվածության աստիճանը, հետաքրքրությունների, ունակությունների և այլ անհատական-հոգեբանական առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկությունները հարցաքննվողին թույլ կտան ընտրելու հարցաքննության ճիշտ և արդյունավետ տակտիկական գիծ:

Մասնագիտական գրականության մեջ խորհուրդ է տրվում հնարավորինս մանրամասն հետազոտել անչափահասների հետևյալ խումբ հատկանիշները՝

- Ժառանգական-կենսաբանական տվյալները՝ նախատրամադրվածությունը հոգեկան հիվանդությունների նկատմամբ, ալկոհոլի, թմրանյութի օգտագործման դեպքերը:

- Անչափահասի միկրոսոցիալական միջավայրը. ընտանիքը, ծնողների սոցիալական դիրքը, հարաբերություններն ընտանիքում, ընտանիքի անդամների արժեքային կողմնորոշումները, մարգինալ խումբը և այլն:
- Անչափահասի անձը բնութագրող տվյալները. բնավորության և խառնվածքի առանձնահատկությունները, արժեքային համակարգը, պահանջմունքների համակարգը, ինքնագնահատականը և այլն:
- Անչափահասի իրավագիտակցության մակարդակը[30]:

Հավաքված տեղեկությունները թույլ են տալիս ճիշտ կազմակերպել և իրականացնել անչափահասի հարցաքննությունը՝ հաշվի առնելով վերջինիս անհատական առանձնահատկությունները, միևնույն ժամանակ նման տեղեկությունները մեծ նշանակություն ունեն նրա ցուցմունքները գնահատելիս:

Հոգեբանական շփման ստեղծման համար կարևոր նշանակություն ունի նրա կյանքի պայմանների, դաստիարակության առանձնահատկությունների, սոցիալական կապերի ուսումնասիրությունը: Այս տեղեկությունները նախագահողը կարող է ստանալ ծնողներից, մանկավարժներից, ոստիկանության համապատասխան ստորաբաժանումից և այլ եղանակներով: Ավելին, ներկայումս անչափահասի անձնական, սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների մասին արժեքավոր տեղեկություններ կարելի է ստանալ նաև համացանցից, սոցիալական տարբեր ցանցերի, կայքէջերի տվյալներից, որոնց հետևում է տվյալ անչափահասը:

Միաժամանակ նպատակահարմար է կազմել անչափահասի հարցաքննության գրավոր պլան՝ ձգտելով հարցերը շարադրել հնարավորինս հստակ, պարզ և մատչելի. մի կողմից լինի սպառիչ և ամբողջական, մյուս կողմից՝ ոչ շատ տևական: Այդ պատճառով անչափահասին տրվող հարցերը պետք է լինեն կարճ, որոշակի, հստակ, հասկանալի և ընդգրկեն գործի բոլոր հանգամանքները:

[30] Տե՛ս ***Васильев В. Л.***, Юридическая психология, М., 1991, էջ 313:

Անչափահաս վկայի հարցաքննության տեսանկյունից՝ հատկանշական է, որ օրենսդիրը նախատեսել է դատական քննության ընթացքում վերջինիս հարցաքննության կարևոր նախապայման, այն է՝ ամբաստանյալի բացակայությունը դատական նիստից: Ավելին, ինչպես արդեն նշել ենք, տասնվեց տարին չլրացած վկան պետք է հեռացվի դատական նիստի դահլիճից նրա հարցաքննությունն ավարտվելուց հետո, բացի այն դեպքերից, երբ դատարանը՝ կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ, անհրաժեշտ է համարում այդ վկայի հետագա ներկայությունը:

Բոլոր դեպքերում, անչափահասի հարցաքննությունը պետք է կատարվի դատական նիստին նրա ներկայանալուց անմիջապես հետո, քանի որ երկարատև սպասումը բացասաբար է անդրադառնում նրա վրա և կարող է դժվարացնել վերջինիս հարցաքննությունը: Քանի որ անչափահասները մեկ օբյեկտի վրա ուշադրությունը կենտրոնացնելուց ավելի շուտ են հոգնում և ձանձրանում, նախագահողին խորհուրդ է տրվում չձգձգել հարցաքննությունը: Եթե հարցաքննությունն, այնուամենայնիվ, ձգձգվում է, անհրաժեշտ է կազմակերպել ընդմիջումներ, որոնց ընթացքում երեխան կարող է հանգստանալ, շեղել ուշադրությունը, խաղալ:

Անչափահասների հարցաքննության արդյունավետության առումով էական նշանակություն ունի հոգեբանական հարմարավետ շփման առկայությունը: Այս առումով հարկ է նկատի ունենալ, որ տարիքի հետ կապված, անչափահասների վստահությունը կարող է բավական շուտ ձեռք բերվել, սակայն հնարավոր է նաև հեշտությամբ կորցնել այն: Մինչև միջին դպրոցական տարիքի անչափահասների հարցաքննությունը պետք է կրի սովորական զրույցի բնույթ, որը վարվում է հարցաքննողը հանգիստ, բարեկամական տոնով: Երեխայի հետ զրույցի ընթացքում նախագահողը պետք է ցուցաբերի առանձնակի ուշադրություն, նրբանկատություն, որպեսզի ձեռնպահ մնա նրան հոգեկան դժվար ապրումներ պատճառելուց: Սակայն հատկապես 14 տարեկանից բարձր հանդուգն և անկազ-

մակերպ դեռահասների հարցաքննության ժամանակ, ընդհակառակը, այն պետք է ընթանա պաշտոնական և խիստ մթնոլորտում: Եթե անչափահաս վկան հարցաքննության ժամանակ իրեն դրսևորում է կաշկանդված, ներփակված, ապա նպատակահարմար է սկզբում զրույցը վարել նրան հետաքրքրող այլ թեմաներով, որից հետո կարելի է հարցաքննվողի համար անկատ և սահուն անցում կատարել քննությանը հետաքրքրող հանգամանքներին[31]:

Եթե անհրաժեշտ է անչափահասի մոտ այլ անձանց, օրինակ՝ կասկածյալի մասին ձևավորել որոշակի կարծիք, պետք է նրան ներկայացվի վերջինիս իրական կերպարը, ընդգծվի բացասական հատկանիշները: Սակայն այս դեպքում անչափահասը, զգալով նախագահողի դիրքորոշումը, կձգտի իր ցուցմունքը համապատասխանեցնել դրան: Թեև ներշնչվողականությունը հատուկ է մանկական, առավել ևս դեռահասի տարիքին, այնուամենայնիվ, պատահում է, որ նրանց շրջանում հայտնվում են նաև այնպիսիք, ովքեր կարող են բավարար չափով պաշտպանել իրենց հայացքները: Այդ պատճառով էլ, եթե վկան երեխա է, նպատակահարմար է այդ առանձնահատկությունները հիմնավորել փորձաքննությամբ[32]:

Հարկ է գիտենալ, որ անչափահաս մեղադրյալի վստահությունը ձեռք է բերվում և հոգեբանական հարմարավետ շփում է հաստատվում, որպես կանոն, նախագահողի կողմից վերջինիս քրեադատավարական իրավունքների օբյեկտիվ և մանրամասն ներկայացման ճանապարհով: Անչափահասների հարցաքննության դեպքում պետք է նկատի ունենալ, որ վերջիններիս ազատ և ինքնուրույն շարադրանքի դեպքում ավելի քիչ են նյութի խեղաթյուրումները, քան նախագահողի հարցերին պատասխանելիս: Սակայն, եթե այդ միտումը կայուն է միջին դպրոցական և բարձր տարիքի անչափահասների մոտ,

[31] Մանրամասն տե՛ս ***Ենգիբարյան Վ. Գ.*** Առանձին քննչական գործողությունների կատարման տակտիկա: Կրիմինալիստիկական տակտիկա: Գիտագործնական ձեռնարկ, Երևան, «Թասկ ՍՊԸ, 2018, էջ 514:

[32] Տե՛ս ***Գրին Է.***, Դատահոգեբանական փորձաքննություն, Երևան, 2002, էջ 41:

ապա նույնը չի կարելի ասել մինչև այդ տարիքն ունեցող խմբի մասին: Այս տեսանկյունից նպատակահարմար չէ փոքրահասակներից սպասել կապակցված և հետևողական շարադրանք: Այս դեպքում մեծ դերակատարում ունի հարցաքննողը՝ վերջիններիս ուղղելով ճշգրտող, հիշեցնող և այլ բնույթի հարցերով, սակայն, միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ նման հարցադրումների վտանգավորությունն անչափահասների հարցաքննության ժամանակ այն պատճառով, որ վերջիններս իրենց հոգեբանական առանձնահատկությունների շնորհիվ առավել, քան մեծահասակները, ենթակա են ներշնչման ազդեցությանը: Փոքրահասակ վկաներին, հատկապես, տուժողներին, այնպիսի հարցեր ուղղելիս, որոնց բովանդակությունը կապված է վերջիններիս հուզական ապրումների հետ, պետք է հերթափոխել չեզոք բնույթ ունեցող կամ դրական հույզեր առաջացնող հարցերով՝ այդ ընթացքում ցուցաբերելով առանձնահատուկ ուշադրություն և վերաբերմունք երեխայի նկատմամբ[33]: Ճշգրտող, հիշեցնող և այլ բնույթի հարցերը պետք է լինեն հստակ, պարզ ձևակերպմամբ, մատչելի անչափահասի մտավոր զարգացվածության աստիճանին և հնարավորինս մանրամասնված:

Նպատակահարմար է անչափահաս վկայի կամ տուժողի հարցաքննությունը սկսել նրան հետաքրքրող որևէ թեմայից: Սակայն, երբ անչափահասն ընտելանում է իրադրությանը, անմիջապես պետք է անցնել հարցաքննությանը:

Փոքրահասակներն աչքի են ընկնում հոգեբանական անպաշտպանվածությամբ, ուստի և զգում են մարդասիրական ու ջերմ վերաբերմունքի կարիք: Վերջիններիս բավականին ժամանակ է հարկավոր իրադրությանը և անծանոթ անձանց ընտելանալու համար: Այդ պատճառով նպատակահարմար է խոսակցությունը սկսել ոչ թե փոքրահասակ վկայի, այլ նրան ուղեկցող անձի հետ՝ աստիճանաբար խոսակցության մեջ ընդգրկելով երեխային[34]:

[33] Տե՛ս Романов В. В., Юридическая психология, М., 1998, էջեր 433-434:

[34] Տե՛ս Зорин Г. А., Руководство по тактике допроса, М., 2001, էջ 45:

Ընդունված տեսակետ կա, որ եթե անչափահասի հետ հոգեբանական հարմարավետ շփումը չի ստացվում, կարելի է դիմել հոգեբանության և մանկավարժության բազմաթիվ դիտարկումների արդյունքում հաստատված որոշ օրինաչափության վրա հիմնված տակտիկական հնարքների օգնությանը:

Որոշակի տակտիկական հնարքներ նպատակահարմար է կիրառել նաև անչափահաս մեղադրյալի և ամբաստանյալի հարցաքննության ժամանակ:

Անչափահաս մեղադրյալի և ամբաստանյալի հարցաքննության ժամանակ պետք է հմտորեն օգտագործել նրա դրական հատկանիշները, զղջալու և սեփական մեղքը հարթելու հոգեբանական ձգտումը: Դրական հատկանիշների ցուցադրումը նման մեղադրյալներին հիմնականում նպաստում է ճշգրիտ և օբյեկտիվ ցուցմունքների ստացմանը: Պետք է նկատի ունենալ նաև, որ ներշնչողականության բարձր մակարդակի և այլ հոգեբանական առանձնահատկությունների շնորհիվ անչափահասներն առավել, քան մեծահասակները, հակված են ինքնազրպարտման: Ուստի հարկավոր է բացառել ներշնչանքի հնարավորությունը հարցաքննողի կողմից, հնարավորինս նաև՝ երրորդ անձանց կողմից: Անչափահաս մեղադրյալի հարցաքննության ժամանակ, երբ անհրաժեշտ է ներկայացնել իրեղեն ապացույցներ, փաստաթղթեր, նպատակահարմար է դրանք ներկայացնել գործի համար ունեցած նշանակության կարևորության տեսանկյունից, քանի որ գլխավոր ապացույցների հանկարծակի ներկայացումը, որպես կանոն, ներգործում է անչափահաս մեղադրյալի և ամբաստանյալի վրա և կարող է հանգեցնել ինքնազրպարտության կամ ցուցմունքներ տալուց հրաժարվելուն:

Որպես կանոն, անչափահասների հարցաքննության ժամանակ ազատ շարադրանքում խեղաթյուրումներն ավելի քիչ են, քան հարց ու պատասխանի ընթացքում, ուստի նախագահողը պետք է աշխատի իրեն անհրաժեշտ տեղեկությունը ստանալ ազատ շարադրանքի ընթացքում՝ մանրամասն և ուշադիր լսելով անչափահասին: Սակայն փոքրահասակները և հաճախ

նաև միջին տարիքի երեխաները չեն կարողանում ինքնուրույն ներկայացնել դեպքի ամբողջ ընթացքը: Հետևաբար՝ նախագահողը պետք է ուղղորդի պատմությունը, օգնի անչափահասին վերականգնել դեպքերի հերթականությունը, հիշեցնի, թե որտեղ էր վերջինս կանգ առել:

Նախագահողը պետք է հաշվի առնի, որ անչափահասները՝ թեև ավելի դժվարությամբ են վերարտադրում իրենց ընկալածը, սակայն դեպքի առանձին հանգամանքների վերաբերյալ նրանց տպավորություններն ավելի ցայտուն են և համեմատաբար երկար ժամանակ են պահպանվում հիշողության մեջ:

Հարցաքննության ընթացքում նախագահողը պետք է հետևի, թե ինչպես է անչափահասն արձագանքում իր հարցերին: Եթե վերջինս ընկճված է, ապա նախագահողը պետք է պարզի դրա պատճառը:

Մինչև 14 տարեկան վկայի կամ տուժողի սուտ ցուցմունքների պատճառ կարող է լինել ներշնչանքը, մեծահասակների ազդեցությունը, սեփական երևակայությունը և այլն: Անչափահասի երևակայության արդյունքում իրականությունը կարող է պարուրվել սուտ, մտացածին, անտրամաբանական մանրամասներով:

Անչափահաս վկայի կամ տուժողի սուտ ցուցմունքների բացահայտման կարևոր տակտիկական հնարք է հարցաքննության ժամանակ ապացույցների ներկայացումը: Այստեղ նույնպես պետք է դրսևորել ծայրաստիճան զգուշություն, քանի որ ներկայացվող ապացույցները հարցաքննվող վկայի կամ տուժողի վրա կարող են հակառակ ազդեցություն ունենալ:

Հարցուպատասխանի ընթացքում նախագահողի հարցերը պետք է լինեն պարզ և հասկանալի: Նպատակահարմար է յուրաքանչյուր հարցից հետո հավաստիանալ, թե արդյոք անչափահասի համար պարզ է հարցի ձևակերպումը: Եթե անչափահասը հարցը չի ընկալում, նախագահողը պետք է մասնատի հարցը, փոխի շարադրանքը, ձևակերպումը: Անչափահասի ցուցմունքները կարող են ստուգվել ստուգողական հարցերի միջոցով: Այդ հարցերը նպաստում են նաև լրացուցիչ

տեղեկությունների ստացմանը, որոնք հարցաքննվողը չի հայտնել ազատ շարադրանքի կամ հարցուպատասխանի ընթացքում:

Նախագահողը պետք է հարցաքննությունը կազմակերպի այնպես, որ անչափահասը հնարավորություն ունենա սուտ ցուցմունքներից սահուն անցում կատարել ճիշտ ցուցմունքների ներկայացմանը: Հաճախ վերջիններս պատրաստ են փոխելու իրենց դիրքորոշումը, սակայն չգիտեն, թե ինչպես: Այդ պատճառով նախագահողը չպետք է միանգամից հայտարարի, որ նրա ցուցմունքները սուտ են, այլ պետք է հարցնի, թե արդյոք նա չի սխալվում, նրա վրա ճնշում չի գործադրվում: Նպատակահարմար է, որպեսզի նախագահողը առաջարկի անչափահասին մտածել իր տված ցուցմունքների վերաբերյալ և եթե ցանկանում է փոխել իր դիրքորոշումը՝ հայտնել այդ մասին: Անչափահասից ճիշտ ցուցմունք ստանալու համար նախագահողը նախևառաջ պետք է վերացնի այն խոչընդոտները, որոնք բացասական ազդեցություն են ունենում վերջինիս վրա:

Անչափահաս մեղադրյալի, ամբաստանյալի հարցաքննության ժամանակ, եթե ցուցմունքներում առկա են հակասություններ, ապա դրանց մասին պետք է տեղեկացվի հարցաքննվողին: Ցուցմունքներում տրամաբանական հակասությունների նրբանկատ և ճիշտ ցուցադրումը կարող է հանգեցնել մեղադրյալի, ամբաստանյալի ճիշտ ցուցմունքներ տալուն: Սուտ ցուցմունքներ տալուց ձեռնպահ մնալուն և հետագա շարադրանքում ճշմարիտ տեղեկություններ տալու համար հաճախ բավարար է լինում մեղադրյալին, ամբաստանյալին բացատրել, թե ինչի կարող են հանգեցնել սուտ ցուցմունքները, մասնավորապես, կարելի է նշել, որ դրանց հերքումը համարվում է ապացույց, որը կօգտագործվի վերջինիս դեմ:

Անչափահասների սուտ ցուցմունքների բացահայտման համար հիմնականում նպատակահարմար է կիրառել զգացմունքային ազդեցության վրա հիմնված տակտիկական հնարքներ: Այս պայմաններում տրամաբանական համոզման վրա հիմնված տակտիկական հնարքները քիչ արդյունավետ են, քանի

որ ստի բացահայտման փաստը հիմնականում չի հասկանում անչափահասը:

Այսպիսով, անչափահասի վերաբերյալ նախնական տեղեկությունների առկայությունը և նրանց անհատական-հոգեբանական առանձնահատկությունների վերաբերյալ տվյալների առկայությունը հարցաքննողին թույլ են տալիս ընտրել ճիշտ տակտիկական գիծ՝ նպատակ ունենալով անչափահասից ստանալու օբյեկտիվ, սպառիչ և ճշգրիտ ցուցմունքներ[35]:

Առավելապես ծանր հանցագործությունների տուժող կամ վկա անչափահասների ճնշող մեծամասնությունն ունենում է հոգետրավմատիկ ապրումներ: Ընդ որում, երեխաները տարբեր ինտենսիվությամբ և դրսևորումների բազմազանությամբ են արձագանքում տրավմատիկ իրողությանը: Երեխաների արձագանքները մեծապես կախված են մի քանի կարևոր գործոններից՝

- տրավմատիկ ազդեցության ուժգնությունից,
- երեխայի տարիքից և իրավիճակի հասկացման կարողությունից,
- սեռից ու անձնային առանձնահատկություններից,
- տրավմային նախորդող կենսագործունեության և զարգացման առանձնահատկություններից,
- տրավմատիկ ազդեցությունից հետո տեղի ունեցած նշանակալից փոփոխություններից (ապրելավայրի, դերերի, գործառույթների փոփոխություններ),
- աջակցության առանձնահատկություններից,
- հոգեբանական տրավմաների հետ առնչության նախկին փորձից և այլն:

Սովորաբար ցանկացած երեխա, այսպես թե այնպես, որոշակի հակազդում է դրսևորում տրավմատիկ իրողությանը:

[35] Մանրամասն տե՛ս ***Ենգիբարյան Վ. Գ.*** Առանձին քննչական գործողությունների կատարման տակտիկա: Կրիմինալիստիկական տակտիկա: Գիտագործնական ձեռնարկ, Երևան, «Թասկ ՍՊԸ», 2018, էջ 518:

Որոշ հակազդումներ կարող են կարճատև լինել և ինքնըստինքյան անցնել, մինչդեռ մյուսները կարող են տևել ամիսներ և տարիներ: Կան որոշակի հակազդումներ և ախտանիշներ, որոնք բնորոշ են գրեթե բոլոր երեխաներին:

- ***Մերժում.*** Երեխաները կարող են մերժել տրավմատիկ իրողության հետ կապված մտքերը և զգացողությունները, խուսափել ակտիվությունից, ընկերական և սոցիալական կապերից, ունենալ տրավմատիկ իրողության մանրամասների վերաբերյալ հիշողության «կորուստ», հուզականորեն կաղապարվել և չկարողանալ արտահայտել հույզերի մեծ մասը:
- ***Վերապրում.*** Երբեմն երեխաները կրկին ու կրկին վերհիշում և վերապրում են իրավիճակը, խաղարկում են այն իրենց վարքում, կարծես տրավման կրկնվում է, ունենում են գիշերային մղձավանջներ, ուժգին հակազդում ցանկացած իրավիճակի, որը հիշեցնում է տրավմատիկ փորձը:
- ***Գերգրգռվածություն.*** Այն դրսևորվում է տարբեր ազդակների հանդեպ չափազանց զգայունությամբ, քնի, սնման, ուշադրության կենտրոնացման խանգարումներով, ապակառուցողական վարքային դրսևորումներով և այլն[36]:

Հանցագործությունից տուժած կամ հանցագործության վկա երեխայի հարցաքննության ընթացքում առանձնակի կարևոր է ժամանակին նկատել երեխայի մոտ տրավմատիկ արձագանքման ցուցանիշները, ինչը, հնարավոր է, վկայի նրա վերատրավմատիզացիայի մասին: Բախվելով նման անցանկալի արձագանքների հետ՝ հարցաքննողը պետք է իր որոշումներում ելնի չվնասելու սկզբունքից և փոխի հարցաքննության մարտավարությունը, իսկ որոշ դեպքերում՝ դադարեցնի այն:

[36] Wastell C. Understanding Trauma and Emotion: Dealing with Trauma Using an Emotion Focused Approach Allen & Unwin, 2005:

Մասնավորապես, ուժեղ հուզական դրսևորորմների դեպքում՝ լաց, դող, հեռանալու փորձ, ձեռքերով դեմքը ծածկելու ցանկություն, կակազում, ձայնի տոնի տատանումներ, գոռոցներ, հիստերիկ նոպա, ցնցումներ և այլն, հարցաքննությունը պետք է նվազագույնը ժամանակավորապես դադարեցնել, երեխային տալ անվտանգության զգացում, ցույց տալ, որ նրա զգացմունքները և հոգեվիճակը հասկանում են և ընդունում, որ իր առաջին իսկ պահանջով զրույցը կդադարեցվի: Այնուհետև կարևոր է երեխայից ճշտել տվյալ պահի կարիքները՝ գնալ զուգարան, ջուր խմել, ծնողի մոտ գնալ, ուղղակի նստել և հանգստանալ և այլն: Սա հետագա արդյունավետ հաղորդակցման համար առաջնային պայման է, քանի որ եթե երեխան չվերագտնի ապահովության և անվտանգության զգացումը, ապա հետագա զրույցն ամենայն հավանականությամբ չի ստացվի:

Ելնելով հոգեվիճակների բնականոն տրամաբանությունից, ակնհայտ է, որ վերոնշյալ հուզական վիճակները մեծամասամբ առաջանում են աստիճանական ինտենսիվացման սկզբունքով. սկզբում երեխան գուցե փոքր-ինչ հուզված է կամ լարված, սակայն զրույցին զուգահեռ հոգեվիճակն աստիճանաբար կարող է սրվել, ինչի ֆիզիոլոգիական նշանները դժվար չէ նկատել՝ դիմախաղի փոփոխություն, ձայնի հուզված ինտոնացիա, դեմքի գունատում կամ կարմրում, վերջույթների թեթև դող, մտքերը շարադրելու բարդություններ, նույն միտքը անընդհատ կրկնելու հակում, հարցերը չհասկանալու կամ չափազանց արագ դրանց արձագանքելու միտում, հայացքով մտերիմի որոնում և այլն: Այս նախանշանները ժամանակին նկատելով՝ ուշադիր և ապրումակցող հարցաքննողը կարող է արագ վերահաստատել հուզական կայունությունը՝ կանգնեցնելով հարցաքննությունը և կարճ անդրադարձ անելով երեխայի հուզական վիճակին (օրինակ՝ *«Տեսնում եմ, որ հիմա հուզվում ես: Կուզե՞ս մի փոքր ընդմիջում անենք», «Դու լավ աշխատանք արեցիր, ու հիմա մի փոքր հանգստանալու հնարավորություն տանք մեզ», «Գիտեմ, որ քեզ դժվար է խոսել այդ ամենի մասին, ու դու շփոթված ես: Իմացիր, որ հենց այլևս չուզենաս շարունակել, կարող ես ինձ*

դա ասել և մենք կանգ կառնենք»): Կարելի է նաև երեխայի ուշադրությունը ցրել որևէ կողմնակի թեմայի, օրինակ՝ հարցնել նրան ինչ սպորտ կամ կենդանի է սիրում և տալ այդ թեմային մի քանի րոպե (օրինակ, կիսվել սեփական նախասիրությամբ կամ փորձով): Հարցաքննությունը վերսկսելուց առաջ անհրաժեշտ է ապրումակցող ոճով հարցնել՝ պատրաստ է արդյոք նա շարունակել զրույցը և ուրիշ ինչի կարիք նա ունի մինչ վերսկսելը:

Բացառիկ կարևոր է ոչ մի դեպքում չարժեզրկել երեխայի դժվար ապրումները և չարգելել դրանք ունենալ *(«Լաց մի եղիր», «Հանգստացիր», «Մի քիչ էլ դիմացիր ու վերջ»),* ինչպես նաև ծավալել երեխայի վարքի վերաբերյալ «դաստիարակչական» ելույթներ, քանի որ նման «հորդորները» համապատասխան չեն երեխայի հուզական վիճակին և չեն կարող նպաստել ներքին ապահովության զգացմանը. ուղիղ հակառակը՝ սովորաբար դրանք ավելի շատ են բևեռացնում երեխային, հուզականորեն հեռվացնում են հարցաքննողից, վերջինիս կերպարն առավել շատ է զուգորդվում խիստ և ոչ հոգատար մեծահասակի հետ, ով ունի ուժ և իշխանություն: Ինչ-որ առումով, ենթագիտակցական հոգեբանական մեխանիզմների արդյունքում, երեխան նույնիսկ կարող է հարցաքննողին և հարցաքննության իրավիճակը զուգորդել իր հետ տեղի ունեցած բռնության դեպքի և բռնարարի հետ: Սա արդեն վերատրավմատիզացիան է, որն անմիջապես պետք է կանխել՝ երեխային դուրս բերելով հարցաքննությունից և ուղղորդելով դեպի ապահով մեծահասակը:

Սակայն հոգետրավմա ապրած երեխայի սուր հուզական արձագանքը միշտ չէ, որ ձևավորվում է աստիճանաբար՝ վերոնշյալ մեխանիզմով: Երբեմն, հետտրավմատիկ սթրեսային խանգարման պարագայում, հուզական ժայթքումը հնարավոր է ամենաանմեղ թվացող կամ չնչին ազդակից, որը, սակայն, երեխայի ենթագիտակցության մեջ «զոդված» է տրավմատիկ փորձի հուզական հիշողությունների հետ և ակնթարթորեն գործարկում է տրավմատիկ ապրումների ինտեն-

սիվ հոսքը: Օրինակ՝ հարցաքննություն իրականացնողի քայլերի ձայնը կամ ակնոց դնելը, կամ ձայնի որոշակի տոնայնությունը, կամ հագած վերնաշապիկի գույնը, կամ սենյակի ժամացույցի ձայնը և այլն կարող են հանդիսանալ նման խթանիչներ՝ թրիգերներ, որոնք «դոմինոյի» էֆեկտի սկզբունքով գիտակցություն բերեն անտանելի հիշողություններ և ապրումներ: Նման դեպքում հարցաքննությունն անհրաժեշտ է անհապաղ կանգնեցնել և երեխային ուղղորդել իր հարազատների մոտ:

Որոշակի բացառիկ դեպքերում հնարավոր է, որ երեխան հարցաքննության ընթացքում վերապրի իր տրավմատիկ փորձը, ասես այն տեղի է ունենում հենց այդ պահին: Սա գիտակցության յուրահատուկ վիճակ է, որն արդյունք է ուժեղ տրավմայի և կոչվում է ֆլեշբեք (flashback). տրավմատիկ փորձի ոչ կամածին և անկանխատեսելի կենդանացում անսովոր վառ հիշողությունների միջոցով, որը կարող է տևել մի քանի վայրկյանից մինչև նույնիսկ ժամեր, երբ երեխային թվում է, որ անցյալի վախեցնող իրականությունը ներխուժում է նրանց ներկայիս կյանք: Նման դեպքում նույնպես հարցաքննությունը պետք է դադարեցնել, իսկ երեխային անհրաժեշտ է ցուցաբերել մարդկային և մասնագիտական աջակցություն:

Ընդհանուր առմամբ երեխայի հարցաքննության ընթացքում նախագահողը պետք է հնարավորինս զերծ մնա ագրեսիվ կամ քննադատական խոսելաոճից, նյարդային արձագանքներից, անտեղի հումորից կամ հեգնական արտահայտություններից: Չի կարելի մոռանալ, որ մեծամասամբ երեխան իր կամքով չէ գտնվում այդտեղ, և որ այդ իրավիճակն իրեն պարտադրված է. այսինքն, ինքնին հարցաքննության գործընթացն ինչ-որ իմաստով «բռնություն» է, ինչը կարող է խթանել նրա բացասական հույզերը:

Բազմաթիվ հետազոտություններ են իրականացվել՝ ուղղված երեխայի հիշողության, հաղորդակցման և սոցիալական ունակությունների ոլորտներին, հարցազրույցի վարման գործնական ուղեցույցներին: Արդյունքում արձանագրվել են մի շարք փաստեր, որոնց վերաբերյալ մինչ այդ չկար համաձայ-

նություն: Բացահայտվել է, որ՝

- *երեխաները, անկախ տարիքից, ունեն հստակ ունակություն՝ հիշելու իրենց շուրջը կատարվածը,*
- *հնարավոր է երեխայից ստանալ հուսալի տեղեկություն, բայց դրան հասնելու համար անհրաժեշտ է հստակ հետևել որոշակի ընթացակարգերի և հաշվի առնել երեխայի տարիքային և անհատական ունակությունները,*
- *երեխայի կողմից տրված տեղեկության ամբողջականությունն ու հուսալիությունը կախված է հարցաքննողի արհեստավարժությունից: Մասնավորապես, հարցաքննողը պետք է կիրառի լայն հարցեր, օրինակ՝ «պատմիր ինձ պատահածի մասին», այնպես, որ երեխան կարողանա հաղորդել որքան հնարավոր է շատ տեղեկատվություն,*
- *երեխայից ստացվող տեղեկության կեսից ավելին ձևավորվում է ազատ զուգորդությունների և բաց հարցերի միջոցով (անկախ տարիքից): Ազատ պատմությամբ ստացված տեղեկությունը մինչև 5 անգամ ավելի ինֆորմատիվ և հուսալի է, քան ուղիղ և նեղ հարցերի միջոցով ստացվող տեղեկությունը,*
- *ազատ պատմության կամ զուգորդությունների օգնությամբ փոքր տարիքի երեխաները կարող են պատասխանել քննությանը վերաբերվող գրեթե բոլոր հարցերին,*
- *ուղղորդող հարցերը, որոնցից պետք է ցանկացած դեպքում խուսափել, մասնավորապես ռիսկային են մինչև 6 տարեկան երեխաների դեպքում, քանի որ այս տարիքի երեխաներն առավելապես հակված են գոհացնելու մեծահասակներին, ինչպես նաև չափազանց ներշնչվող են:*

Հարցաքննության ընթացքում կիրառվող հարցերը կարող են լինել մի քանի տեսակի: Ստորև թվարկված հարցերի տեսակների հաջորդականությունն արտացոլում է գրագետ հարցաքննության ընթացքում դրանց կիրառելիության հաճախականությունը՝ նվազման սկզբունքով (հարցերի տեսակները

և դրանց հերթականությունը՝ համաձայն NICHD արձանագրության) [37]:

1. **Բաց հարցեր**: Այս հարցերն առավելապես խթանում են երեխայի ազատ պատմությունը/զուգորդությունները. *«Պատմիր՝ ինչ է պատահել», «Հետո ի՞նչ եղավ»:* Նման հարցադրումները ներառում են նաև հարցեր՝ ուղղված պատասխանի պարզաբանմանը. *«Դու նշեցիր..., պատմիր ինձ ավելի շատ այդ մասին»* և այլն:
2. **Կենտրոնացնող հարցեր՝**
   - *Ի՞նչ. «Ի՞նչ գույնի էր նրա վերնաշապիկը»,*
   - *Ո՞վ. «Ո՞վ կար նրա հետ»,*
   - *Որտե՞ղ. «Որտե՞ղ նա քեզ դիպչեց» (եթե երեխան դա նշում է),*
   - *Ե՞րբ. «Ե՞րբ դա տեղի ունեցավ»,*
   - *Ինչպե՞ս. «Ինչպե՞ս դու դուրս պրծար»,*
   - *Ինչո՞ւ. «Ինչո՞ւ նա քեզ հարվածեց» (կարևոր է նշել, որ բռնության ենթարկված երեխայի հետ ավելի լավ է խուսափել «ինչո՞ւ» հարցից, քանի որ այն պարունակում է մեղքի տարր):*
3. **Փակ հարցեր:** Հարցերի այս տեսակը ենթադրում է միանշանակ պատասխան կամ նախապես ենթադրելի պատասխանների այլընտրանք՝ «այո-ոչ», օրինակ՝ *«Նա սպառնո՞ւմ էր քեզ»,* կամ տարբերակի ընտրությամբ հարցեր, օրինակ՝ *«Նա կանգնա՞ծ էր, թե՝ նստած»:* Փակ հարցերը պակաս ինֆորմատիվ են և կարող են հանգեցնել երեխայի ներփակման, կաշկանդվածության և տագնապի:

[37] ԱՄՆ Երեխայի առողջության և անձի զարգացման ազգային ինստիտուտի հարցազրույցի վարման կառուցվածքային մեթոդ (USA's National Institute of Child Health and Human Development's structured method of interviewing):

4. **Թելադրող/ուղղորդող հարցեր:** Չնայած, որ որոշ դեպքերում ուղղորդող հարցերը *(«Նա համբուրեց քեզ, այդպես չէ՞», «Դու չես ուզում, չէ՞, որ նա մնա անպատիժ»)* կարող են լինել օգտակար, այնուամենայնիվ, դրանք հարցերի տեսակներից առավել վտանգավորը և անթույլատրելին են: Նման ձևով կառուցվող հարցադրումներն իրենց մեջ կրում են երեխային մանիպուլյացիայի ենթարկելու միտում, ինչը հստակ հակասում է հարցազրույցի նպատակներին և վնասում է երեխայի հոգեվիճակին:

Ինքնին դատարանում վկայություն տալը երեխայի համար առանձին լուրջ սթրես է: Այս իրավիճակում վախերն ու տագնապները կարող են, մասնավորապես, կապված լինել մեղադրյալի և/կամ դահլիճում ներկաների առջև կանգնելու, ինտիմ և ամոթի զգացում առաջացնող մանրամասներ պատմելու անհրաժեշտության, տրվող հարցերը լավ չհասկանալու կամ քննադատության ենթարկվելու վախի հետ[38]:

Միևնույն ժամանակ դատարանում ցուցմունք տալը միշտ չէ, որ ունի բացասական հետևանքներ: Պատշաճ նախապատրաստված և երեխայի հանդեպ բարյացակամ ոճով իրականացվող դատական գործընթացը կարող է իրականում լինել չափազանց օգտակար երեխայի համար՝ ապացուցելու իր խախտված իրավունքի փաստը, հասնելու անարդարության պաշտոնական դատապարտմանը և պաշտպանելու ինքն իրեն: Նշված արդյունքներն էական դրական դերակատարում են ունենում երեխայի հոգեբանական վերականգնման և արժեքավոր կյանքի փորձի ձեռքբերման համար:

Միջազգային չափորոշիչները պահանջում են, որ երեխան հարցաքննվի բացառապես բարյացակամ ոճով՝ վախեցնելու պոտենցիալ ռիսկի իջեցման նպատակով: Դատավորները կարևոր դերակատարում ունեն այս դրույթի ապահովման հար-

[38] «Справочник для специалистов и должностных лиц по вопросам правосудия в делах,связанных с участием детей – жертв и свидетелей преступлений», Серия справочников повопросам

ցում: Փորձը ցույց է տալիս, որ լավագույն արդյունքների կարելի է հասնել, եթե երեխան հարցաքննվում է զրույցի ձևաչափում՝ ի համեմատություն միակողմանի կամ խաչաձև հարցաքննության ձևաչափերի: Վերջինիս դեպքում անհրաժեշտ է դատավորի կողմից գործընթացի նկատմամբ խստագույն վերահսկողություն՝ երեխային հասցվող հնարավոր վնասի կանխարգելման նկատառումներից: Ավելին, անհրաժեշտ է հաշվի առնել, որ երեխան, մեծահասակի համեմատ, ունի ուշադրության կենտրոնացման ավելի քիչ ունակություն, այդ պատճառով կարևոր է նախատեսել ընդմիջումներ՝ ըստ անհրաժեշտության: Երեխային տրվող հարցերի քանակը կարող է սահմանափակվել՝ նրա ուշադրությունը պահպանելու և առավել որակյալ ցուցմունքներ ստանալու նպատակով:

Երեխաներին պետք է հարցաքննել միայն մեկ անգամ՝ բացառությամբ հատուկ դեպքերի:

Հանցագործությունից տուժած կամ հանցագործության վկա երեխաներին դատավարության ժամանակ հարցեր ուղղվելու դեպքում դատավորները պետք է հստակ հետևեն գործընթացին և վերահսկեն՝ ինչ հարցեր և ինչպես են տրվում: Նրանք պետք է կասեցնեն.

- *անհամապատասխան հարցերը, որոնք տրվում են երեխային վախեցնելու կամ տրավմատիզացիայի ենթարկելու նպատակով,*
- *արագ և բազմաթիվ անգամներ տրվող հարցերը, որոնք նպատակ ունեն երեխային շեղելու կամ շփոթեցնելու,*
- *երեխային իր տարիքում անհասկանալի լեզվով տրվող հարցերը,*
- *սեռական բռնության դեպքերում տրվող այն հարցերը, որոնք ենթադրում են, որ երեխան համաձայնություն է տվել սեռական գործողություններին, կամ նրա սեռական կյանքին վերաբերող հարցերը:*

Նման մարտավարությունները կարող են հանգեցնել երե-

խայի վախենալուն և նսեմացմանը, ինչը ոչ միայն կարող է նրան վնասել և սթրես առաջացնել, այլև այնպես ազդել նրա վրա, որ չկարողանա այլևս տալ գործի հետ կապված ճշմարիտ և հստակ տեղեկություններ[39]:

Այսպիսով, վերը ներկայացված պահանջների պահպանումը կարող է նպաստել ոչ միայն անչափահասի հարցաքննության արդյունավետության բարձրացմանը, այլ նաև քրեական արդարադատության հանդեպ հասարակական վստահության բարձրացմանը:

[39] "Protecting children's rights in criminal justice systems: A training manual and reference point for professionals and policymakers", Penal Reform International, 2013.

Թեմա 2.

Հաղորդակցում փոքրամասնության ներկայացուցիչների հետ

Փոքրամասնության ներկայացուցիչների արդյունավետ հաղորդակցության կազմակերպման համար կարևոր նախապայմաններից է իրավահավասարության սկզբունքի պահանջների կենսագործումը:

Սահմանադրության 28-րդ հոդվածի համաձայն՝ բոլորը հավասար են օրենքի առջև, իսկ 39-րդ հոդվածով սահմանվում է խտրականության արգելքը, համաձայն որի՝ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Օրենքի և դատարանի առջև հավասարության և խտրականության արգելքը քրեադատավարական նորմ-սկզբունք է, որը ձևակերպված է ՔԴՕ-ի 8-րդ հոդվածում:

Հոդված 8. Հավասարությունը օրենքի և դատարանի առջև

1. Բոլորը հավասար են օրենքի և դատարանի առջև:

2. Իրավունքների, ազատությունների և պարտականությունների խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից,

կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

3. Յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ, որպես իրավական փաստարկ, իրավունք ունի վկայակոչելու նույնանման փաստերով այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտում առկա օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի մեկնաբանությունները: Դատարանն անդրադառնում է նման իրավական փաստարկներին:

4. Նույնանման փաստերով այլ գործով վճռաբեկ դատարանի կողմից իրավական նորմի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանության դեպքում դատարանը պետք է հիմնավորի օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի՝ վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից շեղվելը:

Քանի որ փոքրամասնության ներկայացուցիչների դերում հիմնականում հանդես են գալիս տարբեր լեզուների տիրապետող անձինք, ուստի փոքրամասնության ներկայացուցիչների հաղորդակցության կազմակերպման համար կարևոր նշանակություն ունի նաև քրեադատավարական մեկ այլ կարևոր սկզբունքի՝ դատավարության լեզվի կենսագործման արդյունավետությունը:

Դատավարության լեզվի սկզբունքն ամրագրված է Դատական օրենսգրքի 12-րդ հոդվածով:

Հոդված 12. Դատավարության լեզուն

1. Հայաստանի Հանրապետությունում դատավարության լեզուն հայերենն է:

2. Բոլոր փաստաթղթերը դատարան են ներկայաց-

վում հայերեն կամ հայերեն պատշաճ թարգմանությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

3. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի դատավարությանը մասնակցելու իր նախընտրած լեզվով, եթե նա ապահովում է հայերեն պատշաճ թարգմանությունը:

4. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են դատավարությանը մասնակցել հայերենով:

5. Քրեական գործով հայերենին չտիրապետող մեղադրյալին դատարանը պարտավոր է պետական միջոցների հաշվին ապահովել թարգմանչի ծառայություններով, բացառությամբ երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին ապահովել թարգմանությունը:

6. Վարչական գործով դատավարության մասնակցին, քաղաքացիական գործով՝ գործին մասնակցող անձին, իսկ քրեական գործով՝ տուժողին դատարանը պետական միջոցների հաշվին ապահովում է թարգմանչի ծառայություններով, եթե նա չունի հայերեն հաղորդակցվելու հնարավորություն և ապացուցում է, որ բավարար միջոցներ չունի վճարովի թարգմանություն ապահովելու համար:

7. Լսողական կամ խոսակցական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձն ունի սուրդոթարգմանչի միջոցով դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորություն՝ սույն հոդվածով թարգմանչի համար նախատեսված կարգով:

8. Քրեական գործերով դատավարությանը մասնակցող՝ տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի համար դատավարական փաստաթղթերի և դատական ակտերի հասանելիությունն ապահովվում է օգնականի միջոցով՝ պետական

միջոցների հաշվին: Վարչական գործով դատավարության մասնակիցը, իսկ քաղաքացիական գործով՝ գործին մասնակցող անձն ունի պետական միջոցների հաշվին օգնականի իրավունք, եթե ապացուցում է, որ բավարար միջոցներ չունի վճարովի օգնական ունենալու համար:

9. Պետական միջոցների հաշվին թարգմանչի, սուրդոթարգմանչի կամ տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցելու անհրաժեշտության դեպքում այդ անձը նշանակվում է դատարանի որոշմամբ: Այդ անձին նշանակելու, նրա վարձատրության չափը և կարգը սահմանում է Կառավարությունը:

Դատավարության լեզվի սկզբունքը ՔԴՕ-ում հետևյալ ձևակերպումը:

Հոդված 15. Քրեական դատավարության լեզուն

1.Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարության լեզուն հայերենն է:

2. Քրեական դատավարությանը մասնակցող անձինք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը: Քրեական դատավարությանը մասնակցող մեղադրյալին, եթե նա չի տիրապետում հայերենին, դատարանը պարտավոր է պետական միջոցների հաշվին ապահովել թարգմանչի ծառայություններով, բացառությամբ, երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին ապահովել թարգմանությունը:

3. Քրեական դատավարության մասնակցին (բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի) նրա նախաձեռնությամբ նշանակված փորձագետին,

նրա միջնորդությամբ հրավիրված մասնագետին կամ վկային դատարանը պետական միջոցների հաշվին ապահովում է թարգմանչի ծառայություններով, եթե համապատասխան անձը չի տիրապետում հայերենին, և անձն ապացուցում է, որ բավարար միջոցներ չունի վճարովի թարգմանություն ապահովելու համար:

4. Քրեական դատավարությանը մասնակցող անձինք (բացառությամբ վկայի) դատավարական բոլոր փաստաթղթերը ներկայացնում են հայերեն կամ այլ լեզվով՝ հայերեն պատշաճ թարգմանությամբ: Նշված պահանջը չպահպանելու դեպքում դատավարական փաստաթղթերը քրեական վարույթն իրականացնող մարմինը չի քննարկում կամ չի թույլատրում, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց:

5. Լսողական կամ խոսակցական սահմանափակումներ ունեցող անձինք, սույն հոդվածի դրույթներին համապատասխան, ապահովվում են գործի նյութերին ծանոթանալու, սույն օրենսգրքով սահմանված այլ իրավունքներից օգտվելու և պարտականություններ կրելու հնարավորությամբ՝ սուրդոթարգմանչի միջոցով:

6. Քրեական դատավարությանը մասնակցող՝ տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի համար դատավարական փաստաթղթերի և դատական ակտերի հասանելիությունն ապահովվում է օգնականի միջոցով՝ պետական միջոցների հաշվին:

7. Հայաստանի Հանրապետության հաշվին թարգմանչի ծառայություններ մատուցելու անհրաժեշտություն առաջանալիս սույն հոդվածի 2-րդ, 3-րդ, 5-րդ և 6-րդ մասերով նախատեսված դեպքերում քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա թարգմա-

նիչ, սուրդոթարգմանիչ կամ օգնական նշանակելու կարգը, թարգմանչի, սուրդոթարգմանչի կամ օգնականի վարձատրության չափը և կարգը սահմանվում են Կառավարության որոշմամբ:

Դատավարության լեզվի կապակցությամբ ԵԴԽԽ-ի թիվ 7 (2005) Կարծիքի 56-րդ կետում նշված է, որ դատավարության ընթացքում և իրենց որոշումներում դատարանների կողմից օգտագործվող լեզուն ոչ միայն նրանց համար հասանելի հզոր գործիք է կրթական գործառույթն իրականացնելու համար, այլև, ակնհայտորեն և ավելի անմիջական կերպով, «օրենքի կիրառությունն է գործնականում» կոնկրետ գործերով դատավարության կողմերի համար: Ուստի ցանկալի է, որ դատարաններն օգտագործեն հասանելի, պարզ և հստակ լեզու:

Միևնույն ժամանակ ԵԴԽԽ-ն նկատել է, որ որոշ եվրոպական երկրներում դատավորները հավատացած են, թե կարճ դատավճիռներն ավելի հեղինակավոր են: Այլ երկրներում դատավորները պարտավորություն են զգում կամ օրենքով պարտավորություն են կրում մանրամասն գրավոր կարգով բացատրելու իրենց որոշումների բոլոր տեսանկյունները: Չցանկանալով խորությամբ դիտարկել մի հարց, որը մեծապես պայմանավորված է ազգային իրավական մշակույթով, ԵԴԽԽ-ն գտնում է, որ հասարակ և պարզ դատական լեզուն ավելի նպատակահարմար է, քանի որ այն իրավունքի գերակայությունը դարձնում է քաղաքացիների համար հասանելի և կանխատեսելի: Եթե անհրաժեշտ է, դրա համար կարող է օգտագործվել իրավական փորձագետի օժանդակությունը, ինչպես առաջարկվում է Եվրոպական դատարանի նախադեպով:

ԵԴԽԽ-ն գտնում է, որ դատական լեզուն պետք է լինի հակիրճ և պարզ:

Պետք է, անհրաժեշտության դեպքում, խուսափել լատիներեն և այլ ձևակերպումներից, որոնք դժվարըմբռնելի են լայն հասարակության համար: Իրավական հասկացությունները և օրենքի կանոնները հնարավոր է բավականին լավ բացատրել՝ հղում կատարելով օրենսդրությանը կամ դատական նախադե-

պին: Պարզությունը և հստակությունը, այնուամենայնիվ, չպետք է լինեն բացարձակ նպատակ, քանի որ դատավորները պետք է նաև պահպանեն իրենց որոշումների հիմնավորման հստակությունը և ամբողջականությունը: ԵԴԽԽ-ի կարծիքով՝ դատական ակտերի հիմնավորման վերաբերյալ օրենսդրությամբ դատական պրակտիկան պետք է սահմանի, որ մշտապես պետք է առկա լինի որևէ հիմնավորում, և որ դատավորը բավարար հայեցողություն պետք է ունենա որոշելու համար՝ կայացնել բանավոր որոշում, եթե դա թույլատրելի է (ինչը կարելի է վերծանել ձայնագրությունից՝ պահանջի կամ անհրաժեշտության դեպքում), կամ հակիրճ գրավոր հիմնավորված դատական ակտ (օրինակ՝ «attendu» ոճի որոշում, որն ընդունված ձև է որոշ երկրներում), կամ մանրամասն հիմնավորված գրավոր դատական ակտ բոլոր այն դեպքերում, երբ հնարավոր չէ հղում կատարել գործող նախադեպին և/կամ փաստերի հիմնավորմամբ դա է պահանջվում: Հիմնավորման պարզեցված ձևերը կարող են կիրառելի լինել կարգադրությունների, դատական ծանուցագրերի, հրահանգների և այլ որոշումների համար, որոնք ընթացակարգային արժեք ունեն և չեն վերաբերում կողմերի նյութական իրավունքներին:

Ինչպես նախատեսվում է դատական ակտերում՝ օրենքի մատչելիության կարևոր հիմնակետ է այն, որ նման դատական ակտերը պետք է անմիջապես հասանելի լինեն լայն հանրությանը: Այս նպատակից ելնելով՝ ԵԴԽԽ-ն առաջարկում է, որ առնվազն Գերագույն դատարանի և բոլոր այլ կարևոր դատարանների դատական ակտերը հասանելի լինեն համացանցում անվճար, ինչպես նաև տպագիր տարբերակով՝ միայն տպագրման ծախսերի համար վճարի գանձմամբ: Դատարանների դատական ակտերը տարածելիս համապատասխան միջոցներ պետք է ձեռնարկվեն շահագրգիռ անձանց, հատկապես կողմերի և վկաների մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը պաշտպանելու համար:

Փոքրամասնության ներկայացուցիչների հետ արդյունավետ հաղորդակցման ապահովման տեսանկյունից առանցքային

նշանակություն ունեն որոշակի գործոններ, որոնք կարող են դասակարգել ***երկու խմբի՝***

1. *Արտաքին կամ օբյեկտիվ:*
2. *Ներքին կամ սուբյեկտիվ:*

Առաջին խմբի մեջ մտնում այնպիսի պայմանների ապահովումը, որոնք բացառում են փոքրամասնության ներկայացուցիչների վրա որևէ տեսակի բացասական ազդեցությունը, օրինակ՝ դատարանի շենքային վատ պայմանները, որոշակի խտրականություն քարոզող կամ քողարկված այդպիսի բնույթ ունեցող պաստառների, ցուցանակների, արձանների, նկարների և այլնի առկայությունը դատարանի միջանցքներում կամ դատական նիստերի դահլիճում կրոնական, էթնիկ կամ փոքրամասնության որոշակի խմբերին վերաբերող կամ նսեմացնող իրերի առարկաների և պարագաների առկայությունը: Այս խմբի մեջ մտնող գործոններից են լիարժեք և որակյալ թարգմանության տեխնիկական ապահովումը, ձայնային խոչընդոտների չեզոքացումը, անհրաժեշտ լուսավորության ապահովումը և այլն:

Երկրորդ խմբի մեջ մտնող գործոնների թվին են դասվում, օրինակ՝ հարցաքննության կամ հաղորդակցման այլ եղանակների դեպքում փոքրամասնության որոշակի խմբին կամ խմբերին վիրավորող, արժանապատվությունը նվաստացնող արտահայտությունների կամ ժեստերի կիրառումը, հոգեբանական ներգործության սահմանների անցումը՝ արհամարհական, քամահրական վերաբերմունքի դրսևորմամբ և այլն:

Արդյունավետ հաղորդակցության ապահովման նպատակով նախագահողը պետք է միջոցներ ձեռնարկի փոքրամասնությունների հետ հաղորդակցման վրա բացասաբար ազդող ցանկացած, այդ թվում՝ հնարավոր խտրական կամ խարանավորված դիրքորոշումների դուրս բերման և վիճարկման մեխանիզմները:

Խնդրո առարկայի վերաբերյալ հետաքրքրական է ԵԴԽԽ-ի թիվ 7 (2005) Կարծիքում արտահայտված որոշակի դրույթներ:

Մասնավորապես, Կարծիքում նշվում է, թե ինչ պատկերացում ունի հանրությունն արդարադատության համակարգի մասին, մեծապես ձևավորվում է լրատվամիջոցների կողմից. սակայն դրա վրա ազդում են նաև այն տպավորությունները, որոնք ստանում են քաղաքացիները՝ մասնակցելով դատաքննությանը որպես վարույթի մասնակից, երդվյալ ատենակալ կամ վկա: Նման տպավորությունները բացասական կլինեն, եթե արդարադատության համակարգը, իր դերակատարների միջոցով (դատավորներ, դատախազներ, դատարանի աշխատակազմի աշխատակիցներ), կողմնակալ կամ ոչ արդյունավետ լինելու տպավորություն թողնի: Նման բացասական ընկալումները հեշտ են տարածվում:

ԵԴԽԽ-ն գտնում է, որ դատական իշխանության դերի մասին առավել ճիշտ ընկալումներ խթանելու համար ջանքեր պետք է գործադրվեն ապահովելու, որ հնարավորության սահմաններում արդարադատության համակարգի մասին հանրության շրջանում տարածված պատկերացումները լինեն ստույգ և արտացոլեն այն ջանքերը, որոնք դատավորները և դատարանի աշխատակազմի աշխատակիցները ներդնում են՝ իրենց գործառույթները կատարելու ունակության մասին հանրության հարգանքը և վստահությունը ձեռք բերելու համար: Նման գործողությունները հստակ պետք է տարանջատեն այն սահմանները, որոնց շրջանակում արդարադատության համակարգը կարող է գործել:

Որոշ ծրագրեր նպատակաուղղված են դատարանների նկատմամբ հնարավոր անվստահության պատճառների վերացմանը, որոնք առկա են իրենց ներքին կազմակերպական կառուցվածքում: Օրինակ՝ դատախազի աթոռը պաշտպանության կողմի համար նախատեսված տեղի հետ նույն հարթության վրա տեղակայելը կնպաստի կողմերի հավասարության մասին տպավորության ստեղծմանը: Նման տպավորություն ստեղծելը դատարանի պարտականությունն է: Նմանապես՝ դատարանի տարածքից որևէ վիզուալ ակնարկի, օրինակ՝ որևէ կրոնական կամ քաղաքական գործչի նկարը հեռացնելը

կարող է ցրել չարդարացված կողմնակալության կամ դատավորների անկախության բացակայության մասին մտահոգությունները: Մեղադրյալին հնարավորություն տալն առանց ձեռնաշղթաների ներկայանալ դատարան, եթե նույնիսկ կալանավորված է և սպասում է դատաքննության, բացառությամբ, եթե անվտանգության նկատառումներ կան, ինչպես նաև դատարանից պատնեշները հանելը և դրանց փոխարեն այլ անվտանգության միջոցներ օգտագործելը կարող են առավել մեծ վստահություն ներշնչել, որ անմեղության կանխավարկածը, ինչի իրավունքը պաշտպանության կողմն ունի, արդյունավետ կերպով երաշխավորվում է դատարանում: Դատարանների թափանցիկությունը բարելավելու առումով պետք է նշել այն դրական ազդեցության մասին, որը կարող է ունենալ դատարանում ընդունարան ներդնելը՝ վարույթի կամ կոնկրետ գործի ընթացքի մասին դատարանի ծառայություններից օգտվողներին տեղեկություններ տրամադրելու, օգնելու լրացնել փաստաթղթեր և, եթե շենքային պայմանները պահանջում են, ուղեկցելու համար նրանց որոնվող գրասենյակ կամ դատարանի դահլիճ:

Որոշ միջոցառումներ նախատեսված են բացառելու վարույթների այն հատվածները, որոնք կարող են հանգեցնել իրավախախտման (կրոնական ենթատեքստով պարտադիր երդման արարողություններ, ելույթների որոշ տեսակներ և այլն): Այլ միջոցառումներ նախատեսված են ներմուծելու այնպիսի ընթացակարգեր, որոնք ապահովում են, օրինակ, որ նախքան դատարան ներկայանալը կողմերը, երդվյալ ատենակալները կամ վկաները, միասին կամ առանձին-առանձին, դատարանի աշխատակազմի աշխատակիցների կողմից բանավոր կամ սոցիալական մասնագետների կողմից կազմված տեսալսողական նյութերի միջոցով տեղեկություններ ստանան, թե ինչ է սպասվում նրանց դատարանում: Նման պրեզենտացիաները նպատակ ունեն ցրելու այն թյուրըմբռնումները, թե ինչ է տեղի ունենում դատարանում:

ԵԴԽԽ-ն միաժամանակ արձանագրում է, որ վերապատրաստման որոշ ծրագրերի նպատակն է՝ ապահովել, որ դատարաններն իրենց բոլոր դրսևորումներում ընկալվեն որպես բոլոր կողմերին հավասար վերաբերմունք ցուցաբերող հաստատություններ, այսինքն՝ դրսևորեն անաչառություն, առանց ռասայի, սեռի, կրոնի, էթնիկ ծագման կամ սոցիալական կարգավիճակի հիմքով խտրականության: Դատավորները և դատարանի աշխատակազմի աշխատակիցները վերապատրաստվում են, որպեսզի կարողանան տարբերակել, թե որ դեպքերում անձը կարող է կողմնապահ մոտեցման զգացողություն ունենալ կամ նման տպավորություն ստանալ: Դասընթացների ժամանակ նրանք սովորում են նաև դուրս գալ նման իրավիճակներից այնպես, որ դա նպաստի դատարանների նկատմամբ վստահությանը և հարգանքին: Փաստաբանների համար կազմակերպվում են էթիկայի թեմայով վերապատրաստումներ, որպեսզի նրանք միտումնավոր կամ առանց դիտավորության չնպաստեն դատական համակարգի նկատմամբ անվստահությանը:

Թեմա 3.

Տարբեր մշակույթների հաղորդակցում

Տարբեր մշակույթների և դրանք կրող անձանց հաղորդակցման գործընթացի իրավական հիմքերը ներկայացված են նախորդ թեմայի շրջանակներում:

Նկատի ունենալով, որ տարբեր մշակույթների հաղորդակցման ընդհանուր դրույթներն ու իրավաչափության պայմանները հար և նման են արդեն ներկայացված առանձին խմբերի հետ հաղորդակցմանը, ընդամենը հարկ է նկատի ունենալ, որ մշակութային տարբերությունը կարող է դրսևորվել ամենատարբեր ձևերով՝ մտավոր զարգացվածության աստիճանից մինչև վարվեցողության որոշակի կանոնների պահպանման, հագուստի, ժեստերի, պերճանքի կամ սիմվոլիկ արժեք ունեցող առարկաներ կրելու, դաջվածքների առկայությունից և այլն:

Կարևոր է, որպեսզի թե՛ նախագահողը և թե՛ կողմերն ու դատական ծառայողները դատավարության ընթացքում, այդ թվում՝ դատական նիստերի ընթացքում տարբեր մշակութային արժեքներ ունեցող անձանց հետ հաղորդակցվելիս պահպանեն ոչ միայն օրենսդրության, այլ նաև էթիկայի կանոնների պահանջներն ու հասարակության կողմից ընդունված բարոյականության նորմերը:

Մյուս կողմից, ցանկացած տեսակի մշակույթ, ենթամշակույթ կրող անձի վարքագիծը դատավարության ընթացքում պետք է դիտարկվի հոգեբանական արդյունավետ կոնտակտ հաստատելու համատեքստում:

Թեմա 4.

Խոցելի խմբերի կարիքներն ու համապատասխան գենդերային ասպեկտները

Դատական քննության սոցիալական ուղղվածության ու այդ առաքելության դրսևորումներից է դատավարության ընթացքում խոցելի, ինչպես նաև գենդերային խմբերի հետ հաղորդակցման հնարավորությունների երաշխավորումը:

Այս տեսանկյունից ուշագրավ է Բանգալորյան սկզբունքներից 5-րդ՝ հավասարության սկզբունքը՝ *«Դատավարության բոլոր կողմերի նկատմամբ հավասար վերաբերմունքի ապահովումը կարևոր պայման է դատական համակարգի պատշաճ գործունեության համար»*, որի կիրառումը պահանջում է, որ.

«5.1 Դատավորը պարտավոր է գիտակցել և հասկանալ հասարակության մեջ եղած բազմազանությունը և տարբերությունները, որոնք ծագում են զանազան աղբյուրներից, այդ թվում՝ ռասայական պատկանելությունը, մաշկի գույնը, սեռը, դավանանքը, ազգային ծագումը, կաստային պատկանելությունը, հաշմանդամությունը, տարիքը, ամուսնական կարգավիճակը, սեռական կողմնորոշումը, սոցիալական կամ տնտեսական կարգավիճակը և այլ նմանատիպ հանգամանքներ («գործին չվերաբերող հիմքեր»):

5.2 Դատավորը, իր ծառայական պարտականություններն իրականացնելիս, ո՛չ իր ելույթով և ո՛չ էլ իր վարքագծով չպետք է դրսևորի նախապրամադրվածություն կամ կողմնակալություն դատավարության որևէ անձի կամ խմբի նկատմամբ՝ առաջնորդվելով գործին չվերաբերող հանգամանքներով:

5.3 Դատավորը պետք է կատարի իր ծառայական պարտականությունները՝ պատշաճ կերպով հաշվի առնելով բոլոր անձանց, մասնավորապես՝ դատավարության կողմերի, վկաների, իրավաբանների, դատարանի աշխատակազմի և դատավորի գործընկերների շահերը՝ չտարանջատելով գործին չվերաբերող հանգամանքները, որոնք էական չեն գործի պատշաճ քննության համար:

5.4 Դատավորը չպետք է գիտակցաբար թույլ տա դատարանի աշխատակազմին կամ իր ազդեցության, ղեկավարության կամ վերահսկողության ներքո գտնվող անձանց դրսևորել տարբերակված մոտեցում դատական գործով որևէ անձի նկատմամբ՝ առաջնորդվելով գործին չվերաբերող որևէ հիմքով:

5.5 Դատավորը պետք է պահանջի դատական գործով մասնակցող իրավաբաններից իրենց ելույթներում կամ վարքագծով զերծ մնալ անհիմն կողմնակալություն կամ խտրականություն դրսևորելուց՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք իրավական տեսանկյունից առնչվում են դատական վեճի առարկայի հետ և կարող են օրինական ձևով արդարացված լինել»:

Հավասարության պահանջի ապահովման համար դատավորը պետք է գիտակցի, որ հասարակությունը բազմազան է: Այդ բազմազանությունը, ի թիվս այլ հանգամանքների, պայմանավորված է ռասայով և կրոնով: Ուստի իր դատական պարտականությունները կատարելու ընթացքում դատավորը չի կարող խոսքերով կամ վարքագծով արտահայտել ցանկացած, այդ թվում՝ ռասայի, սեռի, կրոնի, ազգային ծագման, հաշմանդամության, տարիքի, սեռական կողմնորոշման, սոցիալ-տնտեսական վիճակի կամ այլ գործոնի վրա հիմնված կողմնակալություն կամ նախապաշարում: Դատավորը պարտավոր է նաև թույլ չտալ դատարանի աշխատակազմի անդամներից որևէ մեկին դրսևորել կողմնակալություն կամ նախապաշարում:

Կողմնակալության կամ նախապաշարման մասին վկայող հայտարարությունների օրինակներից են՝

- *ռասայական էպիտետների, էթնիկ վիրավորանքների կամ նվաստացուցիչ մականունների օգտագործումը.*
- *անպարկեշտ հումորը.*
- *ռասան, ազգությունը և հանցագործությունը միմյանց հետ կապակցելը.*
- *ընտանեկան բռնության կամ կանանց դեմ ուղղված այլ հանցագործությունների վերաբերյալ կողմնակալություն արտահայտող կամ անքաղաքավարություն պարունակող մեկնաբանություններ կատարելը.*
- *ազգային պատկանելիության մասին անտեղի մեջբերումներ անելը:*

Այս առումով պետք է նշել, որ ուշագրավ է նաև Խոշտանգման կանխարգելման եվրոպական հանձնաժողովի դիրքորոշումը հարցաքննության համար համապատասխան պայմաններ ապահովելու վերաբերյալ, ըստ որի՝ հարցաքննության համար օգտագործվող տարածքը չպետք է ահաբեկող տեսք ունենա կամ վնաս պատճառի անհատին: Մասնավորապես, հարցաքննության համար օգտագործվող սենյակները պետք է համապատասխանեն նվազագույն որոշ չափանիշների: Տարածքը պետք է համարժեքորեն լուսավորված, ջեռուցված և օդափոխված լինի: Հարցաքննության գործընթացի բոլոր մասնակիցները պետք է նստած լինեն նույնանման ոճի և հարմարավետության աթոռների, մասնավորապես՝ հարցաքննող պաշտոնյան չպետք է մեղադրյալի նկատմամբ տեղավորված լինի հեռավոր, գերիշխող կամ բարձրացված դիրքում: Պետք է ընդունել գունային չեզոք պայմաններ. միանգամից դատապարտելի է ճանաչվում որոշ դեպքերում հայտնաբերված հարցաքննության այն սենյակների վիճակը, որոնք ներկված են սև գույնով և կահավորված են դեպի հարցաքննվողի

նստատեղին կենտրոնացված լուսարձակներով[40]:

Ավելին՝ հարցաքննությունների համար օգտագործվող տարածքները չպետք է ներառեն այն, ինչը Խոշտանգման կանխարգելման եվրոպական հանձնաժողովն անվանում է «կասկածելի առարկաներ», ինչպիսիք են փայտե ձողերը, ավելի պոչերը, բեյսբոլի հարվածափայտերը, մետաղե ձողերը, էլեկտրական հաստ մալուխի կտորները, հրազենի կամ դանակի նմանակները, որոնց ներկայությունը որոշակի արժանահավատություն է ավելացնում այն պնդումներին, որ այդ տարածքներում գտնված ազատազրկված անձանց կամ սպառնացել, կամ հարվածել են այդ առարկաներով (այդ «կասկածելի առարկաների» առկայությունը սովորաբար հիմնավորում են նրանով, որ դրանք իբրև առգրավվել են կասկածյալներից, սակայն, եթե դրանք իսկապես իրեղեն ապացույցներ են, ապա դրանք պետք է պատշաճ կերպով պիտակավորված և փաթեթավորված լինեին և պահպանվեին իրեղեն ապացույցների համար նախատեսված հատուկ սենյակում)[41]:

Թեև վերոգրյալը վերաբերում է մինչդատական վարույթին, այդուհանդերձ, կարծում ենք՝ դրանք որոշակի ընդհանրություններ կարող են պարունակել նաև դատական քննության ընթացքում կատարվող հարցաքննությունների համար:

Այսպիսով, կարող ենք հավաստել, որ անկախ հարցաքննության տեսակից ու հարցաքննվողի քրեադատավարական կար-

---

40 European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment (“CPT”), 12th General Report on the CPT’s activities covering the period 1 January to 31 December 2001, 12th General Report, CPT/Inf (2002) 15, paragraph 37. Available at: http://www.cpt.coe.int/en/annual/rep12.htm [accessed 7 ապրիլ, 2016], Քրեական գործով քննության ընդհանուր մեթոդաբանությունը, Ձեռնարկ, ՀՀ արդարադատության ակադեմիա, Երևան, 2017, էջ 75: Հասանելի է՝ http://justiceacademy.am/assets/attachments/Usumnakandzernark5.1.pdf

41 Տե՛ս 12th General Report, CPT/Inf (2002) 15, paragraph 39, Քրեական գործով քննության ընդհանուր մեթոդաբանությունը, Ձեռնարկ, ՀՀ արդարադատության ակադեմիա, Երևան, 2017, էջ 75: Հասանելի է՝ http://justiceacademy.am/assets/attachments/Usumnakandzernark5.1.pdf

գավիճակից, հարցաքննության նախապատրաստության տակտիկապես գրագետ կազմակերպումը կանխորոշում է հարցաքննության ցանկալի արդյունքների ստացումը:

Դասընթացի սույն թեմայի շրջանակներում հատուկ նշանակություն ունի դատական քննության ընթացքում, սեռական բռնության, թրաֆիքինգի քրեական գործերով զոհերի հարցաքննության գրագետ նախապատրաստությունը և կատարումը:

Մասնավորապես, հարցաքննության կազմակերպման ընթացքում նկատի ունենալ, որ թրաֆիքինգի հետևանքները զոհերի համար խիստ բացասական են, եթե զոհերին անգամ հաջողվում է դուրս գալ այդ վտանգավոր հանցավոր ցանցերից և տուն վերադառնալ, միևնույնն է, թրաֆիքինգի հետևանքները մեծ ազդեցություն են ունենում նրանց ճակատագրերի վրա: Հայրենիք վերադառնալուց հետո թրաֆիքինգի զոհերը հաճախ բախվում են ոչ միայն ֆինանսական խնդիրների, այլ առավել հաճախ նրանք ենթարկվում են բավականին լուրջ հոգեբանական դժվարությունների հետ: Հաճախ նկատվում է հասարակության մեջ նրանց մարգինալացման դեպքեր, նրանք չեն ցանկանում խոսել իրենց հետ պատահածի մասին կամ ձևացնում են, թե ոչինչ չի պատահել: Թրաֆիքիգի զոհերը ապրում են մշտական վախի ու սարսափի մեջ՝ վախենալով բռնության հնարավոր դեպքերից: Արդեն իսկ գտնվելով տանը՝ նրանք չեն կարողանում մոռանալ իրենց հետ պատահածը, չեն կարողանում թուլանալ ու հանգստանալ, որի հետևանքով էլ մարդկանց վերաբերվում են չափազաց անվստահությամբ: Քիչ չեն դեպքերը, երբ նրանք ընկնում են դեպրեսիայի մեջ, ունենում կյանքին վերջ տալու տանջող մտքեր: Ակնհայտ է հոգեբանական տրավմայի առկայությունը:

Ահա թե ինչու հաղորդակցելով զոհի հետ՝ նախևառաջ հարկ է հաշվի առնել նրանց հոգեբանական առանձնահատկությունները: Նկատի ունենալով թրաֆիքինգի հետևանքներն ու այն հոգեբանական դժվարությունները, որոնք ունենում են թրաֆիքինգի զոհերը, տրամաբանական է, որ նրանց հետ հաղորդակցումն առաջին հերթին ենթադրում է բարենպաստ,

ապահով և բարենպաստ մթնոլորտի ապահովում զոհի համար:

Թրաֆիքինգի զոհ դարձած անձի հետ հոգեբանական հարմարավետ շփման ստեղծման, հարցաքննության արդյունավետ տեխնոլոգիայի ընտրության գործում կարևոր նշանակություն ունեն նույնիսկ ամենաչնչին մանրուքները: Ընդ որում, հարկ է հաշվի առնել, թե տուժողը որ կատեգորիայի զոհերի թվին է պատկանում և դրանից ելնելով էլ պետք է առանձնացված մոտեցում ցուցաբերել նրանցից յուրաքանչյուրի նկատմամբ, օրինակ՝ «դասական» զոհի հետ վարվեցողության մեթոդները կիրառելի չեն «էլիտար մարմնավաճառների» համար, որոնք մարդկանց առևտրի զոհ են դարձել մոդելային կազմակերպությունների միջոցով: Պետք է նաև հաշվի առնել, թե տուժողը որտեղ, ինչ պայմաններում և որքան ժամանակ է շահագործման ենթարկվել:

Քանի որ քննարկվող հանցագործության տեսակը շատ դեպքերում շոշափում է տուժողների կյանքի ինտիմ կողմերը, խորհուրդ չի տրվում վերջիններիս հարցաքննության կանչել ծանուցագրի միջոցով: Շատ հաճախ հայրենիք վերադարձած կանայք թաքցնում են հարազատներից արտերկրում գտնվելու ընթացքում իրենց գործունեության իրական հանգամանքները, այդ իսկ պատճառով, խուսափելու համար դատական նիստին մասնակցելու պատճառների վերաբերյալ հարազատների հարցերից, ցանկալի չէ հարցաքննության կանչման տվյալ ձևը, առավել նախընտրելի տարբերակ է՝ հարցաքննության կանչել հեռախոսազանգի միջոցով: Եթե լսափողը վերցնում է տուժողը, պետք է համոզվել, որ միայն նա է լսում խոսակցությունը: Այն դեպքում, երբ հեռախոսազանգին պատասխանում է տուժողի ընտանիքի անդամներից որևէ մեկը, հարկավոր է թաքցնել դատարան կանչելու իրական պատճառը: Երբ տուժողի հետ անհնար է կոնֆիդենցիալ խոսակցությունը, նրա կողքին ամուսնու կամ այլ մտերիմ հարազատների առկայության պատճառով, որոնք շատ դեպքերում տեղյակ չեն լինում տուժողի մարմնավաճառությամբ զբաղվելու փաստի վերաբերյալ, նպա-

տակահարմար է «լեգենդի» գործադրումը: Առանձին դեպքերում, երբ արդեն իսկ տուժողի հետ վստահելի հարաբերություններ են հաստատված, կարելի է հաջորդ զոհին հարցաքննության կանչել արդեն իսկ հարցաքննված և քրեական հետապնդման մարմինների հետ համագործակցող զոհի ընկերուհու միջոցով:

Նախապատրաստվելով այս տեսակ հարցաքննությանը՝ հարկավոր է մանրակրկիտ մշակել հարցաքննության պլանը, նրանում պետք է ամրագրվեն բոլոր այն հարցերը, որոնց պատասխաններն անհրաժեշտ են՝ ելնելով ապացուցման առարկայից և հանցագործության մեխանիզմից, ինչպես նաև բոլոր այն հարցերը, որոնք անհրաժեշտ են գործի արագ և բազմակողմանի հանգուցալուծման համար: Դա կօգնի կրկնակի և լրացուցիչ հարցաքննություններից խուսափելուն և թույլ չի տա տուժողի մոտ տհաճ հիշողությունների կրկնակի մտաբերմանը և արտաբերմանը:

Տուժողի հարցաքննության ընթացքում անհրաժեշտ է չեզոքացնել կողմնակի ձայները, սարքավորումները, բջջային հեռախոսը, քանի որ արդեն իսկ հաստատած հոգեբանական շփումը կարող է հօդս ցնդել ոչ ժամանակին հնչած զանգի պատճառով: Ոչ պակաս կարևորություն ունի նաև նախագահողի արտաքին տեսքը, տոնը շարժուձևը, հանդերձանքը:

Սկզբում անհրաժեշտ է, որպեսզի նախագահողը մանրամասն բացատրի հարցաքննության էությունը, կարգը և պայմանները: Զոհը պետք է իրեն առավելագույնս ազատ և հարմարավետ զգա: Հարցաքննությունից առաջ ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու, ինչպես նաև սուտ ցուցմունքներ տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին նախազգուշացնելիս, նախագահողը պետք է որոշակի ճկունություն դրսևորի, քանի որ օրենքի չոր և խիստ մեջբերումը կարող է ոչ միայն չնպաստել իր առջև դրված խնդրի լուծմանը, այլ ընդհակառակը, կարող է վախեցնել զոհին և ստիպել վերջինիս պարփակվել իր մեջ:

Հոգեբանական արդյունավետ շփում հաստատելու նպատակով նախագահողը պետք է միջոցներ ձեռնարկի հարցաքննվողի մոտ վստահության ձևավորման, հարցաքննվողի մոտ իր շահերի պաշտպանության ապահով զգացմանa ձևավորման համար:

Որպես կանոն, հոգեբանական արդյունավետ շփման հաստատման համար խորհուրդ է տրվում զրույց վարել ընդհանուր թեմաներով՝ սպորտ, մշակույթ, եղանակ և այլն:

Հարցաքննության տեխնոլոգիայի ճիշտ կազմակերպման համար օգտագործվում են հարցաքննության նախապատրաստական փուլում ձեռք բերված տուժողին վերաբերող անձնական տվյալները, օրինակ, կրթությունից, զբաղմունքից, նախասիրություններից ելնելով կարելի է ընտրել ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող թեմաներ, որոնց շուրջ զրույցը կարող է չեզոքացնել տուժողի մոտ առկա հոգեբանական անհարմարավետության վիճակը: Այն դեպքում միայն, երբ նախագահողը վստահ է, որ տուժողը գտնվում է հոգեբանական հարմարավետ վիճակում, կարող է սկսել բուն՝ դատավարական կարգով սահմանված հարցաքննությունը:

Թրաֆիքինգի զոհերի հետ աշխատելիս առավել արդյունավետ է հուզական ներգործությունը, որը պետք է ուղղված լինի վստահարժան մթնոլորտի ձևավորմանը և զոհի մոտ առողջ վրեժի զգացողության արմատավորմանը, զոհը պետք է համոզված լինի, որ մեղավորներին արժանի պատժի ենթարկելն առաջին հերթին հարկավոր է հենց իրեն: Զոհը պետք է հասկանա, որ մեղավորներն առաջին հերթին պետք է պատժի ենթարկվեն իր արժանապատվությունը նվաստացնելու, երկրորդ հերթին՝ պատժի ենթարկվելով, թրաֆիկյորները կդադարեն վտանգ ներկայացնել իր և իր ընտանիքի անդամների համար, և վերջապես համագործակցելով իրավապահ մարմինների հետ՝ տուժողն իր հերթին կարող է կանխարգելել նոր հանցագործությունները, որոնց զոհ կարող են դառնալ իր նման երիտասարդ և անմեղ աղջիկները: Պետք է նրան հավաստիացնել,

որ նախագահողը շատ լավ հասկանում է իր խնդիրները և պատրաստ է օգնել վերջինիս:

Թրաֆիքինգի զոհին հարցաքննության հենց սկզբում պետք է բացատրել, որ նա պետք է պատրաստ լինի նրան, որ հարցաքննության ընթացքում ենթադրվում է բացահայտել բավական ինտիմ հանգամանքներ, որը բացառապես հարկավոր է քրեական գործի արդարացի քննության համար: Համոզվելով և հավաստիանալով, որ տուժողը պատրաստ է հարցաքննությանը, պետք է սկսել այն առավել ընդհանուր հարցերից, անցնելով մերթընդմերթ հարցաքննության բուն առարկային: Հարկ ենք համարում նշել նաև, որ ընդհանուր առմամբ էմփաթիայի կամ ապրումակցման դրսևորումը խորհուրդ է տրվում ողջ հարցաքննության ընթացքում, սակայն այն չպետք է շփոթել զոհի նկատմամբ խղճահարության զգացմունքի դրսևորման հետ, որն անթույլատրելի է:

Միաժամանակ խորհուրդ է տրվում հարցաքննությունից առաջ տուժողին ներկայացնել, որ առաջադրվող հարցերի անհասկանալի լինելու դեպքերում ընթացքում դրանք կարող են պարզաբանվել: Սա լրացուցիչ վստահություն և հավատ կներշնչի տուժողի մոտ հանդեպ իրականացվող հարցաքննությունը:

Միաժամանակ անհրաժեշտ է հարցաքննվող տուժողին բացատրել, որ ցուցմունքներ տալով՝ կարելի է փրկել այլոց ճակատագիրը, որը նրա մոտ կարեկցանքի և քաղաքացիական պարտքի զգացում կարող է առաջացնել, ինչն անհրաժեշտ է վերջինիս ցուցմունքներ տալուն մղելու համար:

Այս տեսակ հարցաքննությունների տեխնոլոգիայի առանձնահատկություններով պայմանավորված՝ պահանջվող արդյունքների հասնելու համար անհրաժեշտ է, որպեսզի հարցաքննության ընթացքում հարցաքննողը տուժողի հետ լինի բարեհամբույր, հարցերը ձևակերպել բարեհաճ տոնով, առանց վիրավորական արտահայտությունների, իսկ նուրբ, տուժողի համար ցավոտ հարցերի առաջադրումից հետո, երբ վերջինիս

մոտ առաջանում են սուր զգացողություններ, մտքի ընդհատումներ, ցանկալի է հարցաքննությունն ընդմիջել որոշ ժամանակով, իսկ հնարավորության դեպքում՝ նաև մեկ օրով:

Այս ամենը պայմանավորված են այս տեսակ հանցագործությունների քննության ժամանակ՝ տուժողների առանձնահատուկ հոգեբանական վիճակով:

Ընդ որում, հարցաքննության դեպքում խորհուրդ չի տրվում ընդհատել տուժողին, հատկապես ցուցմունքի ազատ շարադրանքի դեպքում: Հարցաքննվողի մասնագիտության, զբաղմունքի տեսակի, կրթության, շրջապատի, նախկինում վարչական և դատական կարգով պատասխանատվության ենթարկված լինելու, ինչպես նաև պոռնկությամբ զբաղվելու մասին տվյալների հավաքումը հարցաքննության նախապատրաստական փուլում անհրաժեշտ է ոչ միայն տուժողի հետ հոգեբանական շփման հաստատման համար, այլև առաջադրվող հարցերի ձևակերպման, ինչպես նաև հարցաքննության պլանի կազմման համար:

Հարցերը պետք է ձևակերպել պարզ, կանխակալ կարծիք արտահայտող հարցեր չպետք է տալ, այլ դրանք պետք է լինեն պարզաբանող և հաստատող:

Անհրաժեշտ է խուսափել բարդ հարցերից, որոնց հարցաքննվողը պետք է տա մի քանի պատասխաններ, ինչը շատ հաճախ նրանց համար բարդություն է ներկայացնում:

Օրինակ՝ ճիշտ չէ *«Երբ, որտեղ, ում, օրվա ընթացքում քանի անգամ, ինչ պայմաններում եք սեռական ծառայություններ մատուցել»:*

Ճիշտ է առանձին-առանձին ձևակերպել պարզ հարցեր: Խորհուրդ չի տրվում տալ այսպես կոչված փակ հարցեր, որոնք արդեն իսկ պարունակում կամ արտացոլում են նախագահողի կարծիքը: Օրինակ՝ սխալ է *«Դուք հայտարարությունը կարդացել եք տեղական հեռուստատեսությա՞մբ», «Ձեզ գնացքում ուղեկցում էր այն անձը, ում հետ դուք պայմանագիր էիք կնքել»:*

Ճիշտ է՝ «*Որտեղ եք կարդացել հայտարարությունը», «Ով էր ուղեկցում Ձեզ գնացքում»:*

Հարկ է նաև խուսափել հուշող հարցերից, որոնք որոշակի պատասխան են ենթադրում: Օրինակ՝ սխալ է *«Դուք օդանավակայանում նստեցիք ..... ինքնաթիռը,..... չվերթով ..... ուղեկցությամբ մեկնեցիք..... որտեղ Ձեզ դիմավորեց Ձեր ծանոթ... ..., այդպես չէ», «Եվ այսպես դուք Ձեզ հետ պատահածի մասին պատմեցիք ձեր ընկերուհի....., որն էլ խորհուրդ տվեց դիմել մեր .....հյուպատոսին, դուք համաձայն եք դրա հետ» «Ձեզ ծեծի ենթարկել կարող էր միայն.... անձը, այդպես չէ»:*

Ճիշտ է՝ *«Պատմեք, խնդրում եմ, Ձեր տեղափոխման մանրամասների մասին (իհարկե, այս պարագայում հարկ եղած դեպքում կարելի է հղել կոնկրետացնող հարցեր)», «ում եք պատմել Ձեզ հետ պատահածի մասին», «կոնկրետ ինչ խորհուրդ է տվել Ձեզ Ձեր ընկերուհին» «Ով է Ձեզ ծեծի ենթարկել և երբ»:*

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այսպես կոչված հերքելու միջոցով պաշտպանվելուն: Օրինակ՝ նախագահողը տեղյակ լինելով, որ հարցաքննվողին ստիպել են իրականացնել անառակաբարո սեռական ակտեր, այդ մասին հարց է տալիս ուղիղ ձևով: Զոհի պատասխանը կարող է հնչել հետևյալ կերպ՝ «նման բան չի պատահել»: Պաշտպանությունը հերքելու միջոցով ազդանշան է, որ հարկավոր է փոխել հարցաքննության մարտավարությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Իրավական փաստաթղթեր և նախադեպեր

- Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽԽ/ CCEJ) ԿԱՐԾԻՔ թիվ 3 (2002):
- Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽԽ/ CCEJ) ԿԱՐԾԻՔ թիվ 6 (2004):
- Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽԽ/ CCEJ) ԿԱՐԾԻՔ թիվ 7 (2005):
- Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽԽ/ CCEJ) ԿԱՐԾԻՔՆԵՐ թիվ 12 և թիվ 4 (2009):
- Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽԽ/ CCEJ) ԿԱՐԾԻՔ թիվ 16 (2013):
- Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽԽ/ CCEJ) ԿԱՐԾԻՔ թիվ 18 (2015):
- ՀՀ սահմանադրական դատարանի 11.04.2012թ. ՍԴՈ-1020 որոշումը:
- ՀՀ սահմանադրական դատարանի 02.04.2019թ. ՍԴՈ-1452 որոշումը:
- ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ: Հատորներ 1-3, Երևան 2011,2013,2016:
- ՄԻԵԴ վճիռների ժողովածուներ: Հատորներ 1-10, ՀՀ դատավորների միություն: Երևան 2003-2016:

Ուսումնական նյութեր, ձեռնարկներ և ընթերցանության նյութեր, որոնք օգտակար են հատուկ այս դասընթացի համար

- **Ենգիբարյան Վ. Գ.** Հանցագործությունների քննության կազմակերպման քրեադատավարական և կրիմինալիստիկական հիմքերը: Մենագրություն, Երևան 2016:
- **Ենգիբարյան Վ. Գ.** Առանձին քննչական գործողությունների կատարման տակտիկա: Կրիմինալիստիկական տակտիկա: Գիտագործնական ձեռնարկ, Երևան 2018:
- **Խաչատրյան Տ.** Հաղորդակցման և աշխատանքային գործունեության ընդհանուր հմտությունները: Երևան, Կրթության ազգային ինստիտուտ, 2012:
- **Հովհաննիսյան Ա. Ա., Գեդեոնյան Ա. Ս.** Բանակցություններ և գործարարական շփում. Ուսումնական ձեռնարկ, Եր., 2009:
- **Աղուզումցյան Ռ. Վ., Լոքյան Ա. Բ., Պետրոսյան Լ. Հ.** Բանակցությունների վարման հոգեբանություն. Գործնական խորհուրդներ/ Եր.: ՀՀ պետական կառավարման ակադեմիա, 2014:

Աղբյուրներ ինտերնետում

www.echr.coe.int

www.coe.am

http://www.state.gov/documents/organization/236708.pdf

www.arlis.am

www.judge.am

www.moj.am

www.concourt.am

https://www.coe.int/en/web/ccje/ccje-opinions-and-magna-carta

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ԴԱՍ 1. Հաղորդակցման ընդհանուր դրույթներ (վերբալ և ոչ վերբալ, բանավոր և գրավոր, լսողի ըմբռնման, հասկանալու կարողության բարձրացման տեխնիկան, լսելու արդյունավետություն) 9

Թեմա 1. Դատավարության կողմերի ու մասնակիցների հետ հաղորդակցման էությունը, դրա կազմակերպման իրավական ու հոգեբանական կողմերը 9

Թեմա 2. Դատավարության կողմերի և մասնակիցների հետ հաղորդակցման կազմակերպման առանձնահատկությունները՝ ընկալունողականության բարձրացման համատեքստում 35

ԴԱՍ 2. Հաղորդակցում ԶԼՄ-ների ու դրանց ներկայացուցիչների հետ 66

Թեմա 1. ԶԼՄ-ների ու դրանց ներկայացուցիչների հետ հաղորդակցման կազմակերպաիրավական հիմքերն ու հիմնական եղանակները 66

Թեմա 2. ԶԼՄ-ների ու դրանց ներկայացուցիչների հետ հաղորդակցման առանձնահատկությունները, դատավարության հրապարակայնության սկզբունքի սահմանափակման չափանիշները 100

ԴԱՍԵՐ 3-6. Հաղորդակցում վկաների, տուժողների, մեղադրյալների/ ամբաստանյալների, իրավաբանների/պաշտպանի և դատավարության մյուս մասնակիցների հետ 132

Թեմա 1. Հաղորդակցում վկաների հետ 164

Թեմա 2. Հաղորդակցում տուժողների հետ 178

Թեմա 3. Հաղորդակցում մեղադրյալների/ ամբաստանյալների հետ 169

Թեմա 4. Հաղորդակցում իրավաբանների/ պաշտպանի և դատավարության մյուս մասնակիցների հետ 201

ԴԱՍԵՐ 7-10. Հաղորդակցում անչափահասների հետ (ինչպես հարցերը ձևակերպել, ինչպես ստանալ հավաստի պատասխաններ), փոքրամասնության ներկայացուցիչների հետ, տարբեր մշակույթների հաղորդակցում և խոցելի խմբերի կարիքներն ու համապատասխան գենդերային ասպեկտները ... 219

Թեմա 1. Հաղորդակցում անչափահասների հետ (ինչպես հարցերը ձևակերպել, ինչպես ստանալ հավաստի պատասխաններ) 219

Թեմա 2. Հաղորդակցում փոքրամասնության ներկայացուցիչների հետ 239

Թեմա 3. Տարբեր մշակույթների հաղորդակցում.... 250

Թեմա 4. Խոցելի խմբերի կարիքներն ու համապատասխան գենդերային ասպեկտները..... 251

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ 262

ՎԱՀԵ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Դասընթացի ձեռնարկ

ARM

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 47 պետություններ, որոնցից 27-ը միաժամանակ նաև Եվրոպական միության անդամներ են: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները ստորագրել են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիան՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության պաշտպանությանը նպատակաուղղված միջազգային համաձայնագիր: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է անդամ պետությունների կողմից Կոնվենցիայի դրույթների կատարումը:

www.coe.int

Եվրոպական միությունը 27 եվրոպական ժողովրդավարական երկրների տնտեսական և քաղաքական յուրահատուկ գործընկերություն է՝ իր 500 միլիոն քաղաքացիների համար առավել արդար և ապահով աշխարհում խաղաղություն, բարգավաճում և ազատություն ապահովելու նպատակով: Այս ամենն իրագործելու համար ԵՄ երկրները հիմնել են մարմիններ՝ ԵՄ աշխատանքներն իրականացնելու և նրա օրենսդրությունն ընդունելու համար: Նրա հիմնական մարմիններն են Եվրոպական խորհրդարանը (որը ներկայացնում է Եվրոպայի ժողովրդին), Եվրոպական միության խորհուրդը (որը ներկայացնում է ազգային կառավարությունները) և Եվրոպական հանձնաժողովը (որը ներկայացնում է ԵՄ ընդհանուր շահերը):

http://europa.eu

Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe